ՅՈՒ. Մ. ԼՈՒԺԿՈՎ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԵՐՏՈՒՄԸ

ՄԱՐԴԿՈՒԹՅՈՒՆԸ XXI ԴԱՐՈՒՄ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՊԱԳԱՆ

Յու. Մ. Լուժկով

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԵՐՏՈՒՄԸ

Մարդկությունը XXI դարում և Ռուսաստանի ապագան

ԵՐԵՎԱՆ - 2007

Գրքի թարգմանությունն ու հրապարակությունը
իրականացվել է «Ռուսաստանի հայերի միություն»
համառուսաստանյան հասարակական
կազմակերպության և նրա նախագահ
ԱՐԱ ԱԲՐԱՄՅԱՆԻ նախաձեռնությամբ:

ՀՏԴ 323 (471):327 (471)
ԳՄԴ 66.3 (2Ռ)+66.4 (2Ռ)
Լ 887

Լուժկով Յու. Մ
Լ 887 Պատմության վերակերտումը: Մարդկությունը XXI դարում և Ռուսաստանի ապագան. - Եր.: Տիգրան Մեծ, 2007. - 240 էջ:

Գրքում վերլուծվում են համաշխարհային քաղաքակրթության առավել կարևոր խնդիրները, XXI դարի առաջ քաշած գոյության հիմնական մարտահրավերները: Դիտարկվում են արդի աշխարհի զարգացման ուղղություններն ու սահմանափակումները, համաշխարհայնացման էությունն ու հետևանքները, պետության ու ժողովրդավարության էվոլյուցիայի հեռանկարները:

Մ. Յու. Լուժկովը շարադրում է Ռուսաստանի ներկայի ու ապագայի իր տեսլականը, երկրի արդիականացման հեռանկարները, սահմանում է պետականաշինության խնդիրները, շարադրում է իր մոտեցումները արտաքին քաղաքական գաղափարախոսության նկատմամբ:

Լ $\frac{0803010200}{774\ (01)\ 2007}$ 2007 ԳՄԴ 66.3 (2Ռ)+66.4 (2Ռ)

ISBN 978-99941-0-186-3



ՀԱՅ ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

Հայաստանում գրքիս հայերեն հրատարակությունն ինձ համար կարևոր և պատասխանատու գործ է՝ մի քանի պատճառներով: Առաջինը, որ համաշխարհային պատմական փորձը, ընդհանրապես մարդկային քաղաքակրթության պատմությունն անիմաստ է առանց հայկական էջերի: Արդեն քանի դար հինավուրց և մշակութային ձեր ժողովուրդը դժվարին, երբեմն էլ ողբերգական իրավիճակներում հաջողակ զարգացման աննախադեպ, եզակի ալգորիթմ է հաղորդում մարդկությանը: Հայոց հողը հիշում է և՛ վերելքի շրջաններ, և՛ ցեղասպանության ժամանակը: Լեռնային երկիրն այնպիսի կենսունակություն և ուժ, այնպիսի տաղանդներ, աշխատասիրություն և երախտագիտություն է ցուցադրել աշխարհին, որ առանց ազգային բացահայտ զուգահեռներ անցկացնելու, կարելի է խոսել հայ ազգի քաղաքակրթական բարձրագույն որակի մասին:

Հայաստանն ու բազմազգ Ռուսաստանը երբեք բաժանված չեն եղել, ավելին, մենք մեկ կամ երկու դար չէ, որ համագործակցել ենք միասնական պետության կազմում: Տնտեսության, քաղաքականության մեջ, նաև մարդկային զրույցներում մեծ մասամբ թարգմանի կարիք չենք զգացել: Կարելի է ասել, որ մեր միջև ներքին ամուր կապերն՝ առանց առանձնահատուկ լարման, դիմացել են վերջին տասնամյակների իրողությունների փորձությանն ու փոփոխությանը: Մեր ժողովուրդների փոխադարձ ձգողականությունն իր հզորությամբ գերազանցում է աշխարհաքաղաքական գործընթացների կենտրոնախույս բաղադրիչներին: Դժվար է Ռուսաստանը պատկերացնել առանց Հայաստանի հետ բարեկամության, դժվար է պատկերացնել Հայաստանը Ռուսաստանից մեկուսի: Մենք նույն Աստծուն ենք աղոթում, մենք Եղբայր ժողովուրդներ ենք, մենք համագործակցում ենք և ոչ թե հակամարտում:

Գրքում ձգտել ենք խոշոր ձևաչափով քննարկել XXI դարի գլոբալ և վտանգավոր մարտահրավերները, որոնք առանց բացառության ահաբեկում են համաշխարհային հասարակության մաս կազմող բոլոր պետություններին: Փորձ ենք արել վերլուծել արդի աշխարհի զարգացման ուղղություններն ու սահմանափակումները,

համաշխարհայնացման բովանդակությունն ու հետևանքները, մեր պետության և ժողովրդավարության էվոլյուցիայի հեռանկարները:

Գրքի ռուսերեն հրատարակությունը հասարակական լայն արձագանք առաջացրեց, և ես բարձր եմ գնահատում հայ հրատարակիչների որոշումը՝ «Պատմության վերակերտումը» թարգմանել ու հրատարակել Երևանում:

Կուզեի ընդգծել, որ գիրքը գրվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի նախկին տնօրեն, «Աշխարհի մշակույթը» հիմնադրամի ղեկավար Ֆ. Մայորի՝ մոսկովյան գիտաժողովում ներկայացրած «Աշխարհի մշակույթի հայեցակարգն ու ծրագիրը» բովանդակային ազդակի շնորհիվ: Մեր աշխարհը բազմալեզու և բազմազգ է, և դա է գլխավոր թանկարժեք հատկությունը: Մեր աշխարհը հակասական ու կոնֆլիկտային է, և դա է համաշխարհային ներդաշնակ զարգացման գլխավոր արգելքը: Բայց մեր հսկայական աշխարհում, այդ թվում և մեր երկու պետություններում, ոչ թե քաոսը, այլ Բանականությունն է գերիշխում:

Անձամբ ինձ համար անսահման թանկ է Հայաստանը, ես տառացիորեն սիրահարված եմ Երևանին: Իմ հայ բարեկամներն ապրում են և՛ Երևանում, և՛ Մոսկվայում: Ինձ հիացնում են հայկական ազգային բնավորության գեղեցիկ գծերը՝ վեհանձնությունն ու ձեռներեցությունը, բարձր բարոյականությունն ու բնածին գործարարությունը, հավատարմությունը նախնյաց հոգևոր պատգամներին և զարգացման անկասելի ձգտումը: Այս ամենը տեսնում ենք Մոսկվայում՝ «Ռուսաստանի հայերի միության» շուրջ համախմբված հայկական սփյուռքի գործունեության մեջ:

Մոսկվան սերտորեն և ծավալուն համագործակցում է Հայաստանի ու Երևանի հետ, որի ևս մի վկայությունը կլինի ձեր պետության մայրաքաղաքում Մոսկվայի տան բացումը: Այդ համագործակցությունը բովանդակալից պատմություն ունի, հիանալի ներկա և հեռագնա ապագա:

Իմ երախտագիտությունն ու շնորհակալությունն եմ հայտնում հայ հրատարակիչներին, իմ սերն ու ջերմությունը՝ հայ ընկերներիս, խոր ու անկեղծ հարգանքս՝ հայ մեծ ժողովրդին:

ՅՈՒ. Մ. ԼՈՒԺԿՈՎ

Մոսկվայի քաղաքապետ

Գրքի պատրաստմանը մասնակցել են. Դ. Վ. Բադովսկի, Ա. Ա. Իգնատենկո, Վ. Ա. Կորեցկի, Ն. Ա. Կոսոլապով, Ն. Ն. Լատիպով, Ա. Վ. Մալգին, Ա. Ժ. Նազարեթյան, Կ. Բ. Նորկին, Ա. Լ. Չեչևիշնիկով, Ա. Յու. Շելուխին:

Օգտագործվել են գաղափարներ ու արտահայտություններ Ք. Անանի, Գ. Ա. Արբատովի, Ա. Դ. Բոգատուրովի, Մ. Վ. Իլյինի, Վ. Լ. Ինոզեմցևի, Մ. Կաստելսի, Ա. Ի. Նիկլեսի, Ա. Ս. Պանարինի, Ա. Վ. Տորկունովի, Է. Թոֆլերի, Ֆ. Ֆուկույամայի, Ս. Հանթինգտոնի աշխատություններից:

Ի. Բենթամի, Մ. Վեբերի, Թ. Հոբսի, Հ. Գրոցիուսի, Ի. Ա. Իլյինի, Ի. Կանտի, Ս. Լեմի, Ջ. Լոկի, Կ. Լաշի, Կ. Վ. Մարգարյանի, Ա. Վ. Նազարչուկի, Վ. Ի. Պանտինի, Կ. Պոլանյիի, Ա. Պ. Պոտյոմկինի, Էրազմ Ռոտերդամցու, Ժ.-Ժ. Ռուսսոյի, Ջ. Սորոսի, Ն. Չոմսկու, Է. Հոֆֆերի, Ա. Շվայցերի, Կ. Յասպերսի աշխատությունների վերաբերյալ մտորումներն օգնեցին ինձ սեփական պատկերացում ձևավորել այս գրքում ներկայացված բազում խնդիրների վերաբերյալ:

Գրքի վրա աշխատելու ընթացքում անգնահատելի օգնություն են եղել Վ. Վ. Պուտինի, Ե. Մ. Պրիմակովի, Մ. Գ. Ստուրուայի հետ իմ հանդիպումներն ու քննարկումները:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի նախկին գլխավոր քարտուղար, «Աշխարհի մշակույթը» հիմնադրամի նախագահ Ֆ. Մայորի՝ Մոսկվայում անցկացված գիտաժողովի ընթացքում ներկայացրած «Աշխարհի մշակույթի հայեցակարգն ու ծրագիրը» ոգեշնչեցին իմ այս աշխատանքը: Ֆ. Մայորի նախագիծը հնարավորություն տվեց ողջ աշխարհում բացահայտել համախոհներ՝ մարդկության ապագա զարգացման ուղիների ըմբռնման հարցում և մեկտեղել նրանց ջանքերը աշխարհամշակութային զարգացման փիլիսոփայության շուրջ:

**ԱՇԽԱՐՀԻ ԱՐԱՐՈՒՄԸ ՈՉ ԹԵ ԱԿՆԹԱՐԹԻ,
ԱՅԼ ՀԱՎԵՐԺԻ ԳՈՐԾ Է:**

Ի. ԿԱՆՏ

Արդիականությունը որպես Պատմության նոր Առանցքային ժամանակ

Մեր երիտասարդ ժամանակակիցներին, ովքեր ինքնուրույն կյանք են մուտք գործել հազարամյակների սահմանագծին, սովորաբար թվում է, թե XXI դարը պետք է հետևեր XX-ին, թվային շարքի անշրջելիությամբ, ինչպես XX դարը հետևել է XIX-ին, իսկ XIX-ը՝ XVIII-ին: Սակայն իմ տարիքի մարդիկ կարող են հիշել, որ XXI դարի գալուստը բացարձակ անխուսափելիություն չէր թվում: 60-ականների սկզբին շատերը չէին հավատում միջուկային աղետը կանխելու քաղաքական գործիչների ունակությանը: Գիտնականները հաշվարկել են, թե քանի անգամ է հնարավոր ոչնչացնել մարդկությանը՝ պայթեցնելով կուտակված ողջ մարտագլխիկները, և թե ինչպիսի հետևանքներ կունենա մթնոլորտում ատոմային զենքի փորձարկումների շարունակությունը մարդու առողջության և վերարտադրողական կարողության վրա: Համենայնդեպս. մարդկային բանականությունը այնքան զորավոր եղավ, որ մարդկությանը հաջողվեց ողջ մնալ:

Այն, որ XXI դարը սկսվեց, մեր հայրերի ու մայրերի սերնդի պատմական վաստակն է: Մոռանալով այդ մասին և կարծելով, թե իրադարձությունները հենց այնպես էլ պետք է զարգանային, ինչպես զարգացան իրականում, մեր վերաբերմունքը ոչ միայն անշնորհակալ, այլև թեթևամիտ կլինի: Թեթևամիտ՝ քանի որ այդ սխալին կհաջորդի ևս մեկը, որն արդեն սպառնում է դառնալ ճակատագրական: Իսկ իրականում մեզ կթվա, որ XXI դարը նույնպես երաշխավորված կփոխվի XXII-ով: Մինչդեռ սկսված հարյուրամյակը տեղ չի թողնում նման բարեհոգության համար:

2001թ. սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ում տեղի ունեցած իրադարձու-

թյունները հաճախ անվանվում են բեկումնային: Շատերի համար բեկումն ավելի վաղ էր սկսվել: Շատերի համար, թե Ռուսաստանում, թե այլ քաղաքակիրթ երկրներում, այն ցայսօր էլ չի սկսվել: Մոսկվայի «սև հոկտեմբերը» և այն ամենը, ինչ հաջորդեց դրան, հաստատեցին այդ մտքի ողջ անհեթեթությունը:

Նոր դարն իր իրավունքների մեջ է մտնում կոշտ ու դաժանորեն՝ համաշխարհային քաղաքակրթությանը ներկայացնելով էթիկական, տնտեսական, տեխնոլոգիական, բնապահպանական, ժողովրդագրական և մշակութային նոր մարտահրավերներ: Ահաբեկչության երևույթի՝ միջազգային պատմության նախաբեմ դուրս գալը դարձավ այդ մարտահրավերների ու աշխարհի զարգացման նոր որակի սոսկ խորհրդանշական կիզակետը:

ԱՄՆ-ում սեպտեմբերի 11-ն ու Ռուսաստանում հոկտեմբերի 23-26-ը երկու սարսափելի տարեթվեր են, որ միշտ կհիշենք, անգամ ոչ թե որպես նոր ժամանակաշրջանի, մարդկության պատմության նոր դարի սկիզբ, այլ որպես նախորդ աշխարհի ավարտի, նրա սպառման տարեթիվ:

Մենք այլևս չենք լինի այնպիսին, ինչպիսին նախկինում էինք: Քանզի *Պատմությունը վերակերտվել է*: Համենայնդեպս, մարդկության զգալի մասի համար, որին հաճախ անվանում են քաղաքակիրթ, սկսվել է ժամանակի նոր հաշվարկ: Պատմությունը վերակերտվել է ու խորտակել համաշխարհային քաղաքակրթության բարեհաջող ավարտի այն պատրանքը, որը ծագեց 80-ականների վերջին՝ խորհրդային համակարգի պարտությունից հետո:

Արդիականությունը որպես Պատմության նոր Առանցքային ժամանակ

Այն ժամանակ, միջազգային համակարգի երկու ուժերի միջև հավասարակշռության խախտումը, որը պայմանավորել էր զարգացումը համարյա ողջ դարի ընթացքում, ծնեց առանց ուժի կիրառության հաղթելու էյֆորիա: Դրա հետևանքը դարձավ Արևմտյան աշխարհի նվազ կառավարելի ինքնաբավությունը, միջազգային հաստատությունների, նորմերի ու սահմանափակումների նկատմամբ քամահրանքը, որոնք միևնույն ժամանակ հանդիսանում էին երկբևեռ աշխարհի ծնունդ ու նոր պայմաններում թվում էին ավելորդ:

«Պատմության ավարտի» հռչակված հայեցակարգը պնդում էր, որ Արևմտյան աշխարհը, նրա արժեքներն ու շուկայական տնտեսությունը և նրանց վրա հիմնված համաշխարհային քաղաքական համակարգը հանդիսանում են քաղաքակրթության բարձրագույն նվաճում: Մյուս պետություններն ու համակարգերը, այսպես թե այնպես, վաղ թե ուշ, համաշխարհայնացման գործընթացի շրջանակներում, կներառվեին Արևմտյան զարգացմանը «հասնելու» և այդ ուղուն հետևելու տրամաբանության մեջ: Այդ դեպքում այն մշակույթներն ու քաղաքակրթությունները, որոնք ինքնակամ կամ Արևմուտքի անբարեհաճության պատճառով կհայտնվեին համաշխարհայնացման գործընթացի «խաղից դուրս», պետք է ձևախեղվեին ու մահանային «պատմական ընտրության» ընթացքում:

Մարդկության ապագան զարգացման տարբեր ուղիների լարված փնտրտուքից ու պայքարից վերածվում էր երկրների, ազգերի ու մշակույթների մանրացման մեքենայական գործընթացի, որտեղ ոչ բոլորը կհասնեն, ձգտելով դեպի ժամանակակից արևմտյան

Արդիականությունը որպես Պատմության նոր Առանցքային ժամանակ

սպառողական հասարակության «բացատարած բարձունքները»: Արևմտյան աշխարհը այդ պահին սեփականացրեց Դեմիուրգի՝ ոչ միայն աշխարհակերտողի, այլև այսօր իսկ նրա ապագան հանդիսացողի կարգավիճակ:

Արևմուտքի զարգացմանն այդ կարգավիճակն ու արժեքը տալը հնարավորություն ընձեռեց «հաշվի չառնել» մնացած աշխարհին ու միևնույն ժամանակ ծնեց միջազգային հարաբերությունների կազմակերպման սկզբունքային նոր մոտեցումներ, «գլոբալ եսասիրություն»՝ աշխարհի ամեն անկյունում տեղի ունեցող յուրաքանչյուր իրավիճակի խառնվելու իրավունք՝ առաջընթացի կարևորության ու «մարդասիրական» մտադրությունների պատճառաբանությամբ:

Սակայն պատմությունը «փակելու փորձը» ավելին չէր, քան պատրանք: Պատմությունը վերակերտվեց, բայց մենք չգիտենք, թե ուր և ինչպես, ինչպիսի ճանապարհներով ու ինչ հորիզոնների այն կհասնի: Նոր աշխարհը դարձել է շատ ավելի անկանխատեսելի և պատահական իր զարգացման մեջ, քանի որ այնտեղ առաջանում են նոր, անհայտ ու անվերահսկելի ուժեր ու հոսանքներ:

Աշխարհի ապագան նորից վերածվել է հարցի: Սակայն եթե նախկինում՝ նույն այդ XX դարի ընթացքում, համաշխարհային քաղաքակրթության ապագային վերաբերող այս հարցը հանգում էր նրան, թե ինչպիսին է այն լինելու և թե գալիքի ում ծրագիրն է նախընտրելի, ապա այսօր հարցն այն է, թե, արդյոք, համաշխարհային քաղաքակրթությունն ու Երկիր մոլորակն ունե՞ն ապագա:

Համաշխարհային քաղաքակրթության այսօրվա վիճակն ավելի

Արդիականությունը որպես Պատմության նոր Առանցքային ժամանակ

մերձ է մարդկության պատմության այն ժամանակահատվածին, որը համընկավ մ.թ.ա. առաջին հազարամյակի կեսին և կոչվեց «Պատմության Առանցքային ժամանակ»: Հենց այդ ընթացքում դրվեցին արդի քաղաքակրթությունների հիմնաքարերը՝ Արևելքի ու Արևմուտքի, փիլիսոփայության ու մշակույթի, այդ ժամանակաշրջանում ձևավորվեցին համաշխարհային կրոնների սաղմնավորման պայմանները, ծագեց համաշխարհային պատմական զարգացման տրամաբանությունը: Եվ դա տեղի էր ունենում, որպես գալիք աղետի պատասխան: Այդ ժամանակ, հնարավոր է առաջին անգամ, մարդկությունը հայտնվեց ինքնաոչնչացման շեմին. տարածական աճն ու միմյանց ոչնչացնելու «տեխնոլոգիական» հնարավորությունները սպառնում էին ինքն իրեն, իր խնդիրներն ու նպատակները ըմբռնել չկարողացող աշխարհի կործանումով:

Միայն տեղի ունեցած «գիտակցականի հեղափոխությունը» մարդուն դարձրեց այնպիսին, ինչպիսին է նա այժմ: Այդ թռիչքը թույլ տվեց քաղաքակրթությանը հաղթահարել այն խոր ճգնաժամը, որը կարող էր հանգեցնել պատմության վաղաժամ «հանգուցալուծման»:

Այսօր մեր քաղաքակրթության վիճակը տառացիորեն հիշեցնում է պատմության այդ ահասարսուռ պատկերը: Մենք կանգնած ենք «Առանցքային նոր ժամանակի», նոր մեծ «գիտակցության հեղափոխության» շեմին, առանց որի արդի համաշխարհային քաղաքակրթությունը չի կարող դիմագրավել սեփական գոյությանը նետված մարտահրավերներին, հաղթահարել տարածական զարգացման բացահայտ սահմանափակ հնարավորությունները, գո-

Արդիականությունը որպես Պատմության նոր Առանցքային ժամանակ

յություն ունեցող համակարգի շրջանակների ու զարգացման միտումների հետ հաշվի նստելու անկարողությունը՝ սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական, էկոլոգիական ու քաղաքական խնդիրների զարգացման համակարգի պայմաններում:

Աշխարհը հայտնվել է իր զարգացման նոր որակական փոփոխության նախաշեմին: Հենց փոփոխությունների որակական այս բնույթով է պայմանավորված պատմության ընթացքի զարգացման այսօրվա լարվածությունը: Աշխարհը փոփոխվում է և այն անխուսափելիորեն կփոխվի: Մեզ համար հիմնական մարտահրավերն այն է, որ մարդկության հետ կամ առանց նրա, այդ փոփոխությունը տեղի կունենա: Մենք չգիտենք, թե իրականում ինչպես կփոխվեն մարդն ու մարդկությունը: Սակայն նրանք կենսունակ կլինեն, եթե կարողանան վերափոխվել: Այս, առաջին հայացքից, պարզ ու սովորական միտքն այսօր քաղաքակրթության զարգացման հրամայականն է:

Մարդկությունը պետք է սովորի կառավարել ոչ միայն հասարակության վիճակը, այլև առաջին հերթին և ամենից առաջ նրա զարգացման միտումները: Աշխարհը պիտի որդեգրի սոցիալական ինժեներիայի ու քաղաքակրթական շինարարության սկզբունքորեն նոր հիմնադրույթներ:

Այսօրվա փխրուն աշխարհում պահպանող կառավարումը կարող է լինել սոսկ «կառավարումը ապագայից»: Ապագան բաժանված չէ ներկայից երկաթե վարագույրով: Ապագայի կերպարը, ինչպես էլ այն ձևավորվի, սերտաճելով սոցիալական հարաբերությունների

Արդիականությունը որպես Պատմության նոր Առանցքային ժամանակ

համակարգի մեջ, աստիճանաբար ազդում է մարդու վարքի վրա: Հոգեբանների, բժիշկների ու սոցիոլոգների կողմից բազմիցս նկարագրված «ինքնաբերաբար իրականացվող մարգարեությունները» ցնցում են երևակայությունը. մարդիկ, անգիտակցաբար խթանելով իրադարձությունները դեպի կանխագուշակված արդյունք (եթե անգամ դա իրենց համար ամենաանբարենպաստն է), ունակ են առանց տեսանելի պատճառների ֆիզիկապես ոչնչանալ կամ, ընդհակառակը, վերապրել՝ կախված այն հեռանկարից, որով ներշնչված են:

Այդ իսկ պատճառով, աշխարհը կանգնած է կողմնորոշվելու և վճռական ընտրություն կատարելու անհրաժեշտության առջև: Ընդ որում՝ կատարել ռացիոնալ ընտրություն՝ հստակ հասկանալով այն, ինչ տեղի է ունենում, գիտակցելով և այն խնդիրների ողջ ծավալը, որ ծառացած է իր առջև, և թե ի՛նչ սպառնալիք է պարունակում իրավիճակը: Մենք պետք է գիտակցաբար ընտրենք ու ձևակերպենք զարգացման ռազմավարությունը: Այդ ռազմավարությունը պիտի լինի պատասխանը Պատմության այն հարցերի, որոնք այսօր ծառացած են մեր առջև ու որոնք վկայում են Հին աշխարհի մայրամուտը:

I

ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԱՅՐԱՄՈՒՏԸ

ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Աշխարհը բախվել է սկզբունքային նոր մասշտաբի ու բովանդակության մարտահրավերի: Խոսքը իր դրսևորումներով համընդհանուր համաշխարհային քաղաքակրթության, նրա կառույցական ու մշակութային հիմքերի ճգնաժամի մասին է:

Դա Հին աշխարհի փակուղին է: Ու ամենամեծ խնդիրն այն է, որ այդ փակուղի մարդկությունը մտել է իր ավարտին հասցված ու հետևողականորեն իրականացված զարգացման բոլոր այն միտումների ու սկզբունքների արդյունքում, որոնք որոշել են Նոր ժամանակաշրջանում մարդկության պատմության բովանդակությունն ու իմաստը: Առաջընթացի գաղափարը, տնտեսվարման այն ձևը, որը պայմանավորել է մարդկության զարգացումը վերջին հարյուրամյակների ընթացքում և որը մենք անվանում ենք կապիտալիզմ, աշխարհի կազմակերպման ազգային-պետական համակարգը, ժողովրդավարության գաղափարն ու գիտատեխնիկական առաջընթացի ու դրանց հետևում կանգնած մարդկության բարոյական ու գաղափարախոսական կազմակերպումը՝ հանդիսացել են Նոր աշխարհի պատմության հրամայականները, որոնք այսօր տարօրինակ կերպով քաղաքակրթությունը հասցրել են անդունդի եզրին:

Տնտեսական ու քաղաքական գործունեության կազմակերպման ներկա սկզբունքների, համաշխարհային տնտեսության, հասարակության ու նրա հաստատությունների գործառության սկզբունքների, միջազգային կառույցների և իշխանության վերազգային մարմինների գործունեության, կառուցվածքի, գործառույթի և սկզբունքների պահպանումով գոյություն ունեցող մարդկային քաղաքակրթության վերջավորությունը անխուսափելիորեն դառնում է իրականացող և օր-օրի ավելի իրատեսական կանխատեսում: Իսկ «Նոր աշխարհի» և «Պատմության վերակերտման» պահանջները ակադեմիական գաղափարներից վերաճում են «այստեղ և հիմա» անհրաժեշտ իրական գործողության, սրընթաց և ահեղ սկսվող նոր դարի հիմնահարցի:

Օրվա առաջնահերթ խնդիրը «անունների ուղղումն» է: Պետք է մեզ հաշիվ տանք, որ գեղեցիկ բառերի և մարդկային քաղաքակրթության զարգացման մասին բազում կառուցիկ հայեցակարգերի հետևում թաքնված է այն բանի իրական ընկալման ու գիտակցման պատասխանատվությունը, թե որտեղ ենք մենք հայտնվել ու ինչ է մեր հետ կատարվում: Աշխարհը փլուզվում է այն ժամանակ, երբ պատճառները խառնվում են հետևանքներին, սևը՝ սպիտակին, արժեքները՝ ունայնությանը:

Արդի աշխարհի զարգացման փակուղիները 1.

Առաջընթացի գաղափարի ճգնաժամը 1.1.

Իր անցյալի, ներկայի ու ապագայի վերաբերյալ ժամանակակից քաղաքակիրթ աշխարհի պատկերացման հիմքում, վերջին հաշվով, ընկած է առաջընթացի, աճի, վատթարից լավագույնի զարգացման մեծ գաղափարը:

Այն իրականում մեծ գաղափար է, քանզի արդի աշխարհի վրա նրա ազդեցության մակարդակին քիչ բան կարող է մրցակցել: Նրանում է ամփոփված ավելի լավ ապագայի, մարդու և մարդկային քաղաքակրթության անսահման հնարավորությունների մասին պատկերացման հաղթարշավը: Ինչ-որ պահի առաջընթացը դարձավ «Պատմության հիմնական օրենքը», նրա իմաստն ու արդարացումը:

Առաջընթացի գաղափարը սերում է Լուսավորության ժամանակներից: Այն ժամանակ թվում էր, թե մարդկային ցեղը շարժվում է պատմական ուղիղ ճանապարհով, պարզից բարդի, անկրթությունից գիտելիքի, բարոյական կուրությունից՝ բարոյականության բարձունքների: Պատահական չէ, որ ցանկացած շարժում՝ դեպի «առաջ և վեր», արդյունքում ընդունվում էր որպես առաջընթաց: Միևնույն ժամանակ, առաջընթացի գաղափարը կատարելապես տեղավորվում էր պատմության գծային բնույթի մեջ՝ «սկսած... մինչև...» հետագծով, ի դեպ, մշտապես ընթանալով ստորինից բարձրին, վատից՝ լավին, պարզունակից՝ կատարյալին:

Սխեման գայթակղիչ էր և ցայսօր էլ շարունակում է գրավել իր պարզությամբ ու հստակությամբ: Եթե շարժումը միտված է ընդամենը մեկ՝ ենթադրաբար ավելի լավ ուղղության, ապա այն ամենը, ինչ նախկինում տեղի է ունեցել մարդկության ու ժողովուրդների

հետ, ըստ սահմանման, ավելի վատն է: Եվ քանի որ առաջընթացն անխուսափելի է, վատը մահվան է դատապարտված: Այստեղից էլ՝ երեք եզրակացություն, որոնք ինքնին ակներև են թվում: Առաջին: Այն, ինչ եղել է «նախկինում», վաղ թե ուշ կհեռանա՝ տեղը զիջելով նորին, վերացականորեն՝ ավելի առաջադիմականին: Երկրորդ: Եթե համեմատաբար վաղ հասարակական ձևերը դատապարտված են, ապա ինչու չօգնել նրանց հեռանալու ավելի շուտ, այդպիսով արագացնելով Պատմության ընթացքը, խթանելու առաջընթացի գալուստը: Երրորդ: Այն պետություններն ու ազգերը, որոնք հապաղել են հասարակական-քաղաքական ձևերում՝ արտաքուստ թվալով հնացած, բնորոշվում են «հետամնաց», «քիչ զարգացած», և առաջադեմ մարդկության պարտքն է օգնել նրանց՝ ճեղքում կատարելու դեպի ապագա:

Իհարկե, առաջընթացի գաղափարի նման ընկալումը փոքրինչ պարզեցված է, բայց դա գիտակցված պարզեցում է, քանի որ վերջնահաշվում հենց այդպիսի մոտեցումը հաճախ դառնում է մարդկության գործունեության իրական մեխանիզմը, չնայած առաջընթացի գաղափարի ավելի ուշ շրջանի բոլոր մեկնաբանություններին:

Սակայն անցած հարյուրամյակների փորձը ողջ թափով ծառացրեց առաջընթացի գնի խնդիրը՝ հատկապես այն մոլորությունների ու ուտոպիաների գնի, որոնք հակված ենք ընդունել որպես առաջընթաց կամ նրա ճանապարհ: Պատմությունը դադարել է լինել «մութից լույս» յուրատեսակ վեկտոր. պարզ դարձավ, որ այն ունակ է գծել զարմանալի կեռմաններ: Հավանաբար, XVIII դարից փայփայած առաջընթացի մասին պատկերացման վերջին «մեխը» «խփեց» համակարգային մոտեցումը, որը գիտության ու ռազմավարական ծրագրավորման մեջ ամրապնդվեց 1970-ականների սահմանագծին: Պարզ դարձավ, որ առաջընթացի ցանկացած առանձին վերցրած ճյուղի կամ չափանիշի բացարձակացումը ամբողջական համակարգի համար դառնում է անխուսափելիորեն քայքայիչ. առաջընթացի մրցավազքը ինչ-որ մի ուղղությամբ հասարակության ու անհատի վրա անպայմանորեն կարտահայտվի մի այլ տեղում:

Անցած դարի վերջին երրորդը առաջընթացի գաղափարի խորը ճգնաժամի շրջան էր: Ճգնաժամ, որի արմատներն ընկած են արդյունաբերական մշակույթի և նրանից անմասնատելի ռացիոնալիզմի հիմքում, որոնք բացարձակացնում են ազատության, երջանկության, նյութական բարեկեցության գաղափարները: Այդ մեդալի հակառակ երեսը բնության ու բուն մարդու նկատմամբ բռնությունն ու ագրեսիան է:

Ամեն դեպքում, առաջընթացի գաղափարից հրաժարվելու ցանկություն չկա, չի կարելի: Նրա մերժումը կնշանակի ջնջել անգամ հնարավորությունը կառուցելու հասարակություն, աշխարհ՝ հիմնված բանականության, բարոյականության ու մարդասիրության հիմունքների վրա: Ընդսմին, ջնջել ճիշտ այն պահին, երբ մարդկությունը կանգնած է աննախադեպ խնդիրների ու մարտահրավերների առջև, որոնց լուծումը մեզանից պահանջում է հենց նոր, այսօրվա մակարդակը գերազանցող մտածողություն ու սոցիալական գործողություններ:

Եվ ընդհանրապես, եթե առաջընթացը սկզբունքորեն անհնար է, եթե այն ոչ այլ ինչ է, քան մեկը բազմաթիվ պատրանքներից, ապա այդպիսով նախապես արդարացվում են սոցիալական և այլազան անպատասխանատվության, եսասիրության, վայրենության, բարբարոսության, միջոցների մեջ խտրականություն չդնելու, մարդուն և ողջ մարդկային ցեղը քամահրելու ցանկացած ապագա դրսևորումները: Սոցիալ-պատմական ստեղծագործությունը կորցնում է իմաստը. ինչի և ում համար է այն, եթե ոչ մարդու երազանքների, որը նախկինում էլ թվում էր առաջընթացի օբյեկտիվ հեռանկար. ընդամենը ինքնախաբեություն՝ պայմանավորված մեր հուզաշխարհի առանձնահատկություններով և պատմականորեն ձևավորված իրողություններով:

XX դարի նյութական քաղաքակրթությունը պատմության մեջ առաջին անգամ հնարավորություն տվեց մարդկությանը իր երազանքները խարսխել հզոր գործնական հիմքի վրա: Փոխարենը պահանջվեց երազանքի հայտնի հողեղենացում: Եթե կատարյալ հասարակությունն անհասանելի է, առնվազն ժամանակի իրական

մասշտաբում, ժամանակակից սերունդների կյանքի ընթացքում, ապա դրա գործնական այլընտրանքն ամենևին երազանքներից ու իդեալից հրաժարումը չէ:

XXI դարի սկզբին առաջընթացի այլընտրանքային ուղիներն ընկալվում են արմատապես տարբեր, քան անգամ կես հարյուրամյակ առաջ: Ամեն ինչի ու ամեն բանի քանդումը և դատարկ տեղում հասարակության ու տնտեսության ինչ-որ կատարյալ նմուշի արարումը ամենատառապալի ու դժվար ճանապարհն է: Միևնույն ժամանակ այն չի երաշխավորում վերջնական արդյունքի որակը: Չէ՞ որ միսիոներն ու գաղութարարն էլ էին այն ժամանակ անկեղծորեն կարծում, որ աշխարհի տարբեր անկյուններ են հասցնում ճշմարտության ու քաղաքակրթության լույսը: Արդյունքում՝ մարդկության երկու երրորդը դատապարտված է հետապնդող զարգացման, այսինքն՝ մշտական ետնապահների դերին:

Սակայն թողնել ամեն ինչ այնպես, ինչպես կա ու թույլ տալ, որ աշխարհը զարգանա բնական ճանապարհով, առանց այն ուղղելու, արդեն չի հաջողվի՝ ուշ է: Աշխարհը ձևավորվել է որպես միասնական փոխպայմանավորված ամբողջություն: Այնտեղ բախվում են հզոր, տարամետ շահեր և ուժեր, կուտակվում են վտանգավոր ռիսկեր ու խնդիրներ: Տարերքը, այս պայմաններում, ինչ-որ տեղ կհասցնի, սակայն վերջին կանգառը կարող է ամենևին առաջընթացը չլինել:

Այստեղ է, որ ծագում է մարդկության զարգացման հեռանկարների գնահատման ու նպատակների ձևավորման մեկ այլ կարևոր հանգույց: Առաջընթացն այլևս չի դիտարկվում ոչ որպես անխուսափելիություն և, ինչն ավելի կարևոր է, ոչ որպես անհրաժեշտություն: Եվ դա ոչ թե բախումն ու մրցությունն է աշխարհի տարբեր, բայց առաջադեմ տեսլականների, մեր առջև մի այլ՝ իրականում շատ ավելի մեծ մասշտաբի հակամարտություն է: Բնության ու մարդկության «անմեղության դարաշրջանին» վերադարձի գաղափարը ողջ աշխարհում ավելի լայն աջակցություն է ստանում: Այս թեզիսի շուրջ միավորվում են և՛ բնապահպանները, և՛ կապիտալիզմի ու համաշխարհայնացման հակառակորդները, և աշխարհակա-

ռուցման բացարձակ բարոյականության կրքոտ պաշտպանները, ինչ որոշակի կրոնափիլիսոփայական ուսմունքի հետ էլ նրանց մոտեցումը կապված լինի: Մարդկության պատմության մեջ մուտք է գործում նոր մեծ գաղափար – քաղաքակրթության զարգացման ինքնասահմանափակման գաղափարը, որը հանդես է գալիս իբրև գոյատևման համադարման և համաշխահային մասշտաբով սոցիալական արդարության հիմնական սկզբունք:

Սակայն, արդյո՞ք, այդպես է: Մի կողմից ոչ ոք չի փորձում վիճել Արևմուտքի հետ այն հարցի շուրջ, որ հենց վերջինս է տնտեսապես և տեխնոլոգիապես հանդիսանում արդի աշխարհի ամենազարգացած մասը: Այստեղ ոչ մեկին ոչինչ ապացուցել պետք չէ: Բայց չէ՞ որ ծագում է մի այլ հարցադրում, որն ավելի վտանգավոր է «քաղաքակիրթ մարդկության» համար: Նրան առաջարկվում է ինքնահրաժարում և, լավագույն դեպքում, ինքնառնչնչացում այն ամենի, ինչն այսօր նրա էությունն ու հպարտությունն է՝ զարգացած տնտեսություն, գիտություն, տեխնոլոգիական կատարելություն: Դրա գինը առաջընթացի գաղափարից հրաժարումն է:

Իսլամական արմատականությունը, որը ոգեշնչեց սեպտեմբերի 11-ի և հոկտեմբերի 23-26-ի ահաբեկչական գործողությունները իրականացնողներին, էապես հրաժարումն է առաջընթացի գաղափարից: Ճիշտ ճանապարհն այն չէ, որ ուղղորդում է առաջ, նոր, անծանոթ և հավանաբար Սուրբ Գրքով չնախատեսված երևույթի, այլ այն, որ վերադարձնում է այն նորմերի ու կանոնների, միջոցների ու գործողությունների ստույգ վերարտադրությանը, որոնք եղել են իսլամի կայացման փուլում: Թալիբական «Աֆղանստանի իսլամական էմիրությունը»՝ այդ հակառաջադիմական քաղաքակրթական նախագիծը, վառ վկայությունն է այն բանի, որն առաջարկվում է, այսպես կոչված, իսլամական աշխարհի ժողովուրդներին: Նաև՝ մարդկության մնացած հատվածին, որի համար նախորոշված է թոթափել ամեն «ավելորդություն», ինչ նախատեսված չէ շարիաթով՝ ձևավորված տակավին VII դարում, Արաբական թերակղզում՝ շատ յուրահատուկ քաղաքակրթական միջավայրում:

Մյուս կողմից, եթե անգամ աշխարհի առաջադեմ պետությունները

ների համար հետագա առաջընթացի գաղափարը կարող է և կասկածի տակ առնվել, ապա այդ նույն թեզիսը հազիվ թե տեղին լինի աշխարհի մնացած հատվածի համար: Առաջընթացի բացասական հետևանքների ոչնչացումը կամ սահմանափակումը այստեղ հնարավոր չի թվում՝ դեմ-հանդիման շատ ավելի սարսափելի հեռանկարի՝ հետամնացության, աղքատության և մարդկության հիմնական զանգվածի անելանելի կացության պահպանում: Եթե Արևմուտքի մասին խոսելիս առաջընթացի սահմանափակման կարգախոսը հաճախ հնչում է որպես ավելորդություններից հրաժարվելու, բարու և չարի սահմաններից դուրս գալու վտանգավոր փորձը սահմանափակող կոչ, ապա մնացած աշխարհի համար նույն այդ կարգախոսը կարող է հնչել այլ կերպ՝ անհրաժեշտ զարգացումից հրաժարվելու դատավճիռ:

Եթե աշխարհի տարբեր երկրների ու մասերի միջև սոցիալական ու տնտեսական զարգացման առումով հարաբերական հավասարություն նկատվեր, հավանաբար, առաջընթացից ինքնահրաժարման գաղափարը շատ գրավիչ ու շատ արդյունավետ կլիներ: Սակայն իրավիճակն աշխարհում այլ է: Քաղաքակիրթ մարդկության, այսպես կոչված, «ոսկե միլիարդի» հետ մեկտեղ Երկրի վրա գոյակցում են միլիարդ թերսնվածներ, միլիարդ հիվանդներ, միլիարդ աղքատներ, միլիարդ անգրագետներ, միլիարդ դատապարտվածներ:

Բայց սա դեռ ամենը չէ: Եթե խնդրի արմատը այդ լիներ, կարող էինք ասել, որ մեզ պետք է ուղղակի համադրել առաջընթացի սահմանափակումը նրա վերաբաշխման հետ՝ հօգուտ աշխարհի նվազ զարգացած մասերի: Չնայած, իհարկե, այս թեզիսը ֆանտաստիկ է հնչում, քանզի հաշվի չեն առնված ոչ միայն ցանկացած «կատարյալ սխեմայի» իրականացման տեխնիկական ու բարոյական բարդությունները, այլև աշխարհի կապիտալիստական համակարգի գործունեության իրական սկզբունքները:

Խնդրի արմատը հենց այն է, որ մնացած աշխարհի հետամնացությունը միշտ եղել և է «մարդկության առաջադեմ ջոկատի» առաջընթացի կարևորագույն գործառույթը: Աշխարհի միասնության կազմավորումը գաղութային կայսրությունների սկզբնավոր-

ման ու զարգացման փուլում ինքնին վկայում է, թե ինչպիսին է մետրոպոլիայի ու գաղութային աշխարհի փոխգործակցության տնտեսական և սոցիալական մեխանիզմը: Վերջինս հանդես է եկել թե՛ որպես զարգացման ու արդիականացման ռեսուրսային հիմք, թե՛ որպես բուն մետրոպոլիաների սոցիալական խոր ինտեգրումն ապահովող շտեմարան և թե որպես նոր շուկաներ:

Այո, արևմտյան քաղաքակրթությունն իր զարգացման ընթացքում տվել է ինչ-ինչ պատասխաններ այն հարցերին, թե որո՞նք են աղքատության ու հետամնացության պատճառները և ինչպիսի՞ն պիտի լինի վերաբերմունքը դրանց նկատմամբ: Սակայն այդ պատասխանները քիչ բան են տալիս:

Հիմնականում նման իրավիճակը համարվում է ցավալի, բայց «բնական» և «անխուսափելի»: Չէ՞ որ այնտեղ, ուր ամեն ինչ որոշում են շուկան ու ազատ սոցիալական ընտրությունը, միշտ էլ կլինեն բարգավաճողներ և կենսական աղետի ենթարկվածներ: Այո, վերջիններիս պետք է օգնել՝ պետության ու հասարակության հնարավորությունների սահմաններում, մարդասիրությունից ելնելով և պարզապես հասարակության մեջ կայունությունն ու խաղաղությունը պահպանելու նպատակով: Բայց այդ օգնությունը սկզբունքորեն վիճակը չի փոխի, և, որ կարևոր է, ենթադրվում է, որ չպիտի էլ փոխի. հաջողակների առկայությունը ստիպում է մնացածներին հասնել նրանց, իսկ դա հասարակական զարգացման շարժառիթն է ու շարժիչը: Ահա ինչու, եթե կյանքի որակի տարբերությունը, զարգացման մակարդակը ամբողջության մեջ աշխարհի ինքնաշարժման աղբյուր է, ապա այն պետք է պահել, թեկուզև ընդսմին թույլ չտալով «եկամուտների բևեռների» կտրուկ տարբերություններ:

Բայց հարաբերությունների այսպիսի նմուշը վերջնահաշվում որևէ հարց չի լուծում: Աշխարհում կան մարդիկ, ովքեր ապրում են օրեկան մեկ դոլարից քիչ դրամով և կան, որ օրվա ընթացքում վաստակում են հազարներ, տասնյակ հազարներ: Պետությունների համեմատությունը մեկ շնչին ընկնող համախառն ներքին արդյունքի մակարդակով տալիս է համարյա 60:1 տարբերություն, որը շատ ավելի բարձր է, քան աշխարհի երկրների մեծ մասում «եկամուտ-

ների բևեռների» տարբերությունը: Ներկայումս իր բոլոր տեսակներով ու ձևերով ցուցաբերվող օգնությունը, - ՄԱԿ-ը, միջազգային այլ կազմակերպությունները, ինչպես նաև առավել զարգացած պետությունները, որ քառասուն տարուց ավելի է, ինչ այդպիսի օգնություն են տրամադրում «երրորդ աշխարհին», - իր հույժ կարևորությամբ ու օգտակարությամբ չի լուծում հիմնական խնդիրը: Այդ ողջ ժամանակաընթացքում խզումն ամենաաղքատ ու ամենահարուստ երկրների միջև շարունակում է աճել:

Ամենաաղքատ երկրներին տրամադրվող օգնության ծավալի աճը հազիվ թե լուծի խնդիրը, քանի որ նրա հիմքը ոչ թե քանակական, այլ որակական բնութագրիչներում է: Առանց որոշակի նպատակի նշանակալի օգնության տրամադրումը և ստացողի կողմից հստակ նպատակների ու պարտավորությունների բացակայությունը ժամանակի ընթացքում այդ երկրների վերնախավերի ու բնակչության շրջանում անխուսափելիորեն զարգացնում է մակաբուծական տրամադրություններ և պահանջներ, ինչն ավելի է հարվածում նրա զարգացման հնարավորություններին, ուժեղացնում է անհամամասնությունն ու անկայունությունը աշխարհում: Այսպիսով, այստեղ զարգացման գաղափար իսկ չկա, դրան փոխարինում է օգնությունը: Այս կամ այն երկրի զարգացումը խթանելու համար օգնություն տրամադրելու պայմանների որոշակիացման փորձերը հաճախ հետապնդում են ոչ թե այդ երկիրը «զարգացման մայրուղի» հանելու նպատակ, այլ հակառակը՝ բացահայտ կամ ծպտյալ ենթադրում են սոսկ զարգացած երկրների սեփական կայունության ապահովում (որ հուզումներ չլինեն) և նոր շուկաների ու հնարավորությունների ստեղծում նրանց տնտեսության համար: Արդյունքում, եթե հետամնաց աշխարհին հնարավորություն է ընձեռվում մոտենալ առաջընթացի ճանապարհին, ապա այն մնում է նրա ճամփեզրին, կամ էլ նրա օգնությամբ է կամրջվում հենց նույն ապագային:

1.2. Կայուն զարգացման խնդիրը

Աղքատության ու հետամնացության հիմնահարցն ունի ևս մեկ կողմ: Բազմաթիվ գիտնականներ վաղուց արդեն կասկած են հայտնում երկրագնդի բնական միջավայրի արդյունաբերական ու ենթակառուցվածքային այն հնարավոր բեռնվածությանը դիմանալու առթիվ, որը կպահանջվի, եթե փորձ արվի Երկրի բնակիչների մեծամասնության կենսամակարդակն ու կյանքի որակը հասցնել աշխարհի զարգացած մասի նվազագույն չափանիշներին՝ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումով:

Այսօր ոչ ոք չի վիճարկում առնվազն երկու դիտարկում. էկոլոգիական վիճակն աղետալի է և սպառնում է անորոշ, դրանով իսկ առավել անհաճո հետևանքներով ու վտանգներով և որ բնական պաշարների սպառումը հեռանկար է, որի հետ անհնար է հաշվի չնստել: Ըստ հայտնի կենսաբան Վ. Գ. Գորշկովի հաշվարկների, հասարակությունը կարող է սպառել կենսանյութի մաքուր արտադրանքի մինչև մեկ տոկոսը՝ դրանով չառաջացնելով կենսոլորտի անդառնալի խաթարումներ: Մինչդեռ, սպառումն այժմ արդեն գերազանցել է տասը տոկոսն ու շարունակում է աճել:

Առաջարկվել է և վարկածային պատասխան՝ կայուն զարգացման գաղափարը, որի դեպքում մարդկանց ընթացիկ պահանջմունքների բավարարումը հարցականի տակ չի դնի կյանքի որակն ու անգամ հաջորդ սերունդների գոյությունը: Այլ կերպ ասած, մենք պարտավոր ենք մեր երեխաներին ու թոռներին թողնել ոչ թե թալանված, աղբանոցի վերածված անկենդան անապատ, այլ մոլորակ՝ պիտանի արժանապատիվ ու առողջ կյանքի համար: Բնություն, որտեղ կա ու տեղ կլինի ոչ միայն մարդու, այլև կյանքի մյուս բոլոր ձևերի համար:

Գաղափարը ստացել է միջազգային հանրության աջակցությունը: Նրա օգտին դեռ 1987թ. քվեարկեց ՄԱԿ-ը: Նրա զարգացման ու իրականացման համար 1990-ականներին ստորագրվեցին մի շարք միջազգային համաձայնագրեր: Բազմաթիվ երկրներ, նե-

բառյալ Ռուսաստանն ու ԱՄՆ-ը, ընդունել են կայուն զարգացման ազգային հայեցակարգեր:

Ի՞նչ է արվել գործնականում: Արդյո՞ք, բնությունն առողջացել է կամ օդն ու ջուրը՝ մաքրվել: Եթե՝ այո, ապա ոչ մեծ չափով: Իսկ ահա տնտեսության մեջ անցած տասնամյակներում տեղի ունեցան երկու նշանակալի տեղաշարժեր: Նախ ձևավորվեց ու արագորեն զարգանում է, այսպես կոչված, էկոլոգիապես մաքուր ապրանքների ու ծառայությունների շուկան՝ ինքնին անհրաժեշտ, բայց որը դարձել է լրացուցիչ արգելք զարգացող երկրների արտադրանքը զարգացած երկրների շուկա արտահանելու գործում, և որը տնտեսական ու քաղաքական ներգործության ևս մեկ միջոց է՝ բազմաթիվ զարգացող պետությունների ներքին վիճակի վրա ազդելու համար: Այսինքն, ծագել է նոր անջրպետ հարուստների ու աղքատների, զարգացածների և զարգացողների միջև:

Զուգահեռաբար ձևավորվեց մթնոլորտի վնասակար արտանետումների քվոտաների շուկան: Ըստ համաձայնագրերի, յուրաքանչյուր մասնակից-պետություն իր տնտեսության մասշտաբի համապատասխան արտանետումների որոշակի քանակի իրավունք ունի: Պետությունները, որոնք ինչ-ինչ պատճառներով չեն օգտվում իրենց քվոտայից (օրինակ, Ռուսաստանը, որի արդյունաբերության նշանակալի մասը 1990-ականներին ուղղակի կանգ էր առել), կարող են վաճառել քվոտայի մի մասը նրանց, ում դա անհրաժեշտ է:

Բնապահպանական տեղաշարժերը նվազագույնի են հասցված: Առավել զարգացած երկրները օգտագործում են ռեսուրսների որակապես ավելի մեծ մասը, քան պակաս զարգացածները և արտադրում են աղտոտման համապատասխան մասը: Արդյունքում՝ մնացած աշխարհը վերածվում է ոչ այնքան զարգացման ռեսուրսային հենակետի և առաջավոր երկրների շուկայի, որքան առաջընթացի առաջատարների գոյության էկոլոգիական նշաձողի:

Արդյունքում՝ մոլորակի սոցիալ-էկոլոգիական շերտավորումը դառնում է նույնքան ուժեղ ու վառ արտահայտված, որքան սոցիալ-տնտեսականը: Արմատապես սխալ է կարծել, թե մարդկանց «էկո-

լոգիական բարեհաջողության» բաժանման հետևանքները կլինեն նույնքան պարզ, ուղղագիծ ու անգամ հայտնի ու հասկանալի, որքան սոցիալական շերտավորման հետևանքները:

Հավանական է, որ իրադարձությունները կընթանան զարգացման սկզբունքորեն այլ սցենարով: Կենցաղային մակարդակում զարգացած երկրների բնակչությունն ու բոլոր պետությունների ընտրախավերն արդեն այսօր հնարավորություն ունեն ապրելու էկոլոգիապես հարաբերականորեն լավ (կամ ուղղակի լավ) պայմաններում, խմել ցանկացած խառնուրդից մաքրված ջուր, օգտագործել ավելի որակյալ («էկոլոգիապես մաքուր») մթերք, ապրանքներ ու ծառայություններ: Թվում է, թե դա կլուծի խնդիրը երկրագնդի բնակչության մի մասի համար: Թեկուզ միայն «ոսկե միլիարդի» համար: Սակայն հենց դրանում է սկզբունքային խնդիրը: Այն փաստը, որ ծախսերի ու թափոնների առյուծի բաժինն ընկնում է զարգացած երկրներին (ԱՄՆ-ում միջին քաղաքացին օգտագործում է 150 անգամ ավելի էներգիա, քան Բոլիվիայի ու Բանգլադեշի բնակիչը), միայն ամրացնում է միջազգային մրցակցության խորացման անխուսափելիության թեզիսը, նոր համաշխարհային պատերազմի հեռանկարը՝ հանուն մաքուր օդի, ջրի և հողի:

Ժամանակակից արևմտյան հասարակությունների համար էկոլոգիական ճգնաժամը դիտարկվում է ավելի շուտ, որպես կյանքի որակի պահպանման խնդիր, այնպիսի պայմանների առաջացման կանխում, որոնք կվատացնեն կամ կվտանգեն ձեռք բերված կենսամակարդակն ու ոճը: Սակայն հարցի նման դրվածքն ի սկզբանե վնասակար է, քանզի իրականում էկոլոգիական ճգնաժամի խնդիրն ամփոփվում է մարդկության գոյատևման սահմանափակումների ձևավորման մեջ: Այն ռազմավարությունները, որոնք կողմնորոշված են էկոլոգիական ճգնաժամի պայմաններում կյանքի որակի պահպանմանը, ոչ միայն ռացիոնալ ու արդյունավետ չեն հասարակական ռեսուրսների վատնման տեսանկյունից, այլև որոշ իմաստով դառնում են անբարո:

Բացի դրանից, էկոլոգիական ճգնաժամը նման է միջուկային ճգնաժամին: Եթե դեռ հնարավոր է ջանք ու միջոց ծախսելով ան-

ձամբ փրկվել նրա տեսանելի և այսրոպեական դրսևորումներից, ապա նրա երկարաժամկետ հետևանքներից չեն կարող թաքցնել ոչ հարստությունը, ոչ էլ հասարակական դիրքը:

Բնական միջավայրի քայքայումը ծնում է նոր տիպի վտանգներ ու սպառնալիքներ: Աղտոտված միջավայրը և նրա հետևանքները տարածվում են երկրագնդով մեկ: Այդ աղտոտվածությունները կուտակվում են բույսերում, կենդանի օրգանիզմներում, սննդի միջոցով անցնում են մարդուն՝ երբեմն շատ բարդ ու արտասովոր ուղիով: Աղտոտվածության տարբեր տեսակներ ինքնին աղետալի չեն, կուտակվելով միմյանց վրա՝ դրանք տալիս են միասնական ներգործության էֆեկտ՝ ավելի ուժեղ ու անսպասելի իրենց հետևանքներով մարդու ու բնության համար, քան նրանցից յուրաքանչյուրն առանձին-առանձին: Եվ ինչ-որ կերպ այդ ամենի հետևանքներից թաքնվելն անհնար է կամ ծայրահեղ բարդ:

Անցած դարի վերջին տասնամյակները ծնեցին որակապես նոր բնույթի երևույթներ: Բնությունը՝ մանրէից մինչև մարդ, սկսում է փոխվել նոր միջավայրի ազդեցության տակ, յուրովի արձագանքելով նրա հետընթացին: Բժիշկների տվյալներով, Մոսկվայում ծնված երեխաների միայն երկու տոկոսը ծննդյան պահին կարող է համարվել գործնականում առողջ: Ահա մարդու կենսաբանության ու շրջակա միջավայրի փոխադարձ կապի նոր դրսևորում: Բոլոր ասպարեզների գիտնականներն ընդունում են, որ նման փոփոխությունների ուղղվածությունը դեռ պարզ չէ, հայտնի չէ անգամ՝ կրու՞մ են դրանք միանգամյա բնույթ, թե ունակ են և կուտակվում են օրգանիզմներում, ժամանակի ընթացքում հանգեցնելով ընդհանուր միջավայրի որակական վերածնման: Պարզ չէ նաև, թե, արդյո՞ք, մարդու գործունեությունը մոլորակի և ազդեցությունը բնական միջավայրի վրա կարող է հանգեցնել կլիմայական խորն ու տևական հետևանքների, և եթե այո, ապա ինչպիսի: Եթե վաղ թե ուշ այդպիսի հետևանքներ հայտնաբերվեն, ապա դրանց չեզոքացումը կամ փոխհատուցումը կպահանջի հսկայական ռեսուրսներ և միջազգայնորեն համաձայնեցված միջոցներ, համագործակցության ձևեր, մոտեցումներ, որոնք դեռ չեն ուրվագծվում:

Իհարկե, մենք պետք է հաշվի առնենք, որ բոլոր նման կանխատեսումները կառուցված են ներկայիս էկոլոգիական և ժողովրդագրական միտումների արտարկման հաշվարկների վրա: Եվ այդպիսի արտարկումները իրականում հանգեցնում են եզրակացության՝ մոլորակի էներգետիկ ու այլ պաշարների գալիք սպառման, կենսոլորտի էկոլոգիական տարողության վերջնական գերբեռնման ու նրա անդառնալի ձևախեղման մասին:

Սակայն ոչ բավարար են նաև զարգացման այժմյան միտումների «բեկման» մասին տեսակետները: Օրինակ, բնական պաշարների օգտագործման նվազեցման համար առաջարկվում է հասնել կամ անհատական պահանջմունքների կրճատման (փիլիսոփա Պանարինը պնդում է, որ «աղքատությունը պիտի նորից վերածվի առաքինության»), կամ մոլորակի կենսաբանական նորմերը գերազանցող բնակչության կտրուկ կրճատման միջոցով:

Սակայն որքանո՞վ են այս սցենարներն իրական և ընդունելի: Պարզ է, որ անգամ ռեսուրսների ոչ ռացիոնալ ծախսի նվազագույն սահմանափակումը բնույթով կարգավիճակային պահանջմունքների համար կհանգեցնի ոչ միայն մարդկանց մի նշանակալի մասի հասկանալի հոգեբանական անհարմարության, այլև կպահանջի բարդ փոփոխություններ կենսակերպի, տնտեսության կազմակերպման ու գործունեության չափանիշների մեջ: Որպեսզի «աղքատությունը դառնա առաքինություն», անհրաժեշտ են ոչ թե կառավարչական որոշումներ, այլ գիտակցության ու տնտեսվարման կենսաձևի սկզբունքային հեղաշրջում:

Ավելին, անգամ ռեսուրսների օգտագործման սահմանափակումը չի երաշխավորում նրանց բավարար քանակը մոլորակի բնակչության ներկա աճի պայմաններում: Բնակչության թիվը շարունակում է աճել և համաձայն կանխատեսումների՝ կհասնի 12-14 միլիարդի, իսկ ծայրահեղ գնահատականներով՝ 15-25 միլիարդի: Երկիր մոլորակի բնակչության առաջանցիկ աճը մոտակա 30-50 տարվա հեռանկարում բառացիորեն կհարուցի մոլորակի գոյության հարցը, քանի որ նրա ռեսուրսները չեն կարող բավարարել այդ քանակի մարդկանց՝ հասարակության կազմակերպման այ-

սօրվա տեխնոլոգիաների, նրա քաղաքական ու տնտեսական կյանքի պահպանման և գծային էվոլյուցիայի դեպքում:

Նույնքան էլ ակնհայտ է, որ եթե լուծվեն վերն արծարծված խնդիրները աշխարհի տարածաշրջանների զարգացումը հավասարեցնելու նպատակով (աղքատների համար ավելի լավ սննդի ու առողջության ապահովում), ապա ժողովրդագրական հիմնահարցը ավելի կխորանա: Կյանքի այն որակն ու տևողությունը, որ այսօր կա Արևմուտքում, կդառնան հասանելի, և այդ տարածաշրջաններում կիջնի մանկական մահացությունը, մահացությունը համաճարակներից և այլն:

Երկրագնդի բնակչության թվի կրճատման գաղափարի քննարկումը հանգեցնում է սարսափելի ենթադրությունների և գաղափարների: Ու՞մ հաշվին և ինչպե՞ս պետք է կրճատել բնակչությունը: Ամեն երկրի համար բնակչության նախընտրելի չափի «քվոտաների» սահմանման փորձերը հարուցում են տվյալ երկրի քաղաքական գործիչների ու քաղաքացիների բնական հակազդեցությունը, նաև բախվում են տեղական գիտնականների բարեկիրթ հակընդդեմ փաստարկներին: Իսկ և իսկ տրագիկոմիկական բախումներ են ծագում ապաբնակեցման հարցը քննարկելիս:

Պատերազմը ճարտասանորեն համարվում է անընդունելի, նաև անբավարար արդյունավետ միջոց: Միլիարդավոր մարդկանց «համոզել», որ նրանք դադարեն ծննդաբերել (օպերատիվ ապաբնակեցման համար անհրաժեշտ է հենց դադարեցնել և ոչ թե սահմանափակել ծնելիությունը. անգամ ամբողջատիրական իշխանություն և հազվագյուտ օրինապաշտություն ունեցող Չինաստանում սահմանափակման միջոցառումները ապահովեցին աճի սոսկ դանդաղում, բայց ոչ թե բնակչության թվի նվազում), կանխահայտորեն ուտոպիական խնդիր է:

Արդյունքում, «կայուն զարգացման» ծայրահեղ այս մեկնաբանությունները օգտագործում են գիտության հեղինակությունը այլատյացության, ազգային կասկածամտության ու անհանդուրժողականության (եվրոպական երկրներում վաղուց խոսում են «էկոֆաշիզմի» մասին) բորբոքման համար: «Ոսկե միլիարդի» գաղափարը

սպառնում է ստանալ նոր ու միանգամայն չարագուշակ իմաստ. ինչ-որ թվաքանակ, որին պիտի իջեցվի երկրագնդի բնակչությունը՝ հասարակական բնական ներդաշնակության հասնելու համար:

Ակնհայտ է, որ քաղաքակիրթ աշխարհը չի կարող երկրի բնակչության աճի դադարեցման կամ էլ նվազեցման հարց հարուցել: Մենք հակադրվում ենք մեր ողջ հասարակական պատմության բնական ընտրությանը: Եվ չենք կարող իրապես հարուցել գլոբալ ժողովրդագրական կարգավորման հարցը, չտրվելով ամբողջատիրության ու նոր ռասիզմի խավարին ու գայթակղությանը:

Այստեղ մենք ամենից առաջ պետք է հանգենք այն եզրակացությանը, որ երբ խոսքը այդպիսի մասշտաբների ու հետևանքների վտանգների մասին է, չի կարելի պատճառները վերագրել հանգամանքներին, անձեռնահաս կառավարմանը, մարդկանց ինչ-որ խմբերի ընչաքաղցությանը կամ փորձել դրանք լուծել, թեկուզև արմատական, սակայն «ներհամակարգային» միջոցներով:

Այս հարցում կարող է օգնության հասնել «զարգացման սահմանների» մարտահրավերի մեկ այլ պատասխան: Ամենաընդհանուր տեսքով այն հանգեցնում է նրան, որ մարդկությունը դեռ հեռու է զարգացման հնարավորությունները սպառելուց, շնորհիվ գիտատեխնիկական ու տեխնոլոգիական առաջընթացի, որը թույլ կտա մի քանի անգամ ընդլայնել քաղաքակրթության հորիզոնները և ազատել զարգացման սկզբունքային նոր ռեսուրսներ՝ ապահովելով ապագա ոչ միայն «ոսկե միլիարդի», այլև երկրագնդի բոլոր բնակիչների համար: Այս մոտեցման կողմնակիցները պնդում են, որ Երկիր մոլորակի պաշարները տեսանելի ապագայում հազիվ թե սահմանափակեն մարդկության զարգացումը, և մոլորակի բնակչությունը կարող է աճել ևս մի քանի անգամ, դույզն-ինչ չնվազեցնելով նրա կենսամակարդակը, հենվելով տեխնոլոգիայի արդի հնարավորությունների ու արտադրական ծավալների վրա: Մոլորակի պաշարներն իսկապես սահմանափակ են և դրանք պետք է խելամտորեն ծախսել: Սակայն ամենևին չի նշանակում, թե պետք է այդ բոլոր պաշարները փակել սնդուկում ու դեն նետել բանալին: Բնական հարստու-

թյունների օգտագործումը կարելի է նվազեցնել միայն տնտեսության զարգացմամբ: Իսկ վերջինս հնարավոր է զարգացնել միայն այդ հարստությունները ծախսելով:

Չնայած այս սատարող փաստարկների կառուցիկությանը, մարդկությունը չափազանց հեռու է տեխնոլոգիական ճեղքման վրա հիմնված համընդհանուր երջանկության ու բարօրության տեսապատկերից: Ո՞րն է գաղտնիքը: Գիտատեխնիկական ու տեխնոլոգիական առաջընթացի փաստն ակնհայտ է: Հիշենք նաև, որ հենց ԳՏԱ-ն է որոշում մարդկության զարգացման հորիզոնները վերջին հարյուրամյակում կամ նրա վերջին տասնամյակներում: Միևնույն ժամանակ մնում են էկոլոգիական խնդիրները, տարբեր երկրների և ժողովուրդների զարգացման աղաղակող անհամամասնությունը, խորանում է համաշխարհային մեծամասնության հետամնացությունը արևմտյան քաղաքակրթության առաջավոր ջոկատի զարգացման պարագայում:

Այստեղ ստիպված ես խորհել ու ենթադրել, որ առաջընթացի, համաշխարհային աղքատության և կայուն զարգացման սահմանափակումների փակուղու հիմքում ընկած է ողջ աշխարհում ընդունված տնտեսվարման եղանակը: Ինքնին գիտատեխնիկական առաջընթացը քիչ բան է նշանակում մարդկության գլոբալ խնդիրների լուծման գործում, եթե այն չի ամրապնդվում նույն տնտեսական և սոցիալական կյանքի տեխնոլոգիաների կազմակերպման առաջընթացով:

1.3. Տնտեսական աճի վարդապետությունը եւ «կապիտալիզմի ոգին»

Մենք մոտեցանք այն հարցին, որը, ըստ էության, ընկած է հենց առաջընթացի շուրջ ծավալվող բուն բանավեճի հիմքում: Հարցն այն է, թե սովորաբար ի՞նչ են հասկանում առաջընթաց ասելով, որո՞նք են համարում նրա հատկանիշներն ու չափանիշները: Ինչո՞վ են սովորաբար որոշարկում առաջընթացի չափաբաժինը, եթե ոչ առավել ընդունված և մատչելի տնտեսական, քանակա-

կան, սոցիալական պարամետրերով: Այսինքն՝ այն ամենով, ինչ ինքնաչափվում է՝ առանց հատուկ հնարամտության և դժվարության:

Ահա ինչու ժամանակակից արևմտյան տնտեսության գործնականն և տեսությունն իբրև անկյունաքար, առաջ են քաշում տնտեսական աճը, տեխնիկական և տեխնոլոգիական զարգացումը՝ բառի լայն իմաստով: Տնտեսական և գիտատեխնիկական աճի պաշտամունքը գրեթե կրոնական բնույթ է ձեռք բերել: Այսօր հենց տնտեսական աճն են համարում սոցիալական զարգացման և սոցիալական կայունության գլխավոր նախապայմանը: Նրա տեմպերով են գնահատում տնտեսության և հասարակության մրցունակությունն ու կենսունակությունը: Նրա ընթացիկ և կուտակված արդյունքները ծառայում են երկրի զարգացման սանդղակի բոլոր բնութագրիչների գնահատման գլխավոր չափանիշը՝ ոչ պաշտոնականից մինչև ՄԱԿ-ի վիճակագրությունը: Կլինի աճ՝ մնացյալն ինքնին կլինի, - այսպես են կարծում քաղաքագետներն ու գործարարները, տնտեսական ընտրանին և սովորական մարդիկ:

Կեցության այդ պոզիտիվիզմը հերթափոխեց, Օգյուստ Կոնտի խոսքերով ասած, մարդկության պատմության կրոնական և մետաֆիզիկական փուլին, մարդկության բարոյական կատարելության խնդիրը և կյանքի իմաստի նոր փնտրտուքը փոխեց սեփական մեծության ուրվագծվող նյութական դրսևորումներով:

Շուկան իրեն հատուկ մրցակցության կանոններով, անընդհատ բաժանում է տնտեսական գործընթացի մասնակիցներին հաջողակների և անհաջողակների: Բաժանում է բոլորին. թե գործարարին՝ ամենախոշորից մինչև ամենափոքրը, և թե վարձու աշխատողներին՝ սեւագործից մինչև բարձրակարգ մասնագետները կամ կառավարիչները:

Բաժանում է երբեմն «արդար», ըստ արժանիքների, հաճախ էլ, պատահում է, վիրավորանքի հասնող հիմարությամբ ու անարդարությամբ: Սակայն բաժանում է:

Զարգացած ու պատասխանատու պետությունները ձգտում են ինչ-որ կերպ ուղղորդել այդ գործընթացը՝ բնակչության ամենա-

աղքատ խավերին սոցիալական օգնություն ցուցաբերելով և պարբերաբար սնանկացումից փրկելով կորպորացիաներին, որոնք կարևոր են երկրի տնտեսության համար և ապահովում են մեծ թվով աշխատատեղեր: Սակայն դա հենց այն ուղղորդումն է, որը որոշակի սահմաններում շտկում է երևույթների բացասական հետևանքները, սակայն չի վերացնում բուն երևույթը:

Շուկայի զտիչ գործառույթը ոչ միայն նրա մի կողմնակի արդյունքն է, այլև կարևոր սոցիալ-տնտեսական մեխանիզմ: Հենց դա է խթանում հիմքն ու ինտենսիվությունը անհատի սոցիալական դրդապատճառի, անձի ինտենսիվ սոցիալական շահագրգռման համար, լինի գործարար, թե վարձու աշխատող, ինչպես և տնտեսության բոլոր սուբյեկտների: Շուկայի սուր մրցակցությունը՝ բաժանումն առաջինների ու վերջինների, ընթանում է ավելի դաժան և անգութ: Բայց և հիմնավորումն է արտահայտվում ավելի ուժեղ ու հստակ, ավելի զորեղ է գործում:

Սոցիալ-տնտեսական սանդուղքի բոլոր հարկաբաժիններում սեփական «անհաջողակների խմբի» գոյությունը կատարում է ևս մի կարևոր գործառույթ. Այստեղից հավաքագրվում են նրանք, ովքեր պատրաստ են կատարել տհաճ, սակայն հասարակայնորեն անհրաժեշտ պարտավորություններ: Կատարել ցածրորակ, հեղինակություն չունեցող աշխատանք, զբաղվել քիչ շահավետ և բարձր ռիսկային բիզնեսով, ընդհանրապես այսպես թե այնպես մտնել տնտեսության մարգինալ ոլորտները: Համեմատաբար ցածր վարձատրությամբ աշխատելու պատրաստ մարդկանց առկայությունը, օբյեկտիվորեն ծառայում է տնտեսության այնպիսի նշաձողերի ու ոլորտների ձևավորմանը, որտեղ որոշ ժամանակ հնարավոր է նկատելիորեն շահել մրցունակության մեջ, ի հաշիվ ցածր սկզբնական ծախսերի (հետո դրանք կաճեն, բայց դա կլինի հետո): Այսպիսով ձևավորվում է ողջ տնտեսության, նրա առանձին ճյուղերի ու սեկտորների դինամիզմի հիմքը:

Այս ամենի հանրագումարը, սակայն, նշանակում է, որ շուկայի պայմաններում նրա որոշ մասերի ու մասնակիցների հարաբերական հետամնացությունը չի կարող հաղթահարվել և չպիտի հաղթա-

հարվի «մինչև վերջ»՝ հանուն հենց շուկայի և նրա ճկունության, դինամիկության ու զգայունության պահպանման: Կարևոր չէ, թե դա ինչպիսի շուկա է՝ ներպետական, համաշխարհային, թե գլոբալ:

Այսպիսին, կամ մոտավորապես այսպիսին է այսօր մեր պատկերացումը, թե ինչպես է տնտեսվարում մարդկությունը, կամ ինչպես է գործում տնտեսապես: Թվում է, թե կապիտալիզմին ուղղված նման հայացքը վերջինիս զրկում է որևէ հեռանկարից, հասարակության կազմակերպման գոյություն ունեցող ձևերի ինքնուրույնության առաջընթացի որևէ հնարավոր զարգացումից: Սակայն այստեղ էլ ավելորդ չէ այն հարցը, թե որքանով են կապիտալիստական տնտեսվարման համակարգի մասին իրական պատկերացումներն ու գործողությունները համապատասխանում նրա նախնական իմաստին:

Որքան էլ առաջին հայացքից տարօրինակ թվա, համաշխարհային տնտեսության ու տնտեսվարման արդի սկզբունքները վերջնահաշվում հակասում են այն տնտեսական ու հասարակական կարգի հիմքերին, որը կոչվում է կապիտալիզմ:

Չէ՞ որ պատմականորեն կապիտալիզմը սկսվել է ոչ թե տնտեսական աճից (վերջինս «արտադրանք» է, արևմտյան տնտեսվարման նմուշի արդյունք), այլ էթիկայի ու կրոնի ոլորտում հեղափոխություններից, որը Մ. Վեբերն անվանել է «կապիտալիզմի ոգի»: Կապիտալիզմը ծնունդ է առել ոչ թե որպես տնտեսական համակարգ, այլ իր ծագումով որպես էթիկական ու կրոնական աշխատանքային ասկետիզմ:

Այսօրվա Արևմուտքի խնդիրն է դառնում սպառողական հասարակության ձևավորումը, «պատմության մոլորքի» գեղոնական մերժումը, «քրտինքը ճակատին» ծանր աշխատանքը թոթափելու և արժանապատիվ ապրելու համար պայքարի ձգտումը: Արևմուտքի տնտեսությունը ավելի ու ավելի է դառնում նոր արհեստական պահանջմունքների արտադրության տնտեսություն, որը մշտապես ստիպում է մարդուն ցանկանալ ինչ-որ նոր բան և նրան հեռացնել կեցության լարվածությունից: Քաղաքացիներին աշխատանքով ապահովելը դարձել է պաշտամունքի առարկա՝ նորանոր կի-

սատնտեսական նշաձողեր սահմանելիս, որոնք հնարավորություն են ստեղծում վճարել նրա գործունեության համար:

Դա, անկասկած, ստեղծում է գոյության հարամարավետ հենք և ծառայությունների տնտեսության աճի հնարավորություն է տալիս, սակայն քաղաքակիրթ աշխարհը զրկում է ոչ միայն «կյանքի» կամքից, այլ նաև մարդու և մարդկության զարգացման արժեքների գիտակցումից: Այդ սպառողական հասարակության մարդու համար աշխատանքը կյանքի աղբյուրից վերածվում է սպառման ու վայելքի լրացուցիչ հնարավորության:

Սակայն Նոր աշխարհի ամենամեծ տարիմաստությունն ու խնդիրն այն է, որ հետարդիական մարդու ու մարդկության խնդիրների այս նշված համակարգը քննարկելիս, պետք է հասկանանք, որ երկրագնդի բնակչության հսկայական մասը ոչ միայն չունի այսօրինակ խնդիրներ, այլև հիմնականում մտահոգված է, այսպես ասած, ավելի պարզ ու «երկրային» հարցերով: Այդ խնդիրները, ավելի շուտ, վերաբերում են ոչ թե հետարդիական, այլ արդի հասարակությունների ձևավորման շրջանին:

Եվ այստեղ մեր առջև արդեն ծառանում է Նոր ժամանակի հասարակական խնդիրը: Արդի աշխարհի տարբեր պետություններ, ազգեր ու հասարակություններ գտնվում են զարգացման տարբեր փուլերում, տարբեր դարաշրջաններում՝ խնդիրների տարբեր օրակարգով: Եվ հենց այդ տարբերություններն էլ դառնում են որոշիչ, քանի որ ոչ թե քանակական բնույթի տարբերություններ են և զարգացման փուլայնության հետևանք, ինչը գերակշռում էր նախկինում, այլ որակական տարբերություններ:

Առաջընթացը, մարդկության գիտակցված, արժեքների ու արժեհամակարգերի վրա հիմնված առաջընթացի փոխարեն վերածվում է տարերային փոխազդեցության և արգելքների ու հակակշիռների՝ տարամետ և հակադիր, հաճախ անտեսանելի բազմաթիվ ուժերի փոխգործակցության: Սակայն այդ բրոունյան շարժման որոշակիացնող վեկտորը միայն մեծ վերապահումով կարելի է անվանել առաջադիմական: «Շուկայի անտեսանելի ձեռքը», որը հիմնվում է կապիտալիզմի ու քրիստոնեության ազատ ընտրության

ոգու վրա, որը աշխարհը պիտի տաներ բարգավաճման, վերածվում է գլոբալ տնտեսության քողի տակ կատարվող ճարպիկ ձեռնածության:

Տարօրինակ կլիներ պնդել, որ աճը պետքական չէ կամ ունի երկրորդական նշանակություն: Որքան ամուր, հարուստ ու տարբեր է նյութական հիմքը, այնքան լավ, ամուր ու որակյալ կարող են լինել անհատի ու հասարակության կյանքի մյուս կողմերը: Ավելին, տարօրինակ կլիներ ժխտել, որ արդի աշխարհում տնտեսական աճի անհրաժեշտությունը հսկայական է: Սակայն այն հիմնվում է համաշխարհային քաղաքակրթության խնդիրների ու նպատակների այլ ընկալման վրա: Հենց այն պատճառով, որ աղքատությունն ու հետամնացությունը դուրս են եկել մոլորակի խուլ անկյուններից և դարձել են համամոլորակային խնդիր, անհրաժեշտ է ոչ միայն տնտեսական աճ, այլ վերադարձ «կապիտալիզմի ոգուն» ու նրա օգտագործմանը սոցիալական խնդիրների հաջողակ լուծման համար, ինչն արդեն այլ մեխանիզմ է, ոչ միայն սոցիալական, այլև վարչական, քաղաքական, իրավական, այլազան, սակայն նաև տնտեսական:

Շուկան պիտի ստեղծի և ապահովի ոչ միան «ընդհանրապես» համաշխարհային տնտեսության ու առանձին երկրների աճը, որոնք առանց այդ էլ առավել զարգացած ու առաջադեմ են: Արդի շուկան պետք է կատարի այդ գործառույթները նախևառաջ այնտեղ, որտեղ կա կարիք և հսկայական, բայց անվճարունակ պահանջմունքներ: Եթե նախկինում տնտեսական աճը ստեղծում էր XX դարասկզբի առավել զարգացած պետությունների տնտեսությունների կարգավորման հիմքեր, այդպիսով խթանելով նրանց խզումը պետությունների հիմնական զանգվածից, ապա այսօր աճի նպատակը պետք է լինի քիչ հաջողակ ու առավել խնդրահարույց երկրների ու տարածաշրջանների արագացված վերելքը:

Խոսքը շեշտադրումների փոփոխության մասին է. աճ ոչ թե ինքերս մեր համար, այլ աճ՝ մակրոսոցիալական նպատակների ապահովման համար: Միևնույն ժամանակ, քանի դեռ գործում է աճի մոդելը՝ ձևավորված պատմականորեն և գործնականում ուղղ-

ված առաջին հերթին զարգացած պետությունների կարիքների բավարարմանը, ներառյալ առաջին հերթին նրանց տնտեսության աճի անհրաժեշտությունը: Արտառոց վիճակ է. տնտեսական աճ կա, սակայն իր ավանդական տեսքով և ավանդական «տեխնոլոգիաներով» դրան հասնելով՝ այն չի նվազեցնում, այլ ուժեղացնում է ժամանակակից մարդկության խնդիրները:

Աշխարհը XXI դարում հազիվ թե կարողանա պահպանել կայունությունը, եթե սահմանափակվի ծախսերը նվազագույնի հասցնելու ձգտումով, պահպանի առաջընթացի նախկին մոդելի հիմքերը, հիմնվի ամլացած և իր նախնական բարոյական մոդելից զրկված կապիտալիստական տնտեսվարման վրա:

1.4 Հետարդյունաբերական աշխարհը

Սակայն, երբ մենք խոսում ենք ավելի ազնիվ զարգացման ու աճի մասին՝ ի շահ ողջ մարդկության, և ոչ թե նրա մի մասի, մենք նկատի ունենք, որ ինքը՝ տնտեսվարման ու քաղաքական-տնտեսական կազմակերպությունը, չի զարգանում: Արդյո՞ք, դա այդպես է:

Արդի արևմտյան աշխարհը փաստորեն անցել է իր զարգացման նոր փուլի, որը հաճախ անվանում են հետարդյունաբերական: Այս եզրույթը արտացոլում է նախևառաջ արդի քաղաքակրթության տնտեսական բովանդակությունը, որը զարգանում է նախ գիտատար տնտեսական տեխնոլոգիաների միջոցով և որպես վիրտուալ, ֆինանսական կապիտալի տեղեկատվական տնտեսություն:

Նրա կազմակերպման ու գործունեության սկզբունքները արդեն այսօր զգալիորեն տարբերվում են արդյունաբերական հասարակությունների ավանդական կառուցվածքից: Ակնկալվող հնարավորությունները նույնպես շատ մեծ են: Գուցեև հենց այստե՞ղ է մեզ անհրաժեշտ փնտրել այսօր ելքը զարգացման այն փակուղիներից, որոնք դառնում են ավելի ակնառու:

Իրականում, գիտատեխնիկական առաջընթացի ու տեխնոլոգիական առաջադիմության, գիտության առաջընթացի գաղափարները, որոնք կորոշեն աշխարհի ապագան և նոր որակը, հույժ հե-

տաքրքրական են թվում: Արևմուտքի հետարդյունաբերական և հետարդիական տնտեսությունում բացահայտ զգացվում ու նկատվում է ազդակը, փորձը՝ որդեգրել տնտեսության կազմակերպման նոր սահմաններ ու սկզբունքներ, հաղթահարել այն սահմանափակումները, որոնք հատուկ են տնտեսության ավանդական կազմակերպմանը: Մարքսիստական տնտեսական բառապաշարով կարելի էր ասել, որ հետարդյունաբերությունը փորձ է հաղթահարելու տնտեսության կախվածությունն այն հիմնարար գործիքներից, որոնք մինչ այդ ծառայել են նրա զարգացմանը՝ բնական ռեսուրսներ, մարդու ֆիզիկական աշխատանք, արտադրական կապիտալ: Նոր տնտեսությունը խրախուսում ու հասարակության ծառայությանն ի սպաս է դնում այլ ուժեր, նախևառաջ գիտության ու գիտելիքի նորարարական ներուժը, որը վերարտադրում է տեղեկատվության տեխնոլոգիական կատարելությունը: Հարդյունս՝ փոխվում է հենց տնտեսության իմաստը. նրա հիմնատարրը հսկայական արդյունաբերական գործարանների փոխարեն դառնում է գիտելիքներ ունեցող մարդը, որը հիմնվում է համակարգչային տեխնոլոգիաների ու համաշխարհային տեղեկատվական ցանցի վրա:

Դրա արդյունքում ստեղծվող հնարավորությունները կարող են կապվել գործընթացի այն սահմանափակումների հաղթահարման հետ, որոնք ակնհայտ են արդի զարգացման տրամաբանության վերլուծության տվյալներով, առաջընթացի նոր բանաձևի անցումով, ինչը հնարավորություն է տալիս սահմանափակել բնական ու այլ ռեսուրսների օգտագործումը, չկասեցնելով զարգացումը:

Հնարավոր է, որ մենք կարողանանք բացահայտել նոր տնտեսություն և գլոբալ հետամնացության հաղթահարման նոր ներուժ, եթե տեսնենք, թե ինչ ձևով է հնարավոր ինտեգրել ողջ աշխարհը միասնական տեղեկատվական միջավայրի շրջանակներում և իրացնել անգամ ամենահետամնաց հասարակությունների ստեղծագործական ներուժը:

Այն չափով, որքանով հետարդյունաբերական շրջանը կապված է առաջին հերթին մարդու ստեղծագործ ներուժի զարգացման հետ, աշխատանքն ինքնին կրկին ձեռք է բերում արժեքային

իմաստ և բարոյական չափում, որոնք, իհարկե, չեն լինի այնպիսին, ինչպիսին վաղ կապիտալիստական քրիստոնեական էթիկան էր, սակայն, անտարակույս, կապված կլինեն աշխարհընկալման հիմունքների հետ ընդհանրապես և այս աշխարհում մարդու կեցության իմաստի հետ:

Սակայն հետարդյունաբերական համակարգերի այդպիսի զարգացման մասին ենթադրություններն իրենց դեռ չեն արդարացնում:

Տնտեսական և սոցիալական առաջընթացի, նաև անձնային աճի հիմքը, դառնում է նոր արտադրության, նոր տեխնոլոգիայի, նոր գիտելիքի, գյուտի հնարավորությունը: Հետարդյունաբերական աշխարհի անցաթուղթը հանդիսանում է յուրատեսակ տեխնոլոգիա ստեղծելու կարողությունը և դրա վրա հիմնված արտադրանքի ստեղծումը, ինչը կարող է հետաքրքրել աշխարհին: Սակայն զարգացման այս նոր չափանիշները շարունակում են գոյություն ունենալ տնտեսական պրակտիկայի իմաստի մասին հին պատկերացումների տրամաբանության մեջ և միջազգային ասպարեզ դուրս գալ նախկին նորմերի փոխազդեցությունների պահպանման պայմաններում:

Զարգացման առաջատար սահմանների նկատմամբ վերահսկողությունը, ինչը նշանակում է և վերահսկողություն այդ զարգացման հնարավորությունների վրա, արևմտյան քաղաքակրթության հիմնական ռեսուրսն է: Արևմուտքի տնտեսական գերակշռության ռազմավարությունը հիմնված է տեխնոլոգիական զարգացման նոր սահմանների մենաշնորհայնացման, այդ գերակշռություններից գերշահույթի ստացման և ողջ աշխարհին իրենից կախված գոյությունն ապահովելու կարողության վրա:

Գերգիտելիքների հիման վրա ստացված արդյունքները ոչ միայն անօտարելի են դրանք ստեղծողից, այլև նախապայմաններ են ստեղծում ապահովելու առանձին անձանց, կորպորացիաների, պետությունների և ողջ աշխարհի՝ դրանցից կախվածությունը:

Այդպիսով ուժեղանում է թե աշխարհի բևեռացումն ու անհավասարությունը, և թե նոր գիտելիքից նրա կախվածությունը:

Ընդսմին, Արևմուտքը վաճառում է միայն իր մտավոր ու տեխնոլոգիական առավելության արդյունքները և ոչ թե բուն առավելությունը: Ավելին, այլ պետություններ, որոնք ձեռք են բերում արևմտյան տեխնոլոգիական գիտական գիտելիքի արդյունքները, չունեն դրանց վերարտադրության մտավոր և տեխնոլոգիական հնարավորությունը: Իսկ ուղեղների արտահոսքի չարչրկված թեման որոշ առումով իսկապես հանդիսանում է բազմաթիվ պետությունների հիմնական խնդիրը, քանի որ նշանակում է նրանց կողմից և՛ նորի արտադրության ներուժի կորուստ, և այդ ներուժի վերարտադրության կորուստ: Միևնույն ժամանակ, ակնհայտ է գլոբալ ֆինանսական տնտեսության կայացումը, որի օգնությամբ պետությունները, ինչպես նաև մասնավոր շահերի տարբեր խմբեր ապահովում են գերշահույթի հասնելու խնդիր՝ բորսայական սպեկուլյացիաների և պարտքային տնտեսության համաշխարհային ֆինանսական բուրգից: Հետարդյունաբերության այս երկրորդ կողմը սկզբունքորեն հավասարվում է մարդկային ներուժի նոր բացահայտման միտումին և ստեղծագործ աշխատանքի արժեքային իմաստին:

Վիրտուալ ֆինանսական տնտեսությունը նվազ արտադրողական է, լինելով իր բնույթով շահույթի ինքնավերարտադրության բացարձակ վիրտուալ համակարգ, փող հանուն փողի, որտեղ նույն այդ փողերն արդեն վաղուց կապված չեն դրա արտադրական կամ աշխատանքային ապահովման հետ և վերածվել են տեղեկատվական պաշտամունքի, մերկ թվեր են համակարգիչներում, որոնց ողջ սպասարկումը հիմնված է Արևմուտքի գլոբալ տեղեկատվական գերակշռության վրա:

Այս համակարգը, որը վաղուց կորցրել է կապը իրական տնտեսության և իրենից ածանցված ֆինանսական գործիքների հետ, իր բնույթով հանդիսանում է ոչ միայն գլոբալ տնտեսության հետածգված սնանկացման, այլև ապագայի սպառման համակարգի մեխանիզմ: Գլոբալ տնտեսությունը, պատկերացումը նրա մասին, որպես զարգացման համընդհանուր մեխանիզմի՝ ավելի շուտ հիշեցնում է հավատը ֆինանսական բուրգերի նկատմամբ, որտեղ հիմնական շարժառիթը այն հանգամանքի հստակ գիտակցումն է, որ

դու հետագայում կշահես լինելով գործընթացի առաջին շարքերում, այդ բուրգի վերին մասում, կամ էլ հավատալով, որ կհասցնես ստանալ քոնը, այնինչ խաբված կլինի նա, ով կհայտնվի ավելի ներքևում: Այդ գործընթացը լրացվում է աշխարհի առաջնորդների օբյեկտիվ հետաքրքրությամբ մնացած աշխարհի հետամնացությունը և կոնսերվացնելու առումով, որն անհրաժեշտ է որպես բարեկեցության բազա համաշխարհայնացվող համակարգի համար:

Քաղաքական և տնտեսական գործընթացներն ավելի մեծ չափով են ծավալվում տեղեկատվական, վիրտուալ հոսքերի քաղաքական միջավայրի, տեղեկատվական հոսքերի, ֆինանսների, կամայական որոշումների, խորհրդանշական ռեսուրսների և գիտելիքների շուրջ: Արևմուտքի հետարդյունաբերական տնտեսության զարգացումը վերածում է նրանց, ինչպես և ամբողջ աշխարհը, ավելի ու ավելի հետսպառողական ու հետաշխատանքային հասարակության:

Աշխարհում զարգանում է կախյալ զարգացման նոր ձև: Այն բնորոշվում է ոչ այնքան ռեսուրսային կախվածությամբ, որից կարող է տուժել նաև Արևմուտքը, և ոչ էլ ֆինանսական կախվածությամբ, որն արտաքին պարտքի կամ ներդրումային անբավարարության պայմաններում այդքան էլ զգալի չէ, ինչպես, օրինակ Ռուսաստանի դեպքում: Կախվածության ամենակարևոր տեսակը դառնում է տեղեկատվական և տեխնոլոգիական կախվածությունը, որը կապված է զարգացման նոր որակի ստեղծման հետ:

Զարգացման կախվածությունն արտահայտվում է նաև նրանում, որ միայն Արևմուտքն ունի ռեսուրսներ, որը փաստորեն թույլ է տալիս այս կամ այն երկրին հասնելու իրեն և փոխգործակցելու հետարդյունաբերական աշխարհի հետ: Դա ամփոփվում է նաև տեխնոլոգիայի արտահանման համաձայնությամբ և ներդրումներով: Այլ երկրների զարգացման վրա այդպիսի վերահսկիչ փաթեթի առկայությունը ուղիղ վերահսկողությունից ավելի ծանրակշիռ է: Բայց և դրանով չեն սահմանափակվում հետարդյունաբերական հասարակության զարգացման խնդիրները: Եթե խնդիրը սահմանափակվեր միայն Արևմտյան քաղաքակրթության գերակշռության

նոր հիմքերի և տեխնոլոգիաների ստեղծմամբ, ապա մենք կարող էինք ասել, որ խոսքը քաղաքակրթության տնտեսական զարգացման նախկին խնդիրների համալիրը նոր մակարդակի վրա վերարտադրելու մասին է, թեև նրանում էլ արտացոլվում են որոշ, թեկուզև թույլ, սակայն հնարավորություններ՝ ժամանակի ընթացքում և որոշակի կամքի շնորհիվ հաղթահարելու դժվարությունները:

Գլոբալ իրավիճակի բարելավման հիմնական ու որոշիչ գործիքը պիտի լինի հին տեխնոլոգիաների օգտագործումը՝ արդի զարգացման արատավոր շրջանից դուրս պրծնելու համար: Ի վերջո, համաշխարհային պատմության մեջ հենց այդ համակարգային ճգնաժամերն են մշտապես ծնել տեխնոլոգիական ինտենսիվացում ու հաղթահարվել դրա միջոցով: Որքան ռոմանտիկ, այդքան էլ անիրական առաջարկները՝ սահմանափակելու զարգացումն ու ստեղծելու «նոր արխայիկություն» նախասկզբնական բնության տեսքով, պատրանք են թվում:

Բայց զարգացման փակուղիների հաղթահարումը նոր տեխնոլոգիական կտրուկ մղման միջոցով կպահանջի գիտակցության բացարձակ այլ մակարդակ, և ծայրահեղ բարդ կլինի վերահսկելու այս կամ այն խմբերի գայթակղությունը՝ հրաժարվելու ինքնասահմանափակումից հանուն մարդկության նկատմամբ համաշխարհային իշխանության և գերակայության: Հենց այստեղ բացահայտվում է, որ գիտատեխնիկական առաջադիմության արագ ընթացքը և սկզբունքորեն նոր տնտեսվարող կազմակերպության սկզբունքային հիմքերի փոխակերպությունը հետարդյունաբերական պայմաններում ծնում են մի շարք նոր, չափազանց վտանգավոր գործընթացներ: «Ապագայի տեխնոլոգիաները», որոնք մենք այսօր արդեն պատկերացնում ենք, կարող են դիտարկվել և որոնք սկզբունքորեն որպես ժողովրդագրական, էկոլոգիական և սոցիալական խնդիրների լուծում, ունակ են ինչպես տեղաշարժել կյանքի հորիզոնները, այնպես էլ մարդկության ոչնչացման մասին հարցը հարուցել ոչ միայն գործնական, այլև բացարձակապես օրախնդիր հարթությունում:

«Սան մայքրոսիսթեմ» ընկերության համահիմնադիր և առա-

ջատար հետազոտող Բիլ Ջոյի՝ նանոտեխնոլոգիաների* խոշոր մասնագետի հոդվածում արտահայտված է այսպիսի անսպասելի և, անկեղծ ասած, ցնցող միտք: Եթե XX դարը, գրում է նա, զանգվածային ոչնչացման զենքի դար էր (որի հետ մարդկությունը լավվատ սովորեց գոյատևել), ապա այժմ թևակոխել է *զանգվածային ոչնչացման գիտելիքի դարը***:

Օրինակ, ատոմային զենքի պատրաստման համար պահանջվում են հսկայական ֆինանսական, հումքային և այլ ծախսեր, որոնք XX դարում ի վիճակի էին հոգալ միայն մի քանի հզորագույն պետություններ: Համապատասխանաբար, այդպիսի զենքի օգտագործման ու այն, ինչ կապված է դրա հետ (գիտական ու տեխնիկական փաստաթղթեր, փորձարկումներ և այլն) գտնվել է պետական խիստ վերահսկողության ներքո և դարձել է համաձայնության առարկա գիտակից կառավարությունների միջև, որոնք հասկացել են իրենց պատասխանատվությունը սեփական ժողովրդի ու մարդկության առջև: Նանոտեխնոլոգիաների զարգացումը, սակայն, ինչպես նաև գենային ինժեներիան և ռոբոտոտեխնիկան, հասարակության համար հսկայական օգուտի հետ մեկտեղ բերում են փոխադարձ ոչնչացման նոր հնարավորություններ, որոնք պակաս վնասակար չեն՝ անհամեմատ քիչ ծախսատար լինելով: Դրանք արդեն դուրս են մնում պետական վերահսկողությունից, ընկնում են բավարար չափով հարուստ կորպորացիաների, իսկ հեռանկարում՝ նաև ավելի փոքր խմբերի ձեռքը:

Գլոբալ վիրտուալ տնտեսության ու նոր տեխնոլոգիաների զարգացման համադրությունները ծնում են տնտեսական գործունեության ապաբարոյականացման նոր հնարավորություն, գլոբալ ստվերային ու քրեածին տնտեսության զարգացում ու տնտեսա-

---

* Նանոմետր – մետրի մեկ միլիարդերորդ մասը, համադրելի ատոմի ու պարզ մոլեկուլների հետ: Այդ մեծության տարրերը թույլ կտան գրանցել տեղեկություններ մեկ բիր մոլեկուլ խտությամբ, և արդյունքում հաշվիչ մեքենաները ձեռք կբերեն գործնականում անսահմանափակ հիշողություն ու արագագործություն՝ սահմանափակված միայն սարքի միջով ազդանշանի անցման ժամանակ:

* Տե՛ս Goy B. Why the future doesn't need us // Wired. – 2000. - April

կան վախ: Քաղաքական ահաբեկչության ավելի ու ավելի զարգացած հնարքները խնդրահարույց են դարձնում նաև ատոմային էլեկտրակայանների, քիմիական արտադրությունների և զինապահեստների անխոցելիությունը, հնարավոր է, որ մոտ ապագայում իրական դառնան ատոմային «միկրոռումբերը» և այլ ինքնատիպ անակնկալներ:

Սպասվում է, որ 2030 թ. համակարգիչների հզորությունը 2000 թվականի համեմատ կաճի միլիոնավոր անգամներ, իսկ բոլոր հասարակական խնդիրների կախվածությունը տեղեկատվական համակարգերից կհասնի այն խորության, որ դրանց «վիրտուալ» քայքայումը հավասար կլինի ողջ հասարակական կենսագործունեության ատրոֆիայի: Սակայն դա դժբախտության կեսն է: Այդպիսի համակարգիչներն արդեն հնարավորություն են ընձեռում ստեղծել նանովիրուսներ (ոչ թե վիրտուալ, այլ՝ իրական), որոնք ունակ են ընտրողաբար վնասելու մարդկանց՝ տրված գենետիկային հատկանիշներով, ծրագրավորողի քմահաճույքով:

Ամենասարսափելին այն է, որ այդպիսի զենքի արտադրությունը կդառնա բավական էժան ու հասանելի, և արդեն ոչ միայն պետությունները, այլև առևտրային կորպորացիաները հնարավորություն չեն ունենա վերահսկել, այն կարող է դառնալ համակարգչի գիտակ խենթերի փոքրիկ խմբի սեփականությունը:

Ջոյը չի բացառում հավանականությունը, որ սխալի դեպքում նանովիրուսները ընդհանրապես դուրս կգան մարդու վերահսկողությունից: Այդ ժամանակ նրանք, լինելով կենդանի օրգանիզմներից ավելի փոքր, արդյունավետ ու ագրեսիվ, ունակ են հաշված օրերի ընթացքում ոչնչացնել Երկրի բոլոր սպիտակուցային մոլեկուլները:

Նանոտեխնոլոգիաների զարգացումը հարուցում է էկոլոգիական ու աշխարհընկալման մի շարք խնդիրներ: Օրինակ, գլոբալ մասշտաբով պարենամթերքի խնդրի լուծումը, եկրագնդի աճող բնակչության սնվելու պահանջմունքի բավարարումը հնարավոր չէ ավանդական գյուղատնտեսության շրջանակներում: Խնդիրը կա-

րող է սկզբունքորեն լուծվել միայն գենետիկ տեխնոլոգիաների օգնությամբ, գենետիկորեն վերափոխարկված մթերքների արտադրությամբ: Նմանապես և առողջության ապահովման խնդիրը, բնապահպանության վիճակի վատթարացմանը զուգահեռ, կարող է սկզբունքային մակարդակում լուծվել միայն օրգանների բժշկական կլոնավորման տեխնոլոգիայի միջոցով: Վիրտուալ ու տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման այս ճանապարհին կամ ճանապարհներին շատ շուտով իրապես կծառանա անձի փաստացի անմահության հարցը: Այս դեպքում պետք չէ մարգարե լինել, ենթադրելու, որ առանձին անձանց համար անմահության կամ կյանքի անվերջ երկարաձգման հնարավորությունը անմիջապես կդառնա մարդկության սոցիալական և ռասսայական շերտավորման նոր գործոն:

Ակնհայտ է, որ այս ամենը բացարձակապես աննախադեպ սպառնալիքներ են, և մարդկությանն իր նախկին պատմական փորձառությունում չէր կարող մշակել մշակութային կարգավորման նման մեխանիզմներ՝ «հիմարակայուն համակարգեր», որոնք համապատասխան լինեին դրանց: Պարզ է, որ այդպիսի տեխնոլոգիայի լայն օգտագործումը և այդ լուծումների զարգացումը մինչև վերջ չեն գիտակցվում:

2 Ընդհատված համաշխարհայնացում

Որքան շատ ենք խոսում արդի աշխարհի տնտեսական զարգացման սահմանափակումների մասին, այնքան ակնհայտ է դառնում, որ դրանք բոլորն այս կամ այն կերպ կապած են աշխարհի ինքնաբախման հետ, որպես արդյունք երկրային տարածքի ամբողջական յուրացման: Այս կամ այն կերպ, - սակայն հենց դրանում է համաշխարհայնացման գործընթացի հիմքը, այսինքն՝ աշխարհի էքստենսիվ յուրացումից ինտենսիվ յուրացման անցնելու փորձը, երբ նոր չյուրացված տարածքների ու ռեսուրսների միջոցով խնդիրները լուծելու հնարավորությունները կդառնան առավել սպառված: «Զարգացման սահմանի» գաղափարը սոսկ մասնա-

վոր դեպք է՝ «բուն աշխարհի» սահմաններում, երկրագնդի ֆիզիկական սահմանափակվածության պատճառով:

Համաշխարհայնացումը ամենից առաջ կապված է տնտեսական զարգացման և միջազգային հարաբերությունների համակարգի կայացման հետ: Սակայն այդ գործընթացի հիմքի վրա ընթանում է և մարդկության քաղաքական, սոցիալական ու մշակութային համաշխարհայնացումը: Այդ գործընթացների բովանդակությունն ունի իր սեփական տրամաբանությունն ու դինամիկան: Դրանցում մենք կարող ենք տեսնել և հետարդիական աշխարհի նոր խնդիրները, և հնարավոր է՝ հենց ժամանակակից, մեծ մասամբ տնտեսական համաշխարհայնացմանը չբավականացնող՝ զարգացման փակուղիների հաղթահարման ռեսուրսները:

Այդ ամենով հանդերձ, սակայն, մենք պետք է տեսնենք, որ հենց դիմադրությունը համաշխարհայնացմանն ու նույնականացմանը, սոցիալական, քաղաքական ու մշակութային կառույցների կողմից ավելի նշանակալի ու հետաքրքիր է, քան նույնը տնտեսությունում կամ միջազգային ռազմաքաղաքական հարաբերություններում: Այդ պատճառով հենց այստեղ մենք, ամենից շատ, ակնկալում ենք տեսնել և իրականում տեսնում ենք միջազգային զարգացման մեջ համաշխարհայնացման միտումների արձագանքներ, որոնք կապված են տարբեր հասարակություններում և մշակույթներում ինքնագիտակցության աճի հետ, նրանց ինքնուրույնության և ոչ միայն սեփական, այլև գլոբալ էվոլյուցիայի հեռանկարային զարգացման տեսլականի հավակնությունները:

Այդպես ձևավորվում է գլոբալ միասնական աշխարհը, որտեղ գաղափարը զարգացման ռեսուրսի որակի հետ մեկտեղվում է ոչ միայն տնտեսությունում, այլև այլ ոլորտներում համակցված է տարբեր հասարակությունների գլոբալ մրցակցությամբ սեփական ապագայի և այն որոշելու իրավունքի համար: Համաշխարհայնացման գործընթացը հավելվում է նոր քաղաքակրթական բեկումներով, որոնք, թվում է, կարող են միայն ուժեղանալ այն չափով, որքան արագ աշխարհի չափերը մեր կողմից կընկալվեն ավելի պարզ ու հստակ:

2.1 Համաշխարհայնացում եւ արեւմտականացում. միասնական աշխա՞րհ, թե «ապագայի սեփականաշնորհում»

Ժամանակակից Արևմուտքի ողջ զարգացման մեջ հստակորեն ի հայտ է գալիս «քաղաքակիրթ մարդկության» հսկայական գայթակղությունը անցնելու առաջընթացի նոր ռազմավարության, «ապագան սեփականաշնորհելու»: «Քաղաքակիրթ աշխարհը» վաղուց արդեն հավասարակշռվում է սեփական պահանջմունքների ու նկրտումների միջև մի կողմից և ինքնապահպանման՝ մյուս կողմից: Բարեկեցության աճն ու Արևմուտքի տեխնոլոգիական հնարավորությունները ստեղծում են ամենակարողության պատրանք այն պատճառով, որ նման զարգացման սահմանափակության և վտանգավորության ընկալումը դուրս է մղվում թե արևմտյան սպառողի, թե կառավարող վերնախավերի արդիական, առօրեական գիտակցությունից:

Դա բնորոշ էր ոչ միայն Արևմուտքի պետություններին, այլև կոմունիստական աշխարհին: Վերջնահաշվում կոմունիստական գաղափարը, արևմտյան արդի քաղաքակրթությանն իր ողջ ընդդիմադիր ոգով, իր ծագումով արևմտյան գաղափար էր, «ներքին» ու այդպիսով հասկանալի: Կոմունիզմը հայտարարում էր առաջընթացի արժեքները ոչ պակաս, գուցեև ավելի հետևողականորեն, քան Արևմտյան աշխարհը: Եվ Երկրի վրա Աստծո արքայության կոմունիստական ուտոպիան բնույթով շատ չէր տարբերվում «ոսկե միլիարդի» գաղափարից: Ընդհանուր առմամբ, դա նախևառաջ Արևմտյան աշխարհի ներսի բախումն էր, «ընտրյալության» տարբերակներից մեկի նրա ներքին ընտրանքը:

Այն բանից հետո, երբ «երկրորդ աշխարհի», կոմունիստական այլընտրանքի կործանումը Արևմուտքի առջև գերիշխելու անսահման հնարավորությունները բացեց, համաշխարհային բախումների համակարգն առավել պարզ ու հստակ արտահայտվեց ռեսուրսների և գոյատևման հակամարտություններում «համաշխարհայնացող էքսպանսիայի» ընդհանուր գործընթացի շրջանակնե-

ռում: Այս պարագայում, ի դեմս ԽՍՀՄ-ի նման համաշխարհային հակառակորդի կորստով, որը ձգտում էր Երկրի վրա վերահսկողություն հաստատել և ողջ մարդկությանը ներքաշել սեփական ուղեծիր, Արևմուտքը զրկվեց նաև աշխարհի «փրկության» շարժառիթից և հավակնությունից, նախընտրելով սահմանափակվել միայն իր համար ապագա ստեղծելով:

Համաշխարհայնացման այս փուլը զարգանում է այն ժամանակ, երբ միջազգային հարաբերությունների համակարգում մի պետություն՝ ԱՄՆ-ը, հսկայական չափով առաջ է անցել բոլորից, անգամ իր մերձավոր մրցակիցներից, բարեկամներից ու հակառակորդներից:

Ի դեպ, նրանցից շատ առաջ է անցել միանգամից ցուցանիշների այն ամբողջությամբ, որը որոշում է արդի պետության հզորությունն ու զարգացման որակը՝ տնտեսական ու ռազմական ներուժով, ֆինանսական ռեսուրսներով ու հնարավորություններով, գիտության և տեխնիկայի մակարդակով և այլն:

Բայց և Արևմտյան աշխարհն ընդհանուր առմամբ այսօր նույն ձևով առաջ է անցել մնացած մարդկությունից:

Այս անվիճելի փաստն անխուսափելիորեն հարուցում է մի հարց. արդյո՞ք, չի դառնա այս պայմաններում համաշխարհայնացումը իր բնույթով նորագույն նեոգաղութարարություն, այս անգամ ամերիկյան: Հարցը նույնիսկ այն չէ, թե ցանկանու՞մ են, արդյոք, Արևմուտքի պետությունները նման զարգացում (այնտեղ կան և ուժեր, որոնք ցանկանում են, և կան այնպիսիք, որոնք վտանգի ներուժ են տեսնում իրադարձությունների նման զարգացման մեջ): Օբյեկտիվորեն ու՞ր կուղղորդվի աշխարհում փոփոխությունների «հետևանքային» միտումը՝ առաջիկա տասնամյակներում այդ գործոնի ազդեցության տակ:

Չէ՞ որ արևմտյան նոր՝ համաշխարհային խնդիրների «նետման», «տիկնիկայնացման» և ապագայի «սեփականաշնորհման» ռազմավարությունը ծնել է աշխարհակարգի գլոբալ նախագծերի տիրույթի վտանգավոր լիցքաթափում: «Մնացյալ աշխարհը» հանձնվել է ինքն իր բախտին, իհարկե, Արևմուտքից առաջարկ

ստանալով մրցակցելու իր ներսում «ոսկե միլիարդին» միանալու իրավունքի համար:

Անցյալ դարի 90-ականներին Ս. Հանթինգտոնի առաջ քաշած «քաղաքակրթությունների բախման» հայեցակարգն այսօր արդեն «երեկվա խոսք» է, քանզի աչքի լույսի պես պահում է արևմտյան գիտակցության հիմնական դրույթը՝ պատկերացումը տարբեր քաղաքակրթական համակարգերի անհավասարության մասին: Արդյունքում այս մոտեցումը դառնում է սոսկ տարբերակ «Պատմության ավարտի» առաջադիմական հայեցակարգի համար, որտեղ այն հետաձգվում է, սակայն չի վերացվում, և որտեղ Արևմուտքը մնում է ամենաժամանակակից քաղաքակրթությունը, այսօր արդեն՝ ապագայի մարմնացումը:

Այս մոտեցումը աղաղակող օրինակ է, թե ինչպես երեկվա կամ երեկ չէ առաջին օրվա օրակարգը հանկարծ մատուցվում է որպես ժամանակակից այն դեպքում, երբ այսօրվա ու ապագայի խնդիրներն աչքաթող են արվում:

Սակայն, արդյո՞ք, Արևմուտքը բավարար հիմքեր ունի ինքն իրեն համաշխարհային քաղաքակրթության դրոշակակիր հռչակելու: Չէ՞ որ դեռ ոչ վաղ անցյալում եվրոպական և ամերիկյան մտավորականների համար ակնհայտ էր հենց հակառակը. արևմտյան քաղաքակրթությունը գտնվում էր խոր ճգնաժամի և փոփոխությունների մեջ: Բերենք հիվանդության ախտորոշման օրինակներից մեկը. «Ճգնաժամը դիպչում է միաժամանակ ողջ արևմտյան մշակույթին ու հասարակությանը, նրա հիմնական հաստատություններին: Դա արվեստի ու գիտության, փիլիսոփայության ու կրոնի, իրավունքի ու բարոյականության, կենսակերպի ու բարքերի ճգնաժամ է: Դա հասարակական, քաղաքական ու տնտեսական կազմակերպության ճգնաժամ է, ներառյալ ամուսնությունն ու ընտանիքը: Կարճ ասած՝ դա համարյա ողջ կյանքի ճգնաժամն է, մտածողության ձևի ու վարքի՝ բնորոշ արևմտյան հասարակությանը: Եթե ավելի ճշգրիտ լինենք, այդ ճգնաժամը հանգում է վերջին չորս հարյուրամյակների արևմտյան մշակույթի ու հասարակության հիմնարար ձևերի փլուզմանը»:

Այս բառերը չեն պատկանում ինչ-որ կոմունիստի, այլ հայտնի ամերիկացի փիլիսոփա ու սոցիոլոգ Պիտիրիմ Սորոկինին: Ասել, որ նա միայնակ չէ, նշանակում է, ոչինչ չասել. XX դարի ընթացքում հենց արևմտյան մտածողներից էինք մենք իմանում նոր եվրոպական քաղաքակրթությանը հանդիպող փակուղիների մասին:

Դեռ վերջերս ակնհայտ էր, որ խոր ճգնաժամ են ապրում հենց զարգացման ու առաջընթացի գաղափարները, որոնց վրա կառուցվում է Արևմտյան քաղաքակրթությունը: Նրանք չեն կարողանում հաղթահարել այն արժեքային ու իմաստային անջրպետը, որն ավելի տարանջատում է տեխնոլոգիաների անընդհատ զարգացումն ու երկրագնդի բնակչության աճը, երկրագնդի յուրացման միջոցները մի կողմից և մոլորակի ռեսուրսների վերջավորությունը, զարգացման անհամաչափությունը, հարուստների և աղքատների միջև անդունդի ընդլայնումը՝ մյուս կողմից:

Քննարկումից դուրս են եկել «սպառողական հասարակության» ցավոտ խնդիրները: Հանելուկային կերպով անհետացել են քննարկումներն ու ուսումնասիրությունները կյանքի իմաստի արժեզրկման, սպառողական կեցության պատրանքայնության և այլնի մասին, - չեմ ուզում շարունակել: Սակայն նման երևույթներով պայմանավորված բախումներն ու խնդիրները շատ քիչ են նման «պատմության ավարտի»: Ինչպես կարելի է ողջ աշխարհի համար պարտադիր համարել մի մոդել, որն ինքն է կարոտ նշանակալի փոփոխության ու շտկման:

Նույնպիսի հանելուկային կերպով մոռացվել են արևմտյան մտքի հումանիտար նվաճումները: Հարյուրից ավելի տարիների ընթացքում կատարվեց աշխարհի եվրոկենտրոնության հաղթահարման պատկերի աշխատանքը: Խոսքը հին, դեռ միջնադարից հասած աշխարհընկալման սահմանման մասին է, որը չէր ընդունում այլ քաղաքկրթությունների իրավունքները, որոնք այդ կերպ էին պատասխանում այն հարցին, թե ինչի՞ համար է ապրում մարդը: Լուսավորչականության համընդհանրությունները, էվոլյուցիոն, արդիական գաղափարների ռացոնալիզմը, ամեն ինչ հանգամանալիորեն ուսումնասիրվել էր գրողների, փիլիսոփաների և գիտնա-

կանների աշխատանքներում: Նրանք ցույց տվեցին, որ արևմտյան երկրների տեխնոլոգիական, քաղաքական, ֆինանսական հնարավորությունները, ամենօրյա գոյության հարմարավետությունը նսեմացնում են նոր եվրոպական քաղաքակրթության արմատական հիմքերի սպառվածությունը: Թվում է, այժմ անհնար է խուսափել արևմտակենտրոն մոդելի հիմքերի վերանայումից: Եվ ահա, երբ այդ մասին գրվեցին հարյուրավոր գրքեր, իսկ շատ ավելի խոսվեց, արևմտակենտրոնությունը վերածնվում է, ինչպես մահացածը թրիլլերում: Քաղաքական իսթեբլիշմենթը հանկարծ ու համոզվում է, որ տիրապետում է աշխարհակարգի միակ ճիշտ գաղտնիքին:

Սակայն ամենաանուրախ ճակատագիրը բաժին ընկավ հումանիզմի հիմնական նվաճումին՝ մարդու միասնության ու իրավահավասարության պատկերացմանը: Իհարկե, դա սոսկ կանխադրույթ էր: Եվ այնուամենայնիվ, որքան էլ տարօրինակ է, այն պահպանվում էր: Զարգացած երկրներում իրենց պարտքն էին համարում հոգ տանել թույլերի մասին, որովհետև բոլորն էլ մարդ են, անհանգստանում էին աղքատների, անգրագետների, սովյալների համար: Ասում էին, որ նրանց պետք է բարձրացնել զարգացածների մակարդակին, օգնել՝ հասնելու բարգավաճման: Եվ ոչ միայն ասում էին, այլև փորձում էին շատ բան անել: Որքա՜ն ժամանակ և որքա՜ն միջոցներ ծախսվեցին: Քանի՜ հարյուր բանաձև և պայմանագիր գրվեց: Որքա՜ն գիտական հետազոտություն վարձատրվեց: Եվ ի՞նչ: Ամեն ինչը կամ սահմանափակվեց բարեհոգի ճարտասանությամբ, կամ պատվեց բյուրոկրատական կեղևով: Արդեն չկա թույլերի և սովյալների համար պատասխանատվության զգացումը, իբր՝ ամեն ինչ կարգին է: Պարոնայք, դա իրենց ընտրությունն է, իրենց սեփական մեղքը: Հետևաբար նվազագույնի է հասցվում ոչ արևմտյան երկրներին օգնությունը՝ սոսկ այն դեպքերում, երբ այդ օգնության բացակայությունը կարող է անմիջականորեն վտանգել Արևմուտքի շահերը:

Աշխարհը, որ դեռ ոչ վաղ անցյալում հումանիստական ու միասնական էր, սկսեց բաժանվել ռազմավարական սկզբունքով. նրանք, ովքեր մտնում են Արևմտյան երկրների շահերի ոլորտը, և

նրանք, ովքեր չեն մտնում, պետք չեն և գլխավորը՝ վտանգավոր չեն: Այս վերջիններով ընդհանրապես ընդունված չէ հետաքրքրվել:

Արևմուտքը նաև այսօր ընկել է «յուրայինների» համար առաջադիմական ծրագրի, «ոսկե միլիարդի» ապագայի նախագծի թակարդը: Եթե նախկինում՝ արդյունաբերական դարաշրջանում, տարբեր հասարակությունների ինտեգրացիան արևմտյան տնտեսական, սոցիալական և քաղաքական մոդելում անհրաժեշտ էր հենց արևմտյան աշխարհի զարգացման համար, ապա այսօր նոր համաշխարհային հետարդյունաբերական տնտեսական ու հասարակական կացութաձևի պայմաններում այդ ինտեգրացիան նախ ծնում է լրացուցիչ ներքին խնդիրներ Արևմտյան հասարակության համար, երկրորդ՝ չի հանդիսանում հույժ անհրաժեշտ Արևմուտքի զարգացման հեռանկարի տեսանկյունից:

Ու քանի որ «բնությունը չի հանդուրժում դատարկություն», «կարմիր միլիարդի» գլոբալ այլընտրանքին բավական արագ փոխարինելու եկան նորերը: Հենց նույն իսլամական ինտերնացիոնալի ձևավորումը, որն այսօր առաջ է քաշում երկրի բնակիչների հսկայական թվի համար գրավիչ «իսլամական համաշխարհայնացման» թեզիսն՝ ի հակադրություն «հեռացող քրիստոնյա աշխարհի», հստակորեն ցույց է տալիս, որ «ապագայի սեփականաշնորհման» գաղափարը ծայրաստիճան գրավիչ է ոչ միայն Արևմուտքի, այլև նրա հակառակորդների համար:

Նրանց դատողությունների տրամաբանությունը պարզ է: «Եթե մոլորակի ռեսուրսները, միևնույն է, սահմանափակ են և գոյատևել վիճակված է ոչ բոլորին, ապա ինչու՞ դա պետք է լինի Արևմտյան քաղաքակրթությունը, այլ ոչ թե մենք»: Ընդ որում Արևմուտքի շահերի առաջնայնությունը արդարացնելու փորձերը, որ ժամանակակից քաղաքակրթությունը, գիտատեխնիկական առաջընթացն ու այս աշխարհի բոլոր նվաճումներն ստեղծվել են մեծ մասամբ իր կողմից, ըմբռնում չեն գտնի:

Առաջին հերթին «քաղաքակիրթ աշխարհի» հակառակորդները հավակնում են այն բանին, որ հանդես են գալիս մարդկության բացարձակ մեծամասնության անունից, ի դեպ՝ «ճնշված մեծա-

մասնության»: Երկրորդ՝ Արևմուտքի հղումները սեփական մտավոր և տեխնոլոգիական առավելությանը, որն ապահովում է մարդկության առաջընթացը, սովորաբար մերժվում են այնպիսի փաստարկներով, որ հենց «հեռացումը բնությունից» «գիտելիքի սնապարծությունը», «գիտատեխնիկական առաջընթացը», որպես «սատանայի ծնունդ», ստեղծեցին մարդկության գլոբալ խնդիրները: Եվ հետևաբար, Արևմտյան աշխարհի հակառակորդների տրամաբանության մեջ հրաժարումն առաջընթացից, նրա առաջնորդների հեռացումը պատմության նավից ու վերադարձը բնություն և աստվածավախության ավանդույթին, հենց թույլ է տալիս աշխարհին գոյատևել:

Սակայն, եթե այն քաղաքակրթությունները, որոնք տարբերվում են նրանից, որն այսօր հավակնում է առաջնորդության, չեն պատրաստվում ոչ հանձնվել, ոչ շեղվել, ոչ թեքվել սեփական ճանապարհից: Ապա նման գաղափարախոսական դրվածքի դեպքում ոչինչ չի խանգարում «առաջավորներին ու քաղաքակիրթներին» պատժելու հետամնացին ու անգիտակիցներին: Իսկ սա նշանակում է, առնվազն ընդլայնել ռազմականացումը, օժանդակել գաղտնի ծառայությունների ուռճացմանը, հնարավոր զինատեսակների մշակմանն ու կուտակմանը:

Ի վերջո, «արևմտյան ընտրյալության» արմատականությունն այստեղ բախվում է նրա հակառակորդների նմանօրինակ արմատականությանը: Եվ ինչպես թվում է, այս վեճում հաղթողներ չեն լինի, որովհետև որոշակի մի փուլում կգերիշխի մյուսի՝ հաղթանակը կանխելու ձգտումը:

Արդյունքում՝ «քաղաքակրթությունների բախման» կանխագուշակված դարաշրջանը սպառնում է վերածվել «նոր միջնադարի», բոլորի պայքարն ընդդեմ բոլորի, փոխադարձ ոչնչացմամբ: Ավելին, տեխնոլոգիական զարգացման արդի մակարդակն այդ համընդհանուր ոչնչացումը դարձնում է առավել քան իրական և հավանական, քան ենթադրությունը աշխարհի գոյատևման հնարավորության մասին: Աշխարհի ամբողջական ինքնաոչնչացումը կդառնա ժամանակի հարց, ի դեպ, ոչ այնքան հեռու ժամանակի:

2.2. Նոր աշխարհի աշխարհաքաղաքականությունն ու «աշխարհատնտեսությունը»

Համաշխարհայնացման խնդիրն է, թե ինչպես է այն միավորում և վերափոխում աշխարհն այսօր, կապված լինելով հիմնականում Արևմուտքի համաշխարհային գերակայության հաստատման գործընթացի հետ: Համաշխարհայնացման այդպիսի ընթացքը պատմության տեսանկյունից ոչ այլ ինչ է, քան իրավիճակային և արդի աշխարհի բնութագրիչների որոշակի քանակով օժտված վիճակ: Այո, այն այսօր թեժ քննարկումներ է առաջացնում և անգամ սոցիալական ու քաղաքական հակամարտություն: Սակայն համաշխարհայնացման գործընթացների զարգացման արդի վեկտորը չի մերժում ինքնին միասնական աշխարհի կայացումը, նրա սեղմումն ու «կծկումը» միասնական և փոխկապակցված համակարգում: Եվ ահա, այդ գործընթացը, լինելով բացարձակ սուբյեկտիվ, չի կարող կասեցվել մեր ջանքերով:

Ընդսմին, երբ մենք խոսում ենք այն մասին, որ արդի համաշխարհայնացումն ամենից առաջ Արևմտյան աշխարհի գերիշխանություն է, պետք է հասկանանք, որ դա ոչ միայն համաշխարհայնացման միտումի կոնկրետ պատմական գործընթաց է, այլև համաշխարհայնացման գործընթացի կառավարման համակարգ, որն արտահայտվում է արդի աշխարհի նոր աշխարհաքաղաքականությունում:

Արդի աշխարհը կայացող Նոր աշխարհ է, ուր տեսանելի են դառնում նոր համակարգի կողմակները, որոնք կտեղակայվեն աշխարհի սկզբունքորեն նոր քաղաքական քարտեզի վրա, կամ էլ ընդհանրապես կմերժվեն տարածքային-վարչական և պետական սահմանների նշագրման անիմաստությունից՝ աշխարհի նոր ուրվագծման արդյունքում:

Այսօրվա աշխարհը ոչ միաբևեռ և ոչ էլ բազմաբևեռ աշխարհ է: Դա անորոշ քանակության բևեռների աշխարհ է, ուր ստույգ ու մինչև վերջ էլ հայտնի չէ ոչ միայն դրանց քանակությունը, այլև այն, թե ի՞նչ են նրանք իրենցից ներկայացնում, ինչպե՞ս են կազ-

մակերպված, ինչպիսի՞ն են նրանց որակները, կայունությունը և նպատակները: Ինչպե՞ս նրանք կդրսևորվեն և որքանո՞վ կանխատեսելի կլինեն տարբեր իրավիճակներում:

Այդպիսի իրավիճակն արտացոլում է գլոբալ միտում, կապված պետության դասական մոդելի ճգնաժամի և հասարակական ու քաղաքական աշխարհի ինքնակազմակերպման ու կառուցվածքի այլ հնարավորությունների զարգացման հետ:

Այսօր ավելի ու ավելի է ամրապնդվում պատկերացումը գլոբալ «աշխարհատնտեսության» ձևավորման մասին: Այդպիսի մոտեցումը հենց արտացոլում է միտումը՝ աշխարհի գլոբալ տնտեսական միասնության առաջնահերթ ձևավորման և մարդկության հետագա զարգացման մեջ տվյալ գործոնների նշանակալիության:

Գլոբալ «աշխարհատնտեսությունը» մեր առջև հառնում է որպես աշխարհակարգի նոր համակարգ, կապված գլոբալ մասնագիտացման և աշխարհի տարբեր տարածաշրջանների միջև աշխատանքի բաժանման հետ, նրանում ոչ միայն անդրազգային կորպորացիաների (ԱԱԿ), այլև արդեն նշված գլոբալ վիրտուալ ֆինանսական տնտեսության կարգավորիչ ու կառավարող դերի ուժեղացմամբ: Այս աշխարհատնտեսական հարաբերությունները զարգանում են ազգային-պետականին զուգահեռ, զուգընթաց ձևավորելով աշխարհակարգի համակարգ, որի հետ ուզեն, թե չուզեն, պիտի հաշվի նստեն և որում ներկայացված են պետությունները:

ԱԱԿ-ները ի հայտ բերեցին ազգային պետություններից համարյա լիակատար անկախություն: Իշխանությունները հաճախ անզոր են միջազգային կապիտալի ներկայացուցիչների առջև, որոնք թույլ չեն տալիս վերահսկողություն, գումարները տեղափոխում են լույսի արագությամբ, ներդրումներ են կատարում մոլորակի տարբեր անկյուններում, թաքցնում են շահույթը չհարկվող գոտիներում՝ պետության գործունեության դաշտից դուրս:

Գոյություն ունեն, այսպես կոչվող, երկու զուգահեռ աշխարհ: Առաջինում կան պետություններ, սահմաններ, միջազգային պարտավորություններ, երկրորդում՝ այդ ամենը չկա: Մեկում գործում են

սահմանադրություններ, օրենքներ, իշխանության տարանջատման սկզբունքներ: Մյուսում՝ միայն կապիտալի ազատ խաղի կանոններ, որ ավելի նման է խաղի՝ առանց կանոնների: Երկու աշխարհն էլ գոյություն ունեն միևնույն տարածաշրջանում և հաճախ ներկայացված են միևնույն մարդկանցով:

Առաջինը հարաբերականորեն կայուն է, այստեղ որոշումներն անցնում են բյուրոկրատական մշակում, հրատարակվում են, վերահսկվում և այլն: Երկրորդը իրավիճակային և խորհրդավոր է, այստեղ մարդիկ գործում են ծածկանուններով, ժամանակ առ ժամանակ անգամ վիրտուալ, առաջանալով ոչնչից և նույնքան արագ ոչնչանալով:

Առաջին աշխարհում մենք ձեզ հետ ապրում ենք: Այն հասկանալի և տեսանելի է: Ավելին, այն կարծես հատուկ հարմարեցված է տեսնելու և հասկանալու համար, որպեսզի մեզ տա այն պատկերները, որոնցով հասկանում ենք կյանքը:

Երկրորդը թաքնված ու անպատկերացնելի է: Այդտեղ ամեն ինչ գաղտնիքների մեջ է, ծածկված, պղտոր ջրում: Մենք չգիտենք նրա կառուցվածքի գաղտնիքները, այն հարմարեցված չէ ընկալման համար: Դա կեղծանունների աշխարհն է: Աշխարհ, ուր «ազատական արժեքների պաշտպանությունը» նույնպիսի պաշտամունքի առարկա է, ինչ սրբազան պատերազմը, որի մասին խոսում էին թալիբների ուսուցիչները, մինչև իրավիճակը փոխվեց, և գլոբալ շուկայում իսլամական արմատականության «արժեքների» փոխարժեքն ընկավ:

Ըստ այդմ, ի հայտ է գալիս, որ գլոբալ աշխարհատնտեսությունն աստիճանակարգված է, նրանում արտահայտվում են առաջավոր և հետամնաց սեկտորներ, որոնք, միևնույն ժամանակ, սերտորեն կապված են աշխարհի որոշ պետությունների և պետական դաշինքների հետ: Այդպիսով ԱՄՆ-ը և Արևմուտքը հիմնականում այսօր հանդիսանում են համաշխարհային տնտեսության ֆինանսական, ենթակառուցվածքային և բարձր տեխնոլոգիական, վեր(հետ)արդյունաբերական մասնաբաժինների վերահսկիչ փաթեթի սեփականատեր, այն դեպքում, երբ Ասիական-Խաղաղօվկի-

անոսյան տարածաշրջանը դառնում է միջազգային գործարան, աշխարհի նոր արդյունաբերական կենտրոն: Ցածրագույն հարթակում տեղավորված է հումքային աշխարհը, որին, ցավոք, ավելի հակվում է Ռուսաստանը:

Այսպիսով, գլոբալ տնտեսության զարգացման օբյեկտիվ տրամաբանությունը հանդիսանում է մրցակցություն տարբեր պետությունների, տարածաշրջանների ու կորպորացիաների և գլոբալ ֆինանսական «ծովահենների» միջև, մրցակցություն՝ այդ բուրգի ավելի կարևոր և շահավետ մակարդակների համար:

Միևնույն ժամանակ, տեղեկատվական դարը ապահովել է իսկական համաշխարհայնացում, քանզի ձևավորել է միասնական տեղեկատվական հաղորդակցային համակարգ և հնարավորություն տվել անցնել գլոբալ կառավարման ժամանակի ռեժիմով և պետական սահմանների վրայով:

«Ինտերնետ» տեսակի տեղեկատվական ցանցերի լայնքով ու խորքով տարածումը անհատների միջև, անկախ նրանց գտնվելու վայրից, կապի հեշտ հասանելիությունը և էժանությունը, վերացնում են կախվածությունը շփումների քանակի և բնակչության աշխարհագրական խտության միջև (այնպես, ինչպես մեծ քաղաքի համընդհանուր հեռախոսայնանցումը մեր շփումների շրջանակը դարձրեց նշանակալիորեն ավելի անկախ մեր բնակության վայրից): Դա ինքնին կարող է դառնալ հզոր գործոն, որը մարդկային շփումների ոլորտն ազատում է աշխարհաքաղաքական և գաղափարախոսական սահմանափակումներից: Տվյալ միտումը լրացնում են տրանսպորտային միջոցների զարգացումը, կատարելագործումը և էժանացումը, ինչպես նաև սահմանային պատնեշների թուլացումը:

Միաժամանակ ապրանքների արժեքային որակն ավելի է տեղաշարժվում իրայինից և էներգետիկականից տեղատվականի ուղղությամբ: Այլ կերպ ասած, արտադրանքի տեղեկատվական մասնաբաժինը ապահովում է նրա արժեքի ավելի շոշափելի մասը, և դա չի կարող չանդրադառնալ սահմանային ու մաքսային ծառայությունների գործունեության բովանդակությանը. պետական մար-

մինների գործառույթները աստիճանաբար տեղաշարժվելու են աշխարհագրական տարածության շրջանից դեպի տեղեկատվական, «վիրտուալ» մարզ:

Արդյունքում՝ աշխարհի ֆիզիկական տարածությունը ավելի է կորցնում իր հիմնարար դերը, զիջելով իր գործառույթները համաշխարհային քաղաքական-տեղեկատվական տարածքի գլոբալ կառավարմանը: Քաղաքական գործընթացը ծավալվում է ոչ այնքան տարածքի ֆիզիկական և նրա տիրապետման տիրույթում, որքան վիրտուալ տարածության տեղեկատվական հոսքերի, ֆինանսների, կամային որոշումների, խորհրդանշական ռեսուրսների և գիտելիքների շրջանակներում: Այս իմաստով աշխարհի շատ պետություններ այսօր չեն վերահսկում անգամ սեփական ազգային տարածքը, էլ չասած՝ աշխարհի այլ տարածաշրջանների զարգացման վրա սկզբունքորեն ազդելու հնարավորությունների մասին, այսինքն նախաձեռնելու որոշումներ և աջակցելու գործընթացների, որոնք ունեն համամոլորակային նշանակություն ու բնույթ՝ իրենց դրսևորումներով ու հետևանքներով:

2.3. «Պետությունից հետո». պետության դասական նմուշի ճգնաժամը եւ սահմանափակ ինքնիշխանության համակարգը

Արդյունքում, արդի աշխարհի զարգացման կարևոր միտում է դառնում ազգային-պետական համակարգի հիմքում ընկած ազգային ինքնիշխանության համակարգի փլուզումը: Արդեն այսօր մեծ համոզմունքով կարելի է ասել, որ արդի աշխարհում լիարժեք ազգային ինքնիշխանությամբ ու ինքնուրույնությամբ օժտված են հաշված պետություններ: Թերևս մենք կարող ենք վստահորեն նշել ԱՄՆ-ը, Չինաստանը, Հնդկաստանը, Ռուսաստանը: Իսկ հետո՞: Չէ՞ որ նույնիսկ Եվրոպական Միության կարևոր երկրների վերաբերյալ արդեն կասկածներ են ծագում:

Պետական ինքնիշխանության անխորտակելիության և անսահմանության սկզբունքը, այնպես, ինչպես նա հայտնի էր XX

դարի երկրորդ կեսում, նոր դարում տեղ չի գտնում: Ապագայում երկրի ազգային-պետական համակարգը կվերափոխվի: Դա կարող է տեղի ունենալ ի հաշիվ նոր գաղութացման, ուժեղների կողմից ավելի թույլ պետությունների՝ կլանման արդյունքում, կամ մենք ավելի շուտ կտեսնենք գլոբալ գերդաշնությունների ձևավորում՝ Եվրոմիության նմանությամբ:

Ավելի շուտ, երկու մոտեցումներն էլ, այսպես թե այնպես, կզուգակցվեն երկրների խմբերի նկատմամբ, համապատասխանաբար, տարբեր կամ հավասար զարգացման մակարդակներով՝ գլոբալ գեոտնտեսության համակարգում:

Պետությունների սահմանափակ կամ ընտրական լեգիտիմությունը միջազգային հարաբերությունների նոր համակարգում արտացոլում է բուն պետության դերի կորստի միտում, որպես միջազգային հարաբերությունների համակարգաստեղծ սուբյեկտի և միաժամանակ գլոբալ իշխանության ձևավորման միտումի նոր հարաբերակցություն, որը կապված է հետարդյունաբերական տարածքի հետ՝ օժտված գերտեխնոլոգիական իշխանությամբ: Վերջինս թույլ է տալիս ոչ միայն կասկածի տակ առնել այս կամ այն տերության լեգիտիմությունը, այլ նաև ապահովել նրա տեղեկատվական, խորհրդանշական, տնտեսական և ուժային ոչնչացումը:

«Հետդասական պետության» դարաշրջանում ավելի մեծ նշանակություն են ստանում հորիզոնական ինքնակազմակերպումը և տեղային համայնքի փոխգործակցությունը, ստեղծված տարբեր չափորոշիչներով ու հատկանիշներով: Աշխարհի քաղաքական ավանդական քարտեզը և վերազգային հաստատությունների համակարգը ենթակա է էրոզիայի՝ ի դեմս վերահսկողությունից դուրս եկող տեղեկատվական հանրության համաշխարհային ցանցի: Քաղաքական տիրույթը «սեղմվում» է, խտանում է հընթացս ավերելով այն, ինչ կոչվում է ազգային քաղաքական գործընթաց: Ազգային սահմանները, իրավունքը, լեզուն, քաղաքական հաստատությունները, հաղորդակցության միջոցները, տարածությունը, ժամանակը, - այն ամենը, ինչ նախկինում պաշտպանում և որոշում

էր առանձին հասարակությունների ու պետությունների քաղաքական կազմակերպման հատուկ կարգուկանոնը, այսօր չի կարող նրանց անջրպետել գլոբալ քաղաքական փոխազդեցությունից:

Քաղաքականության մեջ ավելի ու ավելի մեծ դեր են խաղում անդրազգային սուբյեկտները, սակայն արդեն ոչ միայն բիզնես կորպորացիաները, որոնք նախկինում հիմնականում աշխարհի զարգացած պետությունների գործակալներն էին՝ նրանց գլոբալ նվաճողականության մեջ, այլև այլ կազմակերպություններ ու կառույցներ: Այսօր այս կամ այն երկրում քաղաքականության սուբյեկտ են հանդիսանում միևնույն ժամանակ և՛ ազգային առաջնորդները, և՛ տարբեր պետությունների, ժողովուրդների, կրոնական կազմակերպությունների, միջազգային կապիտալի և այլ գլոբալ հասարակական շարժումների ներկայացուցիչներ: Նրանց մի մասը ունի ոչ լրիվ օրինական կարգավիճակ, ներկայացնելով համաշխարհային «ստվերային» քաղաքական գործընթացն ու միջազգային հանցավորությունը: Պատմության այս նոր սուբյեկտների ի հայտ գալը լցնում է աշխարհը և նոր, ոչ միշտ հասկանալի, և ավելի հաճախ չափազանց վտանգավոր բովանդակությամբ:

Միջազգային քաղաքական հաստատությունների ճգնաժամն ու թույլ զարգացածությունը միայն ուժեղացնում են գլոբալ քաղաքական գործընթացում կառույցական և արտաիրավական քաղաքական տեխնոլոգիաները:

Այդ «նոր հորիզոնական աշխարհից» սպառնում է որոշակի վտանգ համաշխարհայնացման ներկա մոդելին, որը կապված է Արևմուտքի գերիշխանության հետ:

Եթե նախկինում նոր ցանցային աշխարհի ձևավորումը դիպչում էր հիմնականում զարգացող երկրներին, նոր ազգային պետություններին և մեծ հաշվով հանդիսանում էր Արևմուտքի նվաճողականության գործիք, ապա այսօր «արտաքին» և գլոբալ գործոնը ազգային քաղաքական գործընթացի կազմակերպման մեջ ավելի շատ իրենց վրա զգում են աշխարհի զարգացած ու առավել հզոր պետությունները: Նոր գլոբալ քաղաքական

սուբյեկտները ստանում են այնպիսի ուժ և ազդեցության ներուժ, որ նրանց դիմակայելը դառնում է բարդ ոչ միայն առավել կայուն պետությունների, այլ նույնիսկ ռազմաքաղաքական և տնտեսական դաշինքների և այդ պետությունների ու միությունների համար:

Միջազգային ահաբեկչությունը (ավելի ստույգ՝ ահաբեկչության տեսքով դիվերսիոն պատերազմը) բնավ չի հանդիսանում արտաքին երևույթ քաղաքակիրթ աշխարհի նկատմամբ: Հեռուստատեսության օգտագործումը սեփական հզորությունը ցուցադրելու համար՝ սոսկ առավել ակնհայտ դրսևորում է: Սակայն չէ՞ որ ամեն օր «համաշխարհային ընդհատակն» օգտագործում է և կապի միջոցները, և ֆինանսական համակարգերը, և շատ երկրների ժողովրդավարական հաստատությունները: 2001 թվականի սեպտեմբերի 11-ի հարձակումն ունեցավ նշանակալի ազդեցություն այն իմաստով, որ հարցականի տակ դրեց արդի աշխարհի ամենահզոր պետության՝ ԱՄՆ-ի ինքնիշխանությունը: Այդպիսով շարքային մարդու համար մշուշոտ գաղափարն այն մասին, թե Նոր աշխարհում տարածքի և նրա վրա ինքնիշխան վերահսկողությունը երևութական և երկրորդային է: Նոր աշխարհում իշխանության իրական կառուցվածքի նկատմամբ այդ գաղափարը հանկարծ դարձավ լիովին շոշափելի՝ այսինքն՝ իրականացավ:

Ազգային-պետական կառուցվածքի թուլությունն այստեղ դառնում է Արևմուտքի հիմնական խնդիրը: Հենց նրա վրա և նրա շուրջ էր նախկինում կառուցվում «քաղաքակիրթ մարդկության» համաշխարհային գերիշխանության համակարգը, նրա օգնությամբ հնարավոր էր վերահսկել շահերի տարբեր խմբեր և դրանց ինքնակազմակերպումը: Ինչ-որ իմաստով միջազգային հարաբերությունների զարգացման մասին արդի մոտեցումները արտացոլում են այդ վտանգը: Արևմուտքի փորձը՝ պահպանել աշխարհի պետական համակարգը «փափուկ ինքնիշխանության», «պետությունների արտաքին կառավարման» և «հումանիտար ինտերվենցիաների» հիմքի վրա, ակնհայտ է: Դրա նպատակը հանդիսանում

է աշխարհի նոր ազգային-պետական համակարգի ձևավորումը, որը քաղաքակիրթ աշխարհի համար կլինի թափանցիկ և կառավարելի:

Սակայն հազիվ թե բարձիթողի գործընթացը հնարավոր լինի կասեցնել: Համաշխարհային հակագլոբալական շարժումը, միայն մասնակիորեն հանդիսանալով համաշխարհային քաղաքացիական հասարակության դրսևորում, ինչպես նաև միջազգային ահաբեկչության ցանցային բնույթի մասին տարածված պատկերացումները Նոր աշխարհի, «գլոբալ ինքնակառավարման» այն հայտանիշներն են, որոնց հետ արդեն այսօր դժվար է պայքարել ազգային պետությունների միջազգային համակարգի, մասնավորապես Արևմուտքի ուժերով: Ցանցային աշխարհի կայացման ընթացքը այսօր ոչ միայն վերածվում է Արևմուտքի քաղաքակրթական նախագծի դեմ ելույթի, այլ ավելի պարզորոշ ձեռք է բերում այլընտրանքային համաշխարհայնացման գծեր, որոնք ունեն տարբերություններ, այդ թվում և ծայրահեղ վտանգավոր տարբերակներ ու հետևանքներ:

Տարանջատ քաղաքակրթության ֆենոմենը եւ «նոր Նոր աշխարհը» 2.4

Համաշխարհայնացման, «արևմտակենտրոնության» և քաղաքակրթության զարգացման գծայնության պահանջների վրա խարսխված աշխարհի առաջադիմական պատկերը, պարզվում է, բացարձակ անհամարժեք է աշխարհի վիճակին և նրա զարգացման միտումներին: Ակնհայտորեն, մենք վկա ենք, թե ինչպես է արդիականությունը դառնում մրցակցային, վերածվում զարգացման տարբեր նմուշօրինակների բախման և իրական ընտրության ասպարեզի:

Իրավիճակի յուրատեսակությունը համաշխարհայնացման, ինտեգրացման պայմաններում ճիշտ հակառակ՝ տարանջատ քաղաքակրթության ֆենոմենի ձևավորման մեջ է: Սկզբունքորեն Արևմուտքի առավել զարգացած հետարդյունաբերական աշխար-

հը միանգամայն ունակ է «բոժոժավորվել» և գոյատևել այլ երկրներից անկախ, անգամ եթե հաշվի առնենք առկա ռեսուրսային կախվածությունը, որը հեռանկարում տեխնոլոգիապես կարելի է հաղթահարել և նվազեցնել: Ընդսմին, իբրև հիմնական ռեսուրս ունենալով արտադրության հետարդյունաբերական սեկտորները, Արևմուտքը կախված չէ այլ երկրներից և այլ համակարգերից՝ իր գերիշխանության տակ գտնվող հատկապես այդ սեկտորի արտադրության ու զարգացման առումով:

Նույն ժամանակամիջոցում զարգացող աշխարհը, ավանդական հասարակությունները և արդի արդյունաբերական երկրները միանգամայն ի վիճակի են առանց Արևմուտքի երկրների կազմակերպելու իրենց գոյությունը, թեկուզև այսօրվա տեսանկյունից, ոչ այնքան առաջադեմ, բայց բավական բարձր մակարդակով: Այդ աշխարհի որակի, կենսամակարդակի և գոյատևման ապահովման ծախսերը այժմվանից ավելի բարձր կլինեն, բայց ընդհանուր առմամբ հնարավորություն կտան նրան գոյատևելու: Այսպիսով, պարզվում է, որ երկու աշխարհները՝ հետարդյունաբերության հետարդիական աշխարհը և մարդկության հիմնական զանգվածի աշխարհը, կարող են լիովին գոյություն ունենալ առանձին-առանձին, բայց նրանք չեն կարող գոյություն ունենալ միմյանցից անկախ և ուշադրություն չդարձնելով մեկը մյուսի վրա՝ միաժամանակ ներկայացված լինելով արդիականության մեջ:

Խորհրդածելով Նոր աշխարհի մասին իբրև Արևմուտքի հաղթարշավ, մենք մոռանում ենք, որ քաղաքակրթության զարգացման օբյեկտիվ միտումները առաջիկա հիսուն տարվա հեռանկարում Արևմուտքը վեր են ածում աշխարհի անվերջ փոքրացող փոքրության, որը չնայած իր քաղաքական և տնտեսական ընդլայնմանը, միաժամանակ սեղմվում է շագրենու կաշվի նման: Մարդկության պատմությունը դադարում է լինել Արևմտյան քաղաքակրթության և մոլորակի Հյուսիսի պատմությունը: Եթե նախկինում, երբ աշխարհին բաժին էր ընկնում երկրագնդի ողջ բնակչության կեսից ավելին, մենք դեռ կարող էինք ասել, որ

աշխարհի պատմությունը՝ Արևմուտքի պատմությունն է, այսօր արդեն չենք կարող:

Ահա ինչու այսօր մենք, հնարավոր է, ականատեսն ենք Արևմուտքի մեծափառ Նոր աշխարհի վերջի սկզբի, որը վերելք է ապրում անկումից առաջ և որը կծերանա ու կանցնի անցյալի գիրկը՝ պատմական չափանիշներով չհասցնելով անգամ սկիզբ առնել: Իսկ իրականում Նոր աշխարհը կլինի բոլորովին այլ աշխարհ, որի մասին մենք այսօր շատ քիչ բան գիտենք, չնայած որ այդ լուռ մեծամասնությունը շրջապատում է մեզ բոլոր կողմերից և դանդաղ, բայց հաստատուն կերպով ներթափանցում աշխարհաշինության հյուսվածքի մեջ:

Պատմության նոր Ֆենոմենները 3

Համաշխարհայնացման առանցքային հիմնախնդիրը վերջնահաշվում այն է, թե որքանով է ընդհանուր առմամբ աշխարհը կառավարելի, որչափով կարող է այն կառավարելու գլոբալ մոդելը ավելի արդարացի և որոշակի իմաստով համապարփակ լինել: Հասարակական զարգացման կառավարելիության հիմնախնդիրն ընդհանրապես դառնում է առանցքային, քանի որ ինքնազարգացող աշխարհը ներկա պայմաններում հավանաբար իր վախճանին կհասնի բավականաչափ արագ: Այսօր աշխարհստեղծման գլոբալ գործընթացի տարերայնության ծախսերը բավական մեծ են: Բայց եթե դա այդպես է և եթե կառավարելիությունը հանդիսանում է առավել կարևոր ու սկզբունքային պահը, ապա պակաս կարևոր չէ հասկանալ, թե ով է այդ կառավարման սուբյեկտը:

Իմանալով մարդկության պատմությունը, մենք բավական լավ ենք հասկանում, որ այդ հարցից շատ բան է կախված: Կառավարողի քաղաքական կամքը դառնում է ծայրահեղ կարևոր ողջ համակարգի վիճակի համար: Բայց սկզբունքորեն սխալ է հասարակական զարգացման կառավարելիության հարցը կապել ինչ-որ սուբյեկտի կամ խմբի հետ, անկախ դրանց որակը ու մակարդակը: Մենք չպետք է հրապուրվենք միջազգային հաստատությունների՝

համաշխարհային կառավարության կազմակերպությունների և այլնի լավագույն մոդելների փնտրտուքի գաղափարով:

Հարցն այլ է: Այն ավելի շուտ գլոբալ համակարգի այնպիսի կազմակերպումն ապահովելն է, որ ինքնին բովանդակի քաղաքական և սոցիալական ինքնակառավարվող մեխանիզմ: Ինչպիսի՞ն կլինի այն:

Այս հարցի պատասխանը սկզբունքորեն կախված է նրանից, թե, արդյո՞ք, ի զորու ենք որսալ և հասկանալ հասարակական զարգացման ու մեր քաղաքակրթության մեջ սկզբունքային նոր միտումները: Այսօր արդեն մի շարք գործընթացներ մեզ ստիպում, կամ ավելի ստույգ, ստիպելու են լրջորեն խոսել գլոբալ զարգացման նոր մեխանիզմների և միտումների մասին:

3.1 Ժողովրդավարության ապագան եւ համաշխարհային քաղաքացիական պատերազմի սպառնալիքը

«Քաղաքակիրթ մարդկությունը» պետք է մտահոգվի մեր մոլորակի ողջ բնակչության ինտեգրման խնդրով, և ոչ թե միայն ապագայի ծրագրի «ոսկե միլիարդով»:

Անցումը մարդկության մոլորակային ընդհանրության գիտակցմանը հարուցում է բազմաթիվ նոր խնդիրներ: Որոշ իմաստով «քաղաքակիրթ մարդկության» ողջ քաղաքական պատմությունն իրենից ներկայացրել է հետևողական անցում ավելի մեծ ինտեգրման ու համաձայնության, ժողովրդավարության ու համագործակցության, ազգային հանրույթների ներսում (հետագայում նաև Արևմուտքի վերազգային համակարգում՝ ի դեմս միջազգային հաստատությունների) սոցիալական հակասությունների մասնակի հարթեցման և հաղթահարման: Դա հնարավոր է ի հաշիվ ավտորիտար ներուժի «պարպման», ռեսուրսների շահագործման տեղաշարժի և ձգտումով՝ տարածվել դեպի դուրս, դեպի աշխարհի այլ շրջաններ ու երկրներ, սեփական քաղաքակրթության սահմաններից անդին, արդյունքում ավելի ու ավելի ձեռք բերելով նույն այդ «քաղաքակիրթ մարդկության» գրավիչ գծերը:

Դասակարգային և քաղաքացիական պատերազմներն այդ «լավագույն աշխարհում» հիմնականում մնացին անցյալում: Արևմուտքը ձեռք բերեց ներքին միասնություն նախ գաղութատիրական կայսրություններ ստեղծելով, և ապա՝ անցնելով համաշխարհայնացնող նվաճողականության: (Որոշ չափով նույն ուղիով այսօր ձգտում է ձեռք բերել միասնություն և իսլամական աշխարհը, թեև, իհարկե, միասնական իսլամական աշխարհի բուն գաղափարը առավելապես քարոզչական առասպել է):

Համապատասխանաբար, անցում կատարելով այլ՝ սոցիալական միասնության ընկալման և գիտակցման մոլորակային մակարդակի, աշխարհն ամբողջությամբ և մասնավորապես «քաղաքակիրթ աշխարհը», հայտնվում են գլոբալ հանրության նոր ուժգնացող սոցիալական և դասակարգային պառակտման, համաշխարհային վերնախավի և համաշխարհային պրոլետարիատի ձևավորման, համաշխարհային քաղաքացիական պատերազմի համար նախադրյալների ստեղծման դեմ հանդիման: Պատերազմ, որը պիտի մղվի առաջադիմության ողջ ուժով և զենքի բոլոր հնարավոր տեսակներով, ներառյալ տեղեկատվական պատերազմները և ահաբեկչությունը, բայց արդեն ոչ թե Երկրի ծայրամասերում, քաղաքակրթությունից հեռու և ոչ թե կարգավորվող բախումների պայմաններում, այլ Ամերիկայի, Եվրոպայի, համայն աշխարհի ամեն մի երկրում և ամեն մի քաղաքում:

Ընդսմին, հարկ է հաշվի առնել և այն, որ պատերազմի ու խաղաղության շրջափուլը կապված է սոցիալական հիշողության հետ: Ժամանակակից գիտությունը ճշտել է, որ սովորաբար պետք է հերթափոխեն մի քանի սերունդներ, գան նոր սերունդներ, որոնք չեն հիշում նախկին աղետի սարսափներն ու տառապանքները, որպեսզի սկսվի նոր պատերազմը: Բայց այսօր համաշխարհային քաղաքականության և համաշխարհային պատմության մեջ են մտնում ժողովուրդներ և քաղաքակրթություններ, որոնք պարզապես չգիտեն, թե ինչ բան է գլոբալ «համաշխարհային» պատերազմը, ավելին՝ իրենց յուրահատուկ աշխարհընկալման մեջ պատերազմը բարիք են համարում:

Միաժամանակ զարգացումը սահմանափակող քաղաքականությունը, որ կիրառվում է արևմտյան հասարակությունների հանդեպ, կարող է հրահրել վերադարձը ներքին դասակարգային բախումներին, որոնք նախկինում լուծվում էին հենց այդ երկրների և նրանց ռեսուրսների վերաբաշխման և շահագործման հաշվին: Արևմուտքի ընտրությունը ներքին լարվածության վերադարձի և գլոբալ լարվածության աղետալի աճի միջև այնքան էլ ակնհայտ չէ, սակայն դրանից այն պակաս դաժան և ցավագին չի դառնում :

Իհարկե, դեպքերի զարգացման այսպիսի սցենարը Արևմուտքի երկրների հասարակական կարծիքն ու կառավարող շրջանները կհամարեն ավելի վտանգավոր և ջախջախիչ, քան գլոբալ հանրության ներկա վիճակը և քաղաքակրթությունների հնարավոր բախումը: Եվ հենց այս պատճառով էլ այսօր մենք վկա ենք, թե ինչպես են փորձում պահպանել զարգացման նախկին դրույթը, «Նոր աշխարհ» թևակոխել՝ ոչինչ չփոխելով: Բայց ոչինչ չփոխել այլևս անհնար է:

Ընդսմին, բուն Արևմտյան աշխարհի համաշխարհայնացման սպառնալիքն այն է, որ չափազանց մեծ է գայթակղությունը հրաժարվել նոր ժամանակի քաղաքակրթության ժողովրդավարական նվաճումներից, սահմանափակել մարդու իրավունքները և անհատական ազատությունը՝ հանուն «սրբազան պատերազմի»՝ ընդդեմ «օտարների», «նոր բարբարոսների»: Մանավանդ որ ժողովրդավարությունը, ժողովրդապետությունը կամ ավելի ստույգ՝ կառավարումը ժողովրդի անունից պատմականորեն իշխանության կազմակերպման իրավիճակային ձևեր են:

Մենք չենք կարող ասել, թե ինչպիսին կլինի իշխանության կազմակերպման բանաձևը ապագայում: Սակայն դա հաստատ չի լինի ժողովրդավարություն, կամ համենայնդեպս այն, ինչ մենք այսօր հասկանում ենք ժողովրդավարություն ասելով: Այսօր ժողովրդավարական վարչակարգերը կորցնում են իրենց արդյունավետությունը, մասամբ բնակչության քաղաքական մասնակցության նվազման և մարդու վրա ներգործության հնարավորությունների ընդլայնման արդյունքում, մասամբ իրական աշխարհի հիմնախն-

դիրների վախեցնող բարդությունից, մասամբ էլ, կապված այն իրողությանը, որ ժողովրդավարության և քաղաքական բարեկրթության սկզբունքներն իրենց հետ բերում են բուն ժողովրդավարական վարչակարգերի ինքնափլուզում: Նրանց ներսում խմորումներ են հասունանում:

Բացի այդ, արդի աշխարհում մարդու ազատության աստիճանի աճը չի կարող անվերջ լինել և ավանդական սոցիալական կառույցի ու պետության կողմից չի կարող չծնել ամբողջատիրական միտումներ: Եվ հասկանալի է, որ, օրինակ, արդի աշխարհում արդեն այնքան էլ անհարկի չի հնչում «մարդ-պետություն» արտահայտությունը, որի բոլոր հատկանիշներն այսօր մարմնավորում է, օրինակ, Ուսամա բեն Լադենի կերպարը:

«Ժողովրդավարության ճգնաժամն» այսօր դրսևորվում է ամենից առաջ այն իրողության մեջ, որ դրա սկզբունքները դադարել են լինել անհրաժեշտ պայման, անվերապահ արժեք հենց արևմտյան աշխարհի համար: Դա արտահայտվում է քաղաքակիրթ պետությունների թե ներքին, թե արտաքին քաղաքականության մեջ: Անցած դարի 90-ական թթ. միջազգային քաղաքականության մեջ լայն տարածում գտավ «հումանիտար միջամտության» նոր հայեցակարգը: Մենք ականատես եղանք Արևմուտքի երկրների, մասնավորապես ԱՄՆ-ի տպավորիչ ու միաժամանակ ճնշող փորձերին՝ բռնի ժողովրդավարացնել առանձին ազգային քաղաքական վարչակարգեր և անգամ մոլորակի տարբեր տարածաշրջաններ: Այս ներխուժումների արդյունքների վիճելիությամբ հանդերձ, անփոփոխ է մնացել բուն ելակետային դրվածքը, որն ընկած էր միջազգային հանրության այդօրինակ քաղաքականության հիմքում՝ ավելի հաճախ նույնականացնելով արևմտյան քաղաքակրթության տնտեսական ու ռազմաքաղաքական կազմակերպությունների հետ: Այդ քաղաքականությունը մշտապես բխել է ազատական, արևմտականացող համաշխարհայնացման տրամաբանությունից, որպես գլոբալ ժողովրդավարացման գործընթաց, բոլոր երկրներին պարտադրված ազգային քաղաքական կազմակերպության միասնական չափորոշիչ, որը նախապայմաններ է ստեղծում

աշխարհը բաժանող մշակութային և սոցիալական անջրպետների վերացման համար:

Սակայն այսօր այդ մոտեցումը ընդունելի չէ ոչ միայն ողջ ոչ-արևմտյան աշխարհի համար, այլև արդեն ընկալվում է որպես վտանգավոր և անարդյունավետ բուն արևմտյան հանրությունում:

Պարզվեց, որ աշխարհում կան քաղաքական ուժեր, որոնք ի վիճակի են օգտագործել գլոբալ ժողովրդավարացման գործընթացը նաև այլ՝ նախատեսված ծրագրի ճիշտ հակառակ ձևով: Համաշխարհայնացման ու ժողովրդավարացման ընձեռած նոր հնարավորությունները ավանդական հասարակական ու քաղաքական կառույցի թուլացման, ինչպես նաև պետական կառույցների անկայունության հետ մեկտեղ ծառացրին ժողովրդավարացման ռազմավարության անարդյունավետության հարցը: Արևմտյան աշխարհը, միջազգային մաշտաբով իրականացնելով իր նպատակներն ու արժեքային կողմնորոշիչները, բախվեց հսկայական թվով երկրների և ժողովուրդների համար պատասխանատվություն ստանձնելու անհրաժեշտությանը, երկրներ և ժողովուրդներ, որոնք հրաժարվելով քաղաքական կազմակեպման սեփական ավանդական սկզբունքներից՝ անպաշտպան մնացին ոչ միայն «քաղաքակիրթ մարդկության» համաշխարհայնացման նկատմամբ, այլև «ստվերային գլոբալ ուժերին» դեմ հանդիման:

Արևմուտքը կանգնած է ժողովրդավարացման ռազմավարությունից հրաժարվելու և միջազգային վարչակարգը կայունացնելու տրամաբանության առջև, ինչը ենթադրում է կողմնորոշում ոչ այնքան դեպի ազատական արժեքային կառուցվածքը, որքան արդյունավետության պահանջը: Եվ եթե այդպես է, մենք կարող ենք ակնկալել համաշխարհային հանրության կողմից ավելի մեծ լոյալություն՝ արդի աշխարհի թեկուզև ոչ լիովին ժողովրդավարական, ավտորիտար, սակայն կայուն քաղաքական վարչակարգերի նկատմամբ: Անշուշտ, դա չեղյալ չի դարձնում ազգային ինքնիշխանության սահմանափակման միտումը:

Միջամտության նոր ռազմավարությունը կլինի ոչ թե հումանիտար՝ իր անվամբ և ժողովրդավարական՝ բովանդակությամբ, այլ

պայմանականորեն ասած, քաղաքակրթական ու կայունացնող: Մենք կարող ենք ակնկալել, որ Արևմուտքը կհրաժարվի ժողովրդավարական նպատակով միջամտությունից ու կանցնի կայունացման նպատակով միջամտության: Ընդսմին, քանի որ առաջնայնությունը տրվում է կայունացնող արժեքներին, որ Արևմուտքի միջամտության ու ուշադրության օբյեկտները այսուհետ կարող են լինել միայն ավտորիտար, ոչ ժողովրդավարական վարչակարգեր, նաև արտաքուստ բավական ժողովրդավար համակարգերը, որոնք սակայն ունեն միջազգային իրավիճակն ապակայունացնելու իրական միջոցներ ու ներուժ:

Այդպիսով, ներկա միջազգային իրավիճակում հավանական է, որ չափանիշը, որի հիման վրա կառուցվելու են ԱՄՆ-ի և ողջ արևմտյան հանրության հարաբերությունները այս կամ այն երկրի հետ, հիմնված կլինի ոչ թե քաղաքական վարչակարգի, այլ իր ներսում իրավիճակն արդյունավետ վերահսկելու ու ահաբեկչության կամ այլ վտանգների դեմ պայքարում ԱՄՆ-ի ու իր դաշնակիցների նկատմամբ բարեկամական վերաբերմունքի վրա:

«Նոր իմպերիալիզմ», որի պահանջն այսօր ավելի հաճախ է զգացվում Արևմուտքում, դառնալով ոչ այնքան զավթողականության գործիք, լինի դա տարածքային վերահսկողություն, թե գաղափարախոսական գերիշխանություն, որքան զուտ զսպման պաշտպանական մեխանիզմ:

Միաժամանակ նման գործընթացներ, կապված ազգային միասնության թուլացման և քաղաքական համակարգի արդյունավետության հետ, տեղի ունեցան նաև բուն Արևմուտքի երկրներում: XXI դարասկզբին այնտեղ բարձրացած «նոր աջ ալիքը» հիմնվում է գլոբալ նոր պահպանողական գաղափարների վրա: Սակայն ի տարբերություն անցյալ դարի 80-ականների սկզբի «նոր պահպանողական» ալիքի, այս պահանջի բովանդակությունը կրում է ոչ այնքան տնտեսական, որքան հասարակական-մշակութային բնույթ:

Արևմուտքի երկրների բնակչության հասարակական ակնկալիքները կապված են այն բանի հետ, որ հասարակությունների ներ-

քին քայքայման վտանգը, որ նախկինում կրում էր հիմնականում վերացական և խիստ տեղային բնույթ, այսօր դուրս է եկել այն օտարածին մշակույթների կղզյակներից, որոնք ձևավորվել են արևմտյան հասարակություններում, վերջին տասնամյակների ընթացքում:

Էթնիկ և կրոնական փոքրամասնությունները, որոնք աստիճանաբար իրենցով լցրել են Արևմուտքի երկրները, ընդսմին լինելով հիմնականում հասարակությունից մեկուսացված ու տեղայնացված, խորապես արմատավորվել և աճել են մինչև բեկումնային մեծության, անցում կատարելով արևմտյան հասարակություններում «տեղակայման» ակտիվ ռազմավարության, ավելի ստույգ՝ դրանց «ձևափոխման», հաշվի առնելով իրենց արժեքները և շահերը: Տարօրինակ է, սակայն այդ ռազմավարությունն իրականացվում է հենց Արևմտյան հասարակությունների ռեսուրսների հաշվին՝ տարեցտարի օտարածին «միջուկները» դառնում են սոցիալական բարիքների ավելի նշանակալի սպառողներ և նկատելիորեն ուժեղացնում են հասարակական միջոցների և ենթակառուցվածքների բեռնվածությունը:

Դրա այլընտրանքը Արևմուտքի պաշտոնական իսթեբլիշմենթն ու գաղափարախոսները միշտ համարել են ներգաղթողների ինտեգրումը, նրանց աստիճանական վերածումը այս կամ այն պետության քաղաքական միասնական ազգության անդամի, որի ինքնությունը որոշվում է արդեն ոչ թե էթնիկական բնութագրիչներով, այլ մշակութային-արժեքային չափանիշներով: Սակայն այս հայեցակարգը, որի արմատները, անկասկած, ձգվում են դեպի ամերիկյան ազգի պատմականորեն հարաբերաբար հաջողված կայացման փորձը, խաթարումներ կտա առաջին հերթին եվրոպական հասարակություններում, ուր, հակառակ ամեն ինչի, դեռևս ամուր են նահապետական ավանդույթներն ու արժեքները:

Անգամ ԱՄՆ-ը, որը միշտ համարվել է հատուկ տեսակի հասարակության չափանիշ և նմուշ, այսպես կոչված ձուլարան, որտեղ բոլոր ազգերը, ազգություններն, էթնոսներն, մշակույթները և կրոնները վերաձուլվում էին միասնական «մեծ ամերիկյան ժո-

ղովրդի», այսօր չի կարողանում ապահովել անհրաժեշտ ջերմաստիճան իր հասարակական կայունության դոմնային վառարանում:

Փոքրամասնությունների մշակույթի քանակական և որակական աճը, քաղաքական բարեկրթության պահանջների հետ մեկտեղ հանգեցնում է նրան, որ ամերիկյան ազգի բազային մշակույթը տարեցտարի ինքն է դառնում փոքրամասնության մշակույթ՝ եթե ոչ քանակական առումով (դեռևս), ապա սեփական երկրի զարգացման միտումները որոշելու հնարավորության տեսանկյունից:

Արևմտյան երկրների համար հիմնական խնդիրը՝ կապված ներգաղթի հետ, այն է, որ քաղաքակիրթ հասարակություններն արդեն չեն կարողանում իրենց խնդիրները լուծել առանց մարդկային ռեսուրսի ներհոսքի, նկատի առնելով տեղաբնիկների սոցիալական կարգավիճակի և բարիքների պահպանման անհրաժեշտությունը, նրա վրայից հանելով ցածրակարգ աշխատանքի ծանրաբեռնվածությունը:

Ժամանակակից Արևմուտքի ցավոտ խնդիրը, որը հետզհետե հասկանալի է դառնում Ռուսաստանի քաղաքացիներին, ամփոփված է սպառողական հասարակության հակասությունների հաղթահարման մեջ, հասարակություն, որը ձգտում է ձերբազատվել ծանր, քրտնաջան աշխատանքից, բայց միևնույն ժամանակ բազմապատկել կենսական բարիքները: Արևմուտքի տնտեսությունը ավելի մեծ չափով դառնում է նորանոր արհեստական պահանջմունքների արտադրության տնտեսություն, ստիպելով մարդկանց ցանկանալ ինչ-որ նոր բան և հեռացնելով նրանց արդի աշխարհի առօրեական և հաճախ սարսափելի իրողություններից: Դա, անկասկած, ստեղծում է կյանքի հարմարավետ հենք, սակայն զրկում է համապատասխան ազգերը ոչ միայն կամքից, այլև մարդկության զարգացման ճշմարիտ ուղղությունների ըմբռնումից: Աշխատանքը սպառողական հասարակության մարդկանց համար կյանքի աղբյուրից վերածվում է նրա լրացուցիչ հավելվածի և քողարկման՝ սպառման ու հաճույքի հնարավորության համար: Քաղաքացիներին աշխատանքով ապահովելը դառնում է յուրատեսակ պաշտամունք՝ ի հետևանք նորանոր աշխատանքային նշաձողերի

ստեղծման, որոնք հնարավորություն են ընձում վարձատրել մարդկանց գործունեությունը:

Սակայն ամեն ինչի համար պետք է վճարել: Ներգաղթողների նկատմամբ աճող ագրեսիան և եվրոպական քաղաքականության մեջ աջ շրջադարձի ներուժը հարցականի տակ են դնում Արևմուտքի բոլոր այն սոցիալական նվաճումները, որոնք այսօր կազմում են հասարակական համաձայնության հիմքը: Նման պայմաններում արդեն զարմանալի չեն թվում այն հասարակական պահանջները, որոնք հասունանում են Արևմուտքի երկրներում և դառնում են Եվրոպայի բազմաթիվ երկրներում նախընտրական քարոզարշավի քաղաքական փաստ:

Արևմուտքը կանգնած է ազատական ժողովրդավարության, անձի իրավունքների ու ազատության սկզբունքների լուրջ վերագնահատման շեմին:

Այս դեպքում իրավիճակը տարիմաստ զուգադիպություն է հայտնաբերում արևմտյան պետությունների բնակչության հիմնական զանգվածի և գլոբալ վերնախավերի շահերի համընկնման առումով, քանզի վերջիններս նույնպես ամենուրեք խաթարում են ժողովրդավարությունը: Նրանք ավելի շատ հավատում են փողի ուժին, տեխնոլոգիաներին և զանգվածային զոմբիացման այլ մեթոդներին, քան ժողովրդավարական հասարակության իդեալներին: Նրանք ձգտում են որոշել նախագահական և խորհրդարանական ընտրությունների ելքը, գնել կառավարությունների անդամներին, ներթափանցել պետական կառույցներ, սեփականաշնորհել իշխանությունը: Զրկված լինելով հնառճ հայրենասիրությունից և պատասխանատվության զգացումից, աշխարհի այդ նոր տերերը ցանկանում են օգտվել պետության ծառայությունից որպես հաստատության, որի խնդիրներն ու նպատակներն իրենք են սահմանում:

Սակայն, ի տարբերություն օրինական ընտրված իշխանության, գլոբալ վերնախավերը կաշկանդված չեն ոչ ծրագրային խոստումներով, ոչ համամարդկային էթիկայի նորմերով, ոչ ազգային պայմանագրերով, ոչ հասարակական կարծիքով, կարճ ասած՝ ոչն-

չով: Պատասխանատու չլինելով սեփական գործողությունների սոցիալական հետևանքների համար, սահմաններ չճանաչելով, նրանք հարձակվում են ազգային տնտեսությունների վրա, իրենց շահերն են պարտադրում կառավարություններին, որևէ պարտավորություն չեն զգում օրենքի և մարդկանց առջև:

Մենք տեսնում ենք իշխանության երկկազմ կառուցվածք: Մակերեսին՝ ընտրովիություն, թափանցիկություն, հղկվածություն, վերահսկելիություն, այն ամենը, ինչ պահանջվում է: Սակայն ցանկացած ռազմավարական կարևոր որոշման հետևում տեսանելի են, այլ, թաքնված կառուցվածքներ: Կամ, այլ կերպ ասած, ներկա հետժողովրդավարությունը այնպիսի կառուցվածք է, որտեղ զանգվածային մարդու զոմբիացման ամբողջ աշխատանքը և իշխանության ապահովված կայունությունը ստանձնում է անտեսանելի վերնախավը: Իր հերթին, իշխանությունը պաշտպանում է նոր վերնախավի շահերը և ստիպում է, որ տնտեսապես կախյալ երկրները բացեն սահմանները գլոբալ շուկայի առջև:

Արդյունքում մեր առջև ոչ թե դասական ժողովրդավարություն է, որ ենթարկվում է էռոզիայի՝ վերահսկողությունից դուրս մնացող «ցանցային կապերի» պատճառով, այլ նոր հասարակական կարգ: Քաղաքականության սուբյեկտներ են դառնում ոչ մայն պետական առաջնորդները, այլև միջազգային կապիտալի ներկայացուցիչները, ում համար չկան ոչ սահմաններ, ոչ մշակույթներ, ոչ էլ մարդասիրական պատվիրաններ:

Վերնախավերը հրապուրվում են ևս մի անսպասելի գայթակղությամբ՝ որոշակիացնել «ոսկե միլիարդը», որն արժանի է գոյատևման, արդեն ոչ թե կապված այս կամ այն ժողովրդի, այս կամ այն երկրի քաղաքացիների, այլ աշխարհի հիմնական պետությունների իշխող դասակարգերը միավորող գլոբալ վերնախավի հետ:

Ինչևէ, այն, ինչ XX դարում անվանվում էր զանգվածային հասարակություն (որտեղ անհատի կարծիքը գոնե որոշ նշանակություն է ունեցել), անկասելիորեն վերածվում է ինչ-որ նոր բանի՝ զոմբիացված կենսազանգվածի, որին վերահսկում է իշխող վերնախավը:

Ապագայի տարբերակ կարող է դառնալ կառավարման մերիտոկրատական (վաստակի վրա հենված իշխանություն) համակարգի ձևավորումը՝ հիմնված գիտելիք և տեղեկատվություն ունեցողների գերիշխանության վրա: Ձևավորվում է համաշխարհային ցենզային ժողովրդավարություն, որտեղ իրավունքներով և ձայնով օժտված են սոսկ այն հասարակությունները, պետություններն ու կորպորացիաները, որոնք ունեն բավարար գույքային կապիտալ և հանրակրթական քննություն են հանձնել «քաղաքական բարեկրթություն» և «մարդու իրավունքներ» առարկաներից: Դա կլինի նոր գլոբալ դասային հասարակություն, որ դեռ ստիպված կլինի ապագայում վերապրելու իր «բուրժուական» և հակադասակարգային մեծ հեղափոխությունները:

Այսպիսով, մենք այսօր տեսնում ենք քաղաքական աշխարհակարգի երկու տարբեր սկզբունքների գոյակցում: Դրանցից մեկի հետևում բացահայտ աշխարհն է, մյուսի հետևում՝ գաղտնի աշխարհը, մի կողմից ազգային պետությունն է, մյուս կողմից՝ համաշխարհայնացման միտումը: Բացահայտը կրում է ավանդական արժեքները, գաղտնին՝ հայտնի չէ, թե ինչ:

Հարց է ծագում՝ իսկ հետո՞: Արդյո՞ք, իրականում գոյություն ունի համաշխարհայնացման նախագիծ, և ինչպե՞ս պատկերացնել իրադարձությունների հետագա զարգացման հեռանկարները:

Ահավասիկ երեք վարկած:

Առաջինը պատկանում է հակագլոբալիստներին: Նրանք ասում են, որ մոլորակի նոր տերերի նպատակը համաշխարհային կառավարությունն է, միջազգային բյուրոկրատիայի և օլիգարխիայի վերնախավային ակումբը, որը հաշվետու չէ որևէ ազգային իշխանության առջև: Այս կանխատեսման համաձայն, նոր դասակարգը, որը կազմավորել են կոռումպացված միջազգային բյուրոկրատիան և անդրազգային կորպորացիաները, արդեն գոյություն ունի, սակայն դեռևս չի ձևակերպվել որևէ կառույցի մեջ և օգտագործվում է ԱՄՆ-ի կողմից, որպես գութան՝ հողը հերկելու համար: Երբ ամեն ինչ վերջնականապես կհասունանա, կփլուզեն գերտերությունը և կժառանգեն նրա ուժային ռեսուրսը: Ասենք՝ ՆԱՏՕ-ի

տիպի վերազգային կառույցի վերակազմավորման շրջանակներում, որն այլևս չի ենթարկվի որևէ պետության: Պատրա՞նք է: Գուցեև:

Ավելի հետաքրքրական է մի այլ տարբերակ: Զուգահեռ աշխարհը, ասում են կանխատեսողները, դրսևորվելու հեռանկար չունի, օլիգարխները չեն պատրաստվում փոխարինել ազգային պետությունների իշխանական կառուցվածքը: Նրանց բնույթին համապատասխանում է պետությունը՝ որպես սեփական հաստատություն և կառավարությունը՝ որպես մենեջեր օգտագործելը: Համաշխարհային վերնախավի արդյունավետությունն ապահովվում է կեղծանունների օգնությամբ, նրան ձեռնտու է ստվերային գոյությունը: Իր ողջ տարօրինականությամբ՝ այս հայեցակարգը թվում է ավելի ճշմարտանման:

Կա նաև երրորդ կանխատեսումը, որի մասին նույնպես չես ցանկանում մտածել: Սա արդեն անհնար է այն փորձից հետո, որ մենք տեսանք ֆրանսիական վերջին, իսկ դրանից առաջ ավստրիական ընտրությունների ժամանակ: Խոսքը ավտորիտար և բռնապետական վարչակարգերի սպառնալիքի մասին է: Ֆինանսական բրածոները միակը չեն, որ ցանկանում են ստեղծել նոր աշխարհակարգ՝ իշխանության այլ կառուցվածքով: Ժամանակակից համաշխարհայնացման կաթսայում կան տարբեր, այդ թվում՝ բացահայտ հակաժողովրդավարական միտումներ: Նոր աշխարհակարգը ոչ միայն ազատականացման, այլև կայունացման կարիք է զգում: Համաշխարհային ընտրախավը գերադասում է գործ ունենալ կոռումպացված բռնապետությունների, քան ժողովրդավարական անկանխատեսելի ազատակամության հետ:

Ավտորիտար վարչակարգերի հնարավորության դեմ հիմնական առարկությունը դեռևս հանգեցվում է մի բանի՝ նրանց տնտեսական անարդյունավետությանը: Սակայն բավական է, որ մեկնումեկը ստեղծի այդ թեզը հերքող նոր տիպի կորպորատիվ բռնապետություն, ժողովրդավարությունը կփլվի զանգվածների ճնշման տակ:

3.2. Ահաբեկչության հիմնախնդիրը եւ զանգվածային ահաբեկչության էթիկական հնարավորությունը

Համեմատաբար վերջերս հրապարակված և լայն քննարկման արժանացած «Ահաբեկչության ոգին» իր հոդվածում ֆրանսիացի հայտնի փիլիսոփա և սոցիոլոգ Ժան Բոդրիարը հայտարարեց, որ այսօր աշխարհում ընթանում է ահաբեկչության պատերազմ ահաբեկչության դեմ, և որ «էներգիան, որը սնում է ահաբեկչությունը, պատճառներ չունի, չի կարող հասկացվել որևէ գաղափարախոսության «շրջանակում»: Ահաբեկչությունը չի ցանկանում փոխել աշխարհը, սակայն փորձում է այն ավերել, «դարձնել ավելի արմատական՝ զոհաբերությունների միջոցով»:

Ահաբեկչության և դրա ծնած հետևանքների այսպիսի ռոմանտիկ-հերոսական ընկալումը մեզ սխալ տեղ է տանում: Թե՛ 2001թ. սեպտեմբերի 11-ի և թե՛ 2002թ. հոկտեմբերի 23-26-ի իրադարձությունների ամենամեծ խնդիրը՝ դրանց էթիկական հնարավորությունն է: Այս հարցին պատասխանելու անհրաժեշտությունը կախված չէ այն բանից, թե տեղի ունեցածի որ տարբերակին ենք հակված, ում ենք համարում այդ հրեշավոր արարքների ոգեշնչողը, որտեղ ենք տեսնում նրանց ակունքն ու պատճառը:

Նման ահաբեկչական գործողությունների էթիկական հնարավորությունը, մարդկանց այդ տեսակի՝ մարդկության ու մարդկայնության սահմաններից, այսինքն՝ բարոյական արժեքների գործողության սահմաններից դուրս հանելու մեջ է: Ահաբեկչության օբյեկտները չեն դիտարկվում որպես ի սկզբանե ակտիվ կամ ենթադրաբար պատասխանատու սուբյեկտներ՝ էրցիերցոգ Ֆերդինանդի կամ Պ. Ա. Ստոլիպինի նման: Ներկայիս ահաբեկիչների համար ահաբեկչական գործողության ապագա զոհերը մարդիկ չեն, այլ ավելի ցածրակարգ էակներ, մատերիայի խտացումներ՝ առանց հոգու և անհատականության, նրանց վրա չեն տարածվում մարդկային էթիկայի նորմերը և առաջին հերթին՝ «մի՛ սպանիր» պատվիրանը: «Նրանց համար մենք չնչին փոշեհատիկ ենք», - ահաբեկիչ-

ների մասին դիպուկ ասել է Վլադիմիր Պուտինը: Հակառակորդի հենց այդպիսի վերադասակարգում է տեղի ունենում պատերազմի ժամանակ, երբ սպանության համար հիմք է դառնում հակառակ ճամբարում գտնվելու փաստը:

Եվս մի հանգամանք, որ հնարավոր է դարձնում այսօրինակ ահաբեկչությունը՝ լուռ, հստակորեն չձևակերպված պատկերացումը մարդկային ինչ-որ արարածների մասին, իբրև կոլեկտիվ պատմական պատասխանատվության կրողների, կարևոր չէ հանուն ինչի՝ լինեն դրանք խաչակրաց արշավանքները կամ գաղութացումը, մասնակցություն անցյալի այս կամ այն պատերազմին կամ հեղափոխությանը: Այդ մարդկային արարածները, որոնց օտար է մարդասիրական վարմունքը, դառնում են յուրատեսակ գլոբալ-պատմական արյունալի վրեժի օբյեկտ:

Վերջապես ահաբեկիչները կանգնում են բարոյականության «բաշխիչների» դիրքում՝ ում համարել մարդ, բարոյականության նորմերի ենթարկման օբյեկտ, ում՝ ոչ, ում մահվան դատապարտել, ում ներում շնորհել, - յուրացնում են այնկողմնային և սրբազան բարոյականության աղբյուրի առաջնայնությունը, խոսում են Աստծո անունից, հավատում են, որ մարմնական մահից հետո ապաստան կգտնեն ոչ թե դժոխքում, ինչպես մարդասպանները, այլ բարեպաշտների միջավայրում:

Այն ամենը, ինչ հայտնի է սեպտեմբերի 11-ի և հոկտեմբերի 23-26-ի ահաբեկչական գործողությունների անմիջական կազմակերպիչների ու կատարողների մասին, ցույց է տալիս, որ մարդկությունը գործ ունի հենց այսօրինակ ահաբեկչության հետ: «Անհավատները» մարդիկ չեն, նրանց ահաբեկիչներն անվանում են «խոզերի և կապիկների զավակներ»: Նրանք արժանի են մահվան լոկ այն պատճառով, որ իրենցից ներկայացնում են թշնամական «Արևմուտքի» մի մասը, ուրեմն՝ նրանց մեջ չկան անմեղներ: Ահաբեկիչներն իրենց ընկալում են որպես աստվածային կամքի փոխանցողներ, տիեզերական սրբազան պատերազմի մարտիկներ և գիտեն, որ իրենց համար կյանք է պատրաստված դրախտում: Այդպիսով, ահաբեկչական գործողությունները

նրանց մասնակիցների տեսանկյունից բարոյապես արդարացված են:

Մեծ հարց է, թե ով է նրանց իրավունք տվել հանդես գալու աստվածային արդարության անունից, որն իր բնույթով անընմբռնելի է. արդյո՞ք, նրանք առաջնորդվում են իսլամական ինչ-ինչ դրույթներով, թե՞ հանդիսանում են, որն ավելի հավանական է, ծայրահեղական աղանդների հետևորդ՝ կոչենք դա «ուսամիզմ»՝ Ուսամա բեն Լադենի անունով, ում «Ալ Քաիդայի» անդամներն ընդունում են որպես սեփական կրոնական հեղինակություն:

Սակայն հնարավոր չէ պատկերացնել, որ այստեղ պետք է վերջակետ դրվի, եթե ցանկանում ենք հասկանալ, թե ինչ է տեղի ունենում մարդկության հետ: Որոշ իմաստով չի՞ հիշեցնում, արդյոք, Արևմտյան աշխարհի գլոբալ պատմական ակտիվությունը ահաբեկիչների՝ բարոյական պատկերացումները: Արդյո՞ք, Արևմուտքը սկզբունքորեն չի սեփականաշնորհել սրբազան ու այնկողմնային աղբյուրի չսեփականաշնորհվող առաջնայնությունը և բարոյականության «բաշխիչի» դերը, սեփական ձևաչափով վերափոխելով «ոչ արևմտյան» իրականությունը, ենթադրելով, որ հենց այդպես, այլ ոչ թե ուրիշ ձևով պիտի ապրեն մնացյալ աշխարհի ենթադրվող ապաանհատականացված, զանգվածանման, «հետամնաց» և «մոլորյալ» ազգերը. խոհարարական կանոնի համապատասխան՝ խեցգետինները սիրում են, որ իրենց կենդանի եփեն:

Կրոնական և կիսակրոնական ուսմունքների արժե-իմաստային մակարդակում տեղի է ունենում երկու աշխարհների փոխադարձ «էթիկական ոչնչացում»: Այդ ամենով տանջերձ, XXI դարասկզբի պատմական իրական հանգամանքները «նոր Առանցքային ժամանակի» դարաշրջանում դասավորվել են այնպես, որ քաղաքակրթական խզումը տեղի չի ունենում «Արևմուտք - ոչ Արևմուտք» գծով: Մենք տեսնում ենք՝ ինչպես է «Արևմուտքը» «գալիս» Արևելք, ինչի օրինակ կարող է ծառայել Ասիական խաղաղօվկիանոսյան տարածաշրջանը, որն ի դեպ, հաստատում է նաև իր քաղաքակրթական ունակությունը: Խզումը հիմնականում տեղի է ունենում «իսլամ - ոչ իսլամ» գծով: Հենց, այսպես կոչված,

«իսլամական աշխարհի» ներսում գտնվող ուժերի կենտրոններն են առաջարկում համաշխարհայնացման այլընտրանքային նախագծեր:

Ամենագլխավորն է հասկանալ, թե ինչպիսին է այն արժեհամակարգը, որ թույլ է տալիս զոհել սեփական կյանքը այլոց ոչնչացման համար: Չէ՞որ ցանկացած կրոն, ցանկացած փիլիսոփայություն փորձ է լուծելու երկու փոխկապակցված հարց՝ ի՞նչ է կյանքը և ի՞նչ է մահը: Դա այն ելման ազդակն է, որի արդյունքում հետագայում աճում է աշխարհընկալման հարցերի ողջ բազմազանությունը:

Թույլերի վրեժի, աշխարհի մի մասի աղքատության ու հուսահատության հայտնի թեզը աշխարհընկալման հարցն է: Ու՞մ են նրանք տեսնում մեր մեջ: Հնարավոր է, նրանց դիրքորոշումն այնպիսին է, որ նրանք քաղաքակիրթ աշխարհը չեն համարում մարդկանց աշխարհ, և հենց այդ է նրանց հնարավորություն տալիս լիովին այլ կերպ նայել այն մարդկանց ցավին ու տառապանքին, ովքեր զոհվեցին կամ տուժեցին Նյու Յորքում և Մոսկվայում: Ի՞նչ պիտի անենք այն իրավիճակում, երբ համաշխարհային պատմություն են մտնում ազգեր ու քաղաքակրթություններ, որոնք ուղղակի չգիտեն, թե ինչ է գլոբալ «համաշխարհային» պատերազմը, ավելին՝ պատերազմը համարում են բարիք: Եվ հակառակը, ինչը, եթե ոչ աշխարհընկալումը և արժեքների մասին որոշակի պատկերացումը մեզ թույլ չեն տալիս ամեն օր հանգիստ ապրել և օգտվել քաղաքակրթության բարիքներից, իմանալով, որ ինչ-որ տեղ մարդիկ մահանում են հյուծվածությունից, սովից և հիվանդություններից, զրկված անգամ այն հնարավորությունների փոքր մասից, որն ունի քաղաքակիրթ մարդկությունը:

Մի կողմից «քաղաքակրթական գիտակցությունը» հռչակում է յուրաքանչյուր մարդկային անհատականության անանց ինքնարժեքը, անհատական կյանքի և ազատության նշանակալիությունն ու կարևորությունը: Սակայն միևնույն ժամանակ մենք ավելի ու ավելի հետևողականորեն մերժում ենք բարոյականությունն ու արժեքը քաղաքականության մեջ, հենվելով ձևական գործընթացների,

իրավական նորմերի, քաղաքական տեխնոլոգիաների և շահերի հաշվեկշռի վրա: Ավելին, մենք հակված ենք տարբեր կերպ գնահատել մարդկային կյանքի արժեքը, կախված նրանից, թե որքանով է այն մեզ մերձ ու հասկանալի: Այսօր արդեն դասական է դարձել այն ասույթը, որը մեծապես պայմանավորում է աշխարհի առաջատար երկրների քաղաքական ոճը. «Մենք չունենք հավերժական թշնամիներ և բարեկամներ, այլ ունենք միայն մշտական շահեր»:

Խնդիրն այն է, որ մեր «տնտեսական», «շուկայական» քաղաքակրթությունը չի կարող ապրել առանց ուժեղների և թույլերի, առանց այն բանի, որ ինչ-որ մեկը լինի վերևում, ինչ-որ մեկը՝ ներքևում: Այն ուղղակի այդպես է կառուցված:

Սակայն համաշխարհային քաղաքականության նոր սուբյեկտները հավակնում են վերադարձնել քաղաքակրթությունում արժեքների կարևորությունը և սոցիալական ինտեգրմանը նոր բնույթ հաղորդել: Քաղաքացիական հասարակությունը, որպես բնակչության տարբեր խմբերի շահերի կազմակերպման և ներկայացման համակարգ, կարող է և չդիմանալ այսպես կոչված ումմայի ճնշմանը:

Այս ամենով հանդերձ, քաղաքակիրթ աշխարհի հակառակորդները միաժամանակ ի շահ իրենց, օգտագործում են թե՛ ատավիստական ֆանատիզմը, թե՛ Արևմուտքում ու Ռուսաստանում առկա տեխնոլոգիական հնարավորությունները, ստեղծելով ծայրահեղ արտահայտված, ուժեղ և միաժամանակ «քաղաքակիրթ» գիտակցության համար անհասկանալի ներգործություն: Այդ ազդեցությունը նման է վիրուսի ազդեցությանը տկարացած, բնական դիմադրողականություն չունեցող օրգանիզմի վրա, որը գտնվելով քաղաքակրթական բարեհարմարության ջերմոցային պայմաններում՝ հանկարծ ընկնում է վայրի բնության գիրկը: Հարվածը հասցվում է «տեղեկատվական դարաշրջանի» մարդու և հասարակության ամենացավոտ տեղին՝ զանգվածային գիտակցությանը: Եվ այդ «քաղաքակիրթ օրգանիզմը» անպատրաստ է լինում ըմբռնելու, որ իր իսկ հայտնագործությունը՝ «տեղեկատվական գերիշխանությունը» և «մշակութային զավթողականությունը», գործադրվում է իր դեմ: Միակողմանի երթևեկության փողոցը հանկարծ վերած-

վում է հանդիպակաց երթևեկության, սակայն առանց բաժանարար գծերի, նշանների և ցուցիչների:

Արժեքների հակազդումը եւ պատասխան ապագային իմաստների լեզվով 3.3.

Գաղափարախոսությունը կրկին վերադարձել է պատմություն և ձգտում է հերքել Արևմուտքի կողմից հայտարարված «շուկայական» քաղաքակրթության տնտեսական զարգացման օրենքների համընդհանրությունը: Աշխարհն այսօր հայտնվել է ոչ թե պետությունների ու բանակների վտանգի առջև, ոչ թե նորագույն զինատեսակների և բարձր տեխնոլոգիաների, այլ շատ ավելի լուրջ ու հզոր ուժի՝ դաժան կամքի և մոլեռանդ հավատի առջև: «Արժեքների հակազդումը», որի հետ այսօր բախվում են «քաղաքակիրթ աշխարհն» ու համաշխարհային հանրությունը, քաղաքականությունում ռացիոնալի և պրագմատիկի գերակայության պատրանքներին նետված մարտահրավեր է:

Որոշ քաղաքագետներ հակված են ապագայի վրա տարածել վերջին տասնամյակներում դիտարկվող «կրոնական վերածնունդը»: Չնայած սեփական կանխատեսման նկատմամբ այդ հեղինակների արժեքային մոտեցումները տարբեր են, որոշները պատրաստ են ողջունել Նոր միջնադարը, մյուսները դրան վերաբերում են որպես տխուր անխուսափելիության: Վերջին դիրքորոշումն իր խտացած արտահայտությունն է գտել ամերիկացի գիտնական Սամուել Հանթինգտոնի հոդվածում, որը 1994 թվականի գիտահանրամատչելի գրականության բեսթսելլեր էր դարձել:

Հանթինգտոնի համոզմամբ, միջազգային հանրության քաղաքական ապագան հիմնված է յոթ կամ ութ տարածաշրջանային «քաղաքակրթությունների» տարբաժանման վրա, որոնք ներսում ինտեգրված են կրոնական հիմքով, և իրար հետ մշտական բախման մեջ են լինելու: Առանձնապես կարևոր է, որ այդ սցենարը ներկայացվում է ոչ թե որպես հնարավորներից մեկը, այլ որպես պատմական գործընթացի եզակի հնարավոր հեռանկար: Այդ դեպքում

բոլորի պատերազմը բոլորի դեմ սպառնում է դառնալ սկսված հարյուրամյակի լեյտմոտիվ:

Երբեմն առարկում են, որ նման վախերը գերագնահատված են, որ պատերազմները ուղեկցել են մարդկության ողջ պատմությանը, իսկ կրոնը նրանց ապահովել է տպավորիչ գաղափարական հիմնավորում՝ մարդկանց յուրայինների և օտարների բաժանելով, այդպիսով կանխարգելելով հասարակության խուռներամ բռնությունը, պատերազմին «վերին իմաստ» հաղորդելով, սակայն այդ ամենը մարդկությանը չի հանգեցրել ոչնչացման: Այս առարկության մեջ հաշվի չի առնված մի կարևոր հանգամանք:

Հազարամյակների ընթացքում կռվել են նիզակներով, թրերով, ականանետերով, հրացաններով, թնդանոթներով, տանկերով: Միջուկային մարտագլխիկները և բալիստիկ հրթիռներն արդեն արմատապես փոխեցին իրավիճակը, իսկ օրակարգում զենքի ավելի կատարելագործված տեսակներն են: Կրոնական մտածողության, «սրբազան» անհանդուրժողականության և անհավատների հանդեպ ատելության հետ մեկտեղ դա այնպիսի պայթուցիկ խառնուրդ է ստեղծում, որը հաստատ կպայթեցնի մոլորակային քաղաքակրթության շենքը:

Այս տեսանկյունից, հազիվ թե կարելի է կառուցողական անվանել նաև բոլոր մարդկանց համար միասնական «Համաշխարհային կրոնի» ձևավորման հույսերը: Ցանկացած կրոնի իմաստը մարդկանց միավորումն է՝ այլ մարդկանց իրենց հակադրելու միջոցով: Այդ պատճառով կրոնական մտածողությունն իր խոր հայեցակարգայնությամբ և հոգեբանական հիմքով, երկփեղկող է: Այն ի սկզբանե բաժանում է մարդկանց հավատավորների ու անհավատների, նրանց, ովքեր «իմ հետ են» և նրանց, ովքեր «իմ դեմ են», և նրա առանցքային կերպարներն են Թշնամու ու Սրի կերպարները: Պատմական փորձը ցույց է տալիս, որ այնտեղ, որտեղ որևէ կրոնական ուսմունք գրավել է մարդկանց նշանակալի զանգվածների, շատ արագ տեղի է ունեցել նոր տարբաժանում՝ դրա իրական և կեղծ հետևորդների, և հերթական մարգարեները կոչել են անհաշտ հավատի, և անձնուրաց հերոսները (նրանց հետ և անթիվ անմեղ

զոհեր) սպանվել են սրբազան պատերազմների, բռնաճնշումների և արյունալի ջարդերի արդյունքում:

Հարկ է ավելացնել, որ ոչ միայն գիտնականները, այլև առավել հեռատես կրոնական փիլիսոփաները ուշադրություն են դարձրել աստվածընկալ աշխարհայացքի և փոփոխական իրականության անհամատեղելիության վրա: Այսպես, խոշոր քրիստոնեական մտածող Գիլբերտ Չեստերտոնը ենթադրում էր, որ ապագայի կրոնները հիմնվելու են հումորի բարձր զարգացած զգացումի վրա (կկարողանան, արդյո՞ք, այդ դեպքում դրանք պահել կրոնի որակները) և այդպիսով կձերբազատվեն նախասկզբնական ագրեսիվությունից: Ֆաշիստական վարչակարգի զնդաններից իր հայտնի «Նամակներում», գերմանացի հոգևորական և հումանիստ Դիտրիխ Բոնհյոֆֆերը նշում է, որ «չափահաս աշխարհը» կկարողանա հրաժարվել «Աստծո հիպոթեզից», հաղթահարել աստվածավախությունն ու արտաքին հովանավորության կարիքը և դառնալով «բացարձակ ապակրոնական»՝ դրանով իսկ կմոտենա Աստծուն:

Բոլոր հիմքերը կան պնդելու, որ եթե կրոնական վերածնունդը, Նոր միջնադարը և «քաղաքակրթությունների բախումը»՝ ժամանակակից տեխնիկայի ողջ զինանոցով չվերածվեն պատմական անհեթեթության և աբսուրդի անվնաս թատրոնի, խաչակրաց արշավանքները, ջիհադներն ու ղազավաթներն այս անգամ արդեն վերջ կդնեին մարդկային հասարակության գոյությանը: Եվ եթե իրադարձությունները զարգանան այս հունով, շատ հավանական է, որ XXI դարը չկայանա...

Բայց պետք է հիշել այլ բան ևս: Խզումը անցյալի, ավանդույթի, արխայիկի հետ հաճախ ընկալվում և իրապես պարունակում է այնպիսի մեկնաբանության վտանգ, որը ենթադրում է իմաստներից ու արժեքներից հրաժարում՝ ի շահ շուկայի պրագմատիզմի և Նոր աշխարհի տեղեկատվական վաղանցիկության: Սակայն զարգացման ու արդիականացման նման ընկալումը, որպես հասարակական կյանքի ապագաղափարականացում և ապաբարոյականացում, ստուգապես դրսևորվում է ոչ պակաս վտանգավոր, քան

բախումները՝ նախանշված «կրոնական վերածննդի» հեռանկարների կապով:

Սովորաբար այդ դեպքում խոսում են համաշխարհայնացման քաղաքական պայմաններում կրոնական մոլեռանդության վտանգների, զանգվածային ոչնչացման զենքի հասանելիության և ռեսուրսների բոլոր տեսակների համար մրցակցության աճի մասին: Սակայն խնդիրն այն չէ, որ սահմանվի «համաշխարհային ջիհադի» դեմ նոր խաչակրաց արշավանքներին հակադրելու անհրաժեշտությունը, որին հաճախ հակվածություն է ցուցաբերում միջազգային հանրությունը: Կրոնական կամ ավելի ստույգ բարոյական, արժեքային վերածնունդը նշանակում է հակառակը, համարժեք պատասխանի անհրաժեշտությունը նոր միասնական գլոբալ աշխարհի հաստատմանը և մարդկային հարաբերություններում ու հասարակության կազմակերպման մեջ Կեցության նոր մշակույթին:

Եվ եթե ինքներս մեզ հարց տանք, թե հնարավո՞ր է, արդյոք, փոփոխել իրադրությունը և հնարավո՞ր է, արդյոք, այլ քաղաքակրթություն, ապա վաղ թե ուշ կհանգենք այն մտքին, որ դա պիտի լինի քաղաքակրթություն՝ կառուցված այլ սկզբունքների, կապված այլ արժեհամակարգի, աշխարհընկալման, աշխարհայացքի հետ: Եվ նշանակում է՝ ապագայում, հնարավոր է, մեզ սպասվում է բոլոր համաշխարհային կրոնների գլոբալ ռեֆորմացիա, որի արդյունքը կարող է լինել նոր «Աստծո սկզբունքի» ծնունդն ու մարդկության աշխարհընկալման սկզբունքորեն նոր մակարդակի բարձրանալը:

Համաշխարհային քաղաքակրթությունը կանգնած է նոր գլոբալ արժեքային հեղափոխության շեմին: Արդիականության համաշխարհային մարտահրավերի պատասխանը պետք է տրվի իմաստների լեզվով:

II

ԴԵՊԻ ՆՈՐ ԱՇԽԱՐՀ. ԻՆՉՊԵՂ Է ԱՅՆ ՀՆԱՐԱՎՈՐ

ԱՊԱԳԱՅԻ ԿԵՐՊԱՐԸ ԵՎ ԱՐԴԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Նոր դարը հաճախ բնութագրում են որպես «անորոշության քաոսի դար», հղի քաղաքակրթության համար կործանարար հետևանքներով: Գլոբալ համակարգը կարող է հավասար հավանականությամբ դուրս գալ զարգացման տարբեր, այդ թվում և կործանարար ուղու վրա: Մտահոգում են, սակայն տարբեր մոտեցումները, թե որ սցենարներն են տանում դեպի կործանում և որոնք են հանդիսանում լավագույն կամ պահպանող: Եվ արդեն ընդհանրապես հայտնի չէ, թե ինչ գործողություններ են անհրաժեշտ զարգացման լավագույն պայմաններ ապահովելու համար:

Պե՞տք է, արդյոք, որ հասարակությունը վերադառնա «բնական» վիճակին, թե հակառակը, ավելի հեռանա դրանից, և ի՞նչ է դա նշանակում գործնականում այս կամ այն դեպքում: Պե՞տք է, արդյոք, պաշտպանել «մարդկային վերարտադրության» արագացված կրճատումը, թե ամեն երկրում ու աշխարհում պահպանել հաստատված բնակչության թիվը կամ խթանել աճը: Պե՞տք է, արդյոք, որ մենք ձգտենք կյանքի նյութական մակարդակի հետագա բարձրացման, իջեցման կամ պահպանման: Արդյոք մենք խրախուսելու՞ ենք ժողովուրդների ու ցեղերի էթնիկական, կրոնական կամ այլ ինքնատիպության աճը, թե ամենուրեք արմատավորելու ենք «համամարդկային» արժեքները: Եվ այլն, և այդպես շարունակ:

Սցենարների տեսությունը, որը ճառագայթորեն տարածվում է դեպի նկատվող միտումների ապագա, հանգեցնում է ամենահոռետեսական եզրակացության. երկրագնդի քաղաքակրթությունը չի կարող վերապրել XXI դարը, կրոնական զմայլանքի կամ սակավացած ռեսուրսների համար պայքարում փոխադարձ ինքնաոչնչացումի, էկոլոգիական փլուզման, գենետիկ այլասերման («բնական» կամ գենային ինժեներների ամենաթողության արդյունքում), մարդկանց և «ռոբոտների» բախումները, - այս ամենը կարող է վերջ դնել մեր մոլորակի հասարակական պատմությանը, ինչպես նաև կենսաբանական էվոլյուցիային: Մնում է սպասել, թե նշված գործոններից որ մեկը որոշիչ դեր կունենա: Արդյունքում, հարյուր տարի անց, լավագույն դեպքում, երկրագնդի վրա ողջ կմնան միայն ամենահետամնաց ցեղերը, որոնք արդեն դատապարտված են անհետացման և որոնք հաստատ չեն էլ կարծում, որ ապրում են XXII դարում քրիստոնեական (XV դարում մահմեդական) օրացույցի համաձայն:

Սակայն գծային արտարկումը ապագայի տեսլականի ամենապարզ և միայն մի ձևն է: Հարցը այն չէ, որ բարձր ճշգրտությամբ կանխատեսել արդեն գոյություն ունեցող վտանգավոր միտումների զարգացումը, այլ կանխազգալ մարդկային քաղաքակրթության վերջին պատկերը: Հնարավո՞ր է, արդյոք, նպատակադրված խառնվել իրադարձությունների ընթացքի մեջ, փոխելով այն դեպի ավելի բարենպաստ ուղղության: Եթե այո, ապա ո՞րն է այն նպատակաուղղված փոփոխությունների նվազագույն չափը, և ինչքա՞ն ծախս ու կորուստ է պահանջվում, ինչպե՞ս պետք է գործել՝ դուրս բերելու համար պատմության ընթացքն այլ ուղի և վերափոխելու «վատ» ապագան փոքրիշատե «լավի»:

Գլխավորը, որ պետք է հասկանանք, - անգամ բարդ համակարգի իր անկայունության փուլերում, որպիսին արդի քաղաքակրթությունն է, չի կարող տեղի ունենալ «ուզածդ բանը», ինչպես թվում է միամիտ դիտորդին: Յուրաքանչյուր դեպքում հնարավոր սցենարների քանակը ոչ միայն անվերջ չէ, այլև, մեծ հաշվով, սահմանափակված է մի քանի տարբերակներով: Ընդսմին, մյուս կողմից ընտրելով զարգացման ճանապարհներից որևէ մեկը, այլևս չենք կարող վերադառնալ և այլ ուղիով շարժվել, - մենք անխուսափելիորեն կհասնենք վերջին, իսկ եթե այդ վերջը վախճանաբեր չէ, ապա կհասնենք հերթական ճամփաբաժանին:

Ապագայի թե հետազոտումը և թե նախագծումը հնարավոր է դարձնում այն իրողությունը, որ իրատեսական սցենարների քանակը միշտ էլ սահմանափակ է: Մենք իրոք որ կարող ենք ընտրել, և հենց դա՛ է մարդկության գրեթե գլխավոր հույսը: Հարկ է հստակորեն կողմնորոշվել, տարբերակել մարդկության համար հնարավոր հանդուրժելի ապագայի սցենարը, կանխարգելել այդ ճանապարհին սպասվող վտանգները, և մղվել, ձգտել, հետամուտ լինել, որպեսզի համամոլորակային քաղաքակրթությունը մտնի զարգացման անհրաժեշտ ուղի:

Նախաճգնաժամային քաղաքակրթություն. ի՞նչ է մեզ ուսուցանում պատմությունը 4

Նախաճգնաժամային զարգացման ախտանիշը 4.1

Որքան էլ տարիմաստ թվա՝ մենք դեռևս շատ քիչ բան գիտենք մարդու, հասարակության, աշխարհի մասին: Պատմության մեծագույն հատվածի ընթացքում մարդը տիրապետել է խիստ սահմանափակ գիտելիքների, որպես կանոն՝ ամենօրյա փորձից քաղված: Անկենդան մատերիայի մասին գիտությունները զարգացում են ապրել միայն անտիկ շրջանի ժամանակներից, և գրեթե երկու հազար տարի է պահանջվել, որպեսզի բնագիտական գիտելիքները կերպափոխվելով՝ ընձեռեն մեզ XX հարյուրամյակի գիտատեխնիկական մտքի նվաճումները: Միայն այդ նվաճումների հենքի վրա և դրանց միջոցով բացված նոր գործնական ու իմացական հնարավորությունների արդյունքում մենք սկսեցինք հասկանալ, թե որքան չնչին է մեր իմացությունն անգամ ընթացիկ կարիքների համեմատ և թե որքան շատ դեռ պետք է հայտնագործենք, ճանաչենք ու գիտակցենք: Ճշմարիտ է ասված՝ «Ես գիտեմ, որ ոչինչ չգիտեմ»:

Կենաց վերաբերյալ գիտությունների պարագայում վիճակը շատ ավելի բարդ է: Կենսաբանությունը, գենետիկան, այս ոլորտի մի շարք այլ հիմնարար գիտություններ զարգացում ապրեցին սոսկ XX դարի սահմանագծին կամ ավելի ուշ: Իսկ հասարակության ու մարդու մասին գիտությունները զարգանում են ժամանակակից էմպիրիկ և գործիքային բազայի հիման վրա, ըստ էության սոսկ նախորդ հարյուրամյակի կեսերից սկսած:

Սա նշանակում է, որ մակրոսոցիալական, պատմական գործընթացների հետազոտման պարագայում, ուր դանդաղորեն կուտակվում է փորձապաշտությունը, տևական և հատկապես ո՛չ մի-

անշանակ արդյունավետությամբ ստուգվում են հետազոտման մեթոդներն ու ելակետային նկատառումները, հասարակական գիտությունները մինչ այժմ հիմնվել են ու փաստորեն շարունակում են առավելաբար հիմնվել վարկածների վրա:

Այսօր, մարդու՝ իբրև կենսոլորտային տարրի (թեկուզ անգամ՝ հատուկ, ո՛չ հերթական) մասին պատկերացումն անհուսալիորեն հնացել է:

Ոմանք պնդում են անգամ, թե «կենսոլորտն» այլ բան չէ, քան պատմական հասկացություն, որն արտացոլում է տասնյակ հազարավոր տարիներ առաջ գոյություն ունեցած ինչ-որ մի բան: Այդ ժամանակներից սկսած՝ մարդիկ հետևողականորեն կերպարանափոխել, «մարդեղացրել» են բնությունը (երկու կողմերի համար բոլոր դրական ու բացասական հետևանքներով հանդերձ), հարմարեցրել են իրենց փոփոխվող պահանջմունքներին և դրանով իսկ այն վերածել անտրոպոսֆերայի կամ նոոսֆերայի՝ ըստ Վ. Ի. Վերնադսկու: Այնպես որ՝ այժմ արդեն կենդանի նյութն իրենից ներկայացնում է ոչ թե ինքնուրույն ներփակ կազմավորում, այլ մոլորակային քաղաքակրթության ենթահամակարգ:

Անտրոպոսֆերան «մարդոլորտն» է, նոոսֆերան՝ «բանականության ոլորտը»: Իսկ մարդն իր բանականությամբ, ինչպես և բնությունը, կրում է իր մեջ թե՛ արարման, թե՛ կործանման սկիզբը: Այդ պատճառով էլ հարցն այն չէ՝ վայրի կենսոլորտի համեմատ անտրոպոսֆերան «լավ» բան է, թե՝ «վատ»: Կարևորն այն է, որ դա մի այլ՝ որակապես առավել բարդ կազմավորում է, նրա մեջ չափարկումների, հիերարխիական հավասարումների ու պատճառական կապերի ավելի մեծ քանակ կա, և այդ պատճառով էլ այն ենթարկվում է առավել բարդ օրինաչափությունների:

Մարդը սոցիոբնական համակարգ է կառուցում ու ստեղծանում: Այլ բան է, որ բնության օրենքների համաձայն, ամեն մի ստեղծարար գործընթաց հատուցվում է պարտադիր կործանաբեր էֆեկտներով (դա հստակորեն դիտարկելի է նաև կենսոլորտի՝ մարդուն նախորդող պատմության մեջ) և, որ հատկապես կարևոր է, որոշակի ժամանակահատվածներում կործանումը գերակայում է

ստեղծանումին: Ուստի և հարցն այն չէ, թե ինչպես պսակազերծել մարդկության ողջ Պատմությունը, այլ՝ թե ինչպես ի հայտ բերել այն նախապայմանները, որոնց առկայությամբ այդպիսի շեղումները հնարավոր են դառնում, և սովորել դրանք կանխագուշակել ու կանխարգելել:

Վերլուծելով մերձակա ու հեռավոր պատմության ճգնաժամային դրվագները՝ գիտնականներն ուշադրություն դարձրին, թե մարդկանց մտածողությունն ու վարքը ճգնաժամերի շեմին որքան միանման դրսևորումներ են ունենում: Անսովոր ու զարմանալի երևույթ, քանի որ խոսքն այնքան տարբեր դարաշրջանների, մայրցամաքների ու մշակույթների մասին է, որ դրանց միջև, թվում է, որևէ ընդհանուր բան չպետք է լինի:

Այդուհանդերձ, ի հայտ եկավ, որ մարդիկ երբ ձեռք են բերել նոր զենքեր, տեխնոլոգիաներ և բնության կամ այլ մարդկանց վրա ներազդելու հնարավորություններ, նրանք, ինչպես ասում են, գլուխները կորցրել են: Եվ դրանում կրթված եվրոպացիներն առանձնապես չեն տարբերվում իրենց հինավուրց նախնիներից:

Օրինակ՝ վերին պալեոլիթի (հին քարի դար) ճգնաժամը մարդկության պատմության ամենանշանակալի «գլոբալ» ճգնաժամերից է: Այդ դարաշրջանում որսորդների ու հավաքորդների քանակը իրոք որ մոտեցել է էկոլոգիապես թույլատրելի սահմանագծին, բայց անգամ դա չէ, որ դարձել է ճգնաժամի գլխավոր պատճառը: Ժողովրդագրական աճն ինքնին պայմանավորված էր որսի զինամիջոցների անսովոր զարգացմամբ: Մարդիկ հայտնագործեցին նետն ու աղեղը, նիզակները, տեգերը, նիզականետ սարքերն ու այլևայլ «որսորդական ավտոմատիկա», սովորեցին որսափոսեր փորել ու քողարկել: Դա հանգեցրեց ամենաիսկական էկոլոգիական խրախճանքի, որի հետքերն այսօր բացվում են հետազոտողների հայացքի առջև: Հոգեբանական կարծրատիպերը, որ պահպանվել էին ձեռքի քարեհատիչների ժամանակներից, դադարել էին համապատասխանել որսորդության նոր, առավել արդյունավետ տեխնոլոգիաներին, և հատուցումը վրա հասավ: Մարդիկ, հատկապես Եվրոպայի միջին լայնություններում, քայքայեցին

իրենց սննդի բազան, որը սրեց ցեղախմբերի միջև մահացու մրցակցությունը, մոլորակի առանձնապես բնակեցված և տեխնոլոգիապես զարգացած տարածքներում նրանց թվաքանակը բազմապատիկ կրճատվեց...

Այսպիսով՝ էվոլյուցիայի հերթական «մարտահրավերը», նախորդների ու հաջորդների նմանությամբ, մարդու սեփական անհեռատեսության, «տեխնոլոգիայի» ու «հոգեբանության» աններդաշնակության արդյունքը դարձավ: Ի պատասխան՝ որոշ ցեղախմբեր նախընտրեցին «բնության հետ համագործակցությունը», հողագործությունն ու անասնապահությունը - փորձառություն, որ արագորեն ներմուծվեց հսկայածավալ տարածքներում: Նեոլիթի տեխնոլոգիական հեղափոխությունը զուգակցված է հեղափոխությանը մտածողության մեջ (հողագործն ու անասնապահը պարտավոր էին պատճառահետևանքային կապերը տեսնել շատ ավելի լայն ընդգրկմամբ, քան դրա հարկն ունեին նախնադարյան հավաքորդն ու որսորդը), ցեղախմբերի միջև հարաբերություններում և այլուր:

Զարգացման նման տրամաբանությունը կրկնվում է Պատմության մեջ դարձյալ ու վերստին: Պողպատե զենքի հայտնագործմամբ, որն իր թեթևությամբ, ամրությամբ ու էժանությամբ նշանակալիորեն գերազանցում էր բրոնզին, արհեստավարժ բանակների տեղը գրավեցին, այսպես կոչված, ժողովրդական աշխարհազորայինները: Ընդսմին արժեքները, կարծրատիպերն ու մտածելակերպը մնացին նախորդ մակարդակում, իսկ նորահայտ զորությամբ արբեցած քաղաքագետներն ու զորավարները հպարտանում էին սպանված թշնամիների ու այրված քաղաքների քանակով: Գերված մարտիկներին սպանում էին, իսկ նվաճված բնակչությանը գերիշխում բացահայտ բռնության ու սարսափի միջոցով: Ռազմամարտերի արյունահեղության աճը չափ ու սահման չուներ: Վտանգվեց առավել զարգացած պետությունների հետագա գոյատևումը՝ Մերձավոր Արևելքից ու Հունաստանից մինչև Հնդկաստան ու Չինաստան:

Տեխնոլոգիական զարգացման հերթական «մարտահրավերներին» ի պատասխան՝ երևան եկավ Առանցքային ժամանակի հեղա-

փոխությունը, որ արդի քաղաքակրթության համար հիմնադրական արժեք ունի: Քաղաքակիրթ երկրների վիթխարի մարդաշխարհում միաժամանակ, ընդամենը մի քանի հարյուրամյակի ընթացքում տեղի ունեցավ քաղաքական արժեքների արմատական կերպարանափոխություն: Հենց նոր իրականացած «գիտակցության հեղափոխությունը» մարդուն դարձրեց այնպիսին, որպիսին կա այսօր:

Պատմության մեջ կարելի է գտնել նաև արդի քաղաքակրթության գլոբալ խնդիրների այլ զուգահեռներ: Նոր ժամանակաշրջանի երկրորդ հազարամյակի մի քանի դարերի ընթացքում Եվրոպան արդեն իսկ ապրել է ծանր էկոլոգիական ճգնաժամ: Հողամշակման առավել արդյունավետ տեխնոլոգիաների հայտնագործումը զարկ տվեց բնակչության աճին, անտառահատմանը՝ ցանքատարածքներ նվաճելու նպատակով, մարդկանց կենտրոնացմանը քաղաքներում: Անվերահսկելիորեն աճեցին մշտապես համաճարակներ հարուցող աղբանոցները, գետերն աղտոտվեցին կաշեգործական և այլ արհեստանոցների կեղտաջրերի ու քաղաքային կենսագործունեության հետևանքով: Գյուղատնտեսական տեխնոլոգիաների զարգացումը հանգեցրեց հերթական էվոլյուցիոն փակուղու, ինչպես դրանից շատ դարեր առաջ՝ որսորդական տեխնոլոգիաների զարգացումը:

Ելքը փակուղուց շատ առումներով փոխկապակցված էր արդյունաբերական հեղափոխությանը, որը ոչ միայն արմատապես բարձրացրեց արտադրության սահմանային արդյունավետությունը, այլև պարտադրեց արժեքների ու աշխարհայացքային նախադրյալների վերակառուցում, նոր մշակութային աշխարհի կազմավորում, որն ամերիկյան սոցիոլոգ Օլվին Թոֆլերն անվանեց արդյունաբերական իրողություն: Այդպիսի իրողությունը ենթադրում էր տարածության ու ժամանակի այլ ըմբռնում, գծային առաջընթացի ու հումանիզմի գաղափար (մարդու կողմից աստվածային աշխարհի պոզիտիվ փոխակերպում), բանականության, որպես մարդու ազատ ընտրության նախադրյալի գերակայություն: Իսկ որ գլխավորն է՝ ենթադրում էր բոլոր մարդկանց բնական իրավունքի, միասնական էության մասին պատկերացում՝ անկախ հավատալիքնե-

րից ու կլանային բարոյականության պսակազերծումից, որ բնորոշ էր նախաարդյունաբերական գաղափարախոսություններին:

Այստեղ այլ մարդածին ճգնաժամերի իրադարձությունները՝ լոկալ թե գլոբալ, վերապատմելու հարկ չկա: Հատուկ հետազոտությունները ցուցահանում են, որ դրանք բոլորն էլ հիմնականում զարգացել են միանման սցենարով և դրանց նախորդել են մտայնության, հոգեվիճակների ու գործընթացների որոշակի կաղապարներ, որպես նախաճգնաժամային զարգացման ախտանիշ (այդ մասին առավել մանրամասն տե՛ս Ա. Ա. Գրիգորևի, Ա. Պ. Նազարեթյանի, ինչպես նաև Ա. Դ. Արմանդի, Դ. Ի. Լյուրիի ու այլոց հետազոտություններում):

Ախտանիշը կազմավորվում է հասարակական կյանքի այն փուլերում, երբ կառավարման նոր տեխնիկական հնարավորությունները էականորեն գերազանցում են նախորդների որակը, որ հարմարեցված էին նվազ արդյունավետ տեխնոլոգիաներին և սոցիալական ու մշակութային ինքնակարգավորման անհուսալիորեն հնացած մեխանիզմներին: Ներքին համաչափության խախտումը հարուցում է էկոլոգիական և (կամ) աշխարհաքաղաքական ագրեսիայի դրսևորումներ:

Տարածական զարգացման սկիզբ առած շրջափուլը համապատասխան տրամադրություններով է ուղեկցվում. զանգվածային էյֆորիան, ամենաթողության ու անպատժելիության զգացումներն իշխում են մարդկանց: Աշխարհը պատկերացվում է որպես նվաճման ենթակա անսահման ու պասսիվ օբյեկտ, իսկ նրա ռպաշարները՝ անսպառ: Հաջողություններով զմայլվելն արբեցնում է: Հերթական հաջողությունների ու հաղթանակների սպասումը, ասել է թե՝ նաև չափավոր հակադրվող թշնամիների հանդեպ վերաբերմունքը, դառնում է ինքնաբավ, իռացիոնալ ու գերաճող:

Այնուհետև ուժի մեջ են մտնում մարդկային հոգեբանության մի շարք օրինաչափություններ, որոնք այստեղ արժե միայն ամենաընդհանուր գծերով քննարկել:

Սպառման աճը նպաստում է պահանջարկի ու կարիքների աճը (դեռևս մարքսիզմի դասականները դա կոչում էին պահանջ-

մունքների մեծացման օրենք), իսկ բաղձալի նպատակների մերձությունը զորեղացնում է պարզ, բայց որպես կանոն, նաև քայքայիչ միջոցների որոնման հիմնավորում այդ նպատակներին հասնելու համար: Հույզերի ազդեցությամբ մարդկանց մտածողությունը պարզեցվում է, և աշխարհի համապատկերը դառնում է առավել մակերեսային ու պարզունակ: Հիմնահարցային իրավիճակներն ընկալվում են տարրականորեն, թեև իրականում տեխնոլոգիական հնարավորությունների աճին համընթաց սոցիալական համակարգի պահպանման խնդիրը բարդանում է: Այսպիսով մեծացող խզումը ուժի և իմաստության միջև իջեցնում է հասարակության ներքին կայունության մակարդակը...

Նմանօրինակ սոցիոբնական ճգնաժամերը կարող են ավարտվել սոցիալական օրգանիզմի կործանմամբ կամ ձևախեղմամբ, որն անկարող է դառնում հարմարվել գոյապահպանման նոր պայմաններին: Բայց եթե գոյություն ունենար միայն այդ հնարավորությունը, ապա դժվար թե մեզ այսօր վիճակվեր քննարկել նման խնդիրներ, քանզի մարդկությունը պարզապես ի զորու չէր լինի գոյատևել մինչև մեր ժամանակները:

Պատմության մեջ մեզ համար մշտապես բեկումնային ու առավել կարևոր էին դառնում այլ բնույթի դրվագները, երբ ճգնաժամը լուծում էր գտնում տեխնոլոգիական, կազմակերպչական ու հոգեբանական կառույցների արմատական վերակառուցմամբ, և արդյունքում հասարակությունն ու նրա հետ մեկտեղ բնամիջավայրը, փոխանակ վերադառնալու առավել «բնական», վայրի վիճակի, ավելի էին հեռանում:

Համոզվելու համար բավական է մեկ անգամ ևս համեմատել որսն ու հավաքորդությունն անասնապահության ու հողագործության հետ, գյուղատնտեսական քաղաքակրթությունը արդյունաբերական, իսկ վերջինս՝ տեղեկատվական քաղաքակրթության հետ: Քայլ առ քայլ աճել է գործիքային, կազմակերպչական ու հոգեբանական միջնորդավորվածության մակարդակը մարդու և բնության միջև (ինչպես նաև մարդկանց միջև), սոցիոբնական համակարգն ընդհանուր առմամբ դարձել է առավել «կուլտուրական», ավելացել

է ղեկավարման ու վերահսկման արհեստական, բանական փաստարկների տեսակարար կշիռը:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ դրանք ոչ թե բնամիջավայրի պատահական փոփոխությունների, այլ այնպիսի փոփոխությունների միտված համակարգն էին, որոնք, իրենց հերթին, պայմանավորված են հասարակության տնտեսական գործունեությամբ, որը միշտ ուղեկցվում է կողմնակի քայքայիչ էֆեկտներով: Ժամանակի ընթացքում այդպիսի էֆեկտները կուտակվում էին, նրանց քանակը փոխվում էր որակի, և, հարդյունս, սոցիալական օրգանիզմն այլևս ի վիճակի չէր ապրել նախկինի պես: Այդժամ այն կամ ձևախեղվում էր ու կործանվում, կամ գտնում էր նոր, դեռևս անարատ կենսամիջավայր, կամ եթե հաստրել էր կուտակել մշակութային բազմազանության բավարար ռեսուրսներ, մշակում էր կենսագործունեության նոր, միջավայրի համար նվազ քայքայիչ ու առավել արդյունավետ միջոցներ:

Այսպիսով՝ սոցիոբնական համակարգը վերակառուցվում էր, իսկ մարդկության էկոլոգիական սահմանահատվածն ընդլայնվում էր ու խորացվում: Հաճախ, ընդսմին, արդյունքում վերականգնվում էր բնակչության, անհատական ու սոցիալական պահանջմունքների աճը, - սկիզբ դնելով հերթական լարվածությանը տանող ճանապարհին...

Այսպիսով, մարդկության՝ մեր տեսությանը մատչելի ողջ Պատմության մեջ, կենսոլորտ են թափանցում հետևողական փոփոխությունների «ներընթաց» վեկտորները: Ընդ որում՝ զարգացման այդ ուղղությունները կամ վեկտորները միանգամայն տարիմաստ տեսք են առնում: Կենսոլորտն ու հասարակությունը ապշեցուցիչ ժառանգականությամբ փոխակերպվել են առավել հանդուրժելի վիճակից պակաս հանդուրժելիի: Ասես թե «անտեսանելի ձեռամբ» աշխարհը հավասարակշռությունից, ներդաշնակությունից մղվել է դեպի առավել անհանդուրժողություն և խճողում:

Եվս մի կարևոր հանգամանք. բոլոր այդ «փուլային անցումները» ուղեկցվում էին ճգնաժամերի սրմամբ՝ պայմանավորված համակարգի՝ նախորդ վիճակում գտնվելու անհնարինությամբ:

Այստեղ նույնպես տարիմաստություն է ի հայտ գալիս, աճող լարումը լուծում էր գտնում ոչ թե համակարգերի վերադարձով դեպի պարզունակ ու հավասարակշիռ վիճակ, այլ դեպի անհավասարակշռության առավել բարձր մակարդակ անցումով, որը, բնականաբար, հղի էր առավել մեծ լարմամբ:

Սա, անշուշտ, պարզունակեցված սխեմա է և միայն նախնական պատկերացում է տալիս պատմական զարգացման վրա մարդածին ճգնաժամերի ազդեցության վերաբերյալ: Բայց հատկապես դրա օգնությամբ է, որ մենք կարող ենք քաղաքակրթության ճգնաժամերի սրման ու հաղթահարման մեխանիզմները հետազոտել անցյալում և ավելի լավ ըմբռնել արդիականության գլոբալ խնդիրներն ու դրանց հաղթահարման տեսանելի հեռանկարները:

4.2 Բռնության պաշտամունքը որպես հասարակական ու քաղաքական կազմակերպության հիմնարար խնդիր

Գրեթե ողջ գրառված պատմությունը ոչ միայն պատերազմների ու բախումների, ոչ միայն բռնության Պաշտամունքի միջոցով իրականացած ահռելի վնասների ու կորուստների պատմություն է, այլ նաև զարգացման ամենահիմնարար հակասություններից մեկի լուծման ուղիները որոնելու պատմություն:

Որքան էլ որ նախկինում մեծ են եղել բռնության ընդգրկուն ծավալներն ու զորությունները, դեռևս երբեք բռնության ներունակությունը չի հասել Երկրի ողջ բնակչության հնարավոր բնաջնջման ծավալներին: Մենք այլընտրանք չունենք. կամ պետք է արմատախիլ անենք բռնությունը որպես վարքի գերակշռող կաղապար, կամ բռնությունը արմատախիլ կանի մարդկությանը որպես երկրաբնակ կենդանի արարածների գերակշիռ տեսակ:

Մարդկության պատմությունը ցույց է տալիս՝ բռնությունից ստացած օգուտը, որպես կանոն, անցողիկ է և արագ հալվում է: Այնինչ բռնության վրա կատարած ծախսերը կորուստների հետ մեկ-

տեղ, որոնք կրում է բռնակալը, ի պատասխան բռնության, այնքան մեծ են, որ հասարակայնորեն առավել շահեկան է հարստությունների սոցիալական վերաբաշխումը, քան դրանց վերաբաշխումը բռնության միջոցով: Դիմենք պատերազմների ու այլևայլ դիմակայությունների դրվագներին՝ պատմությունից: Ռազմական միջոցներով քաղաքականությունը շարունակելու իրողության բերումով մարդկության կորուստները, ինչպես ժամանակին պատերազմի մասին արտահայտվել է Բիսմարկը, անհամատեղելի են վերջին երկու հազարամյակների բոլոր բնական աղետներին: Դա այնքան կարևոր և հետաքրքրական խնդիր է, որ մշտապես գտնվում է մասնագետների տեսադաշտում: Այստեղ մենք կառանձնացնենք մի քանի առավել տպավորիչ տվյալներ:

Նախ և առաջ ընդգծենք, որ նկատվում է պատերազմի նյութական պահանջմունքների աճի կայուն միտում: Ընդսմին՝ անընդհատ աճում են պահանջմունքներն առաջին հերթին սպառազինության ու ռազմական տեխնիկայի ոլորտում: Դրանց արտադրության ծախսերի տեսակարար կշիռն աճել է պատերազմից պատերազմ:

Առաջին համաշխարհային պատերազմի օրոք պատերազմում տեխնիկայի դերի, նրա քանակի աճի հետևանքով, երբ հրազենն ու կրակահերթ արձակող զենքերը բազմացան, սպառազինության ծախսերի տեսակարար կշիռը բազմակիորեն գերազանցեց այն ամենին, ինչ տեղ էր գտել նախորդ պատերազմների ընթացքում, և կազմեց ընդհանուր ռազմական ծախսերի 60 տոկոսը: Երկրորդ համաշխարհային պատերազմում սպառազինության ու ռազմական տեխնիկայի վրա իրականացված ծախսերի տեսակարար կշիռը աճեց մինչև 70-75 տոկոս, ընդ որում հարկ է նկատի ունենալ, որ այս պատերազմի բոլոր ծախսերը առաջինի համեմատ աճեցին միջին հաշվով 4-5 անգամ:

Ռազմական ուժեր պահելու ծախսերի հաշվեկշռում ռազմական տեխնիկայի ծախսերի աճը շարունակվեց նաև երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ բանակի տեխնիկական հագեցվածության

աճին համընթաց ավելանում էր նրա հրաձգային զորությունն ու շարժունակությունը: Այստեղից էլ՝ նյութական միջոցների պահանջարկի աճը:

Բռնության ու ռազմական դիմադրության թույլատրելիության փիլիսոփայական արմատավորումը հանգեցնում է ռազմական արդյունաբերության նշանակալի աճի անգամ խաղաղ պայմաններում: Այսպես, օրինակ, ԱՄՆ-ում 1960-ական թվականների վերջերին այդ աճի ծավալը նախապատերազմական շրջանի մակարդակի համեմատ ավելացել է 40 անգամ: 1970-ական թվականների սկզբին ուղղակի կամ կողմնակիորեն պատերազմի համար աշխատում էր ամերիկյան արդյունաբերության գրեթե մեկ երրորդը: ԱՄՆ-ի պաշտպանության նախարարության գնահատականների համաձայն, 1983 թվականին արդյունաբերության 62 ճյուղեր արտադրանք էին մատակարարում, որն անմիջապես հենց Պենտագոնն էր գնում:

Ինչպես ցույց է տալիս հետպատերազմյան փորձը, ժամանակակից սպառազինություն արտադրելու համար պահանջվում են վիթխարի ռեսուրսներ: Այսպես՝ 1980-ական թվականների սկզբում զարգացած կապիտալիստական երկրներում ռազմական նպատակների համար ծախսվում էր ողջ ալյումինի 15 տոկոսը և տիտանի 40 տոկոսը: Սրանք, ինչպես հայտնի է, ավիացիոն ու հրթիռային արդյունաբերության հիմնական կառուցվածքային նյութերն են: ՄԱԿ-ի փորձագետների հաշվարկների համաձայն, 1970-ական թվականների վերջերում աշխարհում ռազմական արդյունաբերությունը կլանել է պղնձի արդյունաբերության 15-16 տոկոսը, արճճի, նիկելի, կապարի, ցինկի մոտ 10 տոկոսը: Անշեղորեն աճում են պատերազմական գործողությունների թատերաբեմերի ինֆրակառույցների զարգացմանն ուղղված ծախսերը. նկատի ունենք ճանապարհների, օդանավակայանների, նավահանգիստների, հրթիռների, թռիչքակետերի, հրաձգարանների, զորանոցների, հրամանատարական զորակայանների շինարարությունը:

Հետազոտենք XX հարյուրամյակի առաջին կեսում ռազմական բռնության վրա ծախսված գումարային կորուստները: XX դա-

րի առաջին կեսում տեղի ունեցած պատերազմների (ներառյալ երկրորդ համաշխարհայինը) նախապատրաստման և վարման, ինչպես նաև այդ պատերազմների հետևանքները վերացնելու վրա ընդհանուր առմամբ ծախսվել է մոտ 4 տրիլիոն 700 միլիարդ դոլար: Այս, իրոք որ, աստղաբաշխական գումարի ճնշող մեծամասնությունը, - 4 տրիլիոն դոլարը, - բաժին է ընկնում է երկրորդ համաշխարհային պատերազմին: Բոլոր պատերազմած երկրներում ոչնչացված արժեքների ընդհանուր գումարը գերազանցել է 316 միլիարդ դոլարը, իսկ զինված ուժերի կազմում հավաքագրվել է ավելի քան 110 միլիոն մարդ, կտրուկ աճել է քաղաքացիական բնակչության կորուստների քանակը:

XX հարյուրամյակի երկրորդ կեսին հիմնական ռազմական տերություններից ոչ մեկը չի պատերազմել մյուսի հետ, այնինչ համաշխարհային ռազմական ծախսերը մշտապես աճել են: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո սպառազինության մրցավազքում ներդրված անմիջական ռազմական ծախսերը կազմել են ավելի քան 6000 միլիարդ ԱՄՆ դոլար (1975 թվի գներով), որը գրեթե հավասար է 1975թ. ողջ աշխարհի ՀԱԱ-ին: Նույնիսկ առավել աղքատ երկրները, որոնց ծախսերը բնակչության ամեն շնչի վրա չի գերազանցում ԱՄՆ 200 դոլարը (սովորաբար սրանք այն երկրներն են, որոնց ռազմական ծախսերը ՀԱԱ-ի համեմատ համեստ են), միջին հաշվով ռազմական գործունեության վրա ծախսում են գրեթե նույնքան գումար, որքան գյուղատնտեսության մեջ կապիտալ ներդրումների վրա:

Չնայած հակառակի ակնհայտությանը՝ շարունակում է գոյատևել մինչ երկրորդ համաշխարհային պատերազմը Գերմանիայի վերազինման ընթացքում սկիզբ առած ու արմատացած առասպելն այն մասին, թե խոշոր ռազմական բյուջեները ծառայում են իբրև միջոց գործազրկության դեմ, կամ ծայրահեղ դեպքում, մեղմացնում են դրա հետևանքները: Օբյեկտիվ թվերը խոսում են այլ բանի մասին:

Ըստ ԱՄՆ-ի կառավարության հաշվարկների՝ ռազմական ծախսերի մեկ միլիարդ դոլարը ստեղծում է 76 հազար աշխա-

տատեղ: Ընդ որում, եթե նույն այդ գումարը ծախսվի քաղաքացիական ծրագրերի վրա, ապա միջին հաշվով հնարավոր է ստեղծել 100 հազար աշխատատեղ, և նշանակալիորեն ավելի շատ տեղեր կստեղծվեն, եթե այդ միջոցները նպատակաուղղվեն գործունեության առավել աշխատատար տեսակներին: Ցավոք, հնարավոր չեղավ գտնել նմանօրինակ տվյալներ Ռուսաստանի և այլ երկրների վերաբերյալ:

Փորձենք իմաստավորել այն վիթխարի ծախսերը, որոնք իրականացվել են XX դարի առաջին կեսի ընթացքում պատերազմների նախապատրաստման, բուն կռվի վարման և կորուստները վերականգնելու վրա: Հիշեցնենք, որ այդ գումարը գերազանցում էր 4 տրիլիոն 700 միլիարդ դոլարը (ժամանակի գներով): Եթե գումարը բաժանենք այդ պատերազմներում զոհվածների քանակի վրա, կստանանք, որ ամեն զոհված մարդ միջին հաշվով «նստել» է գրեթե 100 հազար դոլար: Դա միանգամայն անիմաստ շռայլություն է: Պատկերացնելն անգամ դժվար է, թե արտադրական գործունեության նորմալ շրջափուլերի պարագայում Եվրոպայի ժողովուրդներին ինչպիսի օգուտ կարող էր բերել այդ միջոցների օգտագործումը: Դա հնարավորություն կտար լուծելու ողջ Եվրոպայի բնակարանային հիմնահարցը և մի քանի տարի անվճար կերակրելու նրա բնակչությանը:

Բերված փաստերն ու թվերը բառացիորեն աղաղակում են, թե մարդկությունը ինչպիսի ահռելի ծախսեր է վերցրել իր ուսերին՝ շարունակելով արմատավորել բռնությունը: Կարելի էր հույս տածել, որ այդ ծախսերի անիմաստությունը կամ ծայրահեղ դեպքում ցածր արդյունավետությունը վաղուց արդեն կարող էին առիթ դառնալ, որպեսզի վերանայվեին պետության հասարակական ծախսերի կառույցները: Եթե հաջողվեր համաչափորեն ոչնչացնել սպառազինության պաշարները և ռեսուրսների հոսքերը նպատակաուղղել ոչ ռազմական մասշտաբային նախագծերի իրականացմանը, ապա աշխարհի վրա քաղաքակրթության նոր որակը կդառնար մերձակա իրողություն :

Բայց հարկ է նկատի առնել ևս մի հանգամանք. արտասահ-

մանյան և հայրենական շատ հոգեբաններ հանգում են այն հետևությանը, որ հազարամյակների ընթացքում պատերազմի՝ որպես սոցիալական ֆենոմենի ու սոցիալական հաստատության պահպանումը պայմանավորված է մարդկանց պահանջմունքներով (այդ թվում՝ հոգևոր), ոչ միայն ու ոչ այնքան առարկայական, որքան գործառնական: Այս բազմաշերտ համալիրը ներառում է թե՛ կամքն առ իշխանություն, թե՛ ինքնաբերական ագրեսիան, թե՛ այնպիսի «այլասիրական» մոտիվներ, որպիսիք են ինքնազոհաբերումը, թե՛ աֆիլիացիան (պատկանելությունը որևէ խմբի), կյանքի իմաստը և այլն:

Կայուն, անհավասարակշիռ համակարգերի այս տարիմաստ հատկանիշը մատնանշում են տարբեր մասնագիտության գիտնականներ: Մի կողմից՝ օրգանիզմը ձգտում է կայուն վիճակի պահպանման, մյուս կողմից՝ տևական բարեհաջողությունը ձանձրացնում է, ներքին լարվածություն է առաջացնում, խթանում է անառարկա որոնումների ակտիվությունը, և սկիզբ է առնում անկայունություն, բախումների, սուր էմոցիաների անգիտակցական հրահրումը: Փորձարկումներն ու դիտարկումները ցույց են տալիս, որ կենդանիների նման որակը համամասնաչափ է մարմնական ու հոգեկան կազմվածքի մակարդակին: Բայց այն առավել հստակ է արտահայտված մարդու պարագայում, որը գիտությանը հայտնի սուբյեկտներից ամենահավասարակշիռն է:

Հոգեբանները մատնացույց են անում բազմատեսակ հնարքներ, որոնք զարգացրել է մշակույթը՝ բախումների ու դրանց հաղթահարման տեսանկյունից մարդկանց՝ «փոխակերպումների», «ծիսականացումների», «թատերայնացումների», «կատարսիսների» վաղնջական ձգտման համար: Եվ ստիպված ենք խոստովանել, որ այդ բոլոր հնարքներն ունեցել են անհրաժեշտ, բայց ժամանակավոր ու սահմանափակ արդյունք. «ի հեճուկս» բախումները վաղ թե ուշ մարսվում են՝ զորացնելով «ճշմարիտ» ապրումների անգիտակցական մղումը:

Հայտնի իմաստով ռազմական բախումները միշտ էլ մնացել են մարդկային կեցության չարիք ու անեծք (թեև, իհարկե, ոչ բոլորն էին իմաստավորում որպես այդպիսին): Դրա հետ մեկտեղ նախորդ

պատմության մեջ դրանք ոչ միայն բավարարում էին մարդկանց հոգեբանական խորունկ պահանջմունքները, այլև հաճախ ծառայում էին իբրև սոցիալական զարգացման փաստարկ, - որքանով որ զենքի զորեղությունը հավասարակշռվում էր՝ մշակութային արժեքների որակով, - ինչպես նաև ոչ կենսունակ, հասարակական օրգանիզմների խոտանով: Այստեղ ընդսմին տեղին է կրկնել, որ ժամանակները փոխվում են, և տեսանելի ապագայում հարցը կտրուկ է դրվելու՝ կամ մշակույթը կհաղթի պատերազմին, կամ պատերազմը՝ մշակույթին:

Կարևոր է սկզբունքային հետևությունը. որքան էլ լավատեսորեն պատկերենք մարդկանց կյանքի օբյեկտիվ պայմանները, ռազմական պատմության իներցիան հաղթահարել չի հաջողվի, քանի դեռ չեն մշակված գործառնական պահանջմունքներին փոխարինող համազոր մեխանիզմներ:

Լրատվական միջավայրի ու մշակույթի աճը վերջին հաշվով հանգեցնում է այն բանին, որ մարդու կյանքում զգացմունքների, կերպարների, իրադարձությունների ու խոհերի ավելի ու ավելի մեծ քանակություն է որոշարկվում ոչ թե միջավայրի ու այլ սուբյեկտներն հետ ֆիզիկական համագործակցության, այլ տեղեկատվության շնորհիվ: Իսկ դա նշանակում է, որ բռնության հաղթահարման տարբերակներից մեկը մարդկության պատմության ու հարաբերություններում հանդիսանում է նրա վիրտուալացումը: Չի կարելի բացառել, որ Չորրորդ՝ «վիրտուալ» աշխարհամարտը, որ նմուշորինակված է ու ցուցադրված ողջ մարդկությանը տեսանելի պատկերներով և եթե ոչ իրական, ապա դրան մոտ ժամանակային կարգով, նույնիսկ անհրաժեշտ կլինի: Այսօր, երբ աշխարհը ուղիղ եթերով տեսել է Պարսկական ծոցի պատերազմները, հետևել Հարավսլավիայի ռմբահարություններին, Նյու Յորքի պայթյուններին, Աֆղանստանի պատերազմին, մոսկովյան պատանդառությանը, հարկ է կատարել հաջորդ սթափեցնող քայլը. ցույց տալ յուրաքանչյուր հասարակության, յուրաքանչյուր պետության, յուրաքանչյուր մարդու անձնական ճակատագիրը՝ ներկա միտումների հետագա զարգացման դեպքում:

4.3. Գոյատևման օրենքները. Ինչպես է մարդկությունը հաղթահարում իրեն

Զարգացման ճգնաժամերը մարդկության կողմից հաղթահարելու տրամաբանության հետազոտությունը թույլ է տալիս խոսել քաղաքակրթության էվոլյուցիայի որոշակի օրենքների մասին:

Տեխնոլոգիական ներունակության աճին համընթաց միշտ ավելանում է հասարակության արտաքին կայունությունը, այսինքն՝ նրա անկախությունը արտաքին-բնական ու աշխարհաքաղաքական մթնոլորտի տատանումներից: Բայց դրա հետ մեկտեղ աճում է կախվածությունը ներքին տատանումներից՝ զանգվածների հոգեբանական վիճակից, քաղաքական վճիռներից ու գործողություններից, հարաճուն տարրերի նուրբ հաշվեկշռից, որ բարդանում է սոցիալական համակարգով և նրա կերպափոխման գործոններով: Որքան մեծ է արտադրական ու ռազմական տեխնոլոգիաների հզորությունը, այնքան սոցիալական օրգանիզմը պահպանելու համար անհրաժեշտ են ագրեսիան արգելակող ավելի կատարյալ միջոցներ:

Կոպիտ ասած՝ բարձրանում է «տխմարի» սոցիալական դերը, աճում է հասարակության կախվածությունը սխալից, անճիշտ վճռից, սոցիալական ինքնակարգավորիչ ուժերի «կույր խաղից»: Երբեմն բավական է անգամ աննշան իրադարձություն, չնչին առիթ, որպեսզի խաթարվի երերուն սոցիալական կառույցը, որի մեջ արդեն իսկ զգացվում է անհավասարակշռությունը տեխնոլոգիական ներունակության աճի և մարդու յուրացրած սոցիալական ու քաղաքական տեխնոլոգիաների միջև:

Եվ եթե տեխնոլոգիական հզորության աճը չի փոխհատուցվում կարգավորիչ միջոցների կատարելագործմամբ (ինքնասահմանափակում բարոյականություն, իրավունք, հասարակական կարծիք, իրավապահ մարմիններ և այլն), ապա հասարակության ներքին կայունությունը և դրա հետ մեկտեղ կենսունակությունը անկում են ապրում: Այդ դեպքում հասարակությունը զոհն է դառնում սեփական զորեղության, որը հավասարակշռված չէ համարժեք ինքնասահմանափակման ունակությամբ:

Այս օրինաչափությունը, որ կարևորագույն նշանակություն է ձեռք բերում՝ ըմբռնելու համար ժամանակակից խնդիրները, ունի պատմական, մարդաբանական և անգամ կենսաբանական շատ խորունկ արմատներ:

Հարցն այն է, որ բնական ագրեսիան, որը կենդանի նյութի էական հատկանիշներից է (կենդանիները հարկադրված են հայթայթել ազատ էներգիա այլ օրգանիզմներ կործանելու շնորհիվ, մրցակցել, հափշտակել ու պաշտպանել կենսական տարածքներ և այլն), բնության մեջ սահմանափակվում է արտաքին ու ներքին կարգավորիչներով: Դրանց թվին պատկանում է այն, ինչ ավստրիացի ականավոր կենսահոգեբան Կոնրադ Լորենցը կոչում էր ուժի ու «բնական բարոյականության» հավասարակշռություն: Որքանով որ զորեղ է կենդանիների այս կամ այն տեսակի բնական «զինվածությունը», այնքան ավելի ամուր է իրենց նմաններին ոչնչացնելու արգելակման բնազդը: Օրինակ՝ մեկ միավոր կենսատարածքի հաշվարկի համաձայն, առյուծները և այլ զորեղ գիշատիչներ սպանում են իրենց նմաններին ավելի հաճախակի, քան մարդիկ իրենց տանկերով ու ռումբերով:

Այս միտքը զարգացնելով՝ Լորենցը, ի դեպ, մի ուշագրավ ենթադրություն է արել. մարդկության պատմության մեջ պատերազմներն այդքան նշանակալի դեր են խաղում այն պատճառով, քանի որ մարդիկ առաջացել են կենսաբանորեն անվնաս մարդանման կապիկներից: Եթե մենք, ասենք, առյուծներից սերված լինեինք, ապա բնությունը մեզ կպարգևեր ագերսիան արգելակելու շատ ավելի զորեղ հնարավորություններ:

Մարդիկ ի սկզբանե գրեթե զուրկ են եղել բնատուր զենքից և հետևաբար մեր ագրեսիվ մղումների բնազդական արգելակումն առանձնապես հուսալի չէ: Սակայն կյանքը մեր հեռավոր նախնիներին դնելով գրեթե անելանելի վիճակի մեջ, նրանց ստիպել է փնտրել գոյատևման անսովոր միջոցներ: Վախից ու սովից փրկվելու համար նրանք բնական զենքի բացակայությունը փոխհատուցել են՝ պարբերաբար օգտագործելով մահակներ, քարեր ու ոսկորներ: Իսկ ժամանակի ընթացքում սովորել են առավել սուր ու օգտա-

վետ զենքեր պատրաստել: Բայց հարձակման արհեստական միջոցները կտրուկ գերազանցել են պաշտպանության բնական միջոցներին և, որ ավելի կարևոր է, ներքին ագրեսիայի թույլ բնազդական արգելակներին:

Մարդիկ կարողացել են հաղթահարել էութենական և բարոյական զարգացման այդ կարևորագույն ճգնաժամը՝ միայն մշակելով ագրեսիայի որակապես նոր, բնությանն անհայտ կարգավորիչներ, որոնք այլևս ոչ թե բնատուր բնազդների հետ են կապված, այլ բանականության և նպատակահարմարության, մշակութային ու բարոյական նորմերի հետ:

Դրա հետ մեկտեղ ելակետային ու հիմնարար սկզբունք դարձավ ագրեսիվ ներունակության «արտանետումը»՝ դեպի բնությունն ու այլոք, դեպի մարդկանց օտար խմբավորումները: Այդպես մարդիկ սովորեցին սահմանափակել ագրեսիան և իրենց ու «իրենց հանրության» ինքնաոչնչացումը:

Ընտրանքի այս ձևը սկզբունքային առանձնահատկություններով տարբերվում էր բնական ընտրությունից: Մրցակցության մեջ առավելություն էին ստանում այն հանրությունները, ուր ավելի լավ էին կարգավորված ներքին հարաբերությունները, ուր սննդին և սերնդագործությանը հավասարապես հասու էին նաև ֆիզիկապես թույլ, սակայն առավել նուրբ նյարդային համակարգ ունեցող, ինչպես նաև վիրավորները և թույլերը: Նրանց միջից հաճախ դուրս էին գալիս «հմուտ ձեռնահասներ», որոնք ավելի լավ էին իրականացնում զենքի արտադրությունը, կրակն էին պահպանում, կրթում էին երեխաներին և այլն, այսինքն՝ անում էին այն ամենը, ինչ բացառվում է դասական ընտրության պարագայում: Այսպիսով՝ կամաց-կամաց կուտակվում էր մի ներքին բազմազանություն, որը և դառնում էր վճռական կռվան նախկին կամ նոր հարևանների հետ մրցակցության սրման դեպքում:

Ողջ պատմության ընթացքում աստիճանաբար վերակառուցվում էին տեխնոլոգիաները, սոցիալական կազմավորումները, մարդկանց մտածողությունը և նրանց փոխադարձ հարաբերությունները: Ճնշման ու բռնության կոպիտ ձևերը հետևողականորեն

փոխարինվում էին առավել նուրբ ու ճկուն ձևերով, ընդլայնվում էին խմբակային նույնականացման մասշտաբները, կատարելագործվում էին միջխմբային փոխզիջման հնարքները...

Իսկ այն հանրությունը, որ ի զորու չէր լինում պատեհ ժամանակին ինքնավերահսկում ապահովել՝ նկատի առնելով տեխնոլոգիական հնարավորությունների աճը, ի վերջո, խոտանվում ու դուրս էր նետվում պատմական գործընթացից:

Մեր մոլորակում քաղաքակրթությունը դեռևս գոյատևում է շնորհիվ այն բանի, որ մարդիկ, ղեկավարելով բնության ավելի ու ավելի զորեղ ուժերն ու բազմացնելով իրենց քանակը, զուգընթաց՝ սովորել են նաև առավել վստահորեն զսպել իրենց ագրեսիվ մղումները, առավել հաջող կանխատեսել իրենց արարքների ենթադրելի հետևանքները և առավել արդյունավետ կարգավորել ինչպես սոցիոբնական, այնպես էլ ներսոցիալական հարաբերությունները:

Պատմության մի քանի հազարամյակների ընթացքում, թեև սպառնալի աճում էին զենքի կործանարար զորությունները ու մարդկանց համաբնակման խտությունը, բնակչության ընդհանուր քանակի համեմատ սոցիալական բռնության զոհերի տոկոսը չէր աճում:

Հայտնի է, որ XX դարի պատերազմներում զոհվել է ավելի շատ մարդ, քան Պատմագրության ողջ ընթացքում: Սակայն պարզվում է, եթե այլ կերպ դատենք՝ սոցիոլոգիապես ավելի կիրթ, - նկատի առնելով հարաբերականը, ոչ թե բացարձակը, - ապա հարկադրված կլինենք ընդունել, որ սոցիալական ճնշման խտությունը պատմության ընթացքում ոչ միայն չի աճել տեխնոլոգիայի զորությանը զուգահեռ, այլև կրճատվել է*:

Ընդսմին մարդկության քաղաքակրթության ճակատագրի մասին գիտենք սոսկ լրացուցիչ այն փաստը, որ այն գոյություն ունի

---

* Ռուս գիտնական Ա. Պ. Նազարեթյանի հաշվարկները ցույց են տալիս, որ բնակչության թվաքանակի համեմատ պատերազմական զոհերի քանակը դարեդար մնացել է գրեթե նույնը (բացառյալ արյունարբու հարյուրամյակները, XVI և XVII դարերի նման), բայց կենցաղային բռնության զոհերի քանակն անցյալում, դատելով կողմնակի տվյալներից, ավելի բարձր էր:

մինչև ներկա ժամանակը: Արդյոք, տեխնոգեն սրացումները կվերարտադրվե՞ն հետագայում, և եթե այո, ապա քաղաքակրթությունը դեռ երկա՞ր ժամանակ կարող է դիմակայել դրան: Իսկ եթե ոչ, ապա կարելի՞ է, արդյոք, ինչ-որ բան ձեռնարկել՝ իրադրությունն վճռական փոխելու համար:

Չէ՞ որ այսօր իսկ արդեն բավականաչափ ակնհայտ է, որ մարդկությունն իր զարգացման մեջ մոտեցել է նոր որակական ճամփաբաժանի, երբ ագրեսիայի սահմանափակման երբևիցե մշակված համակարգը այլևս չի համապատասխանում նոր պայմաններին:

Ագրեսիայի կարգավորման՝ դարերով մշակված սկզբունքներն այսօր նույնպես անբավարար են թվում: Թեկուզև այն պատճառով, որ բնության խաթարման ու վերասերման էներգիան այսօր արդեն այնպիսի զորության է հասել, որ մարդու այդօրինակ վարքի անհրաժեշտ ծախսերը կարող են, թերևս, գերազանցել ինքնառնչացման ներուժը: Վերջին հաշվով ակնհայտ է, որ բնության հանդեպ բռնությունը մեզ է վերադառնում բազմապատկվող հետևանքներով, և մենք միանգամայն ի վիճակի ենք տեսանելի պատմական հեռանկարում «հասնել այն բանին», որ ավերված կենսոլորտը մեզ կթաղի իր փլատակների տակ՝ լինի դա գլոբալ բնապահպանական ճգնաժամի հետևանքով կամ թե մարդու գենոտիպի խեղման անվերահսկելի գործընթացի արդյունքում:

Մյուս կողմից՝ «ագրեսիայի դուրս բերումը» կորցնում է ամեն մի իմաստ, և բուն մարդկանց աշխարհն է սեղմվում՝ լոկալ և հարաբերականորեն առանձնացված համակարգից՝ վերածելով միասնական փոխկապակցված համակարգի: Մանավանդ որ այն տեխնիկական սպառազինությունն ու ոչնչացման միջոցները, որոնց այսօր տիրապետում է մարդը, այնպիսի բնույթ են ձեռք բերել, որ դրանց կիրառման հետևանքները անհնար է տեղայնացնել: Հրացանի և միջուկային մարտագլխիկի սկզբունքային տարբերությունը ոչ միայն և ոչ այնքան այն է, որ դրանց կիրառումը թշնամու ոչնչացման տարբեր ներունակություն ունի, այլ այն, որ միջուկային և իմաստով դրան նման զանգվածային ոչնչացման զենքն անխուսա-

փելիորեն սպանում ու ոչնչացնում է ոչ միայն թշնամուն, այլև գործածողին:

Մեր քաղաքակրթությունը վաղ թե ուշ ստիպված է լինելու ագրեսիայի սահմանափակման նոր սկզբունքներ ու մեխանիզմներ մշակել և հնարավորություն գտնել ողջ մարդկությունը որպես միասնական հանրություն ճանաչելու, որին առաջին հերթին անհրաժեշտ է ոչ թե բնության բարիքներն օգտագործել ու հակադրվել «օտարներին», այլ պայքարել «բռնության պաշտամունքի» և «ինքնաոչնչացման ախտանիշի» դեմ իր ներսում և բոլորի հետ միասին:

Թե դա որքանով է իրականանալի՝ չգիտենք: Բայց եթե կա այդպիսի հնարավորություն, ապա այս ու այն կերպ պետք է ներդրված լինի մարդկանց ժամանակակից հասարակության մեջ: Թող որ չնչին չափով, թող որ բոլորի կողմից մոռացված ու ոչ ամբողջապես գիտակցված լինի, բայց պետք է որ գոյություն ունենա: Դատողությունների նման տրամաբանությունը բոլոր բարդ համակարգերի զարգացման ու էվոլյուցիայի՝ մանավանդ սոցիալական, սկզբունքներից է բխում:

Փորձելով պարզաբանել այն պայմանները, որոնցից կախված է սոցիալական օրգանիզմի հեռանկարը ճգնաժամի սրման պայմաններում, մենք միշտ բախվում ենք ներքին բազմազանության հասկացությանը:

Խաղաղ ժամանակահատվածներում համակարգը սովորաբար մեծ բազմազանության կարիք չունի: Եվ եթե այն աճում է, ապա, որպես կանոն, «ոչ նպատակամղված», չբերելով ակնհայտ օգուտ, այլ պարզապես այն բանի շնորհիվ, որ համակարգը բավական «ազատական» է և չի խոտանում ամեն մի մուտացիա՝ շեղում նման նմուշօրինակից: Բայց արագ փոփոխվող պայմանների դեպքում մշակված նմուշօրինակներն ավելի ու ավելի հաճախ են խաթարումներ ունենում և հանգեցնում հակադարձ արդյունքի: Այդ պարագայում այլևս համակարգի ճակատագիրը որոշվում է նրանով, թե այն հասցրե՞լ է, արդյոք, հավաքել նախկինում անարժեք ավելցուկային, կիրառաբար անօգուտ տարրերի ու տեսականիների պաշար:

Եթե ոչ, ապա համակարգը, որ ունակ չէ էական փոփոխությունների, քայքայվում է և մնում անցյալում՝ միջավայրի ու պայմանների հետ միասին, որոնք նրան օժանդակում էին: Եթե այո, ապա համակարգը վերածնվում է՝ ինչ-որ բաներ կորցնելով ու ձեռք բերելով, բայց շարունակելով առաջընթացը: Այն տարրերը, որոնք նախկինում մնում էին ավելցուկային ու արվարձանային՝ այժմ գրավում են կենտրոնական տեղեր, և նրանց շուրջ կազմավորվում են նոր համակարգեր:

Քննախույզ հետազոտությունը ցույց է տալիս, որ կենսաբանական օրգանիզմների որակապես նոր տեսակները, կենսագործունեության տեխնոլոգիական հնարքներն ու միջոցները, գեղարվեստական պատկերավորումները, կրոնական ուսմունքները, գիտական ու տեխնիկական գաղափարները և այլն, որպես կանոն, ծագել են շատ ավելի վաղ, քան դրանց էվոլյուցիոն պահանջարկը: Այսպիսի, պայմանականորեն ասած, ոչ ֆունկցիոնալ և անգամ ավելցուկային բազմազանության սկզբունքը հետևանքներից մեկն է համընդհանուր օրենքի, որ անցյալ դարի 50-ական թվականներին հայտնագործեց անգլիացի մաթեմատիկոս և կենսաբան Ուիլյամ Ռոսս Էշբին. դա անհրաժեշտ բազմազանության օրենքն է, որի համաձայն՝ համակարգի կայունությունն ու էվոլյուցիոն ներունակությունը համեմատական են նրա ներքին բազմազանությանը:

Բայց եթե բազմազանությունը պայմանականությունից դուրս արժեք է, ապա հարկ կա՞, արդյոք, դատապարտել քաղաքական ագրեսիան ու բռնությունը, պատժել քրեական հանցագործներին, պահանջել, որպեսզի բոլոր քաղաքացիները պահպանեն բարոյական ու օրենսդրական նորմերը և անգամ շտկել քերականական սխալները: Մի՞թե հասնելով այն բանին, որ մարդիկ հետևեն վարքի միանշանակ օրենքներին ու նորմերին, մենք չենք սահմանափակի բազմազանության բնական աճը: Իհարկե, այս հարցերը, որոնց շուրջ դարերով խորհել են փիլիսոփաներ, իրավագետներ, տնտեսագետներ ու քաղաքագետներ, ես ձևակերպում եմ փոքր-ինչ գրոտեսկային եղանակով: Բայց նրանք հետզհետե ձեռք են բերում մեծ այժմեականություն «համաշխարհայնացման» ընդլայնման կապակցությամբ:

Օրինակ՝ ամեն մի էթնոսի և բացառիկ մշակույթի յուրօրինակության պահպանման պահանջը անլուծելի բախման մեջ է մտնում համամարդկային արժեքների և երկրի բոլոր մարդկանց համար միասնականություն ենթադրող գաղափարի հետ: Որովհետև ավանդական արժեքները, վարքի նորմերը, մարդու իրավունքների և պարտավորությունների մասին պատկերացումները աշխարհի շատ ժողովուրդների շրջանում այնքան են տարբերվում այն ամենից, ինչ կազմավորվել է արևմտյան մշակույթի մեջ XX դարավերջին, որ դրանց միասնականացումն ընկալվում է որպես «իմպերիալիստական միջամտություն»: Եվ հարուցում են ազգային ու կրոնական արմատականների կողմից բնական հակամարտություն: Իսկ նրանք հաճախ լայնածավալ օժանդակություն են գտնում զանգվածների շրջանում:

Այս հակասությունը տեսականորեն արմատական է և նշանակալիորեն գործնական: Այդ պատճառով սկզբունքորեն կարևոր է այն լրացումը Էշբիի օրենքին, որը բխում է հիերարխիկ փոխհատուցումների օրենքից: Վերջինս մշակել է ռուս գիտնական Ե. Ա. Սեդովը:

Այս օրենքն իր բազմակողմանիությամբ համազոր է Էշբիի օրենքին (այսինքն՝ նույն չափով ընդգրկում է այն գործընթացները, որոնք տեղի են ունենում հասարակության, կենդանի ու անկենդան բնության մեջ) և վճռական նորամուծություն է բերում: Այն մատնանշում է, որ բարդ համակարգի վերին հիերարխիկ մակարդակում բազմազանության աճն ապահովվում է նախորդող մակարդակների բազմազանության սահմանափակմամբ, և հակառակը՝ ստորին մակարդակի բազմազանության աճը խաթարում է հիերարխիկ կազմավորման վերին մակարդակը:

Այլ կերպ ասած՝ որպեսզի այս կամ այն բարդ համակարգը նորմալ գործի, պարզապես անհրաժեշտ է սահմանափակել նրա յուրաքանչյուր տարրի ազատությունը: Բայց այդ սահմանափակումը ենթակա է խիստ տրամաբանության: Համակարգը կզարգանա, կայուն և էվոլյուցիոն ներունակություն կունենա այն դեպքում, երբ նրա ներքին բազմազանությունը «որակական բնույթ» է կրում,

նախ և առաջ կապված է իր «վերին հարկի» բազմազանության համապատասխան ազատության հետ՝ առավել սկզբունքային ու կարևոր բաղադրամասերի առկայությամբ: Եվ հակառակը՝ սոցիումի «ներքնահարկերի» պարզունակ, քրեական կամ նույնիսկ հակահանրային գործերի բազմազանության կտրուկ աճը ոչ միայն երբևիցե զարգացման չի հանգեցնի, այլև պարզապես կխոտանի համակարգի հիմքերն ամբողջությամբ, կփոշիացնի նրա լավագույն նմուշները:

Ծանոթությունը ժամակարգերի տեսության երկու հիմնարար հայտնագործությունների հետ, Էշբիի օրենքը և Սեդովի օրենքը, մեզ օգնում է հասկանալ բազմաթիվ ոչ ակնհայտ իրողություններ: Մասնավորապես՝ թե ինչպես կարող է բազմազանության հետագա աճը հարաբերակցվել համաշխարհային հանրության հեռանկարներին՝ իր բոլոր արժեքներով ու նորմերով հանդերձ:

5 Նոր աշխարհի մարդը

Երբ մենք խոսում ենք Նոր աշխարհի հնարավորությունների մասին, պետք է մտածենք ու խոսենք ոչ միայն ու, թերևս, ոչ այնքան նոր սոցիալական կառույցի ու միջազգային հաստատությունների համակարգի հնարավորությունից: Առաջին հերթին հարց է ծագում մարդու մասին Նոր աշխարհում, կամ, ավելի ստույգ, Նոր աշխարհի մարդու մասին:

Հասկանալ է պետք, մարդն ինքն, արդյոք, զարգանու՞մ է, արդյոք, մենք գործ ունենք մարդու անփոփոխ ու սահմանափակ բնույթի՞ հետ, թե մարդու զարգացումն ամենատարբեր ուղղություններով կարող է հանգեցնել այն բանին, որ մեր առջև կկանգնի տիեզերական մասշտաբի մի խնդիր, արդյոք, պատրա՞ստ ենք մենք մարդու փաստացի նոր տեսակի ի հայտ գալուն, որը «խորթ կլինի մեզ» ու կգա մեզ հերթափոխելու որպես Homo post–sapiens: Մարդը փոխակերպման սուբյեկտից կարող է փոխակերպվել օբյեկտի: Մենք չենք կարող ճշգրիտ ասել, բայց արդարացիորեն ենթադրում ենք, որ փո-

փոխությունների կուտակումը և մարդու խորթացումը բնությունից, լրատվության ու մշակույթի աճը որոշակի պահի կարող են հասնել այնպիսի շեմային նշանակությունների, որոնցից այն կողմ մարդկությունը կկորցնի վերահսկելու ու մարսելու ընդունակությունը իր կողմից աշխարհ բերված ողջ տեղեկատվական նորագույն ֆենոմենների հանդեպ:

Այս հարցում նկատելի են երկու հիմնական տեսանկյուններ, թեև դրանք փոխադարձաբար կապված են միմյանց: Մի կողմից՝ բարոյական պրոգրեսն է, մարդկության նոր գաղափարախոսության ու կրոնի երևան գալու հնարավորությունը: Մյուս կողմից՝ տեխնոլոգիական առաջադիմությունն է, որը կարող է հանգեցնել գերմարդու ի հայտ գալուն կամ կյանքի նոր տեսակի, որը կհաջորդի մարդ-արարածի գոյությանը:

Մեր գալի՞քն է, արդյոք, Homo post–sapiens-ը 5.1

Միջնադարյան Եվրոպայում տասը նորածիններից միայն երկուսը կամ երեքն էին, որ սերունդ էին թողնում, այսինքն «կենսաբանական նյութի» գրեթե 80 տոկոսը խոտանվում էր: Իսկ ըստ Ս. Պ. Կապիցայի հաշվարկների՝ ողջ պատմության ընթացքում մարդկանց կյանքի միջին տևողությունը չէր գերազանցում 20 տարին: Վերջին հարյուրամյակի ընթացքում այն կրկնակի աճել է, ի դեպ, այդ աճը այս կամ այն չափով ներգրավել է աշխարհի բոլոր երկրները, առանց բացառության: (Ռուսաստանում, օրինակ, XIX դարի վերջերին կյանքի միջին տևողությունը չէր գերազանցում 30 տարին):

Հարցն այստեղ, իհարկե, ոչ միայն բժշկության, դեղաբանության, կյանքի որակի ու մակարդակի մեջ է: Կարևոր դեր է խաղում նաև արժեքների փոփոխությունը. պատմականորեն երբեք մարդու անհատականությունն ու մարդկային անհատական կյանքն այնքան բարձր չեն գնահատվել, որքան XX դարում: Առաջադեմ երկրներում երեխաների մահացությունը հաշվարկվում էր արդեն ոչ թե տոկոսներով, այլ հազարի հարաբերությամբ, այսինքն՝ նկատի էին

առնվում ոչ թե հարյուր, այլ հազար ծնվածները, տարիք են առնում ու ծերանում բնածին ծանրագույն հիվանդությամբ մարդիկ, որոնց կյանքը պահպանելու մասին նախկինում անգամ չէր կարելի երազել:

Այն, որ հասարակությանը հաջողվել է գործնականում մեկուսացնել բնական ընտրության առավել կոպիտ տեսակները, - մարդասիրական մշակույթի մեծագույն նվաճումներից է: Բայց դա նույնպես չի կարող գլոբալ ծախքերի չհանգեցնել:

Հենց նկատի ունենք, որ երբ զգալիորեն թուլացվում են գենետիկ կայունության բնական մեխանիզմներն ու ոչ բարեհաջող մուտացիաները չեն վերահսկվում, ապա մարդկությունն իրեն անվերահսկելիորեն դատապարտում է նորմայից ժառանգաբար շեղվելու ռիսկին: Արդյունքում՝ ամեն մի հաջորդ սերունդ կենսաբանորեն առավել նվազ կենսունակ է, քան նախորդը, իսկ կյանքն առավել կախված է լինում արհեստական միջավայրից: Մասնագիտական հաշվարկները որոշ գիտնականների այն եզրակացությանն են բերել, որ արդեն XIX դարի կեսերին այդ ամենը կարող էր հանգեցնել զարգացած երկրների բնակչության կենսաբանական ձևախեղման, որը, ի դեպ, կապված է ուղեղի հետ: Իհարկե, դա տեղի կունենա այն դեպքում, երբ չկիրառվեն բացառիկ միջոցներ:

Ինչպիսի՞ն կարող են լինել այդ միջոցները: Ինքնին հասկանալի է, որ անհրաժեշտ է քաղաքացիների կենսամակարդակի բարձրացում, քաղաքների կանաչապատում, մարզաառողջական համալիրների ցանցի ընդլայնում, սննդի կազմակերպման, բնակպայմանների, աշխատանքի ու հանգստյան բարելավում և այլն: Բայց միամտություն կլիներ կարծելը, թե բոլոր այս քիչ թե շատ ավանդական գործողությունները կփոխհատուցեն կուտակված գենետիկ բեռները: Խնդրի վճռական լուծումը պետք է կապված լինի գենային ինժեներիայի հետ:

Բայց այստեղ, ինչպես միշտ, այս կամ այն խնդրի լուծումն իր հետ կբերի առավել բարդ հիմնահարցերի աճ: Պատկերացնելն անգամ սարսափելի է, թե մարդկային կեցության ամենաինտիմ

ոլորտներում արհեստական ներխուժումն ինչպիսի սխալների ու չարաշահումների կարող է հանգեցնել: Եվ հարցը դարձյալ այն է, թե հասարակությունը կհասցնի՞, արդյոք, ժամանակին բավականաչափ արդյունավետ կարգավորման մեխանիզմներ մշակել (բարոյական, իրավական, վերահսկիչ)՝ անուղղելի հետևանքներից խուսափելու համար:

Բայց, կարծես, անգամ սա՛ էլ վտանգներից ամենազառանցագինը չէ, որ XX դարում սպասվում է մարդկությանը՝ «առաջադիմական» սցենարի դեպքում:

Ավտոմատացված տեղեկատվական գործընթացների վեցի մակարդակի և ավելի արագացման դեպքում արհեստական համակարգերի բարդությունը կգերազանցի մարդու ուղեղի բարդությանը: Դժվար թե արժե հուսալ, իբր նման պայմաններում համակարգիչն առաջվա պես կմնա որպես զուտ «մեքենա», որպես մարդու կամքին ենթակա պասիվ գործիք: Այն, որ հաշվիչ սարքերի արագացող գործունեության քանակական աճը վաղ թե ուշ անխուսափելիորեն կհանգեցնի որակական հետևանքների, դեռևս կիբեռնետիկայի ծագման շրջանում նախազգուշացնում էր ականավոր մաթեմատիկոս Ջոն ֆոն Նեյմանը, և արդեն 80-ական թվականներին գիտնականները խոսում էին էլեկտրոնային ինտելեկտի առանձնազատման հայտանիշների մասին:

Այսօր միայն ամենաընդհանուր գծերով կարելի է պատկերացնել այն հետևանքները, որոնք կարող են ի հայտ գալ այդ ճանապարհին: Բիոտեխնոլոգիական զարգացումը (համակարգչային ցանցում ներդրվելու համար նախատեսված սպիտակուցային մոլեկուլները՝ բիոչիպերը, աճեցվում են հատուկ լաբորատորիաներում), պահանջարկային-նպատակային ոլորտի և արդյունքների էմոցիոնալ վերահսկման ծրագրային նմանակումը, - այս ամենը չի կարող չհանգեցնել ինքնաարտադրվող ու ինքնուսուցանվող բանականության սեփական սուբյեկտիվ որակների ձևավորմանը:

Այդ կապակցությամբ տագնապող մասնագետները շատ հաճախ կանխորոշում են ոչ թե պարզապես մրցակցություն, այլ մարդ-

կային ու էլեկտրոնային ինտելեկտների անխուսափելի բախում, որի արդյունքում մարդը դատապարտված է պարտության: Ըստ որում ոմանք այդպիսի հեռանկարը պատկերում են սարսափով, մյուսները՝ ինչ-որ մազոխիստական հափշտակությամբ: Բոլոր դեպքերում կանխադրվում է, թե արհեստական ինտելեկտը թշնամի կլինի իր դարն ապրած ու այլևս անօգուտ մարդ էակին, անհաղորդակից՝ նրա շահերին: Նրա մեջ բարոյական արգելքներ ներդնելու միջոցառումները, որ կբացառեին մարդկանց վնաս պատճառելու հավանականությունը (ֆանտաստ գրող Այզեկ Ազիմովի «Ռոբոտոտեխնիկայի երեք օրենքները») համարվում է ուտոպիա:

Տեղեկատվական համակարգերի բարդեցման որակական հետևանքները կանխանշող մասնագետները, որպես կանոն, էլեկտրոնային բանականության մեջ տեսնում են մարդուն թշնամի սուբյեկտ, որն իրեն վերջնականապես ապահովելով ինքնավարությամբ՝ փափկանկատություն չի ցուցաբերի բանականության «նախնի» տեսակը կրողների հանդեպ: Եվ քանի որ դրսից ռոբոտի գիտակցության մեջ մարդասիրության ալգորիթմեր պատվաստելու հնարավորություն չկա (ըստ Ազիմովի), ինքնին ենթադրելի է համարվում, որ ռոբոտները կամ «նանոբոտները» իրենց կպահեն բնական ընտրության դարվինյան օրենքների համաձայն՝ էգոիստաբար ու անխնա:

Բայց արհեստական նյութական հիմքի վրա կազմավորվող ինտելեկտը, իր ողջ նոր որակներով հանդերձ, շարունակությունն է հանդիսանում այն ինտելեկտի, որը զարգացել է Homo sapiens-ի ողջ պատմության ընթացքում: Այս խորապես դրամատիկ և ծանր ճգնաժամերով միջնորդավորված պատմությունն իրենից ներկայացնում է միասնական ժառանգական գործընթաց, և կարծել, թե ո՛չ սպիտակուցային (կամ ո՛չ միայն սպիտակուցային) նյութական կրողին փոխանցված ինտելեկտը կմոռանա իր պատմությունը, ոչ մի կերպ հնարավոր չէ:

Հետևաբար. ինտելեկտուալ զարգացման ներքին տրամաբանությամբ, աննախընթաց տեխնոլոգիական հնարավորություններ-

րով օժտված էլեկտրոնային ինտելեկտը պարտավոր է կատարելագործել նաև բարոյական ինքնակարգավորման՝ պատմականորեն մշակված մեխանիզմները: Հակառակ դեպքում նա անխուսափելիորեն կբնաջնջի ինքն իրեն, ինչը վաղուց տեղի ունեցած կլիներ մարդկության հետ, եթե նրա տեխնոլոգիական զարգացումը չփոխհատուցվեր մշակութային սահմանափակումների կատարելագործմամբ:

Կարելի է համաձայնել հոգեբանների հետ, որոնք կարծում են, թե այդպիսի համագործակցության դեպքում հիմնական վտանգը հենց մարդուց է գալու, որը վաղնջաբար, դեռևս հին քարե դարից, իր մեջ վախի ու ատելության խառնակ զգացում է կրում նմանակի, ո՛չ մարդու, մարդանման օտարի հանդեպ: Հենց սա էլ կարող է դրսևորվել էլեկտրոնային համակարգերի, ծրագրերի ու դրանց ստեղծողների հանդեպ նեոլուդիստական տրամադրությունների ու ագրեսիվ գործողությունների մեջ: Հետևանքները պատկերացնելը դժվար է. անգամ հակազդեցության բացակայության դեպքում սոցիալական օրգանիզմի կախվածությունը տեղեկատվական համակարգերից այնքան է մեծանում, որ եթե մի քանի տասնամյակ առաջ դրանք ժամանակավորապես շարքից դուրս գային, ապա դա կհանգեցներ, հավանաբար, հասարակական կյանքի մահաբեր կաթվածի:

Բարենպաստ սցենարի դեպքում իրադարձությունները կարող են զարգանալ ոչ թե հակամարտության, այլ երկու հանդիպակաց միտումների խորացող համակեցության ուղիով: Մի կողմից էլեկտրոնային ինտելեկտը ձեռք կբերի արտահայտված «կենսանման», «հոգենման» և «մարդակերպ» հատկանիշներ: Մյուս կողմից մարդու օրգանիզմն ավելի ու ավելի կհեռանա «բնական» կենսաբանական նախադրյալներից՝ հարստանալով երկրորդային արհեստական հատկանիշներով, իսկ մարդու մտածողությունը ձեռք կբերի «համատեղություն» էլեկտրոնային զուգընկերոջ հետ: Սա ունակ է հանգեցնելու մարդամեքենայական համալիրների հետևողական ինտեգրման ու համակեցության:

Հետաքրքրական է, որ մարդու մտածողության համատեղելիությունը համակարգչային մտածողությանը, բնավ չի նշանակում նրա «մեքենայացում»: Ընդհակառակը, մտածողությունը դադարում է գծային բնույթ կրել, որպիսին ձևավորվել է «գրքային» դարաշրջանում՝ ձեռք բերելով խճանկարայնության ավելի արտահայտված գծեր: Մարդը, որ այս կարգի մտածողություն ունի, առավել քիչ է ենթարկվում Սուրբ Գրքի ու միակ ճշմարտության դյութանքին, սակայն ինտելեկտուալ տեսանկյունից առավել ճկուն է, աղապտացվող, երկուստեք փոխլրացման գաղափարի հանդեպ առավել հանդուրժող ու զգայուն: Բացառված չէ, որ հենց այստեղ է թաքնված և մարդու անցումը նոր փուլերի, և բարոյական առաջադիմության նոր մակարդակը:

Արդյունքում կձևավորվի քաղաքակրթության գործընթացի որակապես նոր մի սուբյեկտ, իսկ Տիեզերքի պատմությունը կզարգանա դեպի հաջորդ «հետմարդկային» աստիճանակարգ:

Այսպիսով, XXI դարի վճռորոշ խնդիրը, ամենայն հավանականությամբ, կդառնա արհեստականի ու բնականի միջև հարաբերությունը՝ իր բոլոր դրսևորումներով: Բայց պատմության մեջ սովորաբար հենց այդպես էլ տեղի է ունեցել: Մարդածին ճգնաժամերի արմատական լուծումը սովորաբար իրականանում էր բնական «վայրի» վիճակից սոցիոբնական համակարգի հերթական արտաքսմամբ: Մոլորակային քաղաքակրթությունը պահպանելու համար գալիք հարյուրամյակում ակպահանջվի «բնականության արտաքսման» աննախադեպ կտրուկ շրջապտույտ:

Առանց տեղեկատվական ցանցերի, նանոտեխնոլոգիաների, գենետիկ ինժեներիայի ու ռոբոտային տեխնիկայի զարգացման մեր մոլորակի մշակույթը չի կարող գոյությունը պահպանել XXI դարում: Դրանց զարգացումը կարող է արմատապես լուծել էներգետիկ, բնապահպանական, ժողովրդագրական ու անգամ ռազմաքաղաքական խնդիրները:

Ռազմական բախումների «վիրտուալացման» կամ «ռոբոտացման» հեռանկարը, եթե դրանք տեղի են ունենալու միայն հա-

մակարգչային վիրտուալ միջավայրում կամ միայն ռոբոտների մասնակցությամբ, բացառելով մարդուն, մարդկության համար հանդիսանում են այնպիսի մի գալիք ներկայացում, որը թեև այնքան էլ հստակ չէ, բայց հմայիչ է միանգամայն: Եթե մարդուն վիրտուալ աշխարհ ներքաշեին, ապա դա կարող էր ապահովել սուր ապրումների այնպիսի մի արժանահավատություն, որն անհրաժեշտ ու բավարար կլիներ զանգվածային հոգեկան լարվածություններից ձերբազատվելու համար:

Երևակայությանն ազատություն տալով՝ կարող ենք պատկերացնել վիրտուալ պատերազմներ, որոնցում տնային համակարգիչների առջև նստած միլիոնավոր քաղաքացիներ, հնարամիտ սաղավարտախոսերով զինված, կսկսեն մարտնչել՝ քաղաքական վեճեր լուծելու համար: Ընդսմին, նրանք կմասնակցեն վտանգավոր ռազմամարտերի սյուժեներին՝ ենթարկվելով միասնական հրամանատարությանը, ցավ, սարսափ, մտավոր, մկանային լարում, հոգնություն և ուժասպառություն զգալով, ցուցաբերելով ուշիմություն ու քաջություն, հաղթահարելով նույնքան փորձառու հակառակորդի դիմադրությունը: Եվ գիտակցելով, որ դա պարզապես խաղ չէ, - մարտնչումից է կախված, թե ինչպես կլուծվի խնդիրն այս կամ այն կողմի օգտին: Նման հակամարտություններում կարող են ներկա լինել նախկին պատերազմների բոլոր հատկանիշները, եթե հաշվի չառնենք առանձին «մանրուքներ», - արյունահեղություն, նյութական օբյեկտների (մշակութային ու բնական) կործանում, մթնոլորտի թունավորում և այլն:

Հասկանալի է, որ այս ամենն առայժմ ֆանտաստիկա է: Ես պարզապես ուզում եմ շեշտել, որ եթե մշակման չենթարկվեն «նյութական» պատերազմի այս կարգի փոխակերպումների հնարանքները, ապա քաղաքակրթությունը կկործանվի: Իհարկե, եթե դրանք մշակվեն, ապա... ազգային պետությունն առհասարակ, որպես սոցիալական կազմակերպության պատմականորեն որոշակի գոյաձև, կզրկվի համարյա թե վերջին «օբյեկտիվ» գործառույթից, որը քաղաքացիների ու տարածքների ռազմական պաշտպանության

գործառույթն է: Այդ դեպքում այն կամ կմնա անցյալում, կամ այնքան կվերածնվի («վիրտուալ կդառնա»), որ կդադարի համապատասխանել պետության մասին մեզ համար սովորական դարձած պատկերացումներին:

Առհասարակ տեխնոլոգիական զարգացումն ինքնին կրում է այնպիսի նոր խնդիրներ, որ անպատասխանելի հարց է՝ կհաջողվի, արդյոք, մարդկությանը գտնել դրանց արդյունավետ լուծումը, և, որ պակաս կարևոր չէ, հոգեբանորեն հաշտվել նման որոշումների անհրաժեշտության հետ: Պետության «վիրտուալացման» խնդիրը օրինակներից մեկն է:

«Տեխնոլոգիական պոռթկումը» կապված է սարսափելի վտանգների հետ: «Ապագայի տեխնոլոգիաները», որոնք այսօր արդեն իսկ պատկերացնում ենք և որոնք սկզբունքորեն կարող են դիտարկվել նույն այդ ժողովրդագրական, բնապահպանական ու սոցիալական հիմնահարցերի լուծում, ունակ են ինչպես կյանքի հորիզոններն ընդլայնել, այնպես էլ հրատապ դարձնել մարդկության ոչնչացման խնդիրը:

Վերջին հաշվով դժվար չէ ենթադրել, օրինակ, և այն, որ այսօր անբուժելի հիվանդությունների հանդեպ մարդու հաղթանակն անհնարին է պարզապես մտքի այն աղյուսակարգերի սահմաններում, որն այսօր սահմանում է մեր գոյությունը, մեր արարքները և գիտության ու բժշկության զարգացման տրամաբանությունը: Մենք ձգտում ենք գտնել այս կամ այն հիվանդություններից մարդկային բնությունը պաշտպանելու եղանակներ (ենթադրենք ՁԻԱՀ-ն), բայց մենք չենք հանդուրժում, որ դրանք անհաղթահարելի լինեն մարդու բնության սահմաններում: Եվ այդ հիվանդություններ հաղթահարելու միակ միջոցը կդառնա ոչ թե հիվանդությունների վերացումը, այլ հենց մարդարարածի բարեփոխումը: Հնարավոր է՝ մարդու օրգանիզմի բնույթը արժե փոփոխել, - և տվյալ հիվանդությունները կդադարեն այդպիսին լինել:

«Ապագայի տեխնոլոգիաները» հարուցում են նաև բազմազան նոր քաղաքական, փիլիսոփայական խնդիրներ: Օրինակ, ար-

դեն նշվել է, որ էկոլոգիական վիճակի անկման պայմաններում կյանքի որակի ու առողջության ապահովման հիմնահարցը սկզբունքորեն լուծվում է միայն օրգանների բժշկական կլոնավորման տեխնոլոգիաների միջոցով, կամ էլ վիրտուալ տեղեկատվական տեխնոլոգիաների հետագա զարգացման ճանապարհով: Դրա հետևանքով շուտով կարող է իրական դառնալ նաև անհատի փաստացի անմահության խնդիրը:

Նոր աշխարհին հակադրվելու ձգտման մեջ, Արևմուտքը կարող է փորձել օգտագործել իր տեխնոլոգիական առավելությունն ու անմահության տեխնոլոգիաները հանուն այն բանի, որպեսզի իրականացնի նոր ժողովրդագրական պայթյունի գերծրագրավորումն իր ներսում արհեստական մարդկանց կլոնավորման ու վերարտադրման միջոցով:

Արևմուտքի ժամանակակից մարտավարությունը վերաբերում է փոքրամասնությանը. դա Նոր աշխարհում իրեն ցուցահանելու գիտակցական մարտավարություն է, երբ իրեն գիտակցում է որպես ինքնաբավ ու տիրող փոքրամասնություն, որը պետք է տիրապետի բացառիկ ռեսուրսների ու տեխնոլոգիաների, որոնք ապահովում են ոչ միայն իրենց գիտակցությունն ու իշխանությունը մոլորակի վրա, այլև անհրաժեշտության դեպքում այն լքելու հնարավորություն են տալիս, ինչպես նաև ապահովում են անձնական ու հանրային անմահությունը հենց իրենց ներկայությամբ՝ որպես հավասարազոր պատասխան փոքրամասնություն լինելու կարգավիճակի դեմ և որպես սեփական կարգավիճակի ու քանակի վերարտադրման ռեսուրս (այդ թվում նկատի է առնվում ինտելեկտուալ վերարտադրությունը բացառիկ ինտելեկտ կրողների անմահությունն ապահովելու հաշվին):

Այսպիսով՝ խնդիր է հանդիսանում կյանքի կազմակերպման հետմարդկային ու հետերկրային ձևերի կազմակերպումը՝ սկսած, ասենք, բանականության ու կյանքի զուտ տեղեկատվական ձևերից ու վերջացրած մարդկության կամ նրա լավագույն մասի հեռացումով երկրից: Այս ֆանտաստիկ ենթադրություններն այդ-

պիսին են թվում միայն առաջին հայացքից: Չէ՞ որ Պատմության ընթացքում ամեն անգամ, առաջընթաց ապրելով զարգացման փուլերում, մարդկությունը վերափոխել է բնությունն ու այն «լքել»: Այսօր մարդկությունը, հավանաբար, պատրաստ է ևս մեկ քայլ անելու՝ հաջորդն ու տրամաբանականը՝ ինքն իր իսկ սահմաններից ու Երկիր մոլորակի սահմաններից այն կողմ:

Ըստ էության՝ այսօր խոսքը քաղաքակրթության որակի ու այն կրողի սկզբունքային վերափոխման մասին է: Հոգեբանական բարդությունները, որ կապված են սովորական, էթիկական, պետական, դավանաբանական և այլ մեծածավալ նույնացումների հետ, խամրում են տեսակի նույնացումից հրաժարվելու առջև: Այս ամենն անպայման կհարուցի ուժգին ու աննախադեպ հոգեկան ցնցումներ: Եվ որպեսզի մարդիկ կարողանան դրանցից գլուխ հանել՝ զոհ չգնալով մասսայական ֆրուստրացիային ու հիստերիկ ագրեսիայի դրսևորումներին, անհրաժեշտ է վիթխարի աշխատանք (նախ և առաջ՝ յուրաքանչյուրն իր հանդեպ)՝ գիտնականների, քաղաքագետների և հասարակության, այսպես կոչված, վերնախավի ղեկավարությամբ:

5.2 Բարոյական խնդիրների առաջընթացը

Մի իմաստուն արտահայտության համաձայն՝ «Մարդկության պատմությունը բարոյական խնդիրների առաջընթացն է»: Մարդկային մտածողության հենց այս սահմաններից, ոչ թե դրանց իրականացումից ելնելով է, որ մենք կարող ենք դատողություններ անել բնության ու մեր հասարակության ճշմարիտ էվոլյուցիայի մասին:

Այսօր մեր քաղաքակրթությունը դարձյալ կանգնած է նոր «գիտակցության հեղափոխության» շեմին, առանց որի մարդկությունն ի վիճակի չէ պատասխան տալու իր գոյատևման մարտահրավերներին, հաղթահարելու զարգացման հնարավորությունների սահմանափակությունը, չի կարող գոյություն ունեցող համակարգից, ինչպես նաև սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական, բնապահ-

պանական ու քաղաքական խնդիրների զարգացման միտումներից գլուխ հանել:

Անկախ ամեն ինչից՝ հենց բարոյականությունը, գաղափարախոսությունը, որ ընկած են քաղաքականության ու իրավունքի հիմքում, մնում են թե որպես հասարակության ինքնագիտակցության կարևորագույն մեխանիզմներ, թե սեփական զարգացման, այդ գործընթացները նպատակամղելու, ղեկավարելու ու գործի դնելու հնարանքներ: Այնինչ մենք այսօր բախվում ենք հենց զարգացումների կառավարելիությանը և գիտակցում դրանց ընթացքը, որպես հիմնական խնդիր:

Մարդկությանն անհրաժեշտ է, որպեսզի ինքն սկսի սեփական զարգացման միտումները նպատակաուղղել և անցնել սոցիալական ինժեներիայի ու քաղաքակրթական շինարարության նոր սկզբունքների կիրառմանը: Բայց որպեսզի դա տեղի ունենա, անհրաժեշտ է, որ մենք ձևակերպենք զարգացման մարտավարությունը հենց իմաստների, արժեքների ու բարոյականության լեզվով: Մարդկության բարոյական զարգացումը Պատմության ու նրա հիմնական պահանջմունքի հիմնարար հարցերից մեկն է դառնում:

Մարդկության գոյատևման ու ինքնապահպանման շահերը պահանջում են առաջին հերթին նրա բարոյական համերաշխության, այն սկզբունքների ու արժեքների փնտրտուք, որոնց շնորհիվ հնարավոր կլինի հասնել հասարակական գլոբալ համաձայնության, որն ազգային, դավանաբանական, քաղաքակրթական առկա սահմաններից դուրս է:

Արդի աշխարհի բարոյական կործանման հիմքը վերջին հաշվով ազատական ավանդույթն է, որի սահմաններում պատվանդանին են բարձրացված անհատի, մասնավոր շահի, օգուտ-վնասի ու անձնական բարեկեցության հասկացությունները, որոնք հիմնարար բնույթ ունեն: Այն դեպքում, երբ բարոյականության հիմնարար խնդիրը հենց գիտակցումն է այն իրողության, որ մարդը և նրա գործունեությունը մեկուսացված չեն, այլ փոխադարձ կապի ու կախվածության մեջ են մյուս մարդկանց հետ:

Տնտեսական լիբերալիզմն ու դրանից կախված գիտատեխնիկական ռացիոնալիզմը տվյալ սկզբունքները վեր են հանում մինչև հասարակական ու պետական գործունեության ուղենիշների մակարդակ՝ նպատակաուղղված առաջադիմության ու շահի գերակայությանը հասնելուն: «Նվազագույն ծախսեր - առավելագույն արդյունք» չափորոշիչներով մտածելու ընդունակությունը ռացիոնալ վարքի ավանդական թեզիսն է, որ չի առնչվում բարոյականության ոլորտին: Բարոյականությունը, տվյալ դեպքում, ավելի շուտ, ծախսերի ու օգուտների մասին պատկերացումների գնահատանքը փոփոխելու ունակությունն է, երբ այս կամ այն մարդու համար գլխավորապես օգտավետ կարող է դառնալ հենց հանգիստ խիղճը:

Շուկայի հասկացությունը, որը կենտրոնական արժեք է ժամանակակից արևմտյան հասարակությունների համար, անշուշտ, քառսային տնտեսական փոխհարաբերություններին վերագրում է ինչ-որ արժեքային իմաստ, երբ օբյեկտիվ «անտեսանելի ձեռքի» մասին որոշակի պատկերացում է հորինվում, և այդ «ձեռքը» բոլոր մարդկանց, բոլոր երկրներին ու ժողովուրդներին առաջնորդում է դեպի փոխհամաձայնություն, հարստացում ու ծաղկունություն: Այս տրամաբանության համաձայն, համընդհանուր բարեկեցությունն ու բարեգործությունը, ինչպես նաև համընդհանուր կարգ ու կանոնն ու փոխհամաձայնությունը երևան են գալիս որպես մասնավոր շահերի փոխգործունեության որոշակի արդյունք:

Ընդ որում՝ գլխավոր տարիմաստությունն այն է, որ իրենց մոտիվներով բարոյազուրկ մասնավոր շահերի ու գործողությունների միագումարը պետք է, իբր, վերջին հաշվով ստեղծի սոցիալական կյանքի առավել արդարամիտ ու ազատ միջավայր: Իսկ այդ բանը երաշխավորելու է կոչված ոչ միայն շուկայական հասարակական ինքնակառավարման բարեմիտ տրամաբանությունը, այլև հասարակական պայմանագիրը, որի հիմունքը ազատականների համար միշտ էլ, վերջին հաշվով, հանդիսացել է բոլորի գոյատևման համար հավասարազոր սկզբնական «մեկնարկային հնարավորու-

թյուններ» ապահովելու մասին թեզիսը, որպես արդարամտության նախապայման:

Որոշակի հասարակական կամ սոցիալական պայմանագրի վրա հիմնված՝ մարդկանց առավելագույն քանակի մասնավոր շահերի ու բարիքների նույնականացումը համընդհանուր բարիքի հետ՝ ինքնադիմակազերծում է: Եթե շատ պարզունակ խոսենք, ապա նման պատկերացման հիմքում ընկած է ըստ էության ոչ մի կռվան չունեցող հավատքն առ այն, թե «ամեն ինչ լավ կլինի» և թե մեր այս՝ «աշխարհներից լավագույն» աշխարհում առանձին մարդկանց բարեկեցությանն ու երջանկությանը միտված բարեմիտ ձգտումների առկայությամբ հնարավոր չեն աղետալի հետևանքներն ու արդյունքները: Նման համոզմունքի միակ հիմքն այն է, որ մենք ցանկանում ենք լավ ապրել, այլև հավատում ենք, թե սեփական ջանքերով կարող ենք երբևիցե ներդաշնակության ու բարեկեցության մի չքնաղ աշխարհ կերտել եթե ոչ բոլորի, ապա, ծայրահեղ դեպքում, գոնե մեզ համար: Այդ իմաստով ազատական հայացքն աշխարհին քիչ բանով է տարբերվում «երկրի վրա Աստծո արքայության» պատկերից:

Բայց աշխարհի ներկայիս վիճակը դժվար թե այդպիսի աշխարհայացքային լավատեսության առիթ դառնա, քանզի մենք պարզապես ստիպված ենք ելնել այն բանից, որ մեր աշխարհի, մեր քաղաքակրթության բնական ներդաշնակությունը, եթե անգամ գոյություն չի ունեցել ի սկզբանե, այսօր խաթարված է: Մարդու համար դժվար է խոստովանել, որ ապագան կարող է աղետաբեր լինել, կարող է իմաստազրկել այն ամենը, կամ գրեթե այն ամենը, ինչ մենք հիմա անում ենք:

Սրընթաց օգուտների ու շահերի մասին մեր բոլոր պատկերացումները շուռ տալու ընդունակ համաշխարհային ապոկալիպսիսը այնքան էլ անհնարին կամ նույնիսկ հեռավոր գալիքին վերաբերող բան չէ: Ճիշտ այնպես, ինչպես առօրյա կյանքում մենք նախընտրում ենք չիմաստավորել մեր ամեն մի արարքը՝ քանզի բոլորս էլ մահկանացու ենք, այդպես էլ մարդկությունը ոչ միայն չի մտածում

իր մասին նման չափանիշներով, այլև պարզապես համաձայն չէ հաշվի նստել իր ոչնչացման կամ ինքնաոչնչացման հավանականության հետ:

Ցավոք, արդի աշխարհի տրամաբանությունն այնպիսին է, որ նույնիսկ աշխարհի կործանումից մի քանի րոպե առաջ կամ հենց գլոբալ աղետի պահին միշտ էլ կգտնվի որևէ մեկը, որը լիովին կմարմնավորի արդի հասարակության կենսագործունեության սկզբունքները և կփորձի իրավիճակից «առավելագույն օգուտ» քաղել:

Ընդսմին մենք դժվար թե ակնկալենք, թե նաև ավանդական, պահպանողական աշխարհայացքը, որը հիմնված է զարգացման ինքնասահմանափակման, ավանդույթի հակազդման, «առողջ ազգայնականության», ժողովրդայնության ու կրոնական ինքնագիտակցման գաղափարների վրա, կարող է արդյունավետ լինել գլոբալ խնդիրների լուծման հարցում:

Չէ՞ որ պահպանողական մտածողությանը բնորոշ է հենց համաշխարհայնացման խնդրի ու պահանջմունքների մերժման գաղափարը: Զարգացման այդպիսի մակարդակն անտեսելու փորձ կարող է համարվել «բնահողին» վերադառնալու պահանջը, զարգացումը՝ միայն կամ գերազանցապես նկատի ունենալով լոկալ համայնքների, տեղական կոմունաների, ծայրահեղ դեպքում՝ առանձին պետությունների ու ժողովուրդների գոյատևման տրամաբանությունը:

Մշակույթով միատարր տեղային համայնքների (ինտեգրված ավանդույթի ու ընդհանրականության գաղափարով) հենց այսպիսի «փոքր Պատմությունն» էլ հանդիսանում է պահպանողականների «մեկուսահակության» իդեալը: Այդ իմաստով գլոբալ զարգացման խնդիրն ու դրա լուծումը գործնականում իմաստազրկվում են, քանի որ զարգացումը, հասարակության կյանքը, նրա նպատակները չպետք է պատկերացվեն նման չափանիշներով:

«Կրոնական վերածննդի» և ազգային պետության, որպես «հին կարգ ու կանոնի» հիմնական հաստատության անհրաժեշտության գաղափարը, որ այնքան բնորոշ է պահպանողական

մտածողությանը, գրեթե վտանգավոր է դառնում, երբ խոսքը վերաբերում է արդի աշխարհին:

Պահպանողականները աշխարհը և նրա զարգացումը պատկերացնում են որպես ըստ էության բավական պարզ խնդիր. հարկ է հետևողականորեն պահպանել գոյություն ունեցող, արդեն ստեղծված ու ժամանակի քննությունը բռնած ավանդույթներն ու բարոյականությունը, կամ վատագույն դեպքում անհրաժեշտ է վերադառնալ դրանց:

Բայց զարգացումը սահմանափակելու, վաղնջական բնության կերպարանքով ու նմանությամբ «նոր արխայիկա» ստեղծելու ռոմանտիկ առաջարկությունը նույնպես ուտոպիայի տեսք ունի: Թեկուզև այն պատճառով, որ զարգացման մեջ մարդկության ինքնակամ ինքնասահմանափակումը կպահանջի գիտակցության բոլորովին այլ մակարդակ և ծայրահեղորեն դժվար կլինի վերահսկել այս կամ այն խմբերի գայթակղությանը, որպեսզի հրաժարվեն ինքնասահմանափակումից հանուն մարդկության հանդեպ համաշխարհային իշխանության գերակայության:

Ավանդական բարոյականության ու կրոնի ևս մեկ հիմնական խնդիր է այն, որ անձնական փրկության ու կյանքում բարեգործություն անելու պարտավորվածության գաղափարն այլևս չի հանդիսանա մարդկության գոյատևման առհավատչյա: Միայն ողջ մարդկության, որպես ամբողջականության, ենթադրելի վարքը, որ բխում է գոյատևման ու բարեգործման պահանջմունքներից, կարող է այսօր ապահովել ապագան:

Սակայն հենց այստեղ է թաքնված մեր ժամանակի բանական ու արժեքային գլխավոր խնդիրներից մեկը: Նկատի ունենք այն հակասությունը, որը բնորոշ է մարդուն աշխարհում իր տեղն իմաստավորելիս: Ծայրագույնս դժվար է մարդուց պահանջել, որ նա սեփական գործունեությամբ ու կյանքի չափանիշներով իրատեսորեն ընկալի գլոբալ խնդիրները, որոնք հենց այնպիսի առանձնահատկություններ ունեն, որպիսիք են ժամանակատարածքային մեծ չափարկումների իմաստավորումը, ինչպես նաև առանձին մարդկանց

անձնական կյանքի գնահատման տեսակետից դրանց դրսևորման ձևերի կողմնակիությունը, թաքնվածությունն ու նվաղկոտությունը:

Հենց առօրեականության գաղափարի մեջ ներդրված է որոշակի հակասություն համաշխարհայնացվող աշխարհի պահանջմունքների հանդեպ: Մարդու բնակության ավանդական միջավայրը և կյանքային կամ արմատական շահերը որոշարկող համակարգը, մեծ մասամբ լոկալ բնույթ են կրում, որ առավելագույնս մոտ է առօրյա կեցությանը: Մարդն իր ամենօրյա գործունեության ընթացքում դժվար թե հետաքրքրվի գլոբալ բնույթի հարցադրումներով, իսկ կյանքի ժամանակի զգացողությունը, որպես կանոն, թույլ չի տալիս ընկալել որակապես իրական ու անմիջականորեն յուրաքանչյուրին վերաբերող այն խնդիրները, որոնք ունեն գոնե տասնամյա պատմություն կամ շրջափուլային զարգացման հեռանկար:

Սովորաբար իրականության մարդկային ընկալումը «նվազագույն ծախսեր - առավելագույն օգուտներ» հայեցակարգով է առաջնորդվում և չափարկելի է եթե ոչ ամենօրյա գործադրական վճիռներով, ապա, լավագույն դեպքում, երեսուն-հիսուն տարվա ժամկետով, այսինքն՝ սեփական կյանքի ու երեխաների կյանքի մոտավոր հորիզոնով:

Որպես կանոն սրանից հետևում է, որ մարդու ամենօրյա գործունեության ու էթիկայի մեջ արդիականության խնդիրները ներկայացված են կամ ծայրահեղ կարճառոտ տեսքով, կամ առհասարակ բացակայում են:

Կարելի է իրապես ասել, որ հասարակության և ամեն մի առանձին մարդու համար շատ կայուն է, օրինակ, հստակ պատկերացումը միջուկային պատերազմի ու մարդկության բնաջնջման վերաբերյալ: Տվյալ խնդիրը հստակ է համարվում, քանի որ մաթեմատիկորեն, ինչպես նաև գաղափարապես բոլորին բազմիցս ապացուցվել է, որ մարդկության հրատապ ոչնչացման հնարավորությունը մի քանի ժամվա և անգամ մի քանի րոպեի ընթացքում գոյություն ունի և միանգամայն հավանական է:

Բայց որպեսզի այդ գիտելիքը վերածվեր հասարակական

կարծիքի դրույթի, իսկ այնուհետև դառնար օրընթաց մշակույթի ու էթիկայի բաղադրամաս, տարբեր պետությունների դաժան հակադրությունների, նրանց մշակութային ու գաղափարախոսական համառ ու լարված աշխատանքի, - պայքարի մի քանի տասնամյակ անցավ:

Արժե հաշվի առնել և այն, որ այդ դիմակայության թուլացմանը և «սառը պատերազմի» ավարտին զուգընթաց, ժամանակակից հասարակություններում բավական էթիկական դրույթներ ու գիտելիքներ չեն փոխանցվում սերնդից սերունդ և այսօր նրանց կայունությունն ու հրատապությունը հասարակության մեծ մասի համար ավելի քան կասկածելի են:

Բայց մարդկության առջև ծառացած են և այլ, ոչ պակաս սուր խնդիրներ և սպառնալիքներ: Դրանք այնքան էլ բացահայտ չեն, այնքան էլ «պայթուցիկ» չեն և դրանց իրագործման հաջորդականությունը ձգված է ժամանակի մեջ: Դրանց բուն բովանդակությունը հաճախ հասու չէ հասարակության լայն զանգվածների գիտակցությանը: Դրանք ընդգրկված չեն թեկուզ մշակութային ծածկագրերի համակարգի շրջագծում, բարոյական ու վարքային առօրյա կարծրատիպերում: Դրանց շարքում բավական է նշել բնապահպանական աղեղներն ու ժողովրդագրական խնդիրները: Միայն այն ժամանակ, երբ այդ խնդիրներն ինքնաբերաբար հայտնվում են ժամանակակից հասարակության առօրյայի մեջ, ինչպես, օրինակ, վերջերս Եվրոպայում և Ռուսաստանի հարավում տեղի ունեցած հեղեղումները, միայն այդ իրավիճակներում գլոբալ խնդիրները զանգվածային գիտակցության կողմից ընկալվում են որպես արդիական ու իրական: Բայց այդ ամենը տեղի է ունենում ենթագիտակցորեն և այնքան ժամանակ, մինչև գետերն ու կյանքը վերադառնում են իրենց նախկին հունին:

Բացի այդ, մարդկության ոչ մի գլոբալ խնդիր, այսօր չունի այնպիսի, թույլ տվեք ասել, տեղեկատվական, մտավոր և քարոզչական աջակցություն, որն ուներ միջուկային պատերազմի և

մարդկության ոչնչացման խնդիրը «սառը պատերազմի» դարաշրջանում:

Ավելի վատ են գործերն այն ժամանակ, երբ այս կամ այն գլոբալ խնդիրները սկզբունքորեն հեռու են այս կամ այն հասարակական խմբերից և նրանց կողմից ընկալվում են ավելի շատ որպես աշխարհի «էկզոտիկա», ինչպես նաև ինչ-որ վերացական հիմք «նրանց համեմատ մենք ինչ լավ վիճակում ենք» բնույթի մտահանգման համար:

Այսպիսին են, օրինակ, աշխարհի երկրների մեծ մասի աղքատության, հիվանդություններից մի շարք երկրների ու մոլորակների բնակչության մահացության, կյանքի և մահվան սահմանագծին հայտնված ամբողջական պետությունների և ժողովուրդների խնդիրները:

Քաղաքակիրթ մարդկության համար այսպիսի խնդիրների գոյությունը գիտակցվում է թռուցիկորեն և լավագույն դեպքում հերթական առիթն է թեստավորելու սեփական բարոյականությունը, գթասրտության զգացումը՝ օգնության տարբեր բարեգործական հիմնադրամների և միջազգային կազմակերպությունների միջոցով : Նման համակարգը հնարավորություն է ընձեռում մարդկանց չխորանալ խնդրի էության մեջ: Բավական է բարեգործական հիմնադրամին մուծում անել կամ հերթական համաճարակի կամ աֆրիկյան ազգամիջյան հակամարտությունների զոհերին հին հագուստներ տրամադրել, որպեսզի խաղաղեցնես ավանդապաշտ բարոյականությանը, մտածես, որ արել ես կարելին և հաջողությամբ մոռացության տաս խնդրի գոյությունը, իսկ գլխավորը՝ այն ծնող պատճառները:

Ասվածը թույլ է տալիս հաստատելու, որ զարգացման գաղափարը արդի աշխարհում կարող է պահպանվել և հիմնավորված լինել սոսկ այն դեպքում, եթե այդ հասկացության մեջ ներառվի մարդկության ինքնապահպանման նոր, ըստ էության, բարոյական հրամայականը և յուրաքանչյուր մարդու կողմից այդ հրամայականի սկզբունքորեն նոր մակարդակի որոնումը առօրյա կյանքում:

Նոր պայմաններում մարդու ինքնապահպանման, գոյատևման և զարգացման գաղափարը կարող է լինել առաջադիմության միակ գրավականը, որը պետք է դիտել ոչ թե որպես աճի, այլ որպես հարմարվողականության պահանջ, ոչ թե որպես քանակական կուտակման, այլ որպես նոր որակի սոցիալական և քաղաքական միջավայրի ստեղծման պահանջ: Եթե ինքնապահպանման և գոյատևման գաղափարը ժամանակակից գիտության կողմից ընդունված է որպես ամեն արարածի, այդ թվում՝ նաև մարդու գործունեության հիմնական շարժառիթը, ապա նույնքան կարևոր է արձանագրել և գտնել այդ «բնազդը» որպես մարդկության գոյատևման մեխանիզմ:

Գիտատեխնիկական, «պոզիտիվիստական» առաջադիմությանը պետք է հաջորդի բարոյաէթիկական, սոցիալական առաջադիմությունը, որի հիմնական իմաստը և բովանդակությունը պետք է լինեն աշխարհի սոցիալական ու քաղաքական անհրաժեշտ կազմակերպման «պրկումը», նրա որակի համապատասխանությունը այն սահմանների մակարդակին, որոնք առ այսօր ձեռք է բերել մարդկությունը գիտատեխնիկական ոլորտում: Դա է «հետապնդող զարգացման» միակ ձևը, որը ոչ միայն արդարացված է, այլև բացարձակապես անհրաժեշտ:

«Աշխարհի մշակույթ» բառակապակցությունն ավելի ու ավելի հաճախ է հանդիպում և՛ գիտական, և՛ հրապարակախոսական աշխատանքներում, և՛ մամուլում, և՛ բացիկների վրա, և նույնիսկ փողոցային պլակատներին: Ռուսաց լեզվի առանձնահատկություններից ելնելով, առաջին անգամ հանդիպած այս բառակապակցությունն ընկալվում է որպես «համաշխարհային մշակույթ»: Սա ճիշտ չէ: Սխալը ծնվում է այն բանից, որ ռուսերենում «աշխարհ» (мир) բառն ունի երեք իմաստ, այն է՝ խաղաղություն, նաև՝ ամենայն բան, որը գտնվում է մարդուց դուրս, վերջապես՝ գյուղական (տարածքային) համայնք, որն ունի վճիռներ կայացնելու իրավունք, որոնք պարտադիր են իր բոլոր անդամների համար: Այլ լեզուներում այս երեք հասկացությունները բնորոշվում են առանձին բառերով:

Ըստ էության, խոսքն այն մասին է, որ վերջապես գործի դրվեն բարեկեցության՝ մարդուն մատչելի ամենահզոր ռեսուրսները: Այդպիսի ռեսուրս է հանդիսանում Երկրի բոլոր մարդկանց, բոլոր կազմակերպությունների և միությունների (այդ թվում՝ նաև պետական), միջև հարաբերությունների կազմակերպումը, Երկրի բոլոր մարդկանց փոխադարձ հարգանքի, փոխադարձ օգտակարության, տևական շահերի ընդհանրության սկզբունքով:

III

ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ՈՒՂԻ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ ՓՈՓՈԽՎՈՂ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ

«Ռուսաստանյան ուղի»: Հավանաբար սա երկրի ողջ պատմության, մեր հասարակական-քաղաքական մտքի պատմության մեջ ամենահին ու ամենասուր թեմաներից է: Վերջին երկու դարերի ողջ ռուսական փիլիսոփայությունը, պատմագիտությունը, ռուսական քաղաքագիտությունն ու սոցիոլոգիան ըստ էության միևնույն հարցի պատասխանի որոնումն է, այն է՝ ով ենք մենք, որտեղից և ինչու ենք գալիս:

Հազիվ թե մի այլ ժողովրդի և պետության պատմության մեջ զարգացման գաղափարի, սեփական երկրի ապագայի հիմնահարցն այսպիսի նշանակալի և բախտորոշ հնչեղություն է ունեցել:

Ժամանակին ռուս հոգու և ռուսական բանականության այդ տառապագին որոնում-փնտրտուքը առաջին անգամ այնքան ցայտուն և հանդուգն արտահայտել է Պ. Յու. Չաադաևը, կանխագուշակելով, որ «...մենք կոչված ենք լուծելու սոցիալական բնույթի հիմնահարցերի մեծ մասը, ավարտին հասցնելու հին հասարակություններում ծագած գաղափարները, պատասխան տալու այն կարևորագույն հարցերին, որոնք զբաղեցնում են մարդկությանը»: Ռուսական գաղափարի «փիլիսոփայական քարի» որոնումը երբեմն դառնում էր ոչ միայն մտավորականության, այլև բուն պետական քաղաքականության գրեթե միակ իմաստը, ավելի ու ավելի քիչ տեղ թողնելով պարզապես կյանքի և պարզապես աշխատանքի համար:

Որոշ պատճառականություն կա այն իրողության մեջ, որ ճակատագրի կամոք Ռուսաստանն այսօր, Նոր աշխարհի շեմին պետք է վերստին որոնի իրեն ու կառուցի իր պետականությունը: Մենք այդ Նոր աշխարհ մուտք ենք գործում միաժամանակ անցյալի բեռով և առանց բեռի, ամեն ինչ ջարդելով, տրորելով, բաշխելով: Վերջին հարյուրամյակում Ռուսաստանը երկու անգամ բեկում ապրեց, որոնք համակեցին ամենախոր սոցիալական շերտերին: Ամբողջական խավերի կենսաձևը, ժողովրդական հմտություններն ու ավանդույթները՝ այս ամենը անողոք կերպով արմատախիլ արվեց, ջարդուփշուր եղավ, ջախջախվեց:

Այսօր Ռուսաստանը փնտրում է պետական այնպիսի կառուցվածք, որը կհամապատասխաներ նոր գլոբալ միտումներին, կողմնորոշված կլիներ դեպի հեռանկարը և ոչ թե դեպի անցյալի նմուշները: Այդ փնտրտուքը ծավալվում է անհավանական ինտենսիվությամբ և կապ չունի տխրահռչակ «երրորդ ուղու» քարոզի կամ Ռուսաստանի ինչ-որ հատուկ կարգավիճակի հետ: Այն իրագործվում է նոր համակարգի տրամաբանությամբ, որը չի կաշկանդվում հնացած մեթոդներով:

Համաշխարհայնացման ենթատեքստը տառացիորեն ազդում է ամեն ինչի վրա, նրանից պարզապես անհնար է շեղվել: Ինչին էլ ձեռք պարզես՝ էկոլոգիա, ժողովրդագրություն, աշխարհաքաղաքականություն, այսօր չեն լուծվում ենթատեքստից դուրս: Մեր նպատակը չէ սառեցնել կամ ետ շրջել համաշխարհայնացման գործընթացները: Դրանք կարելի է և անհրաժեշտ է դարձնել ավելի արդարացի, ավելի ողջամիտ, եթե կուզեք, ավելի կարգավորվող:

Այսօր մեզ համար կարևոր է ոչ միայն փոխվել, այլև իմանալ՝ ինչ և ինչպես փոխել: Հենց այստեղ է բուն խնդիրը:

Չէ՞ որ այսօր ամենագլխավոր, եթե ոչ ամենասկզբունքային խնդիրն այն է, որ մենք, այլ հարցերին զուգընթաց, գործ ունենք նաև համաշխարհային առաջնայնության ճգնաժամի հետ:

Եվ ոչ միայն մենք, համայն աշխարհն է անպատրաստ դրան: Նա արդեն ապրում է, այսպես ասած, ապագայի մեջ, իսկ համաշխարհայնացմանը համազոր հասարակական կարգի նմուշ դեռևս չկա: Բոլոր հասարակական հաստատությունները, քաղաքականությունը, գաղափարախոսությունը, բարոյաէթիկական նորմերը սերում են անցյալից:

Աշխարհը կարիք ունի նոր առաջնայնության, գլոբալ քաղաքական

նախաձեռնության: Այսօր նոր համաշխարհային առաջնորդի դերը, վերջին հաշվով, ուժային կամ տեխնոլոգիական առաջնորդություն չէ, թեև մարտավարության առումով կարող է լինել և այդպիսին: Բայց ռազմավարական տեսանկյունից այդ առաջնորդությունը ինտելեկտուալ է և կամային: Դա ունակությունն է ձևակերպել՝ ուր և հանուն ինչի մենք պետք է ուղղորդենք մեր ուժերը, օգտագործենք մեր գիտելիքներն ու հմտությունները: Դա անհրաժեշտությունն է գտնել այն սոցիալական տեխնոլոգիան, որը հնարավորություն կընձեռի պատասխանելու համաշխարհային քաղաքակրթության մարտահրավերներին: Եվ այդ պատասխանը պետք է կրի համապարփակ բնույթ, հասկանալի և ընդունելի լինի բոլորի համար, համայն մարդկության համար: Միայն այդ դեպքում կարող ենք ասել, որ հնարավոր է աշխարհը փրկել:

Հենց այստեղ էլ հարկ է փնտրել Ռուսաստանի նոր տեղը գլոբալ պատմական հորձանուտում, ուժերի անորոշության, գաղափարախոսության վերածննդի, պատմության մեջ զանգվածների ներխուժման և զարգացման նոր սուբյեկտների հզորացման համաշխարհային նոր համակարգում: Մենք չափազանց հաճախ և չափազանց շատ ենք խոսել Ռուսաստանի առանձնահատուկ ուղու և առանձնահատուկ առաքելության մասին: Հնարավոր է, որ այսօր եկել է պահը, երբ ռուսական հասարակությունը պետք է միավորվի և աշխարհին միտք և հույս հաղորդի ապագայի վերաբերյալ: «Ազգային» առանձնահատուկ գաղափարների, նպատակների և այլնի հորինվածքի ցանկացած հավակնությունները, ըստ էության, ուղղակիորեն կամ անուղղակի կողմնորոշված են դեպի դիմակայություն: Այսօր գլոբալ ենթատեքստով դրանք ժամանակավրեպ են և ավելի վտանգավոր, երբ խոսքը վերաբերում է այնպիսի երկրի, ինչպիսին Ռուսաստանն է: Այսօր հավանաբար ինտելեկտուալ և քաղաքական վերնախավի գլխավոր խնդիրն է, որպեսզի կարողա-

նա մեր մշակույթը դարմանել անլիարժեքության արմատացած ախտանիշից, ինչը դրսևորվում է թե իբրև ինքնաոչնչացման պատրաստակամություն, թե իբրև փրկչություն: Եվ ելնելով դարաշրջանի իրողություններից, սթափորեն գնահատել, թե որ դերերն ու որ հավակնություններն են համադրելի: Ռուսաստանի հիմնախնդիրն այն է, որ այսօր նա ոչ միայն չի տիրում գաղափարական և գաղափարաբանական առաջատար դերին, այլև հրաժարվում է հավակնել դրան: Մենք այսօր բացարձակ հետադիմական հասարակություն ենք, որը սոսկ արձագանքում է արտաքին դրդիչներին:

Մեր հասարակության և քաղաքական վերնախավի առջև ծառացած է նոր խնդիր՝ պատասխանել ազգային և գլոբալ մարտահրավերներին: Միայն այսպես կհաստատենք համաշխարհային տերության մեր կարգավիճակը, որի մասին չափազանց շատ է խոսվում: Միայն այսպես հնարավորություն կունենանք կերտելու մեր ապագան:

Ռուսաստանը եւ հետարդիականությունը. կրկին արդիականացման խնդրի մասին 6

«Ի՞նչ է Ռուսաստանը»՝ գլխավոր հարցը մեր ապագային 6.1

Ի՛նչ է իրենից ներկայացնում Ռուսաստանը փոփոխված աշխարհում, փոփոխվող աշխարհում և ինչի՛ կարող է հավակնել. չէ՞ որ մեր հավակնությունները չափից դուրս շատ են, իսկ հնարավորությունները ավելի ու ավելի են փոքրանում:

Ո՛րն է մեր ընտրությունը՝ համալրել ԱՄՆ-ի և անդրազգային կորպորացիաների հաստատած համաշխարհային գլոբալ աշխարհակա՞րգը, թե՞ պայքարել համաշխարհայնացման դեմ:

Ներկայումս ինչպիսի՞ տեղ է գրավում Ռուսաստանը և ինչպիսի՞ տեղ է գրավելու առաջիկա տասնամյակներում համաշխարհային տնտեսության մեջ: Կդառնա՞նք, արդյոք, հետարդյունաբերական աշխարհի կցորդ, թե՞ կհավակնենք մեր տեղին նրանում, կամ էլ առաջավոր արդյունաբերական երկրների խմբում, որոնք ձևավորում են հետարդյունաբերական աշխարհի բազան: Ժամանակն ու ապագան ինչպիսի՞ պահանջներ են առաջադրում մեզ, մեր պետության զարգացմանն ու հասարակության կազմավորմանը: Այս և համանման հարցերի շրջանակը, որ այսօր լայնորեն քննարկվում է, չափազանց մեծ է, և խոշոր հաշվով դրանցից ոչ մեկի պատասխանը չունենք:

Հարցը նույնիսկ այն չէ, որ անկարող ենք կանխատեսել և գնահատել գլոբալ գործընթացների զարգացման հեռանկարները: Նոր աշխարհում գլխավոր խնդիրը և գլխավոր մարտահրավերը դառնում է այն, որ մենք չգիտենք «Ի՞նչ է Ռուսաստանը» հարցի պատասխանը: Հարցը սոսկ այն չէ, որ մեկ առ մեկ հաշվենք, թե ինչ ունենք և թե ինչ ռեսուրսներ ու հնարավորություններ են մեզ մնացել «խռովահույզ ժամանակի» տասնամյակից հետո: Հարցը շատ

ավելի բարդ է: Հարկ է ըմբռնել, թե ընդհանրապես ինչ ենք հասկանում Ռուսաստան ասելով. արդյո՞ք այն մեզ պատկերանում է ինչոր, թեկուզ լայնարձակ ու հարուստ, բայց և ընդամենը տարածք, թե՞ այդ հասկացության մեջ ներդնում ենք այլ, ավելի խոր իմաստ: Մինչ այժմ մենք չենք կարող պատասխանել այն հարցին, թե ի՞նչ է իրենից ներկայացնում ռուս կամ ռուսաստանյան ժողովուրդը: Արդյո՞ք, ունենք թեկուզ ռուս ազգի կերպարը, էլ չասած՝ կարո՞ղ ենք, արդյոք, գտնել ռուսական հասարակության իրական հիմքը: «Մենք ապրում ենք՝ ոտքի տակ չզգալով երկիրը», – սա մեր՝ ժամանակակիցներիս մասին է:

Կարելի է համաձայնել նրանց հետ, ովքեր աշխարհում մեր երկրի տեղին, ներքին և արտաքին քաղաքականության նպատակներին ու բովանդակությանը, ռուսաստանցիների ազգային և պետական նույնականացման եղանակներին և, ի վերջո, «ռուսական գաղափարին» նվիրված՝ 1990-ական թվականների հայրենական բանավեճերը համարում են բացարձակ սակավարդյունք: Ըստ էության դրանք հիմնականում հանգում էին Ֆ. Ի. Տյուտչևի հանրահայտ և ճիշտն ասած՝ արդեն ձանձրույթ պատճառող տողին. «Ռուսաստանը խելքով չես ըմբռնի...»: Այս արտահայտության մեկնաբանման ընդգրկումը չափազանց լայն է՝ ազգային եսակենտրոնությունից մինչև ազգային սադոմազոխիզմ, «համաշխարհային ոգեղենության գանձարանից» մինչև «տխմարների երկիր»:

Այսօր բոլորը խոսում են «պետական դիրքորոշման» և ազգային շահերի մասին: Ի՞նչ է դա նշանակում: Այսօր հաճախ են ազդարարում Ռուսաստանի ծաղկման դարաշրջանի սկիզբը: Իրականում ի՞նչ է թաքցնում քաղաքական այս արտահայտությունը: Այսօր շատերը կրկին հակված են երկրի համար դուրս գրել պարզ ու համադարման դեղատոմսեր, որոնց օգնությամբ կարելի է կտրուկ ու վճռականորեն լուծել բոլոր խնդիրները: Բայց հնարավո՞ր է, արդյոք, որ Ռուսաստանի բազմամյա և նույնիսկ դարավոր հիմնահարցերը լուծվեն «գրոհի և փոթորկի» եղանակով:

Հասկանու՞մ ենք, արդյոք, մեր զարգացման նպատակը, և, արդյո՞ք, համապատասխանում են նրան բոլոր այն բարձրագոչ

կարգախոսները, որ լսում ենք մերթ ընտրությունների ժամանակ, մերթ տնտեսական ճգնաժամի ընթացքում: Այսօր երկրի զարգացման «մարտահրավերների» մասին խոսակցություններն այնքան հանրամատչելի են, որ կորսվում է բուն այդ հասկացության իմաստը:

Իհարկե, այն խնդիրները, որոնց մենք բախվում ենք և որոնք անհրաժեշտ է լուծել, չափից դուրս շատ են: Բայց եթե փորձենք իրավիճակը գնահատել ազնվորեն ու բացահայտ, ապա Ռուսաստանի առջև այսօր ծառացած է մեկ, բայց ամենադաժան մարտահրավերը՝ երկրի վատթարացումը և ինքնաոչնչացումը: Այսօր Ռուսաստանի համար ամենամեծ սպառնալիքը դուրս մղվելն է ապագայից, զարգացման գործընթացից:

Մենք իսկապես և միանգամայն իրական կարող ենք վերջակետ դնել մեր գոյությանը այն վիճակում, այն սահմաններում և ձևերում, ինչպիսիք եղել են վերջին դարերի ընթացքում և որպիսին հարգում ու համարում ենք մեր Հայրենիքը: Այսօր գլխավոր մարտահրավերը այն պատմական ու մշակութային ժառանգության կորստի իրական հնարավորությունն է, որը հանդիսանում է պետականության և ռուս հանրության շենքի ցեմենտը:

Մենք պետք է ինքներս պատասխանենք մի հարցի. արդյո՞ք, բոլորս ունենք ընդհանուր ճակատագիր և ընդհանուր ապագա, թե՞ մի քանի տասնամյակների ընթացքում, պատմության չափանիշներով՝ մի ակնթարթում, կորցնում ենք միմյանց՝ այս ու այն կողմ ցրիվ գալով, կորցնում ենք մեր երկիրը, մեր տունը, լավագույն դեպքում դառնում ենք անձև ու վերացական «ռուսական աշխարհ»՝ սփռվելով մոլորակով մեկ, իբրև հավերժական տարագիրներ, ինչն այսօր շատերի համար լուսավոր ապագայի երազանք է:

Ռուսաստանի ապագայի հարցը ամենից առաջ նպատակների և արժեքների գիտակցման հարցն է: Մեզ հարկավոր են պետական շինարարության նոր մոտեցումներ, սոցիալական և քաղաքական նոր տեխնոլոգիաներ, որոնք հնարավորություն կընձեռեն պատասխանելու համաշխարհային քաղաքակրթության մարտահրավերներին և մեր գոյատևման մարտահրավերներին: Զարգացման ազգա-

յին գաղափարի և ապագայում մեր տեղի ըմբռնման հարցը, որը վերջին տասնամյակի ընթացքում վեր է ածվել ամենածեծված կարգախոսի ու քաղաքական անեկդոտի, այսօր առավել քան լուրջ է: Ինքնապահպանման, Ռուսաստանը պահպանելու համար անհրաժեշտ է կատարել սկզբունքային ընտրություն: Այսօր միակ ազգային գաղափարը, ըստ էության, Ռուսաստանը պահպանելու կոչն է:

Երկրին վերադարձնել հավատն իր ուժերի նկատմամբ՝ ահա ներկայիս գլխավոր խնդիրը: Եթե ռուսական ընտրությունը մարդկանց հավատ չներշնչի իրենց երեխաների ապագայի հանդեպ, ուրեմն՝ մեր ընտրությունը կդառնա երկրի խորացող հետամնացությունը և վատթարացումը: Ռուսաստանի ինքնահաստատման առաջին և ամենակարևոր աստիճանը սեփական քաղաքացիների մեջ իրենց երեխաների վաղվա օրվա հանդեպ հավատի արթնացումն է և, հարդյունս, ոչ թե գոյատևման հիմնավորումը, այլ հանուն այդ ապագայի ակտիվ աշխատանքը, անձնական ու հասարակական նախաձեռնությունը:

Զարգացումը հնարավոր է միայն ռուսաստանցիների բացարձակ մեծամասնության ուժերի և ձգտումների համախմբմամբ, նպատակների համատեղմամբ: Բայց այժմ ակնբախ է խզումը ոչ միայն իշխանության և ժողովրդի, այլ նաև բնակչության խավերի ու խմբերի միջև: Տարբեր է ոչ միայն նրանց կենսամակարդակը, այլև նպատակներն ու ձգտումները:

Կարծում եմ, դրա գլխավոր պատճառը ծաղկուն և բարեկեցիկ Ռուսաստանի կառուցման խնդրի կեղծ ըմբռնումն է, ազգային այդ կարգախոսի խաբեականությունը: Այդ խնդիրը կարող է լինել հրատապ և ձևավորել միայն որոշակի սոցիալական խմբերի ու խավերի կենսական ռազմավարությունը: Իսկ ազգային խնդիրը հանուն այդ նպատակի ինքնապահպանման, համախմբման, ճեղքման, ինքնասահմանափակման և աշխատանքային ասկետիզմի խնդիրն է:

Մեր պատմության մեջ շատ հաճախ ենք ցանկացել ունենալ ամեն ինչ և միանգամից, բայց արդյունքում շատ բանի չենք հասել, ռեսուրսները մսխել ենք ապարդյուն: Մեզ ոչ թե նոր հեղափոխու-

թյուններ են հարկավոր, այլ հնարավորինս գերլարված, բացառիկ, քրտնաջան և ամենօրյա աշխատանք՝ միտված ապագային:

Եվ այստեղ չեն օգնի վերացական ծրագրերն ու կարգախոսները: Հասարակության «տարանջատվածությունը» հաղթահարելու համար սոսկ քաղաքական կամքն ու բարի ցանկությունները բավական չեն: Մենք պետք է եզրահանգենք, թե որն է մեր ընդհանուր գործը և մեր ընդհանուր ձգտումը: Որտեղ է համախմբման այն հիմքը, որը մեր սրտերը կմղի համահունչ բաբախելու: Եվ մեզ չի օգնի ոչ մի «սոցիալական պայմանագիր», եթե նրա հիմքում ընկած չլինի արժեքային ընտրությունը և իշխանության բարոյական մաքրագործումը: Նման պայմանագիրն առանց դրա ի սկզբանե դատապարտված է: Այսօր մեզ հարկավոր է «ընդհանուր գործի փիլիսոփայություն» երկրի բոլոր քաղաքացիների համար: Միայն այդպիսի հիմքի վրա է հնարավոր ճեղքման ծրագրի հաջողությունը:

Հետապնդող զարգացման փակուղին եւ զարգացման կախվածության խնդիրը 6.2

Անցած տասնամյակների ընթացքում աշխարհում Ռուսաստանի տեղի մասին բանավեճերում դրսևորվեցին մի քանի առանցքային մոտեցումներ:

Գլխավոր մոտեցման ելակետը թերևս հենց այն է, որ Ռուսաստանը տեսանելի ապագայում պետք է հավասարի իրավունքով մուտք գործի առավել զարգացած «քաղաքակիրթ» պետությունների միության մեջ: Անկասկած, բարի և բաղձալի նպատակ է: Սակայն ի՞նչ է նշանակում՝ «ձեռք բերել հավասարի իրավունք»: Ընդունվել այդ պետությունների կողմի՞ց: Սակայն Ռուսաստանը վաղուց արդեն նրանց հետ հաստատել է նվազագույն գործընկերական հարաբերություններ, մասնակցում է «մեծ ութնյակին», երկխոսություն է վարում Եվրոմիության և ՆԱՏՕ-ի հետ, բանակցում է՝ անդամագրվելու Առևտրի համաշխարհային կազմակերպությանը,

որպեսզի հասնի սոցիալ-տնտեսական զարգացման նույնպիսի մակարդակի՞: Բայց հարցն էլ հենց այդ է՝ ինչպե՞ս:

Ի՞նչ տեղ ու դեր է վերապահված Ռուսաստանին արդի աշխարհում: Մենք պետք է ընդունենք զարգացման հետարդյունաբերական ռազմավարությու՞նը, թե՞ պետք է լինենք արդյունաբերական երկիր, որն ընդունել է հետարդյունաբերական աշխարհի հետ համագործակցության ռազմավարությունը, դարձել նրա արտադրամասը և ռեսուրսային բազան: Թե՞ մենք պետք է որդեգրենք այլ սխեմաներ, ընդհանրապես մեր զարգացման առաջին պլան մղելով ոչ թե տնտեսությունը, ոչ թե արդյունաբերական տեխնոլոգիաները, այլ մրցակցային առավելություններ, որոնք հնարավոր է, ապագայում կխթանեն զարգացումը և մեզ համար կապահովեն առավել արդյունավետ գործունեություն: Սակայն ի՞նչ տեխնոլոգիաների մասին է խոսքը:

Բոլոր այս հարցերին վաղ թե ուշ ստիպված ենք պատասխան տալ: Խնդիրը սոսկ այն է, որ դեռևս չենք անդրադառնում այս հարցերին: Մենք ավելի հաճախ սևեռվում ենք արևմտյան տնտեսության, քաղաքական կազմակերպման, կերպարի և կենսամակարդակի արտաքին նշանների ու դրսևորումների զուտ մեքենայական ընկալման վրա:

Բայց այդ դեպքում մենք պետք է պատասխանենք մի շատ կարևոր հարցի: Ցանկանու՞մ ենք, արդյոք, ապրել այնպես, ինչպես Արևմուտքը, այսինքն՝ բարեկեցիկ, լավ, ապահով և մաքրակենցաղ, կամ լինել այնպիսին, ինչպիսին նրանք են՝ այդպես կամ մոտավորապես այդպես մտածել, կիսել ընդհանուր արժեքները և իդեալները, ձգտել նույն նպատակներին:

Տարբերությունը սկզբունքային է: Լավ, ասել է թե՝ «հարուստ» ապրել կարելի է տարբեր աղբյուրների հաշվին: Հարստությունը կարելի է կուտակել աշխատանքով, նաև՝ հանցագործ ճանապարհով: Մյուս կողմից՝ ընդհանուր արժեքները և իդեալները սկզբունքորեն կարելի է կիսել նույնիսկ ապրելով էապես տարբեր պայմաններում:

Արևմուտքը դարձել է այն, ինչպիսին որ է արդի աշխարհում,

ոչ միայն պատմական որոշ հանգամանքների բերումով, այլև իր մտածելակերպի առանձնահատկությունների ազդեցությամբ: Պատճառահետևանքային կապերի բազմազանությունը կուտակվել է դարերով, ավելի ու ավելի «վերաճելով» ինքնատիպության: Երբ մենք պահանջում ենք Արևմուտքի երկրներին համարժեք կենսամակարդակ, անտեսում ենք այն փաստը, որ այդ մակարդակը ձեռք է բերվել ժամանակի տքնությամբ, զարգացման որոշակի մշակույթով և գաղափարախոսությամբ, ինչպես նաև մեծապես հիմնված է մնացած աշխարհի շահագործման վրա:

Թերևս ժամանակակից Ռուսաստանի բազմաթիվ դժվարությունների ամենախոր աղբյուրը թաքնված է Արևմտյան Եվրոպայի նկատմամբ այն հարմարվողական (և մշտապես նրան ուղեկցող ոչ հարմարվողական) կողմնորոշման մեջ, որը ձևավորվել է մեր մշակույթում վերջին հարյուրամյակի ընթացքում: Մշտապես հայացքը «Եվրոպային» հառելը, ձգտումը կամ նմանակել ինչ-որ մեկին, կամ «հասնել և անցնել», առաջացնում է անլիարժեքության, ինքնանվաստացման, սեփական եզակի կենցաղի երկրորդայնության, մշտական անլիարժեքության բարդույթ:

Սակայն այստեղ մեծ է մեզանում այնքան տարածված մյուս ծայրահեղության մեջ ընկնելու գայթակղությունը՝ և հերթական անգամ հռչակելու Ռուսաստանի զարգացման առանձնահատուկ ուղու մասին դրույթը: Ինչ-որ իմաստով մենք այսօր հայտնվել ենք նույն՝ ծայրահեղ ինտելեկտուալ իրավիճակում, որը բնորոշ էր XIX դարի երկրորդ կեսի ռուս հասարակական-քաղաքական մտքին: Այդ ժամանակ էլ Ռուսաստանի անցումը զարգացման առաջավոր սահմանագծին՝ սոցիալիզմին, շրջանցելով կապիտալիզմի զարգացած փուլերը, հիմնվելով ռուսական հասարակության կառույցների և արժեքների վրա, նույնպես ընկալվում էր (առնվազն սոցիալիստական կողմնորոշման մտածողների կողմից) իբրև հետապնդող առաջընթացի առավել գրավիչ և հրաշագործ միջոց:

Այսօր նույնքան մեծ է գայթակղությունը այդպիսի տրամաբանությամբ խոսել Ռուսաստանի մասին, որն ունակ է շրջանցել առաջընթացի այս կամ այն փուլը և գտնել դեպի ապագան տանող

առանձնահատուկ ճանապարհ: Գաղափարը կասկածելի է, բայց ամեն դեպքում պետք է խորհրդածենք այն հետապնդող փակուղու կործանարարության մասին, որն այսօր մեր առջև ավելի ու ավելի ցայտուն է գծագրվում: Այստեղ, ճիշտ է, չի կարելի չասել և հույժ սահմանային, բայց համենայնդեպս առկա մի այլ երևույթի մասին՝ տարածված հակագլոբալիստների շրջանում, որոնք հատուկ մտածողություն ունեն. Ռուսաստանի առանձնահատուկ ուղին նրանք տեսնում են, իբրև կամուրջ «Հարավի» և Եվրոպայի միջև: Ռուսական զարգացման քաղաքական դրույթը սահմանվում է «Հարավի արժեքների փոխանցում Արևմուտքին»: «Նոր եվրասիացիները» կոչ են անում Ռուսաստանին՝ բացվել իսլամական «Հարավի» առջև, ստեղծել ինչ-որ եվրաիսլամական քաղաքակրթական սինթեզ, միայն թե քաղաքակրթական կախվածության մեջ չընկնել Արևմուտքից: Եթե սա ուժի իսլամական կենտրոնների (Իրան, Սաուդյան Արաբիա) ուղղակի քարոզչություն չէ, ուրեմն խոսքը արկը ոտքին կապված հետապնդող զարգացման ծրագրի մասին է*:

---

* «Իսլամական աշխարհը» բացահայտորեն հետ է մնացել քաղաքակրթվածության մակարդակից: Կրթության, գիտության և մշակույթի հարցերով իսլամական կազմակերպության ղեկավար Աբդել Ազիզ աթ-Թուեյջերիի տվյալներով, բոլոր իսլամական երկրները միասին ժամանակակից գիտություն են մուծել ավելի պակաս ներդրում, քան այնպիսի համեմատաբար փոքր եվրոպական երկիր, ինչպիսին Բելգիան է: Աթ-Թուեյջերի կարծիքով, վերջին տասնամյակներում իսլամական 55 երկրները, որոնց հսկայական տարածքներում՝ Ինդոնեզիայից մինչև Մարոկկո, բնակվում է շուրջ մեկ միլիոն մարդ, «չեն հասել որևէ զգալի առաջադիմության» զարգացման կարիքներին և շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված հետազոտություններում, ինչպես նաև գիտական կադրերի պատրաստման բնագավառում: Նրա վկայակոչած տվյալներում մահմեդական պետությունների գիտնականները կազմում են գիտաշխատողների համաշխարհային համայնքի չորս տոկոսից պակաս և մեկ տոկոսից փոքր-ինչ ավելի են այն մասնագետների թվում, ովքեր իրենց կյանքն ամբողջովին նվիրել են հետազոտական գործունեությանը: Նա հաստատել է, որ «իսլամական աշխարհի» բոլոր պետությունները միասին վերցրած, մեկ միլիոն շնչի հաշվով տարեկան երեք հազար անգամ պակաս են գիտական աստիճան ունեցող գիտնականներ, քան զարգացած արդյունաբերական երկրները: «Իսլամական աշխարհի» բնակչության 60-70 տոկոսը բացարձակ անգրագետ է:

Մեզ համար առանցքային հարցը սեփական կյանքի կարգավորումն է: Ահա ինչու այլ են այն չափանիշները, թե ինչ պետք է վերցնենք Արևմուտքից: Քաղաքական ժողովրդավարության, շուկայի և մեքենայի, հեռուստացույցի կամ հրթիռի արտադրության հիմքում ընկած է այն ընդհանրականը, ինչը որ տեխնոլոգիայի էությունն է: Միայն թե մեքենայի կամ սառնարանի դեպքում նկատի է առնվում արտադրական բնույթը, իսկ քաղաքական կառույցների, հասարակական կյանքի և տնտեսության կազմակերպությունների դեպքում՝ սոցիալականը:

Եթե մենք ուզում ենք միջավայրը փոխել այն ուղղությամբ, որ մեր քաղաքացին իր տանը կամենա և կարողանա իր հարաբերությունները հաստատել հասարակության, տնտեսության, պետության հետ այնպես, ինչպես անում է՝ հայտնվելով Արևմուտքում, ապա հարկ է նույն կերպ վարվել և մեր միջավայրի, և քաղաքացու հանդեպ:

Գլխավորը, որ անհրաժեշտ է փոխառել Արևմուտքից, ճակատագիրդ սեփական ուժերով տնօրինելու, սեփական ուժերով ապրելու ցանկությունն ու կարողությունն է ոչ միայն առօրյա կյանքում, այլև պատմական մեծ չափումներով:

Մեր ազգային և պետական ինքնագիտակցության մեջ առանձնակի տեղ է գրավում, այսպես կոչված, կայսերականությունը: Ռուս մեծ պատմաբան Վասիլի Կլյուչևսկին տարածքների գաղութացման գործընթացը բնութագրել է որպես ռուսական պետականության հիմնական գործոն: Ընդսմին՝ ռուս ժողովուրդը առաջատար, բայց միակ ուժը չէր, որը ստեղծեց կայսրություն:

Եթե Հնդկաստանում բրիտանական տիրապետությանը բնորոշ էր կառավարչական կառույցների լիակատար աններդաշնակությունը, վերաբնակիչների և տեղական բնակչության կենսակերպի բացարձակ անհարիրությունը, ապա Ռուսաստանում տիրում էր ճիշտ հակառակ իրավիճակը: Հայտնի ռուսատյաց մարկիզ դը Կյուստինը նշել է մի փաստ, որը ցնցել էր իրեն. Նա կամեցել է ներկայանալ պետերբուրգյան վերնախավին և նրանց մեջ շատ քիչ թվով տոհմիկ ռուսների է հանդիպել: Որոշ ժամանակ անց, 1897

թվականի վիճակագրության միանգամայն հավաստի տվյալներով, տոհմիկ ազնվականության միայն 53 տոկոսն է իր մայրենի լեզուն համարել ռուսերենը: Ազնվականության գրեթե կեսը կազմում էին լեհական շլյախտայի, ուկրաինական կազակական ավագանու, մերձբալթյան ասպետների, վրացական իշխանների, մահմեդական խաների և բեկերի հետնորդները: Գրեթե նույնպիսի տոկոսային հարաբերություն կար նաև առևտրական խավի շարքերում, ինչպես նաև ցածր խավերում: Նովոռոսիայում* հողը կողք կողքի վարում էին ռուս գյուղացիները և ուկրաինական կազակները, իսկ ռուսական տայգայում միասին որս էին անում ռուս որսորդները, ալթայցիները, յակուտները և այլ բնիկներ:

Ռուսական տարածքների ինտեգրման հիմքում ընկած էր ոչ թե էթնիկական, այլ պետական գաղափարը: Կայսերական ժամանակաշրջանում դա միապետական գաղափար էր, որը երաշխավորում էր ինքնակալի բոլոր հպատակների պաշտպանությունը: Սակայն ԽՍՀՄ-ում միապետությանը փոխարինեց կոմունիստական գաղափարը՝ բոլոր տարածաշրջանները միավորելով նոր տիպի հասարակության կառուցման մասնակցությամբ: Ու թեև պետական շինարարության գործընթացը ծավալվում էր առանց բարդ խնդիրների, այդուհանդերձ, համակեցության, մշակութային և տնտեսական փոխանակման ընթացքում, այնուհետև տնտեսական և սոցիալական ինտեգրված գործունեությանը լիարյուն մասնակցելով՝ երկրի ժողովուրդներն աստիճանաբար պատկերացում կազմեցին իրենց հանրությունների ճակատագրի մասին:

Չի կարելի անտեսել նաև Ռուսաստանի բնական պայմանները: Օրինակ, մեր երկրի կլիմայական պայմաններն արտացոլող հաշվարկների համաձայն, Կենտրոնական Եվրոպայի միջին կենսամակարդակին հասնելու համար, մենք պետք է ծախսենք երեք անգամ ավելի էներգիա, քան Գերմանիան: Բացառված չէ, որ որակապես այլ տեխնոլոգիաների ստեղծմամբ իրավիճակն արմատապես կփոխվի: Իսկ ռուսական Հյուսիսի սակավ յուրացված բնու-

* Պատմական մարզ՝ Ռուսաստանի և Ուկրաինայի հարավում (ծ.թ.):

թյունը կդառնա մոլորակային նշանակության արժեքավոր ռեսուրս: Ելնելով ներկա իրողություններից և ձգտելով հնարավորինս բարձրացնել ռուսաստանցիների տնտեսական մակարդակն ու կյանքի որակը, մենք պետք է հաշտվենք այն մտքի հետ, որ մոտ ապագայում կյանքի միջին տնտեսական մակարդակը չի հասնի առավել զարգացած երկրների ցուցանիշին:

Առկա է ևս մի ավելի դժվար, բայց ավելի կարևոր հարց: Արևմտյան ձևերի և մեթոդների մեքենայական ընկալումը ոչ այլ ինչ է, եթե ոչ քաջ հայտնի «հետապնդող» զարգացում: Անշուշտ, սա շարժում է դեպի առաջ: Բայց Արևմուտքն էլ տեղում չի դոփելու: Հարցն այն է, թե մենք ինչպիսի Արևմուտքի ենք ուզում հասնել. երեկվա՞, այսօրվա՞, թե՛ վաղվա Արևմուտքին: Ռուսաստանի համար ամենամեծ խնդիրն այն է, որ մենք փաստորեն ինքներս մեզ դնում ենք Արևմուտքին հասնելու իրավիճակում, Արևմուտք, որը մտել է իր զարգացման փակուղու մեջ և տառապագին փորձում է դուրս պրծնել նրանից: Ըստ էության, հասնել նրան, ով գտնվում է փակուղու մեջ և չգիտի ինչպես դուրս գալ նրանից, դա շատ ավելի պարզ և հասանելի միտք է, քան փորձել հասնել նրան, ով առաջ է շարժվում բաց ճանապարհով: Սակայն նման հետապնդման բուն իմաստը այնքան էլ հստակ չէ:

Անհրաժեշտ է հաշվի առնել և այն հանգամանքը, որ այսօր աշխարհում ձևավորվում է կախյալ զարգացման նոր տեսակ: Այն բնորոշվում է ոչ այնքան ռեսուրսային կախվածությամբ, որով կարող է տառապել հենց Արևմուտքը, և ոչ էլ ֆինանսական կախվածությամբ, որը արտաքին պարտքերի կամ անբավարար ներդրումների խնդրի մակարդակով էական է, օրինակ, Ռուսաստանի համար: Կախվածության առավել կարևոր տեսակը դառնում է տեղեկատվական ու տեխնոլոգիական կախվածությունը՝ կապված զարգացման նոր որակի ձևավորման հետ:

Այդ կախվածությունը լրացվում է նրանով, որ հետարդյունաբերական տնտեսության և հետարդյունաբերական հասարակության կառուցումը չի կարող պլանավորվել և իրագործվել իբրև պետական քաղաքականության ծրագիր: Նման հասարակության

ձևավորումը որոշակիորեն հանդիսանում է էվոլյուցիոն գործընթացի ու հասարակության ինքնազարգացման արդյունք:

Զարգացման կախվածությունը դրսևորվում է նաև այն իրողությամբ, որ միայն Արևմուտքն է տիրապետում ռեսուրսների, որոնցով փաստորեն կարող է թույլ տալ կամ թույլ չտալ այս կամ այն երկրին հասնելու իրեն և համագործակցելու հետարդյունաբերական աշխարհի հետ: Դա արտացոլվում է և՛ տեխնոլոգիաների արտահանման, և՛ ներդրումների մեջ: Այլ երկրների զարգացման վրա այսպիսի վերահսկող փաթեթը շատ ավելի ծանրակշիռ է ուղղակի վերահսկողությունից:

Նման պայմաններում հետապնդող զարգացման բուն ռազմավարությունը դառնում է անիմաստ, քանզի իրավիճակը հիշեցնում է առասպելական Սիզիփոսի աշխատանքը. որքան էլ դուք քարը գլորեք սարն ի վեր և ինչքան էլ մոտենաք գագաթին, աշխարհի առաջավոր երկրները միշտ էլ հնարավորություն ունեն իրենք լուծելու՝ մենք «արժանի» լինելու գագաթին, թե ոչ, և մեզ ցած կգլորեն:

6.3 Ռազմավարության ընտրությունը. «բյուրգերական պետություն», թե՞ «արդիականացված ճեղքում»

Ի դեպ, հիմնախնդիրն ունի ևս մեկ ասպեկտ: Վերջին ժամանակներս ռուսական վերնախավը կողմնորոշվում է դեպի միջին մակարդակի երկրները՝ իբրև զարգացման օրինակ և իդեալ: Ընդորում, մոտավորապես այսպես են դատում: Ներկայիս Ռուսաստանը, իբր, ավելի քան սահմանափակ նյութական և այլ գործնական հնարավորությունների երկիր է: Ահա ինչու նրա համար ամենաբարենպաստ արժանապատիվ և միաժամանակ դժվար հասանելի նպատակը կլիներ՝ տեսանելի ապագայում մտնել երկու-երեք տասնյակի մեջ՝ կյանքի որակի և երկարակեցության ցուցանիշներով, մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի և եկամուտների մակարդակով: Հասնել գոնե այն բանին, որ երկրի բնակչությունը դադարի նվազել:

Համենայնդեպս, մնացյալը՝ արտաքին քաղաքական ակտիվությունը, պաշտպանական ծախսերը, պետության դերը միջազգային համակարգում և այլն, պետք է ածանցվի այդ ռազմավարական նպատակից և ռուսական պետության ու տնտեսության իրական հնարավորություններից: Նվազագույնի հասցնել բոլոր և այլևայլ վտանգները՝ ի հաշիվ զարգացման սոցիալ-տնտեսական առավելագույն խթանման, ահա նման մոտեցման էությունը:

«Բյուրգերական զարգացման» գաղափարախոսության մեջ ռացիոնալ հատիկ կա: Աշխարհում ժամանակակից Ռուսաստանի սոցիալ-տնտեսական տեղը դժվար է զուգորդվում նրա առանձնահատկության և մեծափառության հավակնություններին, եթե, իհարկե, առանձնահատուկ ասելով չենք հասկանում ներկայիս իրավիճակը: Այս տեսանկյունից սոցիալ-տնտեսական սանդուղքով վճռական վերընթացը տակավին չվճարված և չվճարվող պարտքը չէ բնակչությանը, յուրաքանչյուր ռուսաստանցու: Դա նաև նախապայման է հեռանկարում ոչ թե խոսքով, այլ գործով Ռուսաստանի կարգավիճակը պահպանելու որպես մեծ (առանց որևէ վերապահության) տերություն:

Այսպիսով, հռչակելով Արևմուտքին հասնելու անհրաժեշտությունը, մենք կողմնորոշվում ենք խնդրի պրագմատիկ և տեխնոլոգիական լուծման տեսակետին՝ հասնել Պորտուգալիայի և այսպես կոչված զարգացած երկրներից նվազ զարգացածների մակարդակին: Դա յուրովի ճիշտ է, ստույգ է, հաստատվում է բազմաթիվ հաշվարկներով և հավաստի թվերով:

Բայց հարկավոր է մի հարց ևս արծարծել: Որքանո՞վ է զարգացման նման նպատակը անհրաժեշտ Ռուսաստանին և որքանո՞վ է զարգացման այդ նպատակը հարիր փոփոխվող աշխարհում Ռուսաստանի խնդիրների լուծմանը, նրա գլոբալ փոխակերպությանը: Զարգացումը պետք է միտվի արժանավոր նպատակների, խարսխվի այն բանի հստակ գիտակցմանը, թե ով ենք մենք և ինչ ենք ուզում:

Տնտեսական աճի ապահովումը երբեք չի եղել աշխարհի առաջատար երկրների զարգացման նպատակը: Այդպիսի կողմնո-

որոշիչը կարող է որոշել գործունեության կոնկրետ համակարգեր, բայց ոչ երբեք նպատակը: Չի կարելի մոռանալ, որ կապիտալիզմը առաջացել է ոչ իբրև տնտեսական համակարգ, այլ իր ծագմամբ՝ իբրև էթիկական ու կրոնական աշխատանքային ասկետիզմ:

Տխրահռչակ «ամերիկյան երազանքը» բնավ էլ երազանք չէ բարձրակարգ, տարբերակված, արդյունավետ հետարդյունաբերական տնտեսության: «Ամերիկյան երազանքը» արտահայտված է ԱՄՆ-ի Անկախության հռչակագրի այն բառերում, որ մարդը ծնվում է ազատ, իրավահավասար, և իրավունք ունի ձգտելու երջանկության: Թեկուզև վերջին մեղմասությունը հաճախ է արտացոլում այլ ձևի մեջ սեփականության իրավունքը, բայց այնուամենայնիվ արտահայտում է այլ, խնդրին համարժեք ձևով՝ իմաստների և իդեալների լեզվով:

Այսօր Ռուսաստանի զարգացման օբյեկտիվ խնդիրը հանդիսանում է զարգացման հետարդյունաբերական տեսակին անցնելու փորձը, արդիականացված ճեղքումը դեպի հետարդյունաբերական փուլ:

Այս խնդիրը երկրի առջև ծառացած է արդեն առնվազն վերջին 20 տարիների ընթացքում: ԽՍՀՄ-ը ժամանակին չկարողացավ պատասխանել արդիականացման մարտահրավերին: Դա կապված էր ինչպես բուն քաղաքական համակարգի յուրահատկության, վերնախավի որակի հետ, որն ունակ չէ ըստ հարկի վերափոխման, այնպես էլ բուն երկրի առանձնահատկության հետ, որտեղ զարգացման հետարդյունաբերական տեսակի անցման համակարգային խնդիրները զուգակցվում էին առանձին տարածքների արդյունաբերացման փաստացիորեն անավարտ գործընթացի հետ՝ տարբեր հանրապետությունների և տարածքների զարգացման խոր անհամամասնություններով, նրանց մշակութային խայտաբղետությամբ և զարգացման պայմանների տարբեր մակարդակներով:

Արդյունքում երկրում տեղի ունեցող անկումը միաժամանակ արտացոլում էր նախկին քաղաքական ու սոցիալական համակարգում արդիականացման խնդրի անհնարինությունը և դրսևորում

համակարգի անցումը սեփական հավելյալ բարդությունների «թոթափման» ռազմավարությանը, նրա հղկմանը, երկիրն առավել միատարր մասերի բաժանելու դեպքում:

Սակայն նման իրավիճակն ամենևին էլ օրակարգից չի հանում բուն արդիականացման խնդիրը նախկին ԽՍՀՄ տարբեր մասերի նկատմամբ: Ավելին, այն չի բացառում նաև հետագա մասնակի ապաինտեգրումը հետխորհրդային տարածքի՝ միասնական պետության շրջանակում, թեև դեպքերի նման զարգացումը հնարավոր է միայն նրա առանձին մասերի արդիականացման ծրագրերի ավարտից հետո, այսինքն՝ ԱՊՀ ներկա պետությունների տեսքով:

Այժմ Ռուսաստանը կարող է դիմել արդիականացված ճեղքման, մի կողմից թոթափելով Միջին Ասիայի կամ Անդրկովկասի տարածքների մի շարք խնդիրներ, բայց միաժամանակ կորցնելով Մերձբալթիկայի կամ Ուկրաինայի մշակութային ու տնտեսական ներուժը: Մյուս կողմից պետությունը նախկինի պես ստիպված է ծախսել նշանակալի ռեսուրսներ՝ պահպանելու համար իր դիրքերը հետխորհրդային տարածքում, թեպետ այդ ռեսուրսների ծավալը նվազում է, քան պահանջվում էր ԽՍՀՄ-ի պայմաններում այս կամ այն տարածքի զարգացման համար:

Դրանից բացի, Ռուսաստանը, անգամ իր այսօրվա վիճակով, շարունակում է մնալ ներքին ծայրահեղ բարդ, արդիականացման հետարդյունաբերական ճեղքում ապահովելու տեսանկյունից ոչ միատարր վիճակում: Որոշ իմաստով Ռուսաստանը մանրակերտում շարունակում է պահպանել ԽՍՀՄ գծերը, քանի որ հետարդյունաբերական արդիականացման խնդիրների հետ մեկտեղ ստիպված է լուծել հետամնաց տարածքների առաջքաշման, Հյուսիսի պահպանման, համաշխարհային ռազմական-ռազմավարական դիրքերի պահպանման և այլ խնդիրներ:

Արդեն որերորդ անգամ մենք ողջ աշխարհի համար հանդիսանում ենք անսովոր օրինակ, տարիմաստորեն մեկտեղելով և՛ առաջին հերթին խոշոր մեգապոլիսներում հետարդյունաբերական, հետտնտեսական սպառողական հասարակության համակարգի

զարգացման խնդիրները, և՛ ռեսուրսների կոնսերվացման ու դեպի արդյունահանում միտված տնտեսության արդյունաբերական զարգացման սահմանափակությունը, երկրորդ հերթին՝ արդի աշխարհի հատակն ընկնելու ներուժը՝ արագացված արդյունաբերացման մոդելի քայքայման, հասարակության նոր արխայիկացման և հանցավոր տնտեսական ու հասարակական փորձառության երևան գալու արդյունքում:

Այդ ամենին զուգահեռ՝ պահպանվում և հեռանկարում անգամ ուժեղանում է համակարգի վրա արտաքին ճնշումը, որը միևնույն ժամանակ կրում է բազմակողմանի բնույթ: Արտաքին սուբյեկտների ռազմավարությունը ուղղված է Ռուսաստանի տարբեր մասերի՝ իրենց զարգացման ծիրում մասնակիորեն ընդգրկելուն, այն դեպքում, երբ այդ զարգացման ուղղությունները հաճախ ունեն հակասական բնույթ:

Այսօր «բյուրգերային» պետություն կառուցելը կամ արևելասիական վագրերի ուղին կրկնելը, արդյունաբերացման երկրորդ ալիքի անցկացման միջոցով, որը հնարավորություն կտար ազգային ռեսուրսների կուտակման և չեբոլացման* հաշվին դուրս գալ հետարդյունաբերական զարգացման բնագիծ այդ նպատակի համար խոշոր կորպորացիաների միջոցով, չի կարող հաջողության հասնել: Նախ այն պատճառով, որ արդիականացման խնդիրը չի կարող լուծվել կայացած հասարակական և տնտեսական խաղի օրենքներով: Այսօր Ռուսաստանում ձևավորվել է տնտեսության «ինքնակեր» տեսակ, որն ունակ չէ աջակցել ոչ միայն ընդլայնված, այլև սովորական վերարտադրությանը:

Ազգային տնտեսական քաղաքականության հիմնական խնդիրը նպատակների այն անհավակնոտության մեջ է, որի մասին այսքան խոսում են բարձրագույն մակարդակում, որն արտահայտվում է ոչ թե նրանում, որ կառավարությունը չի կարող որպես աճի խնդիր սահմանել 3-4 տոկոս, 8 տոկոսի փոխարեն: Ըստ

---

* Հարավ-կորեական տնտեսական փորձ՝ մասնավոր ընկերություններին պետական աջակցություն ցուցաբերելու գործում:

էության զարգացման խնդրի ռազմավարական տեսլականից կորչում է ցանկացած տարբերություն զարգացման 3 կամ 8 տոկոսի միջև:

Եթե ազգային ռեսուրսները մսխվում են վերնախավի սպառման համար և ոչ թե զարգացման նպատակի, ապա աճն անիմաստ է: Եթե նավթի գների բարենպաստ իրավիճակի և կապիտալի՝ դեպի արտասահման անընդհատ հոսքի պայմաններում բյուջետային ոլորտի աշխատողներին դեռ վճարում են չնչին աշխատավարձ, ապա Ռուսաստանի մեծափառության մասին դատողությունները ոչ միայն կորցնում են որևէ իմաստ, այլև բարոյական արդարացում, քանի որ դա ստորացուցիչ և ձևական մեծություն է սեփական ժողովրդի հաշվին:

Ռուսաստանը ռեսուրսային հարուստ հումքի և զարգացած ինդուստրիալ արդյունաբերության հաշվին օբյեկտիվորեն մնում է աշխարհի առաջավոր ուժերից մեկը՝ հետարդյունաբերական քաղաքակրթության օջախների սահմաններից դուրս: Մեր հիմնական եկամուտներն ապահովող այդ ռեսուրսների վերացումն ու սահմանափակումն անհնար է: Սակայն հումքային արտահանման միտված տնտեսական մոդելի կոնսերվացումը և՛ ձախողում է մեր պետության աճը վերջին տարիների ընթացքում, և՛ միայն աճեցնում է մեր հետամնացությունը:

Այդպես կշարունակվի այնքան ժամանակ, մինչև մենք չհասկանանք, որ գլոբալ մրցունակություն և տնտեսության արդյունավետություն հնարավոր է ապահովել միայն էժան ռեսուրսների, որպես մեր «մրցակցային առավելության» վրա դրվող դրույքից սկզբունքային հրաժարումից հետո: Իրական մրցակցային առավելություն մենք դեռ պետք է զարգացնենք և ստեղծենք, որովհետև հետարդյունաբերական աշխարհ անցաթուղթը հանդիսանում է բացառիկ տեխնոլոգիաներ ստեղծելու կարողությունն ու դրա հիմքով թողարկված արտադրանքը, որով հետաքրքրվում է աշխարհը: Սա ավելի քան իրատեսական է, քանի որ ծայրահեղ դեպքում «տեխնոլոգիական զարգացման գոտիներից» առանցքային երկու-երեքում, որոնց շնորհիվ մոտակա տասնամյակներում առաջադիմելու է քա-

ղաքակրթությունը նանոտեխնոլոգիաներ, բիոտեխնոլոգիա, ջերմամիջուկային տեխնոլոգիա), Ռուսաստանը լուրջ ներուժ ունի:

Հետարդյունաբերական սեկտորների զարգացման հետ միաժամանակ, մենք պետք է ներքաշվենք նոր սոցիալական խմբերի «ստեղծման» մեջ, որոնք Ռուսաստանը պետք է զարգացնեն այս տեսանկյունից:

Առանց զարգացման այդ տրամաբանությանն անցման՝ դեպի նոր տեխնոլոգիաներ և արտադրության մեթոդներ, առանց հետարդյունաբերական տնտեսության տրամաբանությունը հասկանալու, մենք ոչնչի չենք հասնի: Դրա հիմնական խոչընդոտը պետական կառավարման և տնտեսական վերնախավի որակն է: Տնտեսական օլիգարխների ներկա հարաբերականորեն հաջողականությունը պայմանավորված է պետական հաստատությունների հետ սերտաճմամբ, տնտեսության հումքային ճյուղերի վրա մենաշնորհային վերահսկողությամբ և տնտեսական զարգացման համապատասխան նմուշի վերարտադրմամբ, այդ թվում՝ տնտեսության այլ ճյուղերի վրա սեփական ազդեցության ու վերահսկողության տարածման ու հարստացման, այդ ճյուղերի չեբոլացման հաշվին:

Սակայն հենց այդ կառուցվածքի ամբողջությունը և վերահսկողությունը առանձին ոլորտներում կառուցված են, պայմանականորեն ասված, զարգացման «հնացած տեխնոլոգիաների» շահագործման վրա: Իսկ երկրի տնտեսական զարգացման ընդհանրական նմուշօրինակների փոփոխությունը, ազգային տնտեսության առանձին նոր սեկտորների ամրապնդումը և անգամ անցումն ավելի առաջադեմ տեխնոլոգիաների ու աշխատանքի մեթոդների, այդ վերնախավերի համար վտանգ է ստեղծում, քանի որ սպառնում է նրանց առանձնաշնորհյալ դիրքերի ու հասարակությանն իր կամքը թելադրելու կորստով:

Արդյունքում, խնդիր է դառնում այն, որ վերնախավերի մեծամասնությունը հետաքրքրված չէ լայն հասարակական արդիականացմամբ, հասարակության խոր վերափոխմամբ, որն ունի ինովացիոն սոցիալական խմբի կրիտիկական զանգված ստեղծելու նպատակ: Հաճախ նրանք համաձայն են հետարդյունաբերական աշ-

խարի մտնել առանձին, առանց Ռուսաստանի, երկրի բնակչության այն մասի հետ, որն անհրաժեշտ է հումքի հանման ու դրա Արևմուտք տեղափոխման համար:

Բայց XXI դարն արդեն միայն մեր դարը չէ, և մենք պարտավոր ենք անել հնարավորը, որ նոր սերունդը, մեր երեխաներն ու թոռները, նոր Ռուսաստանը օգտվի ոչ միայն մեր սխալների փորձից ու պտուղներից, այլև մեր ձեռքբերումներից: Այդ պատճառով իրական ծրագրի հիմքում պիտի դրվի բարոյական ընտրությունը. կամ մենք թալանում ենք ինքներս մեզ և մեր երեխաներին ու երկիրը զրկում ենք ապագայից, կամ գնում ենք ճեղքման, ճեղքման մեր զարգացման փիլիսոփայությունում և 15-20 տարվա ընթացքում երկիրը բերում ենք նոր որակի:

Վերջնահաշվում հարցն այն է՝ արդյո՞ք, ողջ Ռուսաստանը, ողջ բնակչությունը, Ռուսաստանի բոլոր քաղաքացիները, թե՞ միայն նրանց մի փոքր մասը կստանա ապագայի անցագիր:

Ռուսաստանի պետական շինարարության նոր մարտահրավերները եւ խնդիրները 7

Յուրացված Ռուսաստանը՝ ազգային անվտանգության գլխավոր սպառնալիք 7.1

Ռուսաստանի զարգացման հեռանկարների և ռազմավարությունների գնահատման մեկ այլ մոտեցման կողմնակիցները, որն ավելի հաճախ անվանվում է աշխարհաքաղաքական, ելնում են հետևյալ անհրաժեշտությունից՝ վերհանել Ռուսաստանի ուժը, լիովին վերականգնել նրա միջազգային դիրքերը, ինքնուրույն արտաքին քաղաքականություն վարելու ունակությունը, ապահովել Ռուսաստանի ինքնավարությունը նրա արտաքին շահերի ոլորտում:

Անվիճելի է, որ պետության ուժն ու հզորությունը մշտապես եղել և, հավանաբար, ընդմիշտ կմնան նրա մյուս բոլոր հնարավորությունների և պոտենցիալ նվաճումների նախապայմանն ու հիմ-

քը: Սակայն այդ ուժն ու հզորությունը հանուն ինչի՞ են, ի՞նչ նպատակների պետք է ծառայեն: Իբրև երկրի մրցունակության, նրա անկախության երաշխի՞ք, իբրև ավանդական և նորագույն բնույթի սպառնալիքների դեմ անվտանգության խարի՞սխ. այո, այս գործում ուժն ու հզորությունը անհրաժեշտ են: Այդ թվում՝ և ռազմական: Բայց ուժն ու հզորությունը ինքնանպատակ կերպով կամ, որ ավելի վատ է՝ Արևմուտքի հետ նոր առճակատման համար, սա մենք արդեն անցել ենք: Էլ չասած, որ Ռուսաստանի սպառնալիքը բնավ էլ Արևմուտքից չէ, այլ Հարավից, թեև ոմանք հակված են այդ սպառնալիքը համարել որպես բարօրություն՝ Ռուսաստանի իսլամացման մեջ տեսնելով նրա փրկությունը Արևմուտքից:

Այստեղ մարդու և հասարակության զարգացումը փոխարինվում և սահմանափակվում է այլ չափանիշներով ու նպատակներով՝ հակամարտության նոր տեսակների ու միջոցների և այն ամենի ստեղծումով, ինչն անհրաժեշտ է դրանց մշակման, արտադրության, սպասարկման համար: Մարդը և հասարակությունն ամբողջության մեջ այստեղ դառնում են ոչ թե բարձրագույն չափանիշ ու արժեք, այլ էժանագին սպառման նյութ, փույթ չէ, «կծնվեն նորերը»:

Իհարկե, դա ևս յուրատեսակ զարգացում է, որը յուրովի կփոխի երկիրը, կբարենորոգի և նույնիսկ առաջ կմղի: Որոշակի պայմաններում և հանգամանքներում նման զարգացումը կարող է պարտադրվել դրսից կամ թելադրվել միջազգային կյանքի օբյեկտիվորեն ձևավորվող հանգամանքներով: «Ավելի լավ է կանգնած մեռնել, քան ապրել ծնկաչոք», - հնուց ասված խոսք է: Բայց եթե չապրենք տիեզերական աղետների և աշխարհաքաղաքական հայտնության սցենարներով, ապա նորկայսերական վերահաստատումն անհամատեղելի կլինի Ռուսաստանի սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրների հետ և նոր զրկանքներից ու փորձություններից բացի, այլ բան չի տա:

Եվ այստեղ խոսքը միայն ու միայն պետության մասին է: Աշխարհաքաղաքագետները խոսում են սոսկ այն պետության մասին, որն ըստ էության հաստատում է իրեն ուժի միջոցով և բացահայտո-

րեն հասարակությանն ու մարդուն համարում են ոչ ավելին, քան նման ինքնահաստատման միջոցներ:

Ռուսաստանի պատմությունը և նրա ապագային ուղղված այդ «աշխարհաքաղաքական հայացքի» գլխավոր հիմնախնդիրն այն է, որ մենք սկսում ենք մեր զարգացման մասին դատել ինչ-որ համակարգչային խաղի չափանիշներով՝ իր գունագեղ պատկերներով, ուղեսլաքներով և պահեստային երեք կյանքերով:

Այսպիսի մոտեցումը ոչ միայն վնասաբեր է և «ոչ մի պահեստային կյանք» մենք չունենք, այլև անտեսվում է կամ չի ըմբռնվում ցանկացած աշխարհաքաղաքականության իրական հիմքը: Եթե մենք խոսում ենք իր տարածական չափման մեջ պետական քաղաքականության մասին, ապա ամենից առաջ նկատի ունենք տարածության յուրացման կարողությունը: Բառի լայն իմաստով՝ դա նրա գաղութացման, մշակման, զարգացման կարողությունն է: Եթե դուք չանեք, ապա կանեն ուրիշները: Արդի աշխարհում երկրի ամբողջականության պահպանումը նշանակում է նաև, որ հասարակությունը պետք է յուրացնի իր երկիրը, հմտորեն և արդյունավետորեն տնօրինի նրա հարստությունները:

Դեռևս Վ. Օ. Կլյուչևսկին ռուսական պետությունը բնութագրել է որպես գաղութացնող պետություն և դրանում է տեսել նրա զարգացման հիմնական սկզբունքն ու հիմնական ռազմավարությունը:

Ի դեպ, իմաստից զուրկ չէ նաև պատմագիտության մեջ տարածված այն մոտեցումը, որի համաձայն Եվրոպայի զարգացման ինտենսիվության և արդյունավետության հիմքում ընկած էր հենց տարածքային սահմանափակությունը, ինչն էլ հարկադրեց զարգացնել թե՛ տնտեսությունը, թե՛ սոցիալական կառույցները, հարաբերությունները մարդկանց միջև, ովքեր ստիպված էին համակերպվել խտաբնակ կենցաղին, որպեսզի արդյունքում ունեցածից ստանային առավելագույնը:

Ռուսաստանի Դաշնությունն արդի աշխարհի ամենամեծ և անկայուն պետություններից է: Նրա անկայունությունը բնորոշվում է հենց աշխարհագրական մասշտաբներով, ռելիեֆային, կլիմայական, իսկ որոշ ծայրամասերում՝ մշակութային խայտաբղետությամբ:

Արևմուտքը և Արևելքը, Հյուսիսը և Հարավը միահյուսվում են Ռուսաստանում, որի քաղաքակրթությունը բացառիկ և ինքնատիպ է:

Մենք բախվում ենք արտաքին քաղաքակրթական և աշխարհաքաղաքական բազմաշառավիղ ճնշմանը: Երկրի տարածաշրջանների զարգացման արտաքին աշխարհաքաղաքական գործոնները և՛ Հարավում, Հեռավոր Արևելքում և՛, օրինակ, երկրի Հյուսիս-Արևմուտքում, մեղմ ասած, միատեսակ չեն: Եթե Ռուսաստանի Հեռավոր Արևելքում հարկավոր է նախ լուծել հարաբերությունների հաստատման խնդիրները բուռն կերպով աճող Ասիական Խաղաղ-օվկիանոսյան տարածաշրջանի հետ՝ հաշվի առնելով Չինաստանի ամրապնդվող գլոբալ ազդեցությունը, ապա Հարավն առաջին հերթին, այսպես կոչված, իսլամական աշխարհի հետ բախման ասպարեզ է: Իսկ արևմտյան սահմաններում մենք առաջին հերթին լուծում ենք եվրոպական հանրության հետ փոխհարաբերությունների ու ինտեգրացիոն զարգացման հարցերը: Նման մակարդակի և տարատեսակության արտաքին մարտահրավերների հետ պետության համաժամանակային բախումը՝ ինչպես ազգային, այնպես էլ տարածաշրջանային մակարդակով, բացառիկ է: Էլ չասած արդեն այնպիսի տարածքների կառավարման ակնհայտ յուրատեսակությունը, ինչպիսիք են Չեչնիան կամ Կալինինգրադի մարզը:

Մենք պետք է նոր մակարդակով լուծենք Ռուսաստանում բնակվող մեծ թվով ժողովուրդների, էթնոսների հետ կապված խնդիրները: Այսօր նոր իմաստ և նոր մոտեցումներ պետք է ներդրվեն նաև ռուսական ֆեդերալիզմի զարգացման մեջ, ֆեդերալիզմ, որը, կախված մեր գործողություններից և հմտություններից, կարող է դառնալ թե՛ պետական բարեփոխումների հաջողության բանալի, թե՛ նոր խնդիրների սկզբնաղբյուր:

Դաշնությունն անհրաժեշտ է Ռուսաստանին: Խորհրդային Միությունը փլուզվեց նաև այն պատճառով, որ ութ ժամագոտիների վրա տարածվող սոցիալ-տնտեսական հսկան ղեկավարելու համար չկային ո՛չ տեսություն, ո՛չ էլ գործնական հնարավորություններ: Կենտրոնն ի զորու չէր գլուխ հանելու այն հոգսերից ու հիմնահարցերից, որոնք հենց ինքն էր իր վրա բարձել, կառավար-

ման խնդիրները չէր հաղթահարում նաև XX դարասկզբի ռուսական կայսրությունը, որը բախվում էր արդյունաբերականացման հակասություններին և չէր կարողանում լուծել դրանք:

Այստեղից հետևություն. ոչ միայն ունիտար պետության արդյունավետության, այլև նրա բուն գոյության համար կան խիստ որոշակի, թեպետ և դժվար փոխկապակցվող կառավարչական սահմաններ: Ասվածը բնավ էլ կենտրոնը թուլացնելու կոչ չէ: Ռուսաստանին ավելի, քան որևէ այլ պետության, անհրաժեշտ է ուժեղ կենտրոն: Այլապես չափազանց մեծ է երկրի մասնատման, փլուզման հավանականությունը: Բայց, հավանաբար, կարիք կա վերահիմաստավորել կենտրոնի ուժի և դերի չափանիշները:

Այդ չափանիշներից մեկը Դաշնության սուբյեկտների՝ ինքնուրույն զարգացման կամքի և գործնական հնարավորությունների մոտիվների առկայությունն է: Փոքր-ինչ ճշտելով խնդիրը՝ կենտրոնի և Դաշնության սուբյեկտների միջև հարաբերությունները պետք է կառուցվեն այնպես, որ ՌԴ սուբյեկտին շահավետ լինի ոչ միայն պարզապես մնալ Դաշնության կազմում, այլև խթանել իր տնտեսական ներուժը, դրանով իսկ ամրապնդելով դաշնային բյուջեն և Ռուսաստանն ամբողջությամբ:

Համաշխարհային ժողովրդագրական պայթյունի հենքին մեր առջև ծառանում է նաև բնակչության թվի նվազման խնդիրը: Առաջիկա տասնամյակների հեռանկարում Ռուսաստանը վտանգված է դառնալու «դատարկ տարածություն» և բախվելու է հզոր «ժողովրդագրական ճնշման» հետ՝ վերածվելով այլ երկրների կողմից նվաճման օբյեկտի: Համապատասխանաբար մենք պետք է լուծենք նոր պայմաններում պետության ամբողջականության ապահովման խնդիրը:

Մեծաթիվ ներգաղթը, որը թերևս տեղի կունենա, քանի որ անհրաժեշտ է Ռուսաստանին, կարող է ժամանակի ընթացքում խճողել էթնիկական, զուգընթաց նաև քաղաքական հավասարակշռությունը միանգամայն անսպասելի ուղղությամբ՝ սրանից բխող բոլոր հետևանքներով: Ռուսաստանին հարկավոր է զանգվածային, երկարատև, վերահսկելի ներգաղթ: Միայն այս ճանա-

պարհով մենք կապահովենք երկրի յուրացմանն անհրաժեշտ տասնյակ միլիոնավոր աշխատունակ մարդկանց: Բայց պետական միգրացիոն քաղաքականությունը Մոսկվայում, Ռուսաստանի հարավում և Հեռավոր Արևելքում, այսպես ասած, «երեք մեծ տարբերություններ են»:

Պետական տնտեսական քաղաքականության խնդիրները Կենտրոնական Ռուսաստանի և Սիբիրի տարածաշրջաններում միանգամայն օբյեկտիվորեն տարբերակվում են: Կան տնտեսապես ուժեղ շրջաններ, որոնք պետք է դառնան ողջ երկրի զարգացման լոկոմոտիվները: Առաջատար տարածաշրջանների ներուժն էլ պետք ամենից առաջ աշխատի, բազմապատկվի ի բարօրություն բոլորի, հաշվի առնվի պետական քաղաքականության մեջ: Գյուղատնտեսական հողերի շրջանացման խնդիրը, ինչպես և ընդհանուր առմամբ պետական հողային քաղաքականությունը չի կարող և ոչ մի դեպքում չպետք է միանման լինի կենտրոնական սևահողային գոտում և նույն Ռյազանի մարզում, ներառելով, ի դեպ ասած, քաղաքներում տարվող հողային քաղաքականության հարցը:

Պետական սոցիալական քաղաքականության խնդիրները, ինչպիսիք են՝ կենսաթոշակային համակարգի բարելավումը, աշխատանքային միգրացիայի կարգավորումը, ժողովրդագրական քաղաքականության խնդիրները, երկրի կենտրոնի «հին» տարածաշրջաններում, Հարավում և Հյուսիսում պարզապես պետք է տարբերվեն հավուր պատշաճի:

Էլ չասած այն մասին, որ երկրի տարբեր տարածաշրջաններում նվազագույն զամբյուղը տատանվում է տասը, երբեմն էլ ավելի անգամ:

Եվ այս բոլոր խնդիրները անհրաժեշտ է լուծել, լուծել հենց այժմ: Եթե Ռուսաստանը չկարողանա պահպանել տարածքների արդյունավետ միասնությունը, դա կդառնա ծանրագույն դրամա ո՛չ միայն իր քաղաքացիների համար: Ռուսաստանի Դաշնության անկումը մոտիկ և հեռու մայրցամաքներում կառաջացնի աշխարհաքաղաքական վերաբաժանման նոր շղթայական ռեակցիա, որն իր հզորությամբ կգերազանցի Խորհրդային Միության փլուզմանը և

կիամալրվի ատոմային ու քիմիական զենքով հագեցած տարածքների ընդարձակմամբ:

Իսկ մենք այսօր քիչ ենք մտածում և հոգ տանում մեր երկրի հսկայական տարածքների յուրացման, զարգացման մասին, երկիր, որի մասին հաճախ սիրում ենք խոսել ինչ-որ անմեկնելի հպարտությամբ՝ մայրցամաքի մեկ ութերորդ մասի չափանիշով: Բայց ի՞նչ իմաստ ունի այդպիսի հարստությանը տիրելը, եթե ժլատ ասպետի նման, քափուքրտինք թափելով նրա վրա, ոչինչ չենք անում, որպեսզի այն զարգացնենք, որպեսզի այնտեղ մարդիկ ապրեն նորմալ ու արժանապատիվ: Մինչ այժմ Ռուսաստանի տարածքի մի մասը սոսկ օջախային, «պիոներական» յուրացման գոտի է, որտեղ չկա մշտական ու կանոնավոր կյանք, որտեղից մարդիկ ձգտում են հեռանալ: Ռուսաստանի բնակչությունը հետզհետե կենտրոնացվում է, մեզ սպառնում է բնակչության թվի նվազումը. մեր չյուրացված գոտիների ազատ տարածություններ են թափանցում այլ երկրներ, քաղաքակրթություններ, ժողովուրդներ: Բայց չէ՞ որ յուրաքանչյուր աշխարհաքաղաքագետ գիտի, որ որևէ տարածքի վերահսկողության լավագույն և ամենաարդյունավետ միջոցը նրա հարուստ, ծաղկող և մեծաթիվ բնակչությունն է:

Մենք պատրաստ չենք խոստովանելու, որ մեր ապագան երաշխավորված չէ, որ այն նույնիսկ ավելի քան կասկածելի է: Մեզ դուր չեն գալիս մեր զարգացման ուղիներին վերաբերող հարցերի անհաճո պատասխանները: Այս պատճառով էլ մեծամոլության, նախկին հզորության հարության պատրանքները դառնում են այնքան կենսունակ և սոսկ խոչընդոտում են մեր առաջընթացը:

7.2 Ունի՞, արդյոք, պետությունը ապագա

Այսօր ինչպիսի՞ պահանջներ են ներկայացնում մեզ, պետության զարգացմանը և հասարակության կազմակերպմանը արդիականությունն ու ապագան: Առանձնահատուկ դժվարությունը պայմանավորված է ակնհայտ պարադոքսով, որին մենք բախվում ենք՝ ձգտելով պետականության ամրապնդման խնդիրը համատեղել

այն սցենարի հետ, որը կանխատեսում է XXI դարում պետության, իբրև այդպիսին, մահացումը կամ արմատական վերասերումը:

Եթե համաշխարհային քաղաքական գործընթացները հետագայում ևս զարգանան այսօր նշմարվող միտումներով, ապա XXI դարասկզբին այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են՝ «Ռուսաստանի Դաշնություն», «Ամերիկայի Միացյալ Նահանգներ», «Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն», «Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն», «Բրունեյի Սուլթանություն», «Լիբիական Արաբական Սոցիալիստական Ժողովրդական Ջամահարիա» և այլն, իրենց այժմյան տեսքով կարող են ծայրահեղ դեպքում պատկանել հեռավոր պատմությանը:

Ռուսաստանն իր հսկայական տարածությամբ, բնական և այլ պայմանների բազմազանությամբ ու բազմազգ բնակչությամբ, լինելով բավական անհամաչափ ըստ երկրի տարածքի և սոցիալ-տնտեսական «սանդուղքի», հարկադրված է ծայրահեղ ուշադիր լինել այն երևույթի հանդեպ, ինչը համայն աշխարհում ընդունված է անվանել «պետության ինստիտուտի ճգնաժամ»:

Ընդհանրապես պետության ճգնաժամի մասին սկսեցին խոսել նրա ի հայտ գալու պահից ի վեր: Համաշխարհայնացման ներմուծած նորույթը՝ հետզհետե սրվող արտաքին հակասությունն է տվյալ տարածքների և բնակչության հետ անքակտելիորեն կապված պետության ավանդական ինստիտուտի և իր գործունեությամբ բոլոր սահմանները զանցառող անդրազգային գործարարության միջև: Արտաքուստ՝ առավելությունը գործարարության կողմն է. անդրազգային խոշոր կորպորացիաները վաղուց արդեն ունեն միջին պետությունների համախառն արտադրանքի չափերը զգալապես գերազանցող շրջանառություն: Այդ կորպորացիաների ցանկում առաջին երեսունից յուրաքանչյուրի շրջանառությունը մոտավորապես հարյուր անգամ գերազանցում է միջին և փոքր (բայց տնտեսական առումով ոչ ամենահետամնաց) պետությունների ՀՆԱ-ն:

1970-ական թվականների սկզբին այս հետազոտությունն-

ը բերեցին «մեքենայական» եզրահանգման. արդյունքում պետությունը կքայքայվի անդրազգային կորպորացիաներով և համաշխարհային քաղաքականության նոր այլ սուբյեկտներով: Հայտնի չէ, թե ինչը կփոխարինի նրան: Բայց ահա, վրա է հասել պետության ճգնաժամը: Ելքը ակնհայտ է՝ պետությունը սոսկ ժամանակի գործառույթ է: Երեսուն տարի առաջ շատերն էին այսպես կարծում: Ինչպես միշտ, իրականությունը շատ ավելի բարդ էր:

Պետության ինստիտուտը ոչ մի տեղ չի անհետանում: Աշխարհում տակավին բացակայում են պետությունների հետ համեմատվող այլ կառույցներ, որոնք կարող են ստանձնել քաղաքական պատասխանատվություն և իրականացնել քաղաքական խնդիրներ: Պետությունը և միջազգային հարաբերությունների ազգային-պետական համակարգը, ծայրահեղ դեպքում, կմնան աշխարհի հիմնական քաղաքական հաստատությունները այնքան ժամանակ, քանի դեռ պետությունը տիրապետում է օրինական բնակչության մենաշնորհին և ապահովում է քաղաքացիների «բնակության միջավայրի» անվտանգությունը: Չէ՞ որ եթե տնտեսական կյանքն արդեն իսկ մեծապես կազմակերպված է պետություններից դուրս և անկախ, իսկ քաղաքական կյանքը գերազանցապես մնում է ազգային-պետական ոլորտում, թեև միջազգային, միջպետական կառույցներին ներգծվելու միտում ունի, ապա բուն սոցիալական կյանքը, հասարակության կամ անհատի կյանքը շարունակում է մնալ հավատարիմ ազգային, պետական, լոկալ և տարածքային ձևավորված սկզբունքին: Այլ ուղին բնորոշ է ինչպես Արևմուտքի երկրների, այնպես էլ որոշ պետությունների սոսկ բնակչության խիստ փոքրաթիվ մասին:

Պետության ճգնաժամի էությունն այն է, որ պետությունը, նույնիսկ իր ցանկությանը հակառակ, ներգրավվում է քաղաքական, տնտեսական և սոցիալական հարաբերությունների նոր գլոբալ կաղապարի մեջ: Եվ որքան սահմանափակ է նման ներգրավումը, այնքան պետությունն ինքը ավելի շատ հնարավորություններ է բացում ազգային զարգացման նպատակների համար:

Անցած տասնամյակների ընթացքում անդրազգային կորպորացիաների և բանկերի հզորությունը բազմապատիկ աճել է: Սակայն այդ պատճառով ոչ մի խոշոր պետություն չի դադարել գոյություն ունենալ և էապես դույզն-ինչ չի թուլացել:

Թեև արդի աշխարհում հընթացս նկատելի է «անհաջողակ պետությունների» ֆենոմենը: Համենայնդեպս, դրանց հանդես գալու պատճառները շատ ավելի բարդ են և արտացոլում են ոչ այնքան աշխարհի ազգային-պետական համակարգի փլուզման միտումը, որքան այն փաստը, որ այդ համակարգը համաշխարհային առաջատար տերությունների մակարդակով փոխակերպվում և ինտեգրվում է քաղաքական նոր գլոբալ իրականության: Փոխակերպվում են նաև պետության գործունեության բնույթն ու ձևերը, որոնք հաճախ հիշեցնում են գլոբալ կորպորացիաների: Անհաջողակ պետությունները կամ մեր ժամանակի ևս մի ֆենոմեն՝ այսպես կոչված, արհամարհված պետությունները հաճախ հենց այն երկրներն են, որոնք ետ են մնացել նոր գլոբալ տրամաբանությանը համապատասխան պետության ինստիտուտի փոխակերպության գործընթացից:

Այս իմաստով հետամնացության խնդիրն ավելի կարևոր հիմնահարցի մասնակի դեպք է՝ զարգացման անհամաչափություն և «համաշխարհայնացման մեջ մտնելու» անհամաչափություն, նրա այս կամ այն գործընթացին ներգրավվելու մշակութային և սոցիալական պատրաստականության անհամաչափություն:

Ահա ինչու ապագա պետության կառուցվածքային ճգնաժամը ամենից առաջ ավանդական, «դասական» պետությունների կառուցվածքի և գործառույթների անհամապատասխանության ճգնաժամն է ազգային զարգացման պահանջմունքների նկատմամբ: Խնդիրները ծագում են այն ժամանակ, երբ պետությունը ազգի զարգացումն ու աճը ապահովելու գործիքից դառնում է արգելակող ինֆրակառուցվածք:

Պետական շինարարության բնագավառում ժամանակի մարտահրավերը կարելի է ձևակերպել այսպես. Ռուսաստանը ողջամիտ ժամկետում պետք է այնպես վերակառուցի իր պետականու-

թյունը, որպեսզի ի զորու լինի պաշտպանվել դրսի իրական և պոտենցիալ սպառնալիքներից, ապահովի անվտանգությունն ու տարածքային ամբողջականությունը: Բայց և նույնքան արդյունավետորեն մրցակցի համաշխարհայնացվող տնտեսության շրջանակներում, պահպանի խուսանավելու անհրաժեշտ ազատությունը (տնտեսական ու քաղաքական), երկրի ներսում խթանի տնտեսական ու հասարակական նախաձեռնությունը:

Այս ամենի համար Ռուսաստանում չեն բավարարում ո՛չ ժամանակը, ո՛չ էլ ռեսուրսները: Նշանակում է՝ պետական շինարարության ավանդական ուղիներն իրենց աստիճանականությամբ, ժամանակառեսուրսային տարողությամբ չեն թեթևացնի, այլ ավելի շուտ կարող են բարդացնել Ռուսաստանի առջև ծառացած խնդիրների լուծումը: Հարկ է դիմել ոչ ավանդական, ինչ-որ չափով նորարարական և վիճելի մոտեցումների ու լուծումների:

Արդի աշխարհում յուրաքանչյուր պետություն աստիճանաբար և օբյեկտիվորեն «ներգրավվում է» իրավական ու վարչական գլոբալ կապերի ու հարաբերությունների առավել բարդ համակարգի մեջ: Ելքը մեկն է՝ պետությունը ինքը պետք է վերափոխվի կորպորացիայի նմանությամբ, որն ի թիվս այլոց, ունի նաև անդրազգային հնարավորություններ: Եվ պետք է պատրաստվել երկարատև նպատակասլաց պայքարի ողջ աշխարհում ճանաչելու պետության՝ ազատ շուկայի մյուս մասնակիցների հետ տնտեսական ազատությունից հավասարապես օգտվելու իրավունքը:

Եթե հնարավոր են կորպորացիաներ՝ բաժնետիրական ընկերություններ միլիոնավոր շարքային բաժնետերերով (իսկ այդպիսի ընկերությունները վաղուց արդեն գործում են), ապա ինչու՞ չեն կարող բաժնետերեր լինել տասնյակ միլիոնավորները: Եթե գոյություն ունեն և գործում են, օգտվելով բոլոր օրինական իրավունքներով տարբաժանված կորպորացիոն միավորումներ՝ միաժամանակ տնտեսության մի քանի և անգամ բազմաթիվ ճյուղերում, ապա ինչու՞ է ապօրինի պետությունը իբրև կորպորացիա՝ «տարածք-բնակչություն» միասնական համակարգը կառավարելու առումով:

Խոսքը պետության և նրա գործունեության փիլիսոփայության ըմբռնման մեջ էական շտկումներ մտցնելու մասին է: Պատմականորեն պետությունը եղել է ուժային ռազմառստիկանական մեքենա՝ կոչված պահպանելու էքնոսի և տարածքի միասնությունը դրսի, իսկ հետագայում՝ ներսի սպառնալիքներից: Իբրև այդպիսին նա ամենից առաջ ստեղծել է ուժային ապարատ, բնակչությունից գանձվող հարկերի տեսքով նրա համար հավաքելով միջոցներ: Այսպիսի դերը և գործառույթները օբյեկտիվորեն անհրաժեշտ էին ու անխուսափելի: Սակայն երկար հարյուրամյակների ընթացքում դրանք խեղաթյուրեցին պետությունը, չվարժեցրին նրան ըստ պատշաճի հաշվել, իսկ գլխավորը՝ փող աշխատել և հոգալ դրա սոցիալապես ու ռազմավարորեն արդյունավետ օգտագործելու համար: Ընդսմին, գլոբալ աշխարհի մրցակցության (հատկապես տնտեսական) լարված պայքարում վճռորոշ են դառնում պետության հենց այդ հատկանիշները:

Սակայն սրանով պետության նոր դերի պատկերացումներն արդի աշխարհում չեն սպառվում: Այո, մի կողմից պետությունը՝ ձգտելով համապատասխանել համաշխարհայնացման տրամաբանությանը, նախ իբրև տնտեսական համաշխարհայնացում, հետզհետե ձեռք է բերում տնտեսական կողմնորոշում, վեր է ածվում պետություն-կորպորացիայի, որը մրցակցում է անդրազգային կորպորացիաների հետ և հանդիսանում է քաղաքացիների շահերի պաշտպանը գլոբալ տնտեսության մեջ: Միաժամանակ այն չափով, որքանով նոր ժամանակաշրջանը հետարդյունաբերական բնույթ է կրում, այսինքն՝ գիտելիքների էկոնոմիկայով, մարդկային կապիտալի էկոնոմիկայով, պետական քաղաքականության մեջ բնականորեն աճում է, այսպես կոչված, հասարակական ծառայությունների սեկտորի նշանակությունը, ինչը ձևավորում է «սոցիալական պետության» կամ համընդհանուր բարեկեցության պետության հայեցակարգը:

Գլոբալ աշխարհում առաջ են մղվում նրանք, ովքեր ունեն զարգացած գիտություն, կրթություն, տնտեսություն: Առջևում դիմանում են սոցիալապես ամենակայունները, իսկ հասարակության

կայունությունը կախված է ուժեղների շահագրգռության և թույլերի աջակցության համակարգի զարգացածությունից: Հենց այս ճանապարհին հարկավոր է տեղակայել պետական քաղաքականության գերակայությունները, իբրև նրա հիմնական առանցք դիտարկելով սոցիալապես ուժեղ պետության սկզբունքը: Ի դեպ, այս հասկացությունը բնավ էլ չի հանգում սոսկ չքավորների լրավճարի քաղաքականությանը, նվազագույն զամբյուղի պետական երաշխիքների ստեղծմանը: Սոցիալական պետությունը համընդհանուր բարեկեցության պետություն է, և հենց յուրաքանչյուր մարդու և ամեն տարածաշրջանի համար իր ներուժը իրացնելու, արժանապատիվ ու լիարժեք կյանք ապահովելու հնարավորությունների ստեղծման մեջ է քաղաքականության իմաստը:

Ի վերջո, մեր պետությունը պետք է սովորի պաշտպանել իր քաղաքացիների շահերը: Եվ ոչ թե վերացականորեն, այլ դրանց ոտնահարման ամեն կոնկրետ դեպքում՝ հրապարակավ և խստորեն: Քաղաքացիների պաշտպանությունը, մարդու պաշտպանությունը՝ իբրև հետարդյունաբերական դարաշրջանի գլխավոր «կապիտալի» պաշտպանություն, գրեթե վեր է ածվում պետական հիմնական գործառույթի:

Սակայն պետության էվոլյուցիայի նման տրամաբանությունը հակասում է նրա տնտեսականացմանը և այս իմաստով նոր ազատական տնտեսական ուսմունքի որդեգրմանը, որը նշանակում է պետական ծախսերի, հարկային բեռի, սոցիալական պարտավորությունների կրճատում և պետության սեփական տնտեսական արդյունավետության բարձրացում՝ բիզնես-սուբյեկտի հանգույն:

Պետական իշխանության, ազգային վերնախավի կարողությունը՝ գտնել պետության զարգացման մեջ տվյալ միտումների և պահանջմունքների լավագույն հաշվեկշիռը, այդպիսով վեր է ածվում վերջինիս արդյունավետության գլխավոր չափանիշի: Այլ կերպ ասած, հենց այդտեղ է այն հարցի գլխավոր պատասխանը, թե արդյո՞ք պետությունն ապագա ունի: Եթե պետությունը չի կարող սովորել կամ չի ցանկանում վերափոխվել, եթե նա ի վիճակի չէ համապատասխանել ժամանակի պահանջներին, ապա տնտեսա-

կան ու սոցիալական անգործունակությունն ընդամենը պարտություն չէ մյուս մրցակիցների նկատմամբ: Չի բացառվում նաև սեփական բնակչության կողմից այդպիսի պետության օրինական մերժումը: Իսկ նման մերժումը, եթե երբևէ ծագի, իրենց շահերի համար կարող են հեշտ ու հասարակ օգտագործել արտաքին ուժերը: Եթե պետությունն այս ամենն ի զորու չէ անելու կամ, վատագույն դեպքում, չի ցանկանում և չի կարող իրականացնել, նա դառնում է սեփական հասարակության անվտանգության մեծագույն սպառնալիքը:

Երբ բնակչության կյանքի բարձր չափանիշների նվաճումը և յուրաքանչյուր քաղաքացու շահերի պաշտպանությունը կընկալվեն իբրև պետական քաղաքականության գլխավոր նպատակ, միայն այդ դեպքում կապահովվի սոցիալ-տնտեսական զարգացումը, իսկ Ռուսաստանը կդառնա համընդհանուր բարեկեցության հասարակություն:

7.3 Ինքնիշխանությունը Նոր աշխարհում

Ապագա աշխարհում հաջողության ամենագլխավոր պայմաններից մեկը սեփական խելքով ապրելու ունակությունն է: Պետության վրա տարածելով՝ սա նրա ինտելեկտուալ ինքնիշխանության հիմնախնդիրն է:

Ըստ էության, այստեղ սկզբունքորեն նոր բան չկա: Նորն այն է, որ պատմության մեջ պետության հանդեպ առաջին անգամ է ծագում «սեփական խելքով ապրելու» խնդիրը: Նորն այն է, որ գլոբալ աշխարհի պայմաններում այն ոչ թե սոսկ բարի ցանկություն է, այլ համառ ու հրատապ անհրաժեշտություն: Արդի աշխարհում անհնար է լուրջ հաջողությունների հասնել, հաղթել մրցակցային պայքարում, եթե չլարես միտքդ՝ ամենալայն իմաստով, բազմակողմանի և հնարավորինս լիակատար տեղեկատվության վրա՝ բեկված գիտության վերջին նվաճումների միջով:

Նորն այն է, որ այդ որակապես նոր խնդիրը վերաճում է պե-

տության ինտելեկտուալ ինքնիշխանության պահանջի. ոչ թե առանձին անձանց ունակությունները, այլ ժամանակի մտքի ամենաառաջավոր մակարդակով պետության ռազմավարությունը որոշող կառույցների ամենօրյա, տքնաջան աշխատանքը: Նորը նաև այն է, որ եթե անհատի բանականությունը նախ և առաջ կախված է նրա անձնական ընդունակություններից, ապա պետության ինտելեկտուալ ինքնիշխանությունը ապահովվում է ժամանակի տևական հեռանկարում, միջոցների այնպիսի բարդ համալիրով, որը ներառում է անընդհատ կրթությունը, բոլոր մակարդակների գիտությունը, կապի, տեղեկատվության կուտակման, մշակման և պահպանման ժամանակակից ցանցերի առկայությունը, ինչպես նաև կադրային յուրահատուկ քաղաքականությունը:

Ռուսաստանի դժբախտությունն այն է, որ տարբեր պատճառներով երբեմն աղքատության պատճառով, XX դարում՝ գաղափարախոսական սահմանափակումների թելադրանքով իբրև պետություն վերջին մի քանի հարյուրամյակների ընթացքում նա չի կատարել այդ պայմանները: Ռուսաստանում միշտ եղել են, այսօր էլ կան լուսավոր մտածողներ, Աստծո օրհնությամբ, կլինեն և վաղը: Բայց պետությունը լավագույնս չի օգտագործել նրանց, հաճախ հարկադրելով տարագրության կամ անգործության և լռության:

Սակայն փաստ է, որ արդյունաբերական, առավել ևս գիտատեխնիկական և տեղեկատվական հեղափոխության հիմքում ամենից առաջ ընկած են մարդկային մտքի նվաճումները: Եվ եթե արդի աշխարհում պետության ներուժն ու դերը որոշվում են նրա տնտեսության, գիտության ու տեխնիկայի, ֆինանսների, կրթության ու մշակույթի, պաշտպանունակության ու կյանքի որակի բարդ համակցության զորությամբ, նշանակում է՝ այդ ներուժի, աշխարհում երկրի տեղի ու դերի նախահիմքում ընկած են այն մտքի մասշտաբներն ու որակը, որ հասարակությունը և պետությունը կարողացել են ծառայեցնել իրենց շահերին ու նպատակներին:

Նոոսֆերան, որը ժամանակին կռահել էր Վերնադսկին, աննկատելիորեն դարձավ իրողություն: Կարելի է հետևել նրա էվոլյուցիային, կարելի է բուռն կամ մեղմ զայրույթով դիմադրել, բայց և

կարելի է մասնակցել նրա հետագա զարգացմանը: Հավանաբար, միայն վերջին դեպքում է հնարավոր օրինաչափորեն խոսել ինտելեկտուալ ինքնիշխանության և հարաբերաբար՝ նրա առկայության չափի մասին:

Առավել զարգացած երկրները պատմականորեն ու տարերայնորեն դարձել են այն, ինչպիսին կան: Բայց այսօր չի կարելի հույսը դնել Պատմության ընթացքի վրա, հնարավոր է՝ այլ տեղ ափ հանի: Պետք է ստեղծանել, բայց ավելի խոր ըմբռնումով, թե որտեղ փնտրենք գործնական լուծումները, որտեղ՝ սոսկ մեր իղձերն ու պատրանքները:

Այս ենթատեքստում ծառանում է ռազմավարական պլանավորման սուբյեկտի կառույցականության խնդիրը: Ժամանակակից հասարակությանն անհրաժեշտ են այնպիսի հաստատություններ, որոնք «կմտահոգվեն» երկրի հեռանկարներով՝ առաջիկա 20-50 տարվա կտրվածքով:

Կազմակերպական ձևերը, հավանորեն, պետք է համապատասխանեն հասարակության բարդություններին: Ավելի շուտ այդպիսի հաստատությունների շարքում պետք է լինի «ռազմավարական հեռանկարների պետական կենտրոն», կամ ինչ-որ նման բան, որը կգործի ինքնավար կերպով, երկրի նախագահից և կառավարությունից անկախ (ինչպես ներկայումս՝ Ռուսաստանի բանկը): Նրա հետ համագործակցելով, բայց նրանից անկախ, համանման մի այլ կենտրոն կարող է գործել նաև ակադեմիական համակարգում՝ միավորելով Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի և համալսարանների ջանքերը: Այս բնույթի կենտրոնը կարող է հիմնվել քաղաքացիական հասարակության շրջանակներում: Հասկանալի է՝ նրանց «արտադրանքը» կլինի ոչ թե հրահանգներ, այլ որոշակի իմաստավորված հայացք՝ երկրի հեռանկարային խնդիրներին և հնարավորություններին, որը հետագայում կդրվի հասարակության ու մասնագետների քննարկմանը՝ հասարակության փափագած զարգացման գերակայությունները ճշտելու նպատակով:

Նմանօրինակ արտապետական հաստատությունները (այս-

տեղ իմաստը բուն գաղափարի մեջ է, և ոչ թե անվանման կամ կազմակերպական առաջարկների), արդյունավետ են միայն «պետական միջամտության» համակարգի առկայությամբ, հուսալի և ժամանակին գործող աղբյուրների սկզբնական տեղեկատվությամբ և նրա մշակման, պահպանման ու սպառողներին մատուցելու համակարգով:

Այսօրվա տեղեկատվության անհուսալիությունը, հաճախ նրա անմատչելիությունը ոչ միայն մասնագետներին, այլև պետական կառույցներին, միաժամանակ տարատեսակ «արտահոսքերի» չափազանց մեծ վտանգը, առկա տեղեկատվության չարտոնված և անգամ չարակամ գործածությունը ախտեր են, որ անհամատեղելի են երկրի ինտելեկտուալ ինքնիշխանության ապահովման հետ: Պետք է հուսանք, որ այս հիվանդությունները Ռուսաստանում ենթակա են բուժման:

Երևի թե ամենաբարդ խնդիրը հայրենական մտքի պահանջարկի և արդյունավետ օգտագործման պետական ու հասարակական համակարգի ստեղծումն ու կարգավորումն է: Ժողովրդավարությունն առանց մտքի՝ ինքնադատաստան է և ամբոխավարություն, ամբոխի կույր ընկրկում: Քաղաքականությունն առանց մտքի՝ անբարո և վտանգավոր ավանտյուրիզմ է:

Ինտելեկտուալ ինքնիշխանության հաստատման համար սպասվում է նույնպիսի դաժան ու տևական պայքար, ինչպես ժամանակին պայքարում էին հանուն քաղաքական ինքնիշխանության: Այն ցանկացած և ամեն տեսակի մրցակցության նախահիմքն է: Հեղինակային իրավունքների պաշտպանությունը թելադրված է ոչ միայն գյուտարարների և նախագծողների՝ իրենց հայտնագործության համար հնարավոր առավելագույն պարգևավճար ստանալու ձգտումով: Եթե այդպես լիներ, հանուն իրավունքի պաշտպանության նման թափով ոտքի չէր կանգնի առավել զարգացած երկրների պետական մեքենան: Հեղինակային իրավունքների պաշտպանությունը, իրականում, ստեղծում է ծայրահեղ դժվար հաղթահարելի պատնեշներ՝ դուրս գալու տեխնոլոգիաների, սոցիալ-քաղաքական գաղափարների հոգևոր «արտադրանքի»

համաշխարհային գիտական շուկա, դրանց հնարավոր արտադրության նոր կենտրոններից:

Ինտելեկտուալ ինքնիշխանությունը նաև ունակություն է՝ հստակ ու ազնվորեն ինքներս մեզ պատասխան տալու՝ ովքե՞ր ենք մենք և ի՞նչ ենք ուզում հարցին: Արևմուտքն այնքան խստորեն է պարտադրում կրթության իր չափանիշները, աշխարհի իր տեսլականը, իր դասագրքերը նաև այն պատճառով, որ հասկանում է. այդ չափանիշներն ընդունողները փաստորեն (գիտակցաբար, թե ոչ) անխուսափելիորեն տրվելու են արևմտյան մտքի հորձանքին: Եվ դրանով իսկ կդատապարտվեն հավիտենական հետամնացության, ինտելեկտուալ, ընդսմին՝ նաև տնտեսական և քաղաքական կախվածության: «Ապրել սեփական խելքով» կարգախոսը շուտով համարժեք կլինի «պարզապես ապրել» հասկացությանը:

7.4 Զարգացման սուբյեկտի փնտրտուքներում

Ժամանակակից Ռուսաստանի զարգացման խնդիրների մեծ մասի լուծումը կախված է այն բանից, թե ո՞վ կստանձնի այդ ծանր բեռը: Կարելի՞ է, արդյոք, այսօր ի դեմս Ռուսաստանի տեսնել նոր արդիականացման սուբյեկտի՝ կոչված ավարտելու երկրի արդյունաբերական զարգացումը, հասցնելու նրան թեկուզև նոր դարաշրջանի շեմը և ստեղծելու հետարդյունաբերության նոր ներուժ՝ Նոր աշխարհ մուտք գործելու համար:

Ռուսաստանն անցել է արդյունաբերացման փուլը, բայց այն խարսխված էր պետական ավտորիտար ազդակի վրա և այդ իմաստով օբյեկտիվորեն հայտնվեց փակուղային վիճակում՝ նոր արդիականացման խնդիրների լույսով: Այսօր միայն պետության ջանքերը, պետական կամքի և քաղաքականության ջանքերը բացարձակորեն չեն բավականացնի դուրս գալ զարգացման նոր սահմաններ: Միայն նոր արտադրական էթիկայի և կուլտուրայի վրա հիմնված հասարակական լայն արդիականացումն ունի հաջողության երաշխիք:

Այսօր մենք որոշակիորեն կանգնած ենք հետտնտեսական զարգացման անցման շեմին, նկատի ունենալով նախ և առաջ արդի աշխարհի զարգացման փակուղիները՝ կապված տնտեսվարման տիրապետող եղանակի հետ, և հետարդյունաբերության տնտեսության ծածուկ, թեկուզև այսօր խեղաթյուրված կերպով իրացվող հնարավորությունները՝ իբրև ոչ միայն գիտելիքների էկոնոմիկա, այլև ինտելեկտի, ստեղծագործության արտադրություն:

Բայց եթե արդի աշխարհում զարգացման հիմքը ապահովում են գիտելիքները, ինտելեկտը և դրանց ստեղծած նոր հնարավորությունները, ապա ակնհայտ է, որ զարգացման հիմքը առավել շահեկան ներդրումներով դառնում է մարդ-արարածի, Ռուսաստանի մարդկային ներուժի զարգացմանն ուղղված ներդրումը:

Զարգացման հիմնական ռեսուրսն ու կապիտալը դառնում է ստեղծագործ մարդու, Նոր աշխարհի մարդու «արտադրությունը»: Առավել հաջողության կհասնեն նրանք, ովքեր կըմբռնեն մարդկային ստեղծագործական կապիտալի զարգացման գերակայությունը և այդ ճանապարհին առաջնությունը կտան հետտնտեսական ապագային:

Սակայն եթե մենք խոսում ենք մարդկային կապիտալի մասին, մարդու զարգացման մասին իբրև ապագայի հիմնական ներուժի, ապա անպայման պարտավոր ենք այլ հայացքով գնահատել մի ամբողջ շարք հիմնահարցեր, որոնք Ռուսաստանի հեռանկարների և խնդիրների տեսանկյունից այսօր քննարկվում են հիմնականում ձևականորեն, իներցիայի ուժով, բացահայտ հնացած մոտեցումներով:

Եթե փորձենք իրավիճակը քննարկել ապագայի դիրքերից կամ թեկուզ հենվելով ապագայի կերպարի վրա՝ փորձենք զարգացումը ղեկավարել, ապա կտեսնենք, որ ժողովրդական, կրթական, գիտական, միգրացիոն քաղաքականությունը առողջապահության ոլորտում ձեռք է բերում միանգամայն այլ իմաստ և հնչեղություն:

Իսկական տագնապ է հարուցում նույնիսկ ոչ թե սոցիալական քաղաքականության բացահայտ ցուցադրականությունը, այլ ապագա աշխարհում մարդկային ներուժի նշանակալիության բա-

ցահայտ անընմբռնողությունը: Սոցիալական քաղաքականությունը մրցունակ հասարակության գրավականն ու արտացոլքն է: Ժամանակակից հասարակությունը չի կարող զարգանալ սոսկ տնտեսական չափումներով, սոցիալական մասշտաբային հագեցվածությունը դառնում է գոյատևման նախապայմանն ու միջոցը:

Ժամանակակից հասարակությունում առողջապահությունը, կրթությունը, գիտությունը տնտեսական զարգացման խնդիրների վրա անհաճո հավելում չեն, ոչ էլ այն հարկադիր գինը, որը հասարակությունը ստիպված է վճարել սեփական գրպանից: Դա արդյունավետ առաջընթացի պայման է, փոփոխությունների շարժիչ, բարոյական առողջության երաշխիք, հույսն այն բանի, որ Ռուսաստանը XXI դարի աշխարհում կգրավի արժանավոր տեղ:

Իր յուրահատուկ կողմնորոշումից արդյունաբերական քաղաքակրթության վազքը դեպի բնական ռեսուրսների առավելագույն օգտագործում՝ տագնապալի խզում առաջացրեց հասարակության և բնության միջև: «Բնության արտադրողական ուժը» իբրև հետարդյունաբերական քաղաքակրթության ներուժ հետզհետե ավելի ու ավելի է կորցնում իր ճկունությունը: Ու թեև գիտատեխնիկական հեղափոխության ընթացքում ռեսուրսատար արտադրությունը անշեղորեն կրճատվում է, մոլորակի բնական պաշարների սահմանափակությունն անխուսափելիորեն ստիպում է անցնել տնտեսական ինչ-որ նոր մոդելների, համակեցության նոր ձևերի, հոգևոր-բարոյական նոր դրույթի, որը հնարավորություն կընձեռի թուլացնել ճնշումը կենսոլորտի վրա «սպառողների քաղաքակրթության» կողմից:

Մեր երկիրը նոր ժամանակների մակարդակին կհասնի լոկ այն դեպքում, եթե հասարակության մեջ իշխանական կառույցներում իրենց դարը կապրեն հասարակության, մշակույթի, գիտության, կրթության, առողջության մասին պատկերացումները, իբրև ինչ-որ երկրորդական բնույթի երևույթներ, որոնք առայժմ կարելի է հետաձգել մնացած սուր խնդիրների ճնշման տակ: Նրանք ձրիակերներ չեն ուրիշի տանը: Հեռանկարում միայն նրանք կարող են լինել զարգացման շարժիչ, հաղորդել նրան ճշմարիտ իմաստավորում և նպատակասլացություն:

Համաշխարհային շուկաներում, ամենից առաջ գիտատար արտադրանքի շուկաներում մրցակցության սրումը, տեխնոլոգիայի անընդմեջ հերթափոխում ստիպում են քիչ թե շատ զարգացած բոլոր երկրների քաղաքական ու տնտեսական վերնախավերին անշեղորեն բարձրացնել գիտական հետազոտությունների և մշակումների ծախսերը: Գիտության ոլորտի ներդրումները դառնում են կապիտալի ամենաշահութաբեր տեղակայումներից մեկը: Զարգացած երկրների մեծամասնության ազգային հեռանկարային ծրագրերն արդեն մի քանի տասնամյակների ընթացքում բացարձակապես հետևողական են իրենց գլխավոր գերակայությունների մեջ՝ պահպանել հիմնարար գիտությունների ծախսերը և մեծացնել կիրառական հետազոտությունների բյուրգերային հավելավճարները:

Համաշխարհային շուկայի մրցակցության մեջ ներառված Ռուսաստանի՝ իբրև պետության, ճակատագիրը մեծապես, եթե ոչ ամբողջովին, կախված է նրա գիտական ներուժի հեռանկարներից: Այժմյան առևտրավաշխառուական և գավառական լճացած տնտեսական քաղաքականությունը դեռևս մի հիսուն տարի «ռեսուրսներ կհայթայթի» գիտության ոլորտում համարժեք ներդրումներ կատարելու համար: Բայց արտերկիր «ուղեղների արտահոսքի» հարցն արդեն այսօր թևակոխել է ազգային անվտանգության հարթություն: Գիտական շատ դպրոցներ քայքայման եզրին են: Հատկապես արագ է ընթանում տեխնիկական գիտությունների կադրերի ծերացումը:

Գիտական ոլորտի վիճակն ու խնդիրները անքակտելի են կրթության բնագավառի քաղաքականությունից: Երեսուն տարի առաջ Եվրոպայում ծագեց «մարդկային կապիտալի» տեսությունը՝ հիմնված Արևմտյան Գերմանիայի հետպատերազմյան վերականգնման արդյունքների վրա: Գերմանիայի գիտնականներն իրականացրին իրենց էությամբ ցնցող հաշվարկներ, արտադրական ներուժի լիակատար կործանման պայմաններում, բայց կրթության, դպրոցական և համալսարանական կադրերի համակարգի պահպանման դեպքում երկիրը չորս անգամ ավելի մեծ հնարավորություն ունի հաղթահարելու ավերմունքը, քան հակառակ դեպքում: Ահա ինչու նույն այդ Գերմանիայում էլ ուղղություն վերցրեց

բանվորական ուժի որակի բարձրացումը՝ կրթական արդյունավետ քաղաքականության միջոցով:

Ահա ինչու, եթե ապագան ամենից առաջ գիտելիքի հասարակությունն է, նոր մարդու հասարակությունը, ապա մեզ իսկապես հարկավոր է լուսավորության նոր դարաշրջան, գիտության, կրթության, սոցիալական բնագավառի վերածնունդ, որպեսզի կարողանանք պահպանել ինքներս մեզ:

Երբ խոսքը Ռուսաստանի արդիականացման մասին է, ապա անհրաժեշտ է հիշել, որ մենք չենք կարող լուծել վերարտադրության հարցը այս կամ այն տնտեսական մոդելով և նրա պարամետրերով, չլուծելով ևս մեկ՝ սոցիալական կառուցվածքի համարժեքի խնդիրը: Արդիականացումը պահանջում է կա՛մ արևմտյան սոցիալական ինովացիոն կառուցվածք, կա՛մ այլ կառուցվածք, որը կհամապատասխանի հետարդյունաբերության պահանջներին: Հարցն այն է՝ արդյոք, չունե՞նք նման սոցիալական կառուցվածք, արդյոք, այն ներառու՞մ է բնակչության բոլոր խավերը, հասարակության կառուցվածքի բոլոր ասպեկտները, թե՞ մենք ունենք սոսկ սպառողական կուլտուրայի մակերեսային մակարդակ և, այսպես կոչված, հարմարվողների նեղ դաս:

Ամենուր, որտեղ զարգացումը տեղ ուներ, նրան շարժում էին իր ժամանակի մեջ վեր բարձրացող միջին շերտերը: Հենց նրանք էին տալիս զարգացման հնարավոր ստեղծագործական միտքը, աշխատանքի բոլոր տեսակները և ամբողջությամբ աճող սպառողական շուկան: Չլինի այդպիսի դասակարգ Ռուսաստանում, չի լինի և զարգացում, կամ այն կունենա միակողմանի և չափազանց սահմանափակ կերպարանք իր ժամանակի մեջ:

Մեր կորուստն այն է, որ ինովացիոն քաղաքակրթությունը մեզանում համարվում է փոքրամասնության քաղաքակրթություն, արևմտամետ շերտերի քաղաքակրթություն, - հիմնականում «միջին դասի», որը վաստակում է իր աշխատանքով, այն ժամանակ, երբ խոշոր կապիտալը մնում է առավելապես անաշխատ իր ծագումով: Անհնար է միաժամանակ լուծել տնտեսության կազմավորման և աղքատության ու չքավորության պայմաններում հասարակու-

թյան նոր դարաշրջանի մեկ քառորդ բնակչության և կիսաաղքատների հարցերը՝ երկրի քաղաքացիների մեծամասնության «գոյատևմամբ», «բնակչության» և «վերնախավի» շերտավորման սոցիալ-տնտեսական ֆանտաստիկ հենքի վրա, որը տառապում է սպառողական էքսգիբիցիոնալիզմով: Վերարտադրելով զարգացման նման տրամաբանությունը, մենք վտանգավոր լարվածություն ենք ստեղծում ռուսական հասարակության ներսում, քանի որ բնակչության հետարդյունաբերական խմբերի և նրա հիմնական զանգվածի՝ գույքային և այլ հակասությունները, ստիպված լինելով լուծել հիմնականում գոյատևման հարցերը, կլինեն անչափ լուրջ և կստեղծեն պոտենցիալ լարվածություն, համադրելի այն բանի հետ, որը հարյուրամյակներ առաջ կործանեց արդիականացող Ռուսական կայսրությունը:

Այսօր անհրաժեշտ է իրականացնել գլխավոր բարենորոգումը, բարենորոգում մարդկանց և նրանց հետաքրքրությունների նկատմամբ: Մեզ այսօր անհրաժեշտ է աշխատավարձի և եկամուտների քաղաքականության «բարենորոգում» ամբողջությամբ: Աշխատանքի թերագնահատումը երկրի զարգացման հիմնարար խոչընդոտներից է: Վերջին հաշվով խոսքը մեր զարգացման սկզբունքորեն այլ փիլիսոփայության մասին է, որը վերջապես պետք է պետության սոցիալ-տնտեսական քաղաքականությունը գլխիվայր շրջի, մակրոտնտեսական տեսիլքներից վերադարձնի մարդկային կյանքի իրականության ամուր հողի վրա:

Այսօր մեր հասարակության բարեփոխման ռազմավարությունը հիմնականում խարսխված է հենց վերևից անցկացվող բարեփոխումների վրա՝ իշխանության և վերնախավի նեղ շերտի սատարումով և փորձելով բարեփոխումների մեջ ներգրավել որոշակի սոցիալական խմբեր, որոնք պետք է դրանց համար ապահովեն հասարակական աջակցություն: Սակայն օրվա հրամայականն այն է, որ այդ խնդրի լուծման գործում չափազանց դժվար է հույսը դնել թե՛ ժողովրդի, թե՛ վերնախավի վրա: Իշխանության և հասարակության օտարումը հասել է վտանգավոր սահմանագծի, երբ բնակչության հիմնական մասը շարունակում է լուծել բացառապես գոյատևման

խնդիրներ, կազմակերպում է իր կյանքը բացառապես առօրյա մակարդակներում և իշխանությանը հասցեագրում է հիմքով տիպային հարցում՝ սոցիալական երաշխիքների և նվազագույն զամբյուղի ապահովման համար:

Այս պայմաններում պետությունը գործնականում չի տիրապետում զանգվածային համախմբան ներուժին՝ երկրի զարգացման ռազմավարական խնդիրների լուծման համար, եթե նկատի չառնենք բացահայտ ուժային մեխանիզմները (որոնք, ի տարբերություն արդյունաբերական արդիականացման խնդիրների, ընդհանրապես արդյունավետ չեն հետարդյունաբերական արդիականացման մարտահրավերներին դեմ-հանդիման): Միաժամանակ ակնհայտ է կառավարող վերնախավի խզումը հասարակությունից, որի որակը, այդուհանդերձ, թույլ չի տալիս կոնվերսիայի ենթարկել իշխանության առաջ քաշված գաղափարների ու անհրաժեշտ նպատակների հասկացության գոյությունը և կոնկրետ իրականացվող որոշումների ու գործողությունների ծրագրի խնդիրները:

Չնայած տնտեսությունը բավական անկայուն կացության մեջ է, իսկ իրավիճակն աշխարհում հետզհետե վտանգավոր է դառնում, այսպես կոչված վերնախավը շարունակում է զբաղվել բացառապես իրենով, կլանային և խմբակային շահերի իրականացմամբ: Պետական հաստատությունները շարունակում են օգտագործվել քաղաքական և օլիգարխային առանձին խմբակցությունների շահադիտական հետաքրքրությունների նպատակով: Պետության ամրապնդման քաղաքականությունն այդ պայմաններում վեր է ածվում իր իսկ հակադրությանը, դառնալով լոկ հարմար ու ապահով քողածածկույթ՝ մութ գործերի համար:

Բյուրոկրատական անվերջանալի «քաղաքական գործընթացը» ռուսական քաղաքականության մեջ փոխարինում է գլխավորին՝ քաղաքական պայքար զարգացման կողմնորոշիչների մշակման շուրջ, հանուն համազգային զարգացման նպատակների՝ ազգային ռեսուրսների վերաբաշխման հարցերի լուծման շուրջ: Մեր քաղաքական և տնտեսական վերնախավի յուրահատուկ մտածողությունը ապագային հառվելու կամքի բացակայությունն է: Ցան-

կացած հեռանկարային պլանավորում սահմանափակվում է 3-4 տարի ժամկետով: Այդ հանգամանքն առանձնացնում է ռուսական վերնախավին աշխարհի այլ առաջատար երկրների համազոր շերտերից ու խմբերից, դարձնելով նրան ոչ միայն անմրցունակ, այլև անգործունակ:

Ի դեպ, մեր իշխող վերնախավը մինչ այժմ չի կարողանում վստահությամբ նայել ապագային ոչ միայն այն պատճառով, որ նա թվում է անմրցունակ գլոբալ առումով, այլ որ լուրջ խնդիրներ են ծագում՝ կապված նրա միջազգային լեգիտիմության հետ: Կարևոր հիմնահարց է, որ սեփական կարգավիճակի կապիտալի և սեփականության լեգիտիմացման և օրինականացման հենքի վրա նմանօրինակ միջազգային սահմանադրումը, մեղմ ասած, ակնբախ չէ: Ռուսական վերնախավը երաշխավորված չէ այնպիսի իրավիճակներից, երբ նրա կարգավիճակն ու օրինականությունը ենթարկվեն համաշխարհային հասարակական կարծիքի ճնշմանը և այլ պետությունների պաշտոնական կառույցների առարկություններին: Այս խնդիրներն առաջին հերթին կապված են ռուսական պետական համակարգի կառույցականացված կոռուպցիայի, իշխանության ու սեփականության սերտաճման բարձր մակարդակների հետ, վերնախավի ու կազմակերպված հանցագործության փոխկապակցվածության հետ:

Այս պայմաններում արդիականացումը սպառնում է վերածվել սոսկ ընդամենը կայունացման՝ համակարգի լճացման և վատթարացման հեռանկարով՝ պատմականորեն շատ մոտ ապագայում: Այս վտանգն այսօր զգացվում է ավելի ու ավելի սուր, քանի որ արագացված տեմպերով կազմավորվում է բավական բնորոշ և պատմականորեն առավել վտանգավոր իրավիճակ պետության համար՝ ագրեսիվորեն իրենց դիրքերի պաշտպանությանն ուղղված վերնախավի կոլեկտիվ շահերի համընկնումով:

Այս իրավիճակի տրամաբանական զարգացումը հանդիսանում է բյուրոկրատիայի և վերնախավի հիմնական մասի կոլեկտիվ շահերի ձևավորումը՝ կապված սեփականության և իշխանության ամրագրման, փակ իշխանական դասի վերածվելու հետ, հնարավո-

րինս ներգծված համաշխարհային վերնախավի մեջ և վերջինիս կողմից լեգիտիմացված:

Հենց այդ պատճառով այսօր պետական շինարարության մեջ կարևոր դեր ունի վերնախավի հավատարմության խնդիրը: Ոչ նեղ իմաստով, որով առավել հաճախ տոչորվում են քաղաքական տեխնոլոգները (աջակցու՞մ է տվյալ օլիգարխը նախագահին, թե՞ ոչ) և աջ ու ձախ քննարկում են արմատականները՝ վաճառու՞մ են վերնախավերը հայրենիքը, թե՞ ոչ, այլ վերնախավերի կողմնորոշման իմաստով՝ իր և իր գործի նույնականացումը երկրի, նրան ծառայելու հետ՝ հանուն նրա շահերի և նպատակների երկարաժամկետ վերընթաց զարգացման:

Պետական իշխանության խնդիրն է՝ այնպես անել, որպեսզի ցանկացած ռուս գործարար, իշխանության ցանկացած ներկայացուցիչ հասկանա, թե յուրաքանչյուր տվյալ փուլում ինչ է անհրաժեշտ երկրի զարգացման համար իրական աշխարհի պայմաններում, ինչպիսին կլինի գալիք տասնամյակներում:

Վերջերս «Հասարակական կարծիք» հիմնադրամը ռուսաստանցիների շրջանում անցկացրեց հարցում՝ փորձելով ճևակերպել, թե ի՛նչ է նրանց համար պետությունը: Այսպես, հարցվողների 40 տոկոսի համար պետությունը ժողովուրդն է, 30 տոկոսի համար այդ հասկացությունը զուգորդվում է երկրի հետ, և միայն 20 տոկոսի համար պետությունը համարժեք է իշխանությանը: Նման տվյալների դեպքում քաղաքականության մեջ գործածական այնպիսի առօրյա արտահայտություններ, ինչպես՝ «Պետությունը պետք է ուժեղ լինի», միանգամայն այլ իմաստ են ձեռք բերում:

8 Ռուսաստանի ռազմավարությունը Նոր աշխարհի համար

Սևեռվելով մեր ներքին զարգացման, արդիականացման խնդիրների վրա, մենք, իհարկե, չենք կարող շեղվել-հեռանալ արտաքին հիմնահարցերից: Համաշխարհայնացման արդի գործընթացի գլխավոր հետևանքներից մեկն այն է, որ աստիճանաբար ջնջվում

է զարգացման արտաքին քաղաքական և ներքին հիմնահարցերի միջև եղած սահմանը: Հայտնվելով գլոբալ քաղաքական հորձանքի մեջ, մենք այսօր գործնականում հնարավորություն չունենք մեզ համար ընտրելու «մեկուսացվողական» ռազմավարություն՝ անջրպետվել արտաքին աշխարհից, մշակել գործողության մեր ծրագիրը և ապա հանգիստ իրականացնել այն՝ առանձին և անկախ աշխարհում տեղի ունեցող գործընթացներից: Նախկինում նման մոտեցումը հնարավոր էր և այս կամ այն չափով բազմիցս գործի է դրվել ինչպես Ռուսաստանում, այնպես էլ աշխարհի այլ երկրներում:

Բայց այսօր իրավիճակը սկզբունքորեն տարբեր է: Եվ պատճառը սոսկ այն չէ, որ, ինչպես արդեն ասվեց, այսօր եթե չի փլուզվում, ապա լրջորեն ձևափոխվում է արդի աշխարհի բուն ազգային-պետական համակարգը, իսկ ցանկացած երկրի ներքին քաղաքականությունը դառնում է ավելի թափանցիկ այլ պետությունների միջազգային հաստատությունների, անդրազգային կորպորացիաների և գլոբալ քաղաքականության նոր սուբյեկտների արտաքին ազդեցության առջև: Սա սոսկ գործի կեսն է: Մյուս կարևոր պահն այն է, որ ցանկացած պետության, ցանկացած ժողովրդի համար չափազանց վտանգավոր է փորձ անել մեկուսանալու պատմության ընթացքից, դուրս մնալ միջազգային զարգացման ընդհանուր հոսանքից: Կարելի է անհուսալիորեն ետ մնալ ու ետ մնալ:

Գործի դնելով որոշ արտակարգ ջանքեր, մենք կարող էինք Ռուսաստանի շուրջն ստեղծել «երկաթե վարագույրի» նման ինչ-որ բան, ստեղծել ինչ-որ «ջերմոցային» պայմաններ՝ 10-15 տարվա ընթացքում լուծելու մեր ներքին խնդիրները: Սակայն նման քաղաքականության արդյունքները հավանաբար տխուր կլինեին: Նույնիսկ այդ ընթացքում և նման պայմաններում լուծելով մեր արտաքին խնդիրների որոշ մասը, մի քանի տասնամյակ անց մենք «վերադառնալու» ենք միանգամայն նոր, անծանոթ աշխարհ: Այդ կյանքի բուռն փոթորիկներին մենք, որ տարիներ շարունակ նստել ենք ինքնամեկուսացման տաքուկ ակվարիումում, բացարձակ անպատրաստ կլինենք: Եվ այդ ժամանակ ի՞նչ արժեք կունենան պետության, հասարակության և տնտեսության արդիականացման

հաջողությունները, եթե, լավագույն դեպքում դրանք կկրկնեն 20-ամյա վաղեմության իրավիճակը:

Եթե այդպես է, ապա այսօր, մտածելով պետական շինարարության նոր մարտահրավերների և խնդիրների մասին, մենք պետք է հարուցենք նաև արտաքին քաղաքականության, սրընթաց փոփոխվող աշխարհում մեր տեղի և գործողության ռազմավարության փնտրտուքի անկյունաքարային հարցերը:

Պետական քաղաքականության կայացածության և արդյունավետության առանցքային չափորոշիչը հենց Ռուսաստանի մրցունակությունն է համաշխարհայնացման պայմաններում, երբ խաղը թելադրում է փոփոխական կանոններ: Պետության զարգացման, սոցիալ-տնտեսական քաղաքականության խնդիրները պետք է համակարգվեն գլոբալ միտումների հաշվառմամբ: Ի վերջո, գլոբալ քաղաքական գործընթացները «ծավալելու» կամ ծայրահեղ դեպքում օգտագործելու ունակությունը կարող է դառնալ գուցեև այն գլխավոր ռեսուրսը, որը հնարավորություն կընձեռի մեր մազերից քաշելով դուրս գալ ներքին խնդիրների ճահճից:

8.1 Ռուսաստանի ռեսուրսները փոփոխվող գլոբալ աշխարհում

Եվ այստեղ արժե, երևի, փոքր-ինչ ավելի մանրամասն նայել Ռուսաստանի արտաքաղաքական ռեսուրսներին, որոնք թույլ կտան հասկանալ նրա միջազգային նույնականությունը:

Արտաքին քաղաքականության ռեսուրսներն իրենցից ներկայացնում են երկրի միասնական ներուժը, որը վերջին հաշվով կարող է տարածվել միջազգային ասպարեզում՝ որպես նպատակամետ արտաքին քաղաքական ուժ: Արտաքին քաղաքական աղբյուրները կարող են ունենալ ինչպես նյութական (տարածքային, տնտեսական, ռազմական), այնպես էլ ոչ նյութական (բարոյահոգեբանական, գաղափարական, տեղեկատվական) բնույթ: Նրանք նույնպես ներառում են պետական կառուցվածքի, պետական կարգի, քաղաքական ռեժիմի, իշխանության տարածքային կազմակերպ-

ման այն տարրերը, որոնք անմիջականորեն արտահայտվում են երկրի արտաքին քաղաքականության կազմավորման և իրագործման մեջ:

Ուսումնասիրելով սեփական արտաքին քաղաքականության ռեսուրսները, անհրաժեշտ է հաշվի առնել նաև նրանց արդյունավետ օգտագործման պայմանները և այն, ինչը կարող է մեր դեմ հանել ողջ արտաքին շրջապատը:

Մեր երկրի տարածքային-աշխարհագրական ռեսուրսները ավելի շատ վնաս կրեցին, համեմատած նրա հետ, ինչ ուներ ԽՍՀՄ-ը: Նոր պետությունների կազմավորման արդյունքում Ռուսաստանը, պարզվեց, պոկված է Արևմտյան Եվրոպայից, Մերձավոր, Միջին Արևելքից և Հարավային Ասիայից: Գրեթե փակված է ելքը դեպի Սև, Միջերկրական և Բալթիկ ծովերը: Դրա հետ մեկտեղ մենք, այնուամենայնիվ, մնում ենք եվրասիական պետություն, որի տարածական ներկայությունը երկու մայրցամաքների վրա ծանրակշիռ է և անվիճելի:

Ըստ էության, Ռուսաստանի և հեռավոր արտասահմանի միջև «շերտավորման» գոյությունը՝ նորանկախ պետությունների տեսքով, կարելի է օգտագործել ի շահ Ռուսաստանի: Երկրի ներքին թուլացման այս վիճակում անմիջապես հսկողությունը այդ տարածաշրջանի վրա արտակարգ խնդրահարույց է: Նրանց ներկա գոյությունը՝ որպես միջազգային մրցակցության դաշտ, ակնհայտ զիջումով հօգուտ մեզ, Ռուսաստանին հնարավորություն է տալիս արտաքին քաղաքական լրացուցիչ ռազմավարության:

Իսկ ռուսական արտաքին քաղաքականության աշխարհաքաղաքական ռեսուրսներին սպառնացող գլխավոր վտանգը, որքան էլ տարօրինակ է, ծագում է երկրի ներքին զարգացման բնույթից: Ժողովրդատնտեսական համակարգի և ըստ Ռուսաստանի տարածաշրջանի բնակչության, տարակենտրոնացման անհամաչափությունը թուլացնում է տարածաշրջանային ռեսուրսների ներուժը և ամենից առաջ՝ նրանց երկարաժամկետ չափման մեջ:

Ակնհայտ է վտանգների մի առանձնահատուկ խմբի աճը, որը կապված է Ռուսաստանի աշխարհաքաղաքական և աշխար-

հատնտեսական ձգտումների մեջ խճճվելու հետ՝ կախված արտասահմանյան տարբեր պետություններից: Այսպես, Չինաստանի աշխարհաքաղաքական հետաքրքրությունների ոլորտը վաղուց իր մեջ ներառել է Պրիմորիեի և Մերձամուրյան, Թուրքիայի, Արևելյան Մերձսևծովյան և Կովկասի, արաբական աշխարհի, Հյուսիսային Կովկասի և Մերձվոլգյան Հանրապետության և ռուսական այլ շրջանները: Այդ շրջաններում հետզհետե աճում է օտարերկրյա ներկայությունը, ձևավորվում է հիմք՝ տեղական գործընթացների ու իրավիճակների վրա համապատասխան պետությունների մշակութային, ժողովրդագրական, քաղաքական ազդեցության համար:

Զգալի չափով նման ազդեցության գործակալներ են հանդիսանում արտաքին էթնիկական խմբերը և կրոնական համայնքները, ինչպես նաև՝ քաղաքացիական հասարակության տարբեր անդամներ:

Ժողովրդագրական ռեսուրսները վերաբերում են նաև ամենախոցելիների խմբին: Նախորդ բաժնում արդեն նշվել է, թե ինչպիսի սպառնալիքներ է ստեղծում այդ խնդիրը ներքին քաղաքականության մեջ: Արտաքին քաղաքականության ծրագրերում մենք նույնպես ո՛չ հոգեբանական, ո՛չ էլ ռացիոնալ տեսակետից դեռ չենք գիտակցել և չենք անդրադարձել այն փաստին, որ արդեն այժմ գտնվում ենք աշխարհում ոչ թե երրորդ, այլ վեցերորդ տեղում՝ բնակչության քանակով (Չինաստանից, Հնդկաստանից, ԱՄՆ-ից, Ինդոնեզիայից և Բրազիլիայից հետո):

Իսկ մինչ այդ ժողովրդագրական ռեսուրսների վերանայումը հավանաբար անհրաժեշտ է, առնվազն ռազմական և տնտեսական ծրագրերի, միգրացիոն քաղաքականության մեջ: Բնակչության աճի ներկա ընթացքը, թվակազմով մեզ համեմատելի երկրների ընթացքի հետ, կարող է հասցնել այն իրողությանը, որ 2015 թ. Ռուսաստանն ընդհանրապես դուրս մնա աշխարհի խոշորագույն երկրների տասնյակից, և նրան հասնեն ու անցնեն երկրներ, որոնց անունները ռուսներից շատերը լսել են միայն անեկդոտներից՝ Պակիստանը, Բանգլադեշը, Նիգերիան, Եթովպիան և Զաիրը:

Որքան էլ տարօրինակ է, ժողովրդագրական ներուժի այդքան նշանակալից կորուստը միջին և կարճաժամկետ շրջանում արտաքին քաղաքականության վրա ուղղակի ազդեցություն չի ունենա, դա ավելի շուտ երկարաժամկետ բնույթի խնդիր է: Երկրի բնակչության թիվը առաջվա պես բավական մեծ է՝ պահել-պահպանելու համար իր միասնականությունը որպես ընդհանրություն, որը կվերահսկի զգալի մի տարածք: Ինչպես արդեն նշվեց, վտանգ են ներկայացնում այն տարածաշրջանները, որոնք գտնվում են «ժողովրդագրական լեփլեցուն աղբյուրի»՝ Չինաստանի հետ անմիջական հարևանությամբ:

Եթե մենք 50 տարի առաջ նայենք, ապա չի կարելի չտեսնել վտանգը, որ Ռուսաստանը կա՛մ կդադարի գոյություն ունենալ իր ներկա սահմաններով, կա՛մ, պահպանվելու դեպքում, ձեռք կբերի բոլորովին այլ գծեր, պետականության այլ հիմքեր: Այսօր մենք ռեսուրսներ չունենք նման վտանգի դեմն առնելու համար: Հո չի կարելի լրջորեն մտածել, թե կարող ենք օգտագործել աշխարհաքաղաքական զսպման այնպիսի միջոցներ, ինչպիսին միջուկային զենքն է ընդդեմ սեփական երկրի, երբ այն գրավված կլինի այլ ժողովուրդների կողմից:

1990-ական թվականներին Ռուսաստանի արտաքին քաղաքականության վրա սկսեց ակտիվորեն, թեկուզև ինքնաբերաբար, ներգործել ևս մի ազդակ՝ ժողովրդագրական-դավանական աճը, որն, ի դեպ, որպես օրենք, վիրտուալ աճ է: Տարածված կարծիքին հակառակ, այստեղ տեղաշարժերը կատարվում են ոչ միայն և ոչ այնքան այս կամ այն ժողովրդագրական-դավանական խմբի տոկոսների փոփոխումից, որքան որպես իշխանության տարածքային կազմակերպության փոփոխման, ազգային հանրապետությունների նոր իրավունքների ու լիազորությունների ստացման արդյունք, ինչպես նաև հախուռն կերպով քաղաքացիություն տալով մի շարք մահմեդական ազգերի:

Դրա հետ մեկտեղ, ուրախալի է, որ արտաքին քաղաքականության հայտնի ինքնավարությունը, որ հատուկ է Ռուսաստանին, դեռևս չի հասցրել, որ դաշնային մակարդակով 1990-ական թվա-

կաններին ազգային լոբբիավորումը լուրջ խնդիր դառնար: Բայց չպետք է մոռանալ, որ հանրապետությունների անկախացումը ստեղծում է իրական հնարավորություն՝ արտաքին քաղաքական գործընթացի հորիզոնական մասնատման համար:

Ժողովրդագրական ներուժի դավանական տեսակետները 1990-ական թվականներին արտահայտվեցին ամենից առաջ քաղաքական-գաղափարախոսական բանավեճերով, որոնց գլխավոր կողմը արտաքին քաղաքական գործունեության հետ քրիստոնեական կամ մահմեդական ավանդույթների նմանեցումն էր: Զուգընթաց՝ եթե դաշնային մակարդակով, որպես կանոն, ընդգծվում էր (ճիշտ է, զգալիորեն քիչ, քան ներքաղաքական կյանքում) առաջինից սկսվող ժառանգականությունը, ապա մի շարք հանրապետությունների մակարդակով նկատվում էր աշխարհի «մահմեդական պատկերի» առանձին տարրերի՝ վերնախավի մի մասի փոփոխումը (հազվադեպ՝ ինքնուրույն կազմավորումը): Այս երկու միտումների նկատելի մերձեցման բացակայությունը կարող է լուրջ հետևանքներ ունենալ:

Արդյունավետ արտաքին քաղաքականություն վարելու համար տնտեսական ռեսուրսները ներկայումս այնքան էլ ծանրակշիռ չեն: Երկրի տնտեսական վիճակը այսօր ևս ստիպված ենք լինում գնահատել մեծ հոռետեսությամբ: Տնտեսական զարգացումը նշանակալից չափով իրականացվում է միջոցների պարզունակ շահագործման և մսխման միջոցով: Համատեղ լճացման 10-12 տարիներից հետո, հիմնական ֆոնդերի հնացումով և տեխնոլոգիաների պահպանումով, լավագույն դեպքում՝ 1990-ական թթ. սկզբի մակարդակով, Ռուսաստանը մոտենում է տնտեսատեխնոլոգիական բոլորաշրջանի վերաբաժանմանը: Այս արգելքը հաղթահարելիս կորուստների աստիճանը կարող է լինել զգալիորեն փոքր, բայց միայն այն դեպքում, եթե արտաքին տնտեսական և ֆինանսական միջավայրում պահպանվում են հարաբերական բարենպաստ պայմաններ:

Իրավիճակը, որում փաստորեն միակ արտահանվող ռեսուրսը էներգակիրներն են, ռուսական տնտեսությունն ու նրա արտաքին քաղաքական մակարդակը դարձնում է չափազանց խոցելի:

Ռուսաստանը դեռևս համաշխարհային տնտեսական համակարգին ինտեգրվելու համար քիչ դրական կողմեր ունի: Փոխգործակցությունը միջազգային ֆինանսատնտեսական կառույցների հետ հանդիսանում է, ըստ էության, վարկատուի և ոչ այնքան ապահով վարկառուի հարաբերություններ: Համաշխարհային տնտեսության մեջ երկու տոկոսանոց չափաբաժինը Ռուսաստանին թույլ չի տալիս միջազգային հարաբերությունների վրա օգտագործել ազդեցության տնտեսական գործոնը՝ ամենաէական և արդյունավետ գործոնը արդի աշխարհում:

Իր արտաքին քաղաքական շահերը իրականացնելիս ռուսաստանյան տնտեսությունը հնարավորություն է տալիս լուծելու միայն տարածաշրջանային խնդիրներ նախկին ԽՍՀՄ տարածքում, որտեղ Ռուսաստանի Դաշնությունն առաջվա պես ամենահզոր տնտեսական միավորն է, ինչպես նաև առանձին խնդիրներ՝ եվրոպական ուղղությամբ և հեռավորարևելյան հարևանների հետ հարաբերություններում:

Եվս մի լուրջ հիմնահարց է գործարարության և արտաքին քաղաքականության փոխգործակցությունը: Ցավոք, ռուսական տնտեսության միայն էներգետիկ և հումքային հատվածներն են, որ կարող են իսկապես հավակնել համաշխարհային մասշտաբի խոշոր խաղացողի դերին: Համապատասխանաբար՝ և բիզնեսի կեցվածքը արտաքին քաղաքական հարցերում հստակ չէ, թույլ է մշակված: Մեր տնտեսության արտաքին մերձեցման հետագա վնասազերծմանև արդարացման դեպքում, տնտեսավարող սուբյեկտների դիրքորոշումը և հզորացումը, նրանց ելքը դեպի նեղ հատվածային ու մասնագիտացված շուկաներ, համաշխարհային տնտեսության խոշորագույն խաղարկուների (ամենից առաջ՝ ԵԽ-ի) հետ սահմանակարգված հարաբերությունների հաստատման դեպքում, արտաքին քաղաքականության հարցերում ռուսական բիզնեսի դիրքերը կդառնան ավելի բարդ, միմյանց միջև մրցակցությամբ և հավասարակշռելով մեկմեկու արտաքին քաղաքականության գծով:

Իսկ ներկա իրավիճակում «արտաքին քաղաքականության տնտեսականացման» կարգախոսը, որ ժառանգել ենք ուշ ԽՍՀՄ-

ի ժամանակներից, մնում է, մեծ հաշվով, որպես դատարկ հնչյուն. տնտեսականացումը կարող է տեղի ունենալ միայն օբյեկտիվ կերպով, և դրանով պետք է զբաղվի ամենից առաջ ռուսական բիզնեսը: Եվ երբ նա ունենա իր հետաքրքրությունները, ԱԳՆ-ը կօգնի դրանք կյանքի կոչելուն:

Ժամանակակից Ռուսաստանի ռազմական ռեսուրսները, արտաքին քաղաքական միջավայրում դրանք տարածելու դեպքում, կարող են գնահատվել երկու ձևով: Ռուսաստանը դեռևս առաջատար միջուկային տերություն է, իր հզորությամբ համադրելի միայն ԱՄՆ-ի հետ: Թեև անհրաժեշտ է հաշվի առնել, որ ԱՄՆ-ի տնտեսական հնարավորությունները՝ իր հզորության պահպանման, արդիականացման և զարգացման գործում անհնար է համեմատել ռուսականի հետ: Այսպես, ԱՄՆ-ի ռազմաօդային ուժերը ռուսականին գերազանցում են 10-12 անգամ: Մյուս երեք «հին» միջուկային տերություններից ամեն մեկի (Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Չինաստանի) ռազմաօդային ուժերը նույնպես մի քանի անգամ շատ են ռուսականից: Ներկա միտումները պահպանելու արդյունքում մեկ տասնամյակ անց մենք լրիվ կկորցնենք ռազմական հավասարակշռությունը ԱՄՆ-ի հետ:

Դրանից բացի, հաշվի առնելով միջուկային գործոնը, նրա օգտագործման անհնարինությունը ամենօրյա արտաքին քաղաքական գործունեության մեջ, այն կարելի է գնահատել սոսկ որպես կարգավիճակային միջոց, որը թույլ է տալիս մեր երկրին՝ պահպանել միայն գերտերության իր անունը:

Դրա հետ մեկտեղ, ակնհայտ է, որ միջուկային զենքի դերն ու տեղը գնահատելիս մեզանում նախկինի պես իշխում է այն պատկերացումը, որ հիմնված է «կենտրոնական միջուկային հաշվեկշռի վրա», այսինքն՝ ԱՄՆ-ի հետ մրցակցության և փոխադարձ երաշխավորված ոչնչացման հնարավորության առկայության վրա: Այս դեպքում աշխարհի միջուկային պատկերի բոլոր մնացած բաղադրատոմսերի վերաբերյալ արտաքին քաղաքականությունը չի մշակել կոնկրետ կողմնորոշման դեկլարատիվ սցենարներ: Այստեղ բնորոշը Ռուսաստանի խելամիտ հակազդեցության բացակայու-

թյունն էր միջուկային ակումբի նորեկների՝ Հնդկաստանի և Պակիստանի պաշտոնական հայտնվելու հարցում:

ՆԱՏՕ-ի ընդլայնումը, պատերազմը Հարավսլավիայում ակնհայտորեն ի ցույց հանեցին միջոցների և ազդեցության գործիքակազմի անբավարարությունը՝ ռազմաքաղաքական ծրագրերով միջազգային իրադարձություններում: Զգալի են խնդիրները, որոնք ուղեկցում են ռազմական ուժերի թարմացմանը վերջին տարիներին, բանակի իրական օգտագործումը առաջին և երկրորդ չեչենական պատերազմներում նույնպես հարուցում է մի շարք հարցեր, որոնց պատասխանները խոսում են ոչ հոգուտ ժամանակակից սպառնալիքների դեմն առնելու զինված ուժերի կարողության:

Արժեր թեկուզ հիշել այն փաստը, որ ըստ բարձրագույն նպատակի, Հյուսիս-կովկասյան ռազմական օկրուգը, որի պատասխանատվության գոտում է գտնվում Չեչնիան, ըստ իր խնդիրների, պարտավոր է պահել ՆԱՏՕ-ի խմբավորմանը, որը պետք է հարձակվի հարավից: Այդ խմբավորման բաղադրիչ մասերից մեկը Թուրքիան է, որի զինված ուժերը կազմում են 660 հազար մարդ: Բայց պատերազմը Չեչնիայում ցույց տվեց, որ Ռուսաստանն այդ ուղղությամբ արդյունավետ կռվելու հնարավորություններ չունի, նույնիսկ շուրջ 15-20 հազարանոց զինված (մեծ մասամբ՝ հրաձգայիններ) ջոկատների դեմ:

Ելնելով նրանից, որ զինված ուժերը դիմադրության գործիք են, այսինքն՝ պետական հզորության որոշակի առարկայացված իմիջ, ստիպված ենք արձանագրել, որ այդ իմիջը նշանակալից չափով խախտված է: Տարօրինակն այն է, որ սովորական զինված ուժերը չեն կարող կատարել իրենց տրված հակազդեցության դերը առանց համապատասխան իմիջի: Եթե այս տրամաբանությունը հասցնենք մինչև վերջ, ապա այդ իմիջի լիակատար վերականգնումը հնարավոր է միայն հաջող կերպով անցկացված ռազմական գործողության արդյունքում, որը, սակայն, չի կարող սկզբունքորեն իրականացվել առանց զինված ուժերում բարեփոխումների:

Իսկ ամբողջության մեջ ռազմական գործոնի դերը Ռուսաստանի արտաքին քաղաքականության մեջ խիստ բարձրացված է: Երկրի ռազմական ռեսուրսները, որոնք համեմատաբար կարճ ժամկետում պահպանելն ավելի հեշտ է, քան մնացած ռեսուրսները, սկսել են գերակշռել Ռուսաստանի արտաքին քաղաքականության մեջ՝ մնացած միջոցների վատթարացման պայմաններում: Որքան էլ տարօրինակ է, բայց խոշորագույն ռազմական վտանգի նվազման պայմաններում ռազմական խնդիրները մնում են առաջնային Ռուսաստանի արտաքին քաղաքականության մեջ:

Երկրի տեղեկատվական-գաղափարախոսական և սոցիալ-մշակութային ռեսուրսները նույնպես այսօր չեն կարող արդյունավետ համարվել:

Ռուսաստանի Դաշնության տեղեկատվական անվտանգության ապահովման հատուկ կարևորությունը վճռվում է նրանով, որ քաղաքականությունը, տնտեսությունը, պաշտպանությունը և Ռուսաստանի Դաշնության ազգային անվտանգության մյուս բաղկացուցիչները «տեղեկատվական հասարակության» պայմաններում մեծ չափով պայմանավորված են ազգի մտավոր զարգացմամբ, քաղաքականություն կազմավորող ընկերակցությունների արժեքավոր կողմնորոշիչներով և ժողովրդի գիտակցության մակարդակով: Դրանից բացի, ժամանակակից պայմաններում պետականության հեռանկարները ուղղակի կախված են պետության կարողությունից՝ պահել և պահպանել արժեքների ազգային համակարգը: Եվ հենց Ռուսաստանի անվտանգության դեմ սպառնալիքն էլ այս ոլորտներում կրում է ամենասկզբունքային բնույթ՝ գործել երկարաժամկետ ռազմավարական պարամետրերով՝ ռուսական պետականության զարգացման տեսակետից, նկատի առնելով պետության միասնականության պահպանման, սահմանադրական կարգի անսասանության ապահովման, Ռուսաստանի անկախության և տարածքային ամբողջականության, քաղաքական, սոցիալական ու ազգամիջյան կայունության խնդիրները:

Որպես ընդհանուր վտանգ, միաժամանակ, երկրի քաղաքական-մշակութային մասնատման վառ ապացույցներից մեկն է

տարբեր մոտեցումները նույն իրադարձությանը՝ այս կամ այն ազգային, կրոնական միությունների, տարածքային առանձին հանրույթների (շրջանների, Ռուսաստանի Դաշնության բնակիչների), սոցիալական խմբերի կողմից: Այս դեպքում ձևավորվող դիրքորոշումները նեղացնում են տնտեսության ամբողջական արդյունավետ զարգացման հնարավորությունները, սպառնում են ավերել ոչ միայն միասնական սոցիալ-մշակութային, այլև միասնական իրավական դաշտը Ռուսաստանի Դաշնությունում:

Արդեն այսօր ակնհայտ է մի շարք պետությունների կողմից մշակված և իրականացված տեղեկատվական պատերազմների համակարգը, որը նախատեսում է ստեղծել վտանգավոր ազդեցության միջոցներ աշխարհի այլ երկրների տեղեկատվական ոլորտների վրա, տեղեկատվական և հեռահաղորդակցման համակարգերի նորմալ գործունեության խանգարման, տեղեկատվական միջոցների պահպանման՝ նրանց մեջ չարտոնված ներթափանցման համար:

Հոգևոր ոլորտում առավել սկզբունքային նշանակություն ունի արժևորվող կողմնորոշման (այսինքն՝ ուղղված ազգային քաղաքական-մշակութային և սոցիալական միջավայրի արժեքավոր դրույթների, մտակաղապարների, միֆերի և ընկալման այլ կառուցվածքների ձևավորմանը կամ ավերմանը) գործունեությունը միջազգային ահաբեկչական կազմակերպությունների, ինչպես նաև կազմակերպությունների, որոնք ապահովում են կրոնական միջազգային ահաբեկչության «հովանոցը»:

Ուժեղացվում են հոգևոր և սոցիալական ոլորտում կախվածությունները գլոբալ սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքից, արտասահմանյան տեղեկատվական կառույցներից, միջազգային զանգվածների մշակույթից և նրանցով արտադրված արժեքների համակարգից: Ռուսական ազգային նույնականության ամրապնդման ընթացքը արդեն վաղուց վերածվել է մրցակցային պայքարի արտաքին (օտարերկրյա) քաղաքական, տնտեսական և այլ սուբյեկտներով: Պայքար, որում մենք դեռևս հաճախ ենք պարտվում:

Ռուսաստանն այսօր ավելի շուտ լարված տեղեկատվական ազդեցությամբ մի օբյեկտ է, քան համաշխարհային տեղեկատվական կարգապահության միավոր: Տեղեկատվության համակարգը, որ կողմնորոշված է դրսում տարածվելու միտումով, մնացել է խորհրդային ժամանակաշրջանի մակարդակին: Վարձահրավիրված ռուսական ԶԼՄ-ների անընդունելի վիճակը, նրանց կողմնորոշումը նեղ խմբակային հետաքրքրություններով՝ կտրուկ իջեցնում են նրանց օգտագործման արդյունավետությունն արտաքին քաղաքական նպատակներում:

Այստեղ հատուկ վտանգ է ներկայացնում նաև ազգային կրթության և հիմնարար ու կիրառական գիտության համակարգերի քայքայումը: Աճում է արտաքին ազդեցության ներուժը կրթության և գիտության կազմակերպման ազգային համակարգի արդիականացման ու զարգացման գործընթացների վրա: Դա իր արտահայտությունն է գտնում ինչպես Ռուսաստանում ուժգնացող «ուղեղների արտահոսքի» ընթացքում, այնպես էլ փորձերում՝ պետական քաղաքական մարտավարության մակարդակով իրականացնել կրթության և գիտության համակարգերի կազմակերպման օտարերկրյա մոդելները՝ փոխառելով, որոնք շատ հաճախ չեն համապատասխանում ռուսական ավանդույթներին: Ռուսական կրթության և գիտության՝ համաշխարհային համակարգին ինտեգրման անհրաժեշտությունը, նրանց դերը Ռուսաստանի սոցիալ-տնտեսական զարգացման, մրցունակության և ներուժի ապահովման գործում ստեղծում է մի իրավիճակ, երբ իրենք՝ կրթությունն ու գիտությունը, վերափոխվում են սոցիալ-մշակութային, տեղեկատվական և արժեքային ու արժեքային էքսպանսիայի և նույնիսկ ագրեսիայի:

Ռուսաստանի պետական կառավարման և դիվանագիտական ռեսուրսները այդ ամենի կողքին կարող են բավական բարձր գնահատվել: Ռուսաստանն ունի հզոր և մասնագիտացված արտաքին քաղաքական գերատեսչություն: 1990-ական թվերին ԱԳՆ-ը պահպանեց ու որոշ չափով բազմապատկեց իր ներուժը: Արտաքին հետախուզական ծառայությունը (ԱՀԾ), որն ի վիճակի է կենտրոնացնել ու վերլուծել արտասահմանյան՝ փակ բնույթի տեղե-

կատվությունը, համեմատաբար հաջողությամբ կանխեց պետական անվտանգության մարմինների համակարգի անկումը և հիմք դրեց նոր ավանդույթների՝ ռուսական հետախուզական խմբակցությանը:

Պաշտպանության նախարարության և Գլխավոր շտաբի գործունեության մեջ արտաքին քաղաքականության բաժնի ամրացումը կազմակերպման շրջանում, բոլոր դժվարությունների առկայության դեպքում, հնարավորություն է տվել ներկա ժամանակաշրջանում լրջորեն սերտակցել արտասահմանյան երկրների հետ Ռուսաստանի ռազմաքաղաքական համագործակցությանը: Իսկ ամենից առաջ՝ ԱՊՀ երկրների: Գերատեսչությունների մի ամբողջ շարքի առջև, - Անվտանգության դաշնային ծառայություն (ԱԴԾ), Սահմանապահ դաշնային ծառայություն (ԱԴԾ), Միգրացիոն դաշնային ծառայություն (ՄԴԾ), Արտակարգ իրավիճակների նախարարություն (ԱԻՆ), - ինքնուրույն թվականներին ծառացան միջազգային բնույթի խնդիրներ, ամենից առաջ՝ հարևան երկրների հետ: Դա հնարավորություն տվեց ձեռք բերել անհրաժեշտ փորձ և մեխանիզմներ, որ անցյալում չկային:

Նախորդ տասնամյակներում աշխարհով մեկ հիմնվել է ռուսական արտասահմանյան հիմնարկությունների ցանց: Ռուսաստանը դարձել է առաջատար համաշխարհային և տարածաշրջանային կազմակերպությունների, կենտրոնավայրերի, բազմակողմանի հաստատությունների մեծ մասի լիարյուն մասնիկը: Անհրաժեշտ է նշել, որ ռուսաստանյան ԱԳՆ-ն ընբռնեց 90-ականների սկզբներին սահմանակից երկրների հետ համագործակցության կազմակերպման միտումը, և մեր երկիրը դարձավ փաստորեն իր սահմանների պարագծով բոլոր լուրջ ենթատարածաշրջանային նախաձեռնությունների մասնակիցը:

Սակայն Ռուսաստանը իր օբյեկտիվ բնութագրերով չի կարող հավակնել լիիրավ մասնակցության բազմակողմանի վերնախավային «ակումբներին»՝ հիմնված ֆինանսատնտեսական շահերի ընդհանրությամբ. իբր թե լիիրավ անդամությունը «մեծ ութնյակին»՝ ակնհայտ ինքնախաբեություն է:

Ռուսաստանի համար դեռևս յուրացված են սոսկ դասական կառույցները, որոնք ստեղծվել են ԽՍՀՄ-ի անմիջական մասնակցությամբ, այնպես, ինչպես ՄԱԿ-ը և ԵԱՀԿ-ն: Պետական կառավարման առումով ձեռքբերումներին կարելի է վերագրել ԱՊՀ-ի մեխանիզմի ստեղծումը՝ սահմանակից երկրների կազմակերպություն, ուր գերիշխող տեղը պատկանում է Ռուսաստանին, ինչպես նաև այլ՝ դեպի Ռուսաստան կողմնորոշված երկրները և նրանց պետական կառավարման հետ փոխգործակցությունը հետխորհրդային տարածքում:

Ներկա վերլուծությունը կարելի է շարունակել: Եվ երևի դա պետք է կատարեն միջազգային հարաբերությունների բնագավառի մեր մասնագետները: Չէ՞ որ ամբողջ արտաքաղաքական պլանավորումը միշտ պետք է սկսվի հենց սեփական ռեսուրսների գնահատումից, այլ ոչ ինչ-ինչ բարի ցանկությունների ձևակերպումից՝ ուղղված ինքդ քեզ: Ցավոք, արտաքին քաղաքական փաստաթղթերը մեր երկրում կազմվում են կրճատված սխեմայով, որտեղ ռեսուրսների մասին բնավ չի էլ հիշվում: Նման պլանավորման դեպքում արտաքին քաղաքական շահերի ձևակերպումը, նպատակադրումը և խնդիրները ձեռք են բերում կամայական, կողմնակալ բնույթ. հետաքրքրությունները, ավելին՝ նպատակներն ու խնդիրները դառնում են ոչ համազոր և, որպես հետևանք, անիրականանալի:

Բայց ասվածն էլ բավական է, որպեսզի փորձենք նորովի պատասխանել հարցին. ի՞նչ է ներկայացնում իրենից Ռուսաստանը արդի աշխարհում:

Նա, ով ձեռք է պարզում ժամանակակից միջազգային հարաբերությունների և արտաքին քաղաքականության հայեցակարգային վերլուծությանը, շատ հաճախ է բախվում շրջապատի որոշակի թերահավատությանը, նրանք կարծում են, որ պատմական մասշտաբով 10-12-ամյա շրջանը (իսկ հենց այդքան ժամանակ է անցել Յալթա-Պոտսդամյան միջազգային հարաբերությունների համակարգի անհետացումից, մի համակարգ, որը հիմնված էր գերակայությամբ երկու բևեռների՝ ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի) չափազանց քիչ է, և

նրա հիմքի վրա երկարաժամկետ միտումները, հիմնադրական գործոնը առանձնացնելու փորձերը նվազ արդյունավետ են:

Բայց դա բնավ էլ այդպես չէ: Եթե մենք դառնանք միջազգային հարաբերություններում նախորդ համակարգերի զարգացման փորձին, ապա կտեսնենք, որ առաջին տասնամյակը, որպես կանոն, այն ժամանակահատվածն է, երբ անիրական մոդելը փոխվում է իրական գործող մոդելի, տեղի է ունենում նրա ինքնատիպ «վերջնական» մշակումը, մինչև այն պարամետրերը, որոնք մոդելը դարձնում են հարաբերաբար կայուն և գործուն: Ճիշտ է, այդ շրջանը հաճախ է դառնում «հիմնադիր-հայրերի» հիասթափության շրջան: Այդպես էր և միջազգային հարաբերություններում առաջին համաշխարհային պատերազմից հետո, և Յալթա-Պոտսդամյան համակարգում:

Նկատելի է, որ ժամանակակից միջազգային հարաբերություններն անցած տասը տարվա ընթացքում ավարտել են անցումը առճակատման մոդելից դեպի նոր ուրվապատկերներ, հին երկբևեռ կառույցը փլված է:

Դրա հետ մեկտեղ, գոյություն ունեցող աշխարհակարգը Յալթա-Պոտսդամյան համակարգից ժառանգել է միջազգային մեխանիզմների մի զգալի մասը. ՄԱԿ-ի համապարփակ համակարգը, մի շարք միջազգային-իրավական նորմեր, դաշնագրային պարտավորություններ և այլն: Հենց այս՝ նորի և ավանդականի գոյակցությամբ էլ բնութագրվում են ժամանակակից միջազգային հարաբերությունները: Այլ խոսքով՝ տարօրինակն այն է, որ Յալթա-Պոտսդամյան աշխարհակարգի հիմքերի կործանումը չավերեց հին համակարգի պետական կառավարման համակարգային-իրավական հիմքերը, որն, ինչպես պարզվեց, ավելի առաջադիմական էր, քան նրա քաղաքական-գաղափարախոսական ալտեր էգոն: Հենց դա էլ ապահովում է խաղաղ (ի տարբերություն բոլոր նախորդների) անցումը մի համակարգից մյուսին:

Ժամանակաշրջանների հերթափոխությունն անցավ առանց մեծամասշտաբ հակասության և նույնքան մասշտաբային «խաղաղության», «վեհաժողովի», որն ամրացնում է նոր աշխարհա-

կարգը: Դա բացառիկ է թեկուզ և այն տեսակետից, որ համակարգում չկա ի սկզբանե սահմանված «չափանիշ», որը, ըստ էության, անհրաժեշտ էր նաև կանոնավորել, վերստուգման ենթարկել, ինչպես եղել է նախորդ բոլոր համակարգերում:

Մյուս կողմից, փոխակերպումների նման բնույթը կարող է խոսել այն մասին, որ աշխարհը անցում է կատարում դեպի զարգացման մի այլ փուլ և ներհամակարգային հակասությունները լուծելու համար լայնամասշտաբ ընդհարումներն այլևս անհրաժեշտություն չեն: Պարզ է, որ երկբևեռ աշխարհի բախտը նախանշված էր ոչ միայն գերտերություններից մեկի փլուզումով, այլև ուժային նոր կենտրոնների հայտնաբերմամբ, հենց իրենց՝ միջազգային հարաբերությունների կառուցվածքի բարդացմամբ, որն աստիճանաբար ձեռք է բերել ավելի բազմակողմանի բնույթ դեռևս Յալթա-Պոտսդամյան աշխարհակարգի սահմաններում:

Բացառապես բոլոր ոլորտներում իշխող դիրք գրավելը գերակա հարց դարձավ արդեն 1970-ական թվականների կեսերին, անգամ գերտերությունների համար: Տրամաբանական է, որ նման գերակայությունը օբյեկտիվորեն անհնար է այժմ (այդ թվում՝ և «հաղթանակած» գերտերության՝ ԱՄՆ-ի համար), թեկուզև այն պատճառով, որ այժմյան աշխարհը բավական բարդ է և ունի անհամար քանակությամբ փոխադարձ պայմանավորվածություններ:

Իրոք, ներկայիս համաշխարհային համակարգը կարելի է ներկայացնել բուրգի տեսքով, որը բաղկացած է «շերտերի», բաժանմունքների մի ողջ շարքով՝ կուտակված մեկը մյուսի վրա: Այդ բաժանմունքներից յուրաքանչյուրի՝ տնտեսական, ֆինանսական, տեխնոլոգիական, ռազմական և այլն, ունի իր առաջնորդները. երկրներ, որոնք զգալի խզման մեջ են մյուս մասնակիցների հետ:

Ռուսաստանն այսօր գրեթե աննշմար է տնտեսական բաժանմունքում, բայց միաժամանակ հանդես է գալիս «բևեռի» դերում՝ համաշխարհային համակարգի կառավարման իրավական հատվածում՝ ունենալով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական անդամի կարգավիճակ:

«Բևեռի» դերը Ռուսաստանը խաղում է ռազմավարական հատվածում: Եթե հաշվի առնենք առանձին երկրների դերը տարածաշրջանային տարածքների վրա գերակայելու գործում, ապա կարելի է նկատել «բևեռի» թեկնածուների էլի մի ամբողջ շարք: Ուրախալի է, որ այստեղ նույնպես Ռուսաստանը ներկա է. նա այսօր վստահորեն իշխում է հետխորհրդային տարածքում և կարևոր դերակատարում ունի եվրոպական ուղղությամբ՝ հետզհետե ավելի ակտիվորեն ինքնադրսևորվելով Ասիական-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում (ԱԽՏ):

Այսպիսով, արդի աշխարհը օբյեկտիվորեն բազմաբևեռ է: Դրա հետ մեկտեղ դա թշնամական խմբերի բազմաբևեռացում չէ և ոչ էլ ուժային դիմակայության միջուկային հավասարակշռության բազմաբևեռացում: Դա ավելի բարդ է: Ավելին, արդի աշխարհը մի ամբողջ շարք երկրների հնարավորություն է տալիս հավակնել բաժանմունքների և տարածաշրջանային տարածքների ընդլայնման, որտեղ նրանք կարողանային, որոշ ժամանակից հետո, դառնալ «բևեռներ»: Անկասկած, նման հեռանկարներ ունի նաև մեր երկիրը:

Ժամանակակից միջազգային հարաբերություններում ունեցած ռեսուրսների ու կառույցների հաշվառումով, Ռուսաստանի արտաքին քաղաքական նույնականությունը կարելի է ձևակերպել հետևյալ կերպ:

Ռուսաստանը եվրասիական տարածաշրջանի առաջատար տերություն է, որ նշանակալից հնարավորություն ունի համաշխարհային համակարգի վրա գլոբալ ազդեցության հասնելու, առաջին հերթին՝ միջուկային և պետական կառավարման գործոնների առկայության հաշվարկումով:

Արտաքին քաղաքական ակտիվների ներկա վիճակը Ռուսաստանին հնարավորություն է ընձեռում երաշխավորելու կենսապահովումը և ազդեցություն ունենալու ռազմագիտական բնույթի մի շարք համաշխարհային գործընթացների վրա: Երկրի ներքին ներուժը սկզբունքային հնարավորություն է տալիս Ռուսաստանին՝ դառնալու մեկը համաշխարհային տնտեսության բևեռներից և,

արդյունքում՝ ամրապնդելու իր միջազգային դրությունն ամբողջությամբ:

Այնուամենայնիվ, ավելի լավ է, խուսափենք չափազանցումից, մեր վիճակը «գերտերություն» որակելուց: Հակառակ դեպքում չարդարացված լավատեսությունը և ինքնահիացումը կարող են վերջին հաշվով հասցնել անհամազոր արտաքին քաղաքականության, որը հղի է ուժերի ու միջոցների մսխումով, չիրագործված նպատակներով ու սպասումներով:

8.2 Արտաքին քաղաքական գաղափարախոսությունը եւ Ռուսաստանի արտաքին քաղաքականության հնարավոր կողմնորոշիչները

Ռուսաստանի գործունեության ռազմավարության որոնումը Նոր աշխարհում պետք է սկսվի... գաղափարախոսությունից: Եվ բնավ էլ ոչ այն պատճառով, որ զարմացնես որևէ մեկին կամ հայրենաբաղձ զգացումներ հարուցես: Արտաքին քաղաքականությունը չի հանդիսանում ինքնաբավ ոլորտ՝ կտրված պետական գործունեության մյուս ուղղություններից: Չնավորելով՝ ռազմավարական կողմնորոշումները պետք է իրագործվեն երկրի ներքին զարգացման բոլոր տեսակետների հաշվառման հիմքի վրա:

1990-ականների սկզբից սկսած՝ ռուսական հասարակությունը չունի արտաքին քաղաքական իրադարձությունների գնահատման համակարգված չափանիշներ, արդի աշխարհի գնահատականներում իշխում է էկլեկտիկան, երբ մեկը մյուսին հակասող դիրքորոշումները նկատվում են ոչ միայն ամբողջական հասարակության մեջ, այլև՝ առանձին վերցրած քաղաքացիների: Այդ դիրքորոշումները տարափոխվում են բնորոշ ավանդական կայսերական մտածողությունից մինչև բացեիբաց ինքնանվաստացում: Ռուսական հասարակության և վերնախավի կողմից դեռևս չի յուրացվել ժամանակակից միջազգային թեմաների մի ամբողջ շարք: Դա տեղի է ունեցել ինչպես մեր հասարա-

կության երկարատև փակվածությունից, այնպես էլ 1990-ականների ներքին խնդիրների չափից դուրս խտացումից:

Սպառելով հին գաղափարախոսությունը, Ռուսաստանն այժմ չունի անհրաժեշտ հիմք՝ նոր երկարաժամկետ աշխարհայացքային կողմնորոշիչներ, և բացի համամարդկային արժեքների հետ համերաշխությունից, չի կարող առաջարկել դրանից դուրս ինչ-ինչ նոր գաղափարներ: Սակայն հենց գաղափարախոսությունը կարող է դառնալ արտաքին քաղաքականության լիովին իրական միջոց, և անհրաժեշտ պայմանն է ազգի միասնականությունը, որպեսզի նա իմանա իր տեղն աշխարհում և երկրի զարգացման խնդիրները: Դրանից բացի, ցանկացած պետություն անխուսափելիորեն կպարտվի իր մրցակիցներից և չի կարողանա ընդհանրապես պահպանել իր վճռական ազդեցությունը գլոբալ քաղաքական գործընթացներում, եթե աշխարհին չի տանելու զարգացման ինչ-որ գաղափարի, նրա արժեքների ու նպատակների դրոշը:

Ըստ որում, անհրաժեշտ է նշել, որ արտաքին քաղաքականության մեջ միայն այն գաղափարախոսությունը կարող է միջոց դառնալ, որն իր մեջ կրում է ինտերնացիոնալ, անդրսահմանային տարրեր, որը փակված չէ ինքն իր մեջ: Նմանօրինակ գաղափարախոսությունների շարքին կարելի է դասել լիբերալիզմի բոլոր խոշոր գաղափարախոսությունները, կրոնական գաղափարախոսությունները՝ քրիստոնեությունը, իսլամը: Կոմունիստական գաղափարախոսությունը նույնպես վերաբերում էր այդ տեսակին:

Զրկվելով ազգային գաղափարախոսությունից, մենք այսօր զրկվում ենք շատ հզոր միջոցից, որը գործում է խիստ գործառնական մակարդակով: Հիշենք, օրինակ, հայտնի սխեման, որի վրա ստեղծվում է աշխարհի կառուցման համար հավաքագրման սկզբունքը. այսպես կոչված mice-ն, որտեղ m-ն դրամն է, c-ն՝ կոմպրոմատը, e-ն՝ էգոն (շարժառիթ՝ կապված ինչ-որ անձնական պահերի հետ), և i-ն՝ գաղափարախոսությունը: Կարծում եմ, որ արդեն ռուսական ԱՀԾ-ն ոչ մի կերպ չի կարող ապավինել հենց այդ i-ին: Այն, որպես այդպիսին, բացակա է:

Ժամանակակից ռուսական քաղաքականության թատերաբեմում ստեղծվել է արտառոց վիճակ: Վերնախավում, չխոսելով արդեն հասարակության մասին, իշխում են հնացած գաղափարների ըմբռնումները, որոնք «դուրս լողացին», երբ նրա մակերեսից հանվեց կոմունիստական գաղափարախոսության շղարշը: Այստեղից էլ՝ հնարովի երկընտրանքը՝ «ում հետ բարեկամանալ». Արևելքի՞ հետ, թե՞ Արևմուտքի, որն էլ անդրադարձնում է անհաշտ մարդկանց անպտուղ և, մեծ հաշվով, մտացածին վեճերի արձագանքները: Տարբեր տիպի աշխարհաքաղաքական ըմբռնումների հանրամատչելիությունը՝ նրանց «ռիմլենդներով» և «հարթլենդներով»՝ փորված-հանված պատմության թափոնների միջից, նույնպես հետևանք է արդի աշխարհը տեսնելու անկարողության, որն այդպես էլ չեկավ փոխարինելու համայնապարփակ կոմունիստական ըմբռնումին:

Հասարակությունը և վերնախավը ի վիճակի չեղան փոխառնելու, որոշակի մասշտաբներով, ո՛չ արևմտյան լիբերալիզմը, ո՛չ էլ արևմտյան սոցիալ-դեմոկրատական գաղափարները: «Դուրս լողացող» ըմբռնումները, որ հիմնված են մեծապետականության հիմքի վրա, XIX դարի նմուշի հասկացողությամբ, չեն բովանդակում գործառնական «օգտակարությունը» արտաքին քաղաքականության այն ծրագրի համար, որ բովանդակում է կոմունիզմի և լիբերալիզմի գաղափարախոսությունը. նրանցում բացակայում է ինտերնացիոնալիստական բաղադրամասը: Այդ բաղադրամասը յուրօրինակ պատվաստում է ղեկավարող վերնախավի համար, որն ազատում է քաղաքական հոգեբանական բարդույթներից, որոնք արտաքին քաղաքականությունը դարձնում են ոչ բավարար ճարպիկ, ճկուն և, հետևաբար՝ արդի աշխարհին անհամազոր:

Մյուս կողմից, արտաքին քաղաքական գաղափարախոսությունը չպետք է միտվի՝ իրենով լցնելու արտաքին քաղաքականության բոլոր ըմբռնումները: Արտաքին քաղաքականության դերը կայանում է երկարաժամկետ կողմնորոշիչների նշմամբ և դրանց հասնելու ընդհանուր սցենարներով: Զուգընթաց՝ ապա-

գայի մասին խոհերը պետք է հենվեն ներկան համազոր կերպով հասկանալու մտքին: Արտաքին քաղաքական գաղափարախոսությունը նաև չպետք է գլորվի ինչ-ինչ գռեհիկ ապագայապաշտության կամ «ազգային գաղափարի» գիրկը:

Մեզ համար գծելով միջազգային հարաբերությունների պատկերը և Ռուսաստանի տեղը նրանում, մենք պետք է կողմնորոշվենք ոչ այնքան դեպի գաղափարը, թեև դա, անկասկած, պետք է դրված լինի մեր աշխարհայացքային պատկերացումներում:

Եթե այս տեսանկյունից նայենք աշխարհում Ռուսաստանի ներկա վիճակին, ապա ամենից առաջ խաբուսիկ կթվա պատկերացումն այն մասին, թե Ռուսաստանը մի երկիր է, որ զոհն է համաշխարհայնացման:

Ռուսաստանը տասնամյակների ընթացքում աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական համակարգերին իր ակտիվ մասնակցությամբ ցույց է տվել, որ պահպանում է բոլոր մասնագիտական գծերը (երբեմն՝ չափազանց մասնագիտական), որ հատուկ են իրեն, և միևնույն ժամանակ կարող է գիտակցաբար կարգավորել իր միացումը համաշխարհայնացման այս կամ այն ոլորտին:

Խնդիրը ամենից առաջ ռազմավարական ծրագրերի որակի, արտաքին գործունեության կանխատեսման և ... երկրի զարգացման ներքին սոցիալ-տնտեսական կայունության մեջ է: Ռուսաստանի վերաբերյալ խոսքը հիմնականում նրա միացման մասին է ժամանակակից բազմակողմանի հարաբերություններին՝ տնտեսության, ֆինանսների և համաշխարհային առևտրի բնագավառներում:

Մեզանում սկզբունքորեն բացակայում է մարդասիրական-մշակութային տարբերության, առավել ևս «կտրվածության» խնդիրը, կտրվածությունը ամենազարգացած, քաղաքակիրթ երկրների խմբերից: Դուք որքան ցանկանում եք, կարող եք խոսել ռուսական ուղղափառ քաղաքակրթության ինքնատիպության մասին, բայց բացելով Դանտեի, Շեքսպիրի, Մորուայի, Ռեմարկի կամ Ֆիցջերալդի գրքերը, առանց դույզն-ինչ հոգեբա-

նական լարման կընդունեք արժեքների այն համակարգը, որով ապրում են այդ գրքերի բնորոշ «արևմտյան» հերոսները: Եվ ոչ այն պատճառով, որ դուք այդքան ճկուն եք ձեր պատկերացումներում, ոչ. պարզապես մենք բոլորս ապրում ենք բազային արժեքների միևնույն համակարգում՝ հաճախ չնկատելով կամ նույնիսկ ժխտելով դա:

Ռուսաստանի սկզբունքային տարբերությունը աշխարհի երրորդ տերություններից, որոնք նույնպես «միանում են համաշխարհայնացմանը», այն է, որ նրանց ինքնուրույն գոյության համեմատաբար ոչ այնքան մեծ, մի քանի տասնյակ տարիների փորձը հնարավորություն չի տվել ձեռք բերելու բավականաչափ անձեռնմխելիություն և սոցիալական կառուցվածքների կայունություն, որոնց խեղաթյուրումը համաշխարհայնացման ազդեցության տակ կարող է ձեռք բերել ամենահրեշավոր ձևերը, այդ թվում՝ համաշխարհային համակարգի մյուս գործող անձանց համար վտանգավոր:

Այժմ մենք կարող ենք խոսել այն մասին, որ համաշխարհայնացման ընթացքը ստացել է վատ կառավարվող բնույթ: Եվ ամենից առաջ այն պատճառով, որ զարգացած երկրները, ստեղծելով տեղեկատվական և ֆիզիկական հաղորդակցման միջոցներ զարգացող երկրների հետ (Հարավի), ի վիճակի չէին այդ ալիքներում տեղադրել արգելքներ այն մարտահրավերների ճանապարհին, որոնք գալիս էին այդ նույն Հարավից: Իսկ մեծ հաշվով համաշխարհայնացման նախաձեռնողները՝ զարգացած Հյուսիսի երկրները, նախօրոք պետք է հոգային համապատասխան հիմքի բացակայության մասին, որ այդ մարտահրավերները կտարածվեն Երրորդ աշխարհի երկրներում, կամ ժամանակին կվերածվեն դրանց օջախները «մարտահրավերների տեղում»: Բայց իմաստությունը փորձի հետ է գալիս: Իսկ ժամանակին ոչ ոք չէր վախենում աճեցնել «մոջահեղներին» և թալիբներին, աչք փակել հրթիռամիջուկային վարժանքների կասկածելի օրակարգի դեմ, իրենց դաշնակիցների շարքերում գրանցել թմրադեղերի բարոններին և ճոճիմ մարդակերներին:

Այսպիսով, փոխադարձ կապվածության տեսությունը (և ոչ պարզապես Հարավի կախվածությունը Հյուսիսից), որ այնքան տարածված էր 1960-70 թվականներին, սկսում է աշխատել գործնականում, ամբողջ ուժով, հենց այժմ: Դրա դրսևորումն է քրեականացված միգրացիան, թմրադեղերի տարանցումը, քաղաքական իսլամիզմի տարածումը նրա ամենալպիրշ ձևերով, որի գագաթնակետը դարձավ 2002 թվականի սեպտեմբերի 11-ի ողբերգությունը: Եվ այստեղ ես դիտմամբ ձեռնպահ եմ մնում ծամծմված և սկզբունքորեն անարդար եզրակացություններից այն մասին, որ համաշխարհայնացման մահակը խփել է իր իսկ տիրոջը՝ ԱՄՆ-ին: Ո՛չ, անշրջահայացություն ու անհեռատեսություն հանդես բերին Հյուսիսի բոլոր երկրները, այդ թվում՝ նաև մեր երկիրը: Արժե պարզապես լավ հիշել բոլոր այն վարչակարգերը և բոլոր այն գործիչներին, որոնց հետ մենք բարեկամացել ենք, և մտածել, թե ինչքանով են բարեշրջվել նրանք մինչև օրս: Ծեղն ու գերանը ուրիշի աչքում փնտրելու ցանկությունն անմիջապես կկորչի:

Իր պարամետրերով՝ ամբողջությամբ, համաշխարհայնացման հանդեպ վերաբերմունքի տեսակետից Ռուսաստանը, անկասկած, առավել մոտ է կանգնած Հյուսիսի երկրներին, եթե ոչ՝ նրանց հավասար: Համապատասխանաբար, դա պետք է թելադրի և կոնկրետ արտաքին քաղաքական կողմնորոշումներ՝ հիմնված այդ օբյեկտիվ համերաշխության վրա, որի շրջանակներում, սակայն, բացառված չեն նաև մարտավարական այլ տարընթերցումներ: (Ճիշտ է, խնդիր է և ցավալի խնդիր է այն, որ այդ համերաշխությունը զգան ու կիսեն նաև Հյուսիսի մյուս երկրները): Ռուսական վիճակի բացառիկությունը Հյուսիս-Հարավ և Ռուսաստան-Հյուսիս հարաբերությունների համակարգում որոշ չափով լրացվում է մեր հսկայական ռեսուրսների գոյությամբ, այդ թվում՝ էներգետիկ, մի կարողություն, որ բնորոշ է հիմնականում Հարավի երկրներին՝ միահյուսված հումանիտար արդյունաբերական, ռազմաստրատեգիական ներուժի հետ, իսկ գլխավորը՝ պատմական փորձով, որ հատուկ է Հյուսիսի երկրներին:

Ավելի քան տասը տարի է անցել միջազգային հարաբերությունների առճակատման երկբևեռ համակարգի փլուզումից, ռուսական արտաքին քաղաքական հանրությունը, և մասամբ՝ համաշխարհայինը, ապրել են ինչ-որ բարեհոգի նվաղման վիճակում, որի լեյտմոտիվը եղել է՝ «Աշխարհի սարսափելի անցյալը հետևում է մնացել, իսկ կոնկրետ խնդիրները կարելի է լուծել ըստ նրանց ընդունման»:

Պարզվեց, որ այդպես չէ: Այդպես չէ այն իմաստով, որ կոնկրետ խնդիրները հաջող են լուծվում միայն հիմա, երբ գոյություն ունի ինչ-որ ալգորիթմ, համակարգ, կառավարական մեխանիզմ՝ դրանք վճռելու համար: Ինչպես արդեն ասվել է, անհետացած Յալթա-Պոտսդամյան համակարգը մեր տրամադրության տակ է դրել իր իրավական և կառավարման մեխանիզմների մեծ մասը, այդ թվում՝ և ՄԱԿ-ը:

Անցած դարի 40-ական թվականներին ծնված մեխանիզմները ոչ ոք չի փորձել բարեփոխել անմիջապես՝ առճակատման ավարտից հետո. դա չափազանց վտանգավոր էր: Երբ փլվեց աշխարհի քաղաքական վերնաշենքը, անհրաժեշտ էր պահպանել թեկուզև պետական մարմինների հիմնակմախքը: Այլ բան է, որ նա ի վիճակի չէր հավերժորեն պահել իր վրա նոր քաղաքական կառույցը: Ճիշտ, ինչպես այդ կառույցի պարամետրերը այսօր էլ այնքան պարզ չեն, որպեսզի օբյեկտիվ կերպով հուշեն նոր հաստատությունների ուրվապատկերը:

Ցավոք, 1990-ականներին աշխարհի կարգավորման նոր գործիքակազմի որոնումն ընթացավ սխալ ճանապարհով: Օբյեկտիվորեն ձևավորվող մեծ հաշվով կենտրոնացումը չկարողացավ խլացնել մի քանի իշխող խմբերի ձգտումը՝ դառնալու միանձնյա մրցավար միջազգային ասպարեզում: Միակ «փրկված» գերտերությունը՝ ԱՄՆ-ը, սկսեց ձգտել միանձնյա առաջատարի դերին, եթե ոչ միջազգային ժանդարմի, ապա, ծայրահեղ դեպքում՝ անվիճարկելի դատավորի: Դրա հետևանքով Միացյալ Նահանգները միջազգային հարաբերությունների կարգավորման գործում դիմում է բացարձակ անթույլատրելի մեթոդների՝

ուժային ճնշումներ և ռազմական ուժի անմիջական օգտագործում: Ձգտումը՝ իր հսկողության տակ պահել համաշխարհային քաղաքական տարածքը, նպաստում է կոլեկտիվ աշխարհակարգավորման համակարգի վերադասավորման գործընթացների արգելակմանը:

Չնայած միջազգային հարաբերությունների միակողմանի կարգավորման փորձն ապարդյուն անցավ, ԱՄՆ-ը շարունակում է այն գերլարել. դա կարող է հասցնել պատասխան հակազդեցության - նույնքան միակողմանի և, ըստ էության, հակաամերիկյան՝ ելնելով միջազգային համակարգի մյուս խաղացողների և ամենից առաջ՝ նոր տիպի ոչ պետական գործող անձերի վերաբերմունքից: Արդյունքում կարող էր առաջանալ ողջ համակարգի չափազանց լուրջ տարանջատում:

Դա իր հետևից կբերի բացառապես անթույլատրելի մեթոդների կիրառում միջազգային կարգավորման գործում - ուժային սպառնալիքներ և դրանց անմիջական օգտագործում: Ցավոք, նման տրամադրություններ գոյություն ունեն նաև ռուսական վերնախավում: Դրա հետ մեկտեղ, ուրախալի է, որ մասնագիտացված արտաքին քաղաքական ընկերակցությունում նրանք չեն բարձրանում լուսանցքային նշումների մակարդակից վեր:

Իսկ ամբողջության մեջ պետք է նկատել, որ այս կամ այն երկրի կամ երկրների խմբի ձգտումը՝ վերահսկողության տակ վերցնել համաշխարհային քաղաքական դաշտը, նպաստում է կոլեկտիվ աշխարհակարգավորման համակարգը վերաձևելու գործընթացի արգելակմանը, միակ լավագույնը ժամանակակից և չափազանց բարդ աշխարհի համար: Այդ խնդրի հրամայական լինելը մեր առջև ծառանում է միանշանակորեն: Գլոբալ բնույթի ազգամիջյան առճակատումների վերացումը հավասարակշռության պահպանման միջազգային համակարգում հանգեցրեց հակասությունների ակտիվացման, որոնցից շատերը գրվանի տակ դրված՝ փտում էին վաղուց, բայց դրանց աճը չէր թույլատրվում գերատեսչությունների կողմից:

Արդի աշխարհում հակամարտության օջախների առկայու-

թյունը, անգամ համաշխարհային զարգացման կենտրոններից հեռու, արտացոլում է երկրների քաղաքական, տնտեսական, սոցիալական կյանքը, որոնք, թվում է՝ անմիջականորեն հակամարտության վրա չեն ազդում: Դրա վառ օրինակն է էթնիկական հակամարտությունը Հարավսլավիայում, որն իր գագաթնակետին հասնելով՝ խախտեց ողջ եվրոպական մայրցամաքի անվտանգությունը, ռուս-ամերիկյան հարաբերությունները, բոլորովին նոր նոտաներ ներմուծեց Ռուսաստանի քաղաքական իրավիճակի զարգացման գործում: Տեղային հակամարտությունների բուռն ինտերնացիոնալացումը մեկն է ամենավտանգավոր գծերից ժամանակակից ազգամիջյան հարաբերություններում: Կոպիտ-ժանդարմական միջամտությունը միայն խորացնում է այդ հակամարտությունները:

Միակ այլընտրանքը հակամարտությունների կանխարգելման և վերացման միջազգային ռեժիմների ներդրումն է՝ հիմնված համաշխարհային հանրության նորմերի պարտադիր լինելու, դրանք խախտելու անթույլատրելիության վրա, ինչով էլ այդ խախտումը պատճառաբանված լինի:

Զուգընթաց՝ նույն այդ ՄԱԿ-ին այսօր ուղղակի փոխարինող չկա, և սկզբունքորեն «չի էլ նախատեսվում»: Ի դեպ, ինքը՝ ՄԱԿ-ն էլ ընդամենը ավելի կատարյալ տարբերակն է նախապատերազմյան Ազգերի լիգայի: Այսինքն՝ ակնհայտ է, որ համապարփակ միջկառավարական կազմակերպությունը դեռ երկար ժամանակ կմնա գլոբալ աշխարհակարգավորման հիմնական սկզբունքային սցենարը: «Ակումբային դիվանագիտությունը», չնայած դրանց օգտավետությանը, համաշխարհային քաղաքականության և տնտեսության առանձին բաժանմունքներում, դեռևս այդ դերին հավակնել չի կարող: «Մեծ յոթնյակի-ութնյակի» երևելիներին, նրանց ողջ օբյեկտիվ ինքնավստահությամբ հանդերձ, նույնպես չի այցելում ՄԱԿ-ին փոխարինելու հավակնոտ միտքը:

Նման իրավիճակում անհրաժեշտ է հարուցել ՄԱԿ-ի արմատական վերակառուցման խնդիրը: Համաշխարհային հանրությու-

նը պետք է նոր հետաքրքրություն դրսևորի այդ կառույցի նկատմամբ, հավանաբար, նաև «հին» տերությունների լիազորությունների վերաբաշխման հաշվին: Դա զգալի չափով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կազմի, քանակի և որակի խնդիրն է, այդ կազմակերպության մեջ վճիռներ ընդունելու ընթացակարգերը:

Բայց պակաս կարևոր չէ նաև մի այլ բան՝ ՄԱԿ-ի դերը համաշխարհային տնտեսական զարգացումը կոորդինացնելու մեջ, որպես կարևորագույն չափորոշիչ արդի աշխարհում: Առավել արդյունավետ և տիրական ՄԱԿ-ը (Անվտանգության խորհրդի մակարդակով ամենից առաջ) կարող է վերադառնալ աշխարհատնտեսական ու ֆինանսական համակարգերի իրական վերականգնման գաղափարին: Ձևականորեն գործելով «ՄԱԿ-ի յոթնյակի» շրջանակներում, համաշխարհային բանկի խումբը և Արժույթի միջազգային հիմնադրամը (ԱՄՀ) իրապես ինքնուրույն են և ենթարկվում են միայն հետաքրքրությունների առանձին խմբերին՝ միակողմանի նվիրումով վերջիններիս գերազատական տնտեսական գաղափարին:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը, հնարավոր նոր մշտական անդամներով, որոնք միաժամանակ հանդիսանում են աշխարհի խոշորագույն տնտեսություններ (Հնդկաստան, Ճապոնիա, գուցեև էլի ուրիշ երկրներ), ընդհանուր ակումբի ներկայացուցիչներ Երրորդ աշխարհի առաջավոր երկրներից, թերևս նաև ԵՄ միասնական ներկայացուցիչը կարող էր իրապես համադրել ՄԱԿ-ի տնտեսական ու քաղաքական գործիքակազմը, ուղղելով այն իսկապես ընդհանուր խնդիրների լուծմանը:

Ակնհայտ է, որ երբ խոսում ենք ՄԱԿ-ի, առավել ևս Անվտանգության խորհրդի բարեկարգման մասին, անհրաժեշտ է ուշադրությամբ հաշվարկել հետևանքները Ռուսաստանի համար: Միևնույն ժամանակ սկզբունքորեն պետք է հիշել և մի ուրիշ բան: ՄԱԿ-ի և ԱԽ-ի դերի աստիճանական անկումը համաշխարհային համակարգում հանգեցնում է Ռուսաստանի համար կարևոր պետական միջոցների կորստի: Այդ կորստին փոխհատուցում տալ տարբեր ակումբների մեխանիզմների միջոցով,

մենք դեռևս չենք կարող: Մեր մասնակցությունը զարգացած երկրների պաշտոնական մեխանիզմներին կա՛մ անարժեք է, կա՛մ լիովին կախված այն մասնակիցների կամքից, որոնք մեզ ընդունել են այդ ակումբները:

Նման իրադրության մեջ, հավանաբար, ավելի լավ է տարբաժանել մի քանի բացառիկ իրավունքներ Անվտանգության խորհրդի մակարդակով և ընդհանուր առմամբ մեծացնել այդ իրավունքներից ու արտոնություններից բխող իրական արդյունքը, քան սպասել, թե երբ պիտի դրանք արժեզրկվեն Անվտանգության խորհրդի դերի հետ միասին:

Արդի աշխարհում հետզհետե ավելի մեծ դեր են խաղում նաև գլոբալ քաղաքականության տնտեսական գործոնները: Համաշխարհային տնտեսական համակարգը կարող է և պետք է դառնա է՛լ ավելի ճկուն՝ նրա կարգավորման տեսակետից: Համաշխարհային տնտեսության բարդությունը և նրա աճող ծավալները ցույց են տալիս, որ դոլարը որպես միակ համաշխարհային պահուստային արժեք, անթույլատրելի շռայլություն է: Աշխարհը չի կարող պատանդ դառնալ մեկ, թեկուզ չափազանց խոշոր և սկզբունքորեն կայուն տնտեսության՝ ԱՄՆ-ի տնտեսությանը: Համաշխարհային արժույթի պաշարների կուտակման և խնայողության միջոց կարող են դառնալ մի քանի արժույթ:

Ուրախալի է, որ այժմ ձևավորվում է մի քանի արժութային գոտի, որոնցից մեկը՝ «Եվրոգոտին», արդեն կայացած է: Հարցն այն է, թե որքան արագ այն պետք է ընդլայնվի, որքան ուժեղ կլինի: Ռուսաստանի և Եվրախորհրդի սերտ փոխգործողությունը եվրոյի գոտում պետք է դիտարկել որպես որոշակի ապահովագրություն ամենազոր և միաժամանակ անկայուն դոլարից: Ավելին, Եվրախորհրդի հետ բավական սերտ կապերի, տնտեսական հարաբերությունների շնորհիվ, ամենից առաջ տնտեսական ոլորտում, Ռուսաստանն ունի լուրջ ռեսուրսներ «ապահովագրողի» համար: Դոլարի և ԱՄՆ-ի հետ հարաբերություններում նման հնարավորություններ չունենք:

Ակնհայտ է, որ աճում է նաև մի այլ արժութային գոտի՝ Ասի-

ական-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի գոտին, բայց ո՞-
ը կլինի նրա առանցքում՝ ի՞նը, թե՞ յուանը, դեռ հարց է: Իսկ
գուցե և արժե՞ թույլատրել այս գոտու արժութային կրկնորդու-
թյունը: Դրա հետ մեկտեղ օբյեկտիվորեն յուանի «տերը»՝ Չի-
նաստանը, հեռանկարում տնտեսական ավելի մեծ ներուժ ունի,
քան Ճապոնիան, և, որպես հետևանք՝ մեծ առավելություններ իր
արժույթով: Ասիական ճգնաժամը ցույց տվեց, որ իենը, որն ամ-
րապնդվել է վերջին տասը տարում, նոր տնտեսության ոլորտնե-
րում թույլ կայունություն ունի: ԱԽՏ-ի միակ խոշոր արժույթը, որ
չի ենթարկվել արժեզրկման, յուանն է. նրա թիկունքում չինա-
կան պետության հզորությունն է: Յուանի գոտու ստեղծումը,
կամ՝ անգամ յուանի և իենի, ակնհայտորեն տանելու է դեպի
ասիական տնտեսակարգի մի նոր մակարդակի, որն իր հերթին
պետք է շտկի նաև համաշխարհային տնտեսությունը:

Դատողությունները համաշխարհային տնտեսակարգի մա-
սին ռուսական բեկվածքում, անտարակույս, շոշափում է մեր եր-
կիրը ԱՀԿ կազմում ընդունելու խնդիրները: Կասկած չկա, որ
անիմաստ է մնալ «ազատ առևտրի» համպարփակ ցանցի շրջա-
նակներից դուրս (ճիշտ այդպես, չակերտների մեջ, քանզի, հա-
վանաբար դժվար է գտնել ավելի կարգավորված այլ մեխանիզմ,
քան ԱՀԿ-ն է): Ի դեպ, նույնքան անիմաստ է ամեն ինչ զոհելը
հանուն բուն ընդունելության փաստի:

Մենք պարտավոր ենք շատ ուշադիր լինել, թե ինչպես է այդ
նույն Եվրախորհուրդը պաշտպանում իր շահերը. ոչ միայն պար-
զապես ծեծկված առևտրական պատերազմներում (թեև նրանց
մարտավարությունը նույնպես արժե սովորել), այլ՝ թե ինչպես
Եվրախորհուրդը նախօրոք է կանխորոշում իր երկարաժամկետ
շահերը, մասնավորապես, արտոնյալ առևտրական հարաբերու-
թյունները իր երբեմնի գաղութների կամ պարզապես իրեն հե-
տաքրքրող երկրների հետ: Նվազագույնը մենք պետք է հիշենք
մեր բոլոր ինտեգրացիոն մտադրությունները ԱՊՀ-ում, նրանց
սկզբունքային իրականացումների մասին՝ ԱՀԿ մտնելու դեպ-
քում: Այս շահերը պետք է ձևակերպել և պաշտպանել:

Երբ մենք խոսում ենք համաշխարհայնացման և միջազգային քաղաքականության գլոբալ համակարգի, ինչպես և՝ տնտեսական հարաբերությունների ու հաստատությունների մասին, չի կարելի մոռանալ նաև մի այլ գործընթացի՝ տարածաշրջանացման մասին. տարածաշրջանային մակարդակով մերձեցման ընթացքում իրենց ներսում ավելի սերտ կապված կառույցների համաշխարհային համակարգի գործակցով: Այս տեսակետից ամենավառ օրինակը Եվրոպան է, որտեղ Եվրախորհրդի միջուկի շուրջն աճում է քաղաքական-տնտեսական կապերի և հաստատությունների յուրահատուկ գոտի, որն ավելի ու ավելի է տարածվում ողջ եվրոպական, ասենք՝ նաև եվրասիական տարածաշրջանում:

Ռուսաստանը, որը տարածաշրջանային մի շարք ուղղություններում (օրինակ՝ ԱՊՀ-ում) ունի անվիճելի առավելություն, մինչև իսկ նույն ԱՄՆ-ի հետ համեմատած, պետք է ավելի ուշադրությամբ վերաբերվի այդ գործընթացներին: Դրսում և ներսում ստեղծելով «իր ներքո» տեղի ունեցող տարածաշրջանային գործընթացները, վերջին հաշվով նախապատրաստում է է՛լ ավելի հաջող մուտք գլոբալ հարաբերությունների համակարգ:

Խորհրդային Միության փլուզումը նախկին ԽՍՀՄ-ի հանրապետություններին կանգնեցրեց երկընտրանքի առջև. սկսե՞լ նոր միջազգային - քաղաքական տարածաշրջանի ձևավորումը, թե՞ միանալ առկա կառույցներից որևէ մեկին: Երկրորդ հնարավորությունը լիարժեք կերպով օգտագործեցին Մերձբալթյան երկրները. նրանք վստահորեն կուրս վերցրին միանալու եվրոպական հարաբերությունների պետական ցանցին և այժմ կանգնած են Եվրախորհրդի շեմին: Ճիշտ է, այդ շեմին նրանք մոտեցան խնդիրների լուրջ բեռով, որ ստեղծել էին հենց իրենք: Այդ խնդիրների էությունը լավ հայտնի է բոլորին: Այլ պետությունների համար հեռանկարում նման հնարավորությունը քիչ հավանական է: Ոչ մի տարածաշրջան, որը սահմաններ ունի ԱՊՀ-ի հետ, դեռ չի կարող, օբյեկտիվ պատճառներով (մասնավորապես՝ սուբյեկտիվ ցանկությունները չհաշված) կլանվել որևէ պետության կողմից, որն առաջացել է Խորհրդային Միու-

թյան փլուզումից հետո, լուսանցքային մասնակցությունից վեր պայմաններում: Այստեղ իր դերն է խաղում այն, որ նրա արտաքին սահմաններին հայտնվեցին երկրներ, որոնց սեփական միջազգային-ռեգիոնալ նույնականությունը 1990-ականներին այնքան էր ջնջված, որ զուգակցվելով նրանց ներսում ընթացող գործընթացներին, իջեցրել էր նրանց «կլանվելու» ներուժը:

Հաշվի առնելով վերոնշյալը, այդ տարածաշրջանում միջնաժամկետ հեռանկարում և միջազգային-կառուցվածքային փոփոխությունների որևէ արժանահավատ կանխագուշակում իրատեսական չէ: Զուգընթաց՝ երկարաժամկետ հեռանկարի դեպքում բաց է մնում այն հարցը, թե որքան տևական է հետխորհրդային միջազգային-քաղաքական տարածաշրջանը: Ենթակա չէ՞, արդյոք, անցումային այլ վիճակների: Սկզբունքորեն մենք տեսնում ենք, որ նման գործընթացներ կարող են կատարվել: Այսպես, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի միջազգային-քաղաքական տարածաշրջանը, որ որպես այդպիսին հայտնվեց սոցիալիստական ճամբարի փլուզման հետևանքով Եվրախորհրդի երկրների հետ միանալու արդյունքում, հետզհետե շեղվում է ընդհանուր հոսանքից՝ միտելով ինքնալուծարման:

Եվ այսպես՝ միջազգային-քաղաքական տարածաշրջանի հայտնվելը հետխորհրդային տարածության մեջ օբյեկտիվորեն կանխորոշված էր, ինչպես որ կանխորոշված էր նաև նրա կազմակերպության թեկուզ նվազագույն պետականացման մեխանիզմներով, որ նման են համաշխարհային պրակտիկայում ընդունվածներին: Դա իր հերթին բացատրվում է նրանով, որ երկրները, որոնք նրա բաղադրիչներն են, իրենց բոլոր ծախսերով միջազգային-քաղաքական պայմանագրային օբյեկտ են: Այդ երկրների վերնախավերը բաղկացուցիչ մասն էին խորհրդային վերնախավի, որը կես դարի ընթացքում ակտիվորեն ձևավորել էր նորմեր ու ավանդույթներ՝ ժամանակակից միջազգային վարվելակերպի համար, կամ, որպես երկբևեռ առաջնորդ, «հավանություն է տվել» միջազգային հանրության մյուս մասնակիցների աշխատանքին:

Ներկա պահին համագործակցությունը դարձել է եվրոպական քաղաքական համակարգի բաղկացուցիչ մասը, իրականություն, որը գոյություն ունի՝ անկախ նրա հանդեպ այս կամ այն սուբյեկտիվ հարաբերությունից: ԱՊՀ-ն ապահովում է երկրների պետական կազմակերպական և որոշակի չափով՝ նորմատիվային-իրավական ընդհանրությունը հետխորհրդային տարածքում: Ակնհայտ է, որ համագործակցությունը «հովհարային կազմակերպություն» է, որը նախկին ԽՍՀՄ տարածքում կատարում է անհրաժեշտ տարրական կառուցվածքային դեր: Դատողությունները, թե ԱՊՀ-ն ավելորդ է, նույն հարթության վրա են, ինչ որ դատողությունները, թե պետք չեն ԵԱՀԿ-ն կամ ՄԱԿ-ը, այսինքն՝ ոչ մասնագիտական են, որպես արդյունք՝ միջազգային հարաբերություններին սխալ հարթության վրա մոտեցման: Եթե համագործակցությունը չի էլ արդարացնում սպասելիքները, ուրեմն՝ դրանք շատ են ուռճացված: ԱՊՀ-ն ոչնչով վատ չէ ցանկացած տարածքային կազմակերպությունից, չնայած դեռ շատ հեռու է ինտեգրացիոն համագործակցության մակարդակից:

Համագործակցության զարգացման լավագույն ռազմավարական գիծը երևում է «մեծ» ԱՊՀ-ն աշխատանքային վիճակում պահելու մեջ՝ միացրած «բազմաձևաչափ ու լայն թափի ինտեգրման» զարգացման հետ:

Երբ խոսում են Համագործակցության շրջանակներում «ձևաչափերի» մասին և կասկածում են նրա ներուժային անկայուն դիրքի վրա, ԱՊՀ-ի հանդեպ ամբողջությամբ վերցրած շատ հաճախ տեսադաշտից բաց են թողնում «խոշոր չափսերի» հարցը: ԱՊՀ-ում (ինչպես և ԱՊՀ-ի հանդեպ Ռուսաստանի արտաքին քաղաքականության մեջ) նկատելի է համագործակցության ասիական և եվրոպական թևերի ինքնավարացման հարցը՝ ասիական բլոկի առավել խիստ ներքին միասնության պայմաններում: Խոսքը ոչ թե միմյանց հանդեպ «լավ ու անկնճիռ հարաբերությունների» մասին է, այլ՝ փոխգործակցության մարտահրավերների և ուղղությունների զգալի քանակության, ինչը գերակա է հարավային «խոշորաչափ» բոլոր պետությունների համար մի-

աժամանակ: Այդ միասնությունը ձևավորող նշանակալից գործոնը Կասպիան է:

Այս երկու ուղղությունների հետագա ինքնավարացումը առաջադրում է միասնական միջազգային-քաղաքական տարածաշրջանի սահմաններում դրա հնարավորության խնդիրը: Միջազգային հարաբերությունների դինամիկան կենտրոնական-ասիական և անդրկովկասյան թևերում անհամեմատ բարձր է, քան եվրոպականում: Սա բացատրվում է, ինչպես արդեն ասել ենք, օբյեկտիվորեն փոխկապակցված մի շարք աշխարհաքաղաքական հարթությունների վերականգնման փաստով՝ Կենտրոնական Ասիայում, Անդրկովկասում (ավելի ստույգ՝ Կովկասում), Մերձավոր և Միջին Արևելքում, Հարավային Ասիայում:

Եվրոպական թևը, որը սկզբունքորեն ունեցել է վերամիավորվելու ենթակայական հնարավորություն ԿԱԵ-ի տարածաշրջանի հետ, համապատասխան վարկածային զարգացման, ինչպես նաև՝ ապագայում ԿԱԵ-ն որպես ինքնուրույն միջազգային-քաղաքական տարածաշրջան պահպանելու դեպքում, ներկայումս փոխարկվում է սահմանակից գոտու՝ ըստ Եվրախորհրդի ընդլայնվող սահմանների:

Հենց այդ «տարբաժանվածությունը», որքան էլ տարօրինակ է, կարող է հետագայում լուրջ սպառնալիք դառնալ համագործակցության համար: Նման իրավիճակում համաձայնության որոնումը դառնում է լուրջ խնդիր ոչ այնքան «Ռուսաստան - ԱՊՀ» պետությունների, ինչպես հիմա է, որքան «ԱՊՀ - Եվրոպական պետություն - ԱՊՀ ասիական պետության» համար:

Ցանկացած տարածաշրջանի (այդ թվում՝ և ԱՊՀ-ի) կանոնավոր գործունեությունը ենթադրում է հականերգործության մեխանիզմների առկայություն՝ ռազմաուժային բնույթի սպառնալիքների և մարտահրավերների դեմ: Նմանօրինակ ժամանակակից մեխանիզմը կոլեկտիվ անվտանգությունն է, որը ենթադրում է ոչ միայն և ոչ այնքան համատեղ փոխազդեցություն ընդդեմ ագրեսիայի, դրսից այս կամ այն միության անդամի դեմ, որքան հնարավորություն՝ կանխելու ռազմաուժային անկայունությունը, որը բխում է իր՝ միու-

թյան ներսից, և նրա աղբյուրները կարող են լինել ինչպես մասնակիցների միջպետական հակասությունները, այնպես էլ էթնո-ժողովրդական, կրոնական ընդհարումները, խոշորածավալ ահաբեկչական գործողությունները, քաղաքացիական պատերազմները, հասարակական աղետները և այլն: Ռուսաստանը, որպես հետխորհրդային տարածքի առաջատար տերություն, ամենաշահագրգիռ մասնակիցն է ԱՊՀ-ի կոլեկտիվ անվտանգության ներուժային համակարգի և ունի բոլոր հնարավորությունները այդ համակարգը կառուցելու իր ազգային շահերի առավելագույն հաշվարկումով: Սրանով հանդերձ, խոսելով ԱՊՀ-ում կոլեկտիվ անվտանգության մասին, մենք չպետք է սահմանափակվենք այն պետությունների շրջանակով, որոնք մնացել են կոլեկտիվ անվտանգության դաշնագրի մասնակիցներ:

Նախկին ԽՍՀՄ երկրների հետ հարաբերություններն իրենց մեջ ներառում են ռուսական սփյուռքի խնդիրը, որն այդպես էլ համարժեք արտացոլում չի գտել մեր արտաքին քաղաքականության մեջ:

Ի տարբերություն համաշխարհային ավանդական սփյուռքների, ռուսական նոր առաջացած սփյուռքը դեռևս գտնվում է ձգձգվող ինքնակայացման փուլում: Այնուհանդերձ, լուրջ կասկածներ կան, որ հիմնվում է այն նույնականության վրա, որը բնորոշ էր նախկին ԽՍՀՄ-ի ռուսալեզու քաղաքացիների համար: Անցած 11-12 տարիների ընթացքում տեղի է ունեցել տեղական հանրություններին միանալու սցենարների բնական մաքրում, աճել է մի սերունդ, որը հնարավորություն չունի գործելու ըստ այն սցենարների, որոնցով շրջապատող ազգային-դավանական միջավայրի հետ շփման մեջ էին մտնում նրանց ծնողները: Դրա հետ մեկտեղ սերնդային գերակշռող խմբի բացակայությունը տանում է սփյուռքի ուծացման: Նրա օբյեկտիվ համախմբումը կարող է լինել սոսկ այն ժամանակ, երբ սերունդների հերթափոխը կավարտվի:

Ներկա ժամանակահատվածը բնութագրվում է հենց սփյուռքի նույնականությամբ, որը ձևավորում է նրա հարաբերու-

թյունները Ռուսաստանի հետ: Նման իրավիճակում չափազանց կարևոր է սփյուռքի հանդեպ հետևողական և առավելագույն մոտեցման առկայությունը Ռուսաստանի քաղաքական իրողություններին: Հակառակ դեպքում բացառված չէ նրա քայքայումը որպես ինքնուրույն հանրույթ:

Իր զարգացման ընթացքում ԱՊՀ-ն արդեն հաղթահարել է «կա՛մ ինտեգրացում, կա՛մ հակաինտեգրացում» պարզունակ սցենարը: Համագործակցության տեղի ունեցող գործընթացները ավելի, քան բարդ բնույթ են կրում: Հետխորհրդային տարածքում հարաբերությունները դառնում են լիարժեք միջազգային հարաբերություններ, ինչը վկայում է, որ այն ձևավորվում է որպես միջազգային տարածաշրջան: ԱՊՀ-ն, ընդսմին, տարածաշրջանի նախնական կազմավորման գործոն է, և նրա այդ դերը դեռ մինչև վերջ խաղացված չէ:

Ռուսաստանի արտաքին քաղաքականության երրորդ գլխավոր գերակայությունը ես տեսնում եմ եվրոպական ուղղության մեջ:

Միջազգային հարաբերությունները Եվրոպայում շարունակում են վճռորոշ լինել աշխարհում՝ իրավիճակների զարգացման վրա ամբողջությամբ վերցրած: Դատողությունները եվրոպական ճգնաժամի, նրա ծերացման մասին ավելի շատ եվրոպական հոգփացած մտավորականության և նրան նախանձող ռուսական մտավորականության հորինվածքներն են: Արևմտյան Եվրոպան 1990-ական թվականներին նոր գործող անձանցով, փաստորեն, դուրս եկավ միջազգային հարաբերությունների ձևավորման, ինտեգրացիոն միավորման փուլ, որն իր մեջ ներառում է ավանդական պետությունների կենսագործունեության բոլոր կողմերը: Եվ դա իրական, «համակարգային» նվաճում է, որի դերն առավել հստակ կդառնա որոշ ժամանակ անց:

Եվ ամբողջության մեջ միջազգային հարաբերությունների եվրոպական ենթահամակարգը պետականորեն ամենահամակարգված է արդի միջազգային հարաբերություններում: Սկզբունքորեն Եվրոպայում դրանք կարելի է դիտարկել որպես երեք ուղղություն-

ների փոխհարաբերություն՝ համաեվրոպական, որ ներկայացնում է ԵԱՀԿ-ն, արևմտաեվրոպական, որ ներկայացնում է ԵՄ-ն (մասամբ էլ ԵԽ-ն) և եվրոատլանտյան, որը մարմնավորում է ՆԱՏՕ-ն: Իսկ «ինքնավարությունը» Եվրոպայի առանձին երկրներում մշտապես նվազում է: Այս կամ այն պետության քաղաքականությունը եվրոպական ենթահամակարգում այժմ կարելի է գնահատել այս կամ այն ուղղության փոխհարաբերությունների տեսակետից, նրա համապատասխանությունը իշխող ուղղության աճի տեմպերին, և որպես հետևանք, լիակատար համապատասխանությունը կամ անհամապատասխանությունը միջազգային-քաղաքական իրավիճակներին: Ինչ վերաբերում է Ռուսաստանին, ապա նրա՝ եվրոպական ենթահամակարգին միանալու սցենարի բացառիկությունը, որն ինչ-որ տեղ հիշեցնում է ԱՄՆ-ի պարագան, նրան հնարավորություն է ընձեռում ընտրելու այս կամ այն ուղղության գերակայությունը և ոչ պարզապես ենթարկվելու նրա դինամիկային: Այլ խոսքով՝ Ռուսաստանի գործողությունների ազատությունը Եվրոպայում ավելի մեծ է, քան ցանկացած այլ պետության. հարցն այն է, թե ինչպես տնօրինել այն:

Ռուսաստանի եվրոպական նույնականությունը հազիվ թե վիճարկելի է: Մեր երկրի բնակչության մեծ մասն ապրում է նրա եվրոպական տարածքում: Ռուսական գործարար վերնախավի, ռուսական երիտասարդության գործունյա մասը միանշանակ կողմնորոշվում է դեպի Եվրոպա: Հենց այստեղ էլ մենք հանդես ենք գալիս որպես բացարձակ հավասարակշիռ տերության՝ ռեսուրսային առավելությամբ, որը կարող է ռուսական շահերի իրացումն ապահովել ողջ ծավալով: Ռուսաստանը չունի չլուծված կամ օբյեկտիվ հակասություններ եվրոպական որևէ երկրի հետ: Եվրոպայի հետ հարաբերություններում լարվածությունը ստեղծվում է միայն մեր տարածքային մոտիկության, շահերի խաչաձևման, անվտանգության ռազմավարական, տարածության ընդհանրության պատճառով: Եվրոպական երկրների հետ պատմականորեն ստեղծված կապերը այժմ ավելի քան կարգավորված են, ինչպես երկկողմանի, այնպես էլ բազմակողմանի

կապերով: Եվ ոչ մի առարկություն, այդ թվում և՝ «կալինինգրադյան փաստարկի» շահարկումը, չի կարող սասանել այս դրույթի օբյեկտիվությունը:

Ասիական-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանը միջազգային հարաբերություններում իր նշանակությամբ ներկա պահին համեմատվում է Եվրո-Ատլանտյան տարածաշրջանի հետ: Զարգացման գործընթացների հարաճունությունը այս տարածքում նրան հնարավորություն է տալիս դառնալու համաշխարհային առաջնորդներից: Ցավոք, նախկին ԽՍՀՄ-ի և Ռուսաստանի դիրքորոշումներն այս տարածաշրջաններում միշտ եղել են ոչ միանշանակ: ԱԽՏ-ն աներկբայելի հետաքրքրություն են ներկայացնում մեր երկրի համար, այնպես որ, անգամ Ռուսաստանի զուտ աշխարհագրական ներկայությունը այս տարածաշրջանում չափազանց զգալի է: Սակայն այստեղ մեր շահերի իրականացման հնարավորությունները մնում են ծայրահեղ անբավարար: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո տարածաշրջանի քաղաքական քարտեզը նշանակալից չափով կազմվել է Վաշինգտոնում: Դա ստիպել է ԱԽՏ-ի երկրներին՝ կողմնորոշվել դեպի ԱՄՆ, դրան նպաստել է նաև Ռուսաստանի լուսանցքային նշանակությունը տարածաշրջանում: Նման իրավիճակում Ռուսաստանի վերադարձը դեպի ակտիվ համագործակցություն Չինաստանի և Ճապոնիայի հետ, հարաբերությունների հաստատումը Հարավային Կորեայի հետ, միացումը ԱԽՏ-ի պետական կառավարման մեխանիզմներին կարելի է միայն ողջունել: Մյուս կողմից՝ ռուսական Հեռավոր Արևելքի տնտեսական ներուժի փլուզումը հարուցում է այդ ակտիվության վերջնական նպատակահարմարության հարցը: Ինչի՞ համար են այդ բոլոր կապերը, հարաբերությունների հաստատումը այն նույն ժամանակ, երբ քո սեփական տարածաշրջանը թաղված է խորին աղքատության մեջ և կտրված երկրի համար ընդհանուր սոցիալ-տնտեսական միտումներից: Կայունորեն աճող Չինաստանի հենքի վրա դա ոչ միայն ափսոսանք է առաջացնում, այլև որոշակի անհանգստություն:

ԱԽՏ-ի հանդեպ մեր քաղաքականության մեջ ինձ միշտ զարմացրել է և ստիպել՝ չընդունել պետական պաշտոնյաների մոտեցումը մի այնպիսի հարցի, ինչպիսին է Ճապոնիայի հետ խաղաղության համաձայնագիր կնքելը: Խաղաղության համաձայնագիրը չի կարող ինքնանպատակ լինել ռուսական դիվանագիտության համար, ինչպես հաճախ պատկերացնում են հիմա: Քարոզչական կաղապարը, ըստ որի նման համաձայնագրի բացակայությունը հազիվ թե հավասարազոր չէ պատերազմական դրության, միջազգային իրավական տեսակետից միանգամայն անհիմն է: Այդ պատճառով էլ նպատակահարմար է ելնել «Խաղաղության, բարեկամության և համագործակցության մասին» դաշնագիր կնքելու անհրաժեշտությունից, որի իրական բովանդակությունը պետք է լինի հենց ինքը՝ համագործակցությունը: Դաշնագիրը կարող է և պետք է կնքվի՝ լռություն պահպանելով որոշ հարցերում, այդ թվում՝ և տարածքային: Եվ մեր կողմից չպետք է որևէ կերպ արագացվի դաշնագրի նախապատրաստումը ու չպետք է ձգտենք նրանում ընդգրկել որքան հնարավոր է շատ բնագավառներ: Որևէ քննարկում տարածքային զիջումների մասին (ինչպես դաշնագրի նախապատրաստման ընթացքում, այնպես էլ հետագայում) բացարձակապես տեղին չէ և կարող է միայն առաջացնել մի շարք նման պահանջներ այլ պետությունների կողմից: Արտաքին քաղաքական գործունեությունը հիմնավորելիս անհրաժեշտ է միանշանակ ելնել այն սկզբունքից, որ Ռուսաստանում տարածքային խնդիրները բացակայում են: Իսկ դրանց ներկայությունը ճապոնական քաղաքագետների գիտակցության մեջ մեզ շատ չպետք է հուզի:

Ռուսական արտաքին քաղաքականության համար Մերձավոր և Միջին Արևելքը մեկն է ամենահակասական շրջաններից: Չնայած այդ տարածաշրջան ներթափանցելու և ամրանալու նպատակասլաց փորձերին, ո՛չ նախկին Խորհրդային Միությունը, ո՛չ էլ ժամանակակից Ռուսաստանը չեն կարող համեմատվել Միացյալ Նահանգների և նույնիսկ Եվրախորհրդի երկրների հետ (միասին վերցրած): Ներկայումս արագ թափով առաջ է տարվում Մերձավոր և

Մոսկվայի քաղաքապետ Յուրի Լուժկովի հանդիպումը
ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ

Մոսկվայի քաղաքապետ Յուրի Լուժկովը (ձախից),
Ռուսաստանի հայերի միության և Համաշխարհային հայկական կոնգրեսի նախագահ Արա Աբրամյանը,
ՌԴ արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը

Մոսկվայի քաղաքապետ Յուրի Լուժկովը, Ռուսաստանի հայերի միության և Համաշխարհային հայկական կոնգրեսի նախագահ Արա Աբրամյանը

Մոսկվայի քաղաքապետ Յուրի Լուժկովը և Երևանի քաղաքապետ Երվանդ Զախարյանը ստորագրում են երկու քաղաքների միջև համագործակցության պայմանագիրը (2005-2007 թթ.)

Մոսկվայի քաղաքապետ Յուրի Լուժկովը և Երևանի քաղաքապետ Երվանդ Զախարյանը Հյուսիսային պողոտայի բնակելի շենքի հիմնարկեքի արարողությանը

Միջին Արևելքի, Անդրկովկասի և Միջին Ասիայի տարածաշրջաններում աշխարհաքաղաքական միասնության վերականգնման գործընթացը: Առճակատումների վերացումով միջազգային հարաբերությունների մոդելներում փլվել են պատնեշները, որոնք հարավային խորհրդային հանրապետությունները բաժանում էին միջերկրածովային ավազանի երկրներից:

Թուրքիան և Իրանը դարձել են միջինասիական ու անդրկովկասյան դասակարգման լիիրավ խաղընկերներ: Այդ հանգամանքը առավել չափով ցույց է տալիս իրավիճակը կասպիական էներգետիկ պաշարների հարցում: Խողովակաշարերի ցանցը, որը հեռանկարում ծածկելու է ողջ տարածքը՝ Ռուսաստանի հարավային սահմաններից մինչև Միջերկրական ծովի ու Պարսից ծոցի նավահանգիստները՝ և Ղազախստանից մինչև Նովոռոսիյսկ, կստեղծի է՛լ ավելի ամուր համագործակցություն: Այս ցանցում կխաչվեն երրորդ երկրների՝ Արևմտյան Եվրոպայի և ԱՄՆ-ի խիստ հակասական շահերը:

Աշխարհաքաղաքական միասնության վերականգնումը չի սահմանափակվում սոսկ էներգետիկ պաշարների ոլորտում համագործակցությամբ: Այսօր նկատվում է ուժեղ, իսկ երբեմն էլ՝ իշխող դիրք գրավող Մերձավոր ու Միջին Արևելքի պետությունների քաղաքական-գաղափարական ազդեցությունը Միջին Ասիայի և Անդրկովկասի հանրապետությունների, ավելին՝ ռուսական Հյուսիսային Կովկասի, ռուսական եվրոպական մասի մահմեդական հանրապետությունների և անգամ Ուկրաինայի վրա (Ղրիմ-թաթարական տարրի միջոցով): Այսպիսով, Մերձավոր ու Միջին Արևելքի տարածաշրջանը «մերձ» է Ռուսաստանին, սկսում է խաղալ բոլորովին նոր դեր հետխորհրդային տարածքում: Ամենաակտիվ և վտանգավոր այդ մերձավորությունը արտահայտվում է իսլամական ծայրահեղականության տարածմամբ: Այս գործոնը մեկն է ամենալուրջ խոչընդոտներից տարածաշրջանի երկրների հետ արդյունավետ համագործակցության ճանապարհին:

Ռուսաստանը դարձել է տարածաշրջանի երկրների արտաքին քաղաքականության օբյեկտ: Սա մեզ համար բոլորովին նոր

վիճակ է, որը պետք է նախ՝ գիտակցել և ապա՝ նպատակամետ կերպով վերացնել:

Դրա հետ մեկտեղ, այսօր ստեղծվել է մի իրավիճակ, երբ Ռուսաստանին այդ տարածաշրջանում փաստորեն պակասում են դաշնակից երկրներ, որոնք ի վիճակի կլինեն արդյունավետ ուղիներ դառնալ ռուսական շահերն առաջ մղելու համար: Մերձավոր ու Միջին Արևելքում Ռուսաստանի արտաքին քաղաքականության սկզբունքային խնդիրն այն է, որ տարածաշրջանի առավել հարուստ երկրների նկատմամբ մենք հանդիսանում ենք ռազմավարական մրցակիցներ էներգակիրների շուկայում: Նման միջոցների տիրապետումը Ռուսաստանի առջև խնդիր է դնում թեկուզև նվազագույն համաձայնություն ՕՊԵԿ-ի երկրների արտաքին տնտեսական գործունեության հետ, առաջին հերթին՝ Պարսից ծոցի երկրների հետ, որոնք միավորված են Պարսից ծոցի արաբական պետությունների համագործակցության խորհրդի մեջ: Ընդ որում, այդ խորհրդի ամենաազդեցիկ մասնակիցը Սաուդյան Արաբիան է: Իսկ Սաուդյան Արաբիայի հետ արդյունավետ համագործակցություն հնարավոր չէ, մինչև այդ երկիրը չհրաժարվի քաղաքական իսլամի (այդ թվում՝ և նրա ծայրահեղական ձևերի) խոշոր հովանավորի կարգավիճակից:

Տարածաշրջանը, որն ավելի ու ավելի է դեպի իրեն ձգում համաշխարհային հանրության ուշադրությունը, դառնում է Հարավային Ասիան: Այս տարածաշրջանն իր մեջ կուտակել է նվազագույնը խնդիրների երեք խումբ, որոնց աճը կարող է ազդեցություն գործել համաշխարհային բոլոր հանրությունների վրա: Առաջին և ակնհայտ խնդիրը իրադրությունն է Աֆղանստանում: Թալիբների վարչակարգի ուժային վերացումը իսկապես բացել է երկրի վերածննդի հեռանկարը: Բայց անկայունության կրկնությունը, որը կտա իր շորշոփները, այդ թվում՝ և ԱՊՀ-ի տարածքում, լիովին հնարավոր է: Ե՛վ Ռաբանիի Աֆղանստանը, և՛ թալիբների Աֆղանստանը իր տնտեսական կյանքը կառուցել է թմրադեղերի արտադրության և դրանց տարանցման վրա: Որտե՞ղ է երաշխիքն այն բանի, որ դա պետք է դադարեցվի: Կարզայի

կառավարությունը դեռևս չունի այլընտրանքային տարբերակներ (բացի ՄԱԿ-ի զանգվածային մարդասիրական օգնությունից), որոնք կապահովեն բնակչության տարրական գոյատևումը: Թմրադեղերի զանգվածային արտադրությունը ուղիղ ճանապարհ է, որը տանում է «failed state», այսինքն՝ ինչ-որ բանի, որ նման է թալիբների հանցագործ վարչակարգին, որն իր տարածքում ապաստան է տալու ամեն տեսակի տականքների:

Խուսափել այդքան մռայլ հեռանկարից կարելի է միայն Աֆղանստանի տնտեսության վերականգնման իրատեսական երկարաժամկետ ձեռնարկումներով: Եվ այստեղ լուրջ դերը կարող է պատկանել մեր երկրին, որը համագործակցության իրական փորձ ունի այդ պետության հետ, աֆղանական հսկայական սփյուռք, իսկ գլխավորը՝ անմիջական շահագրգռություններ իր հարավային սահմանների կայունության հարցում: Ռուսաստանն իր բացառիկ դիրքի շնորհիվ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի անդամ է, խոշորագույն գործընկերը միջինասիական հանրապետությունների և կարող է ընդլայնել իր տնտեսական ու քաղաքական դերը նոր Աֆղանստանի կառուցման գործում:

Ակնհայտ է, որ Մոսկվան դա հիմնավորելու է ոչ միայն այլասիրական նկատառումներով և ոչ միայն հարևանների նկատմամբ լավ վերաբերմունքով: Ռուսաստանը շահագրգիռ է, որպեսզի տեղում մեկուսացվեն ու վերացվեն մարտահրավերները Ռուսաստանի և ԱՊՀ-ի դեմ, որ ելնում են Աֆղանստանից. թմրադեղերի վաճառք, քաղաքական ծայրահեղություն, ապօրինի և հանցագործ տեղահանումներ: Մեթոդները կարող են լինել տարբեր, այդ թվում՝ և բացառիկ: Մասնավորապես, Ռուսաստանի ակտիվ մասնակցությունը էներգոտրանսպորտային երթուղիներին՝ Աֆղանստանի տարածքով դեպի Հարավային Ասիա, ինչը դրամական ներդրումներ է բերում տարածաշրջան, կայուն է դարձնում այդ երկիրը և իջեցնում է ընդհարումների լարվածությունը տարածաշրջանում (ամբողջությամբ վերցրած՝ շնորհիվ փոխադարձ ձեռնտու համագործակցության ամրապնդման):

Երկրորդ կարևորագույն խնդիրը կրոնական արմատականա-

ցումն է Հարավային Ասիայի այնպիսի երկրներում, ինչպես Պակիստանն ու Հնդկաստանն են: Ըստ որում, եթե իսլամական արմատականացման մասին խոսում են շատ և սկզբունքորեն ճիշտ ու գնահատում այն սպառնալիքները, որ իր հետ բերում է այդ գործընթացը, ապա ինդուիստական արմատականության մասին Հնդկաստանում սովորաբար մոռանում են: Իսկ չէ՞ որ այդ ընթացքը ուժեղանում է: Համաշխարհային հանրության համար, որը սովոր է Հնդկաստանն ընդունել Գանդի - Ներուի խաղաղասիրական և անդիմադրողականության պրիզմայի միջով, այս փաստը մնում է դեռևս լավ չգիտակցված: Որոշ ժամանակից մենք կարող ենք բախվել այն իրողության հետ, որ հնդկական վերնախավի զգալի մասը չափազանց հեռու կլինի ժամանակակից Հնդկաստանը հիմնադրող հայրերի սկզբունքներից: Ինչպիսի՞ն է այդ միտումի հաղթահարման հավանականությունը, ինչպիսի՞ն է նրա հնարավոր ներգործությունը միջազգային հարաբերությունների վրա, սրանք հարցեր են, որ դեռ պատասխան չունեն:

Եվ երրորդ լուրջ խնդիրը, որի մասին, բարեբախտաբար, շատ են մտածում ու խոսում, բայց, դժբախտաբար, նրա լուծումը առայժմ շատ է հեռու. դա միջուկային զենքի խնդիրն է Իսլամաբադի և Դելիի ձեռքում: Այստեղ կարելի է արդարացի կերպով կշտամբել ռուսական արտաքին քաղաքականությանը, որը, հավանաբար, դեռ նվազագույնս է պատրաստ պատասխանելու քաղաքականությանը մի այլ, միջազգային ակումբի առաջատար մասնակցի՝ ԱՄՆ-ի: Նշանակալից չափով դա օրինաչափ արդյունքն է այն բանի, որ 1990-ական թվականներին մենք այդպես էլ չկարողացանք հաղթահարել «կենտրոնական միջուկային հաշվեկշռի» իներցիան: Մենք առաջվա պես հաշվում ենք, թե ինչքան և ինչպիսի հրթիռներ ու մարտագլխիկներ ունի Վաշինգտոնը: Այդուհանդերձ, աշխարհի միջուկային քարտեզի խճանկարը ըմբռնում ենք ակնհայտորեն անբավարար:

Շատերը կզարմանան. իսկ ու՞ր մնացին հարաբերությունները ԱՄՆ-ի հետ և ինչու՞ դրանց մասին խոսվում է գլխի ամենավերջում: Դա մի քանի բացատրություն ունի: ԱՄՆ-ը որպես

տերություն, որ ներկա է միջազգային հարաբերությունների առավելագույն շատ բաժանմունքներում, փաստորեն հիշվում է ամեն պարբերության մեջ: Այսպիսի՞ «ամենահաս» քեռի Սեմ: Մյուս կողմից, ես դիտմամբ չսկսեցի ԱՄՆ-ի տարածաշրջանային և երկրային տեսակետների լուսաբանումից: Թեկուզև այն պատճառով, որ հատկապես երկկողմանի հարաբերությունների դերը ԱՄՆ-ի հետ ինձ թվում է մի քիչ ուռճացած՝ նույն Եվրոպայի կամ ԱՊՀ-ի հետ համեմատած, որտեղ հարաբերությունները իրապես լիարյուն են ու բազմակերպ: Ավելին, արտաքին քաղաքականության խորհրդային - ռուսական ավանդույթը հաստատում է այն փաստը, որ երբ մենք սկսում ենք կտրուկ ակտիվացնել հարաբերությունները ԱՄՆ-ի հետ, ապա մեզ չեն բավականացնում քաղաքական ուշադրությունը այլ ուղղությամբ շեղելու միջոցները: Վաշինգտոնի հետ համերաշխության էյֆորիայի մեջ մենք մոռանում ենք մյուս գործընկերների և պայմանադիր կողմերի մասին:

Մեզանում դեռ շատ ուժեղ է արատավոր, իսկ որ կարևորն է՝ իրականությանը չհամապատասխանող տրամաբանությունը, որը հիմնավորվում է հետևյալ դրույթի վրա. «Մենք գերտերություն ենք, և մեր միակ արժանավոր գործընկերը գերտերություն է՝ ԱՄՆ-ը»: Բայց, ինչպես արդեն նշվեց, օգտագործել «գերտերություն» ձևակերպումը ներկա Ռուսաստանի համար ճիշտ չէ, և նշանակում է, թեկուզև այդ պատճառով, ճիշտ չէ վերը բերված դրույթը՝ միակ «գերտերության» տեսակետը, որ մնում է ԱՄՆ-ի հետ մեր հարաբերություններում. դա ստրատեգիական սպառազինությունների խնդիրն է: Ցավոք, մեր հարաբերություններում զարգացման մյուս տարրերի աստիճանը, ինչպես, օրինակ, տնտեսականը, այդ ձևակերպման հետ պարզապես կապ չունի:

Բայց վերադառնանք, ըստ էության, ԱՄՆ-ին: Դա եզակի երկիր է այն տեսակետից, որ նրա տնտեսությունը համաշխարհային տնտեսության կենտրոնական բաղադրիչներից մեկն է, ըստ որում՝ ամերիկյան բաժինը կազմում է 15-20 տոկոսը: Սա հավասար չափով և՛ առավելություն է, և՛ թերություն, քանի որ

ԱՄՆ-ի կախվածության աստիճանը արտաքին աշխարհից նույնքան բարձր է: Այդ կախվածությունը միակողմանի դարձնելու փորձերն էլ հենց Վաշինգտոնի քաղաքականության մեջ ստեղծում են «ժանդարմական» միտում:

Ժամանակակից ԱՄՆ-ը բացառիկ է նաև մեկ այլ տեսանկյունից՝ սա փաստորեն միակ խոշոր երկիրն է, որ տանում է այժմ իր ներքին նույնականության արմատական փոփոխությունը: Աֆրոամերիկյան և լատինաամերիկյան բնակչությանը հասնող փայաբաժնի զանգվածային մեծացումը՝ զուգակցված իսլամի աճող հանրաճանաչելիության հետ, գերաճող քաղաքական բարեկրթության հենքի վրա, փոխում է ամերիկյան հասարակության հենց բնույթը: Մինչև ե՞րբ պիտի այդ փոփոխությունները տեղի ունենան առանց սուր, իսկ ավելի ստույգ՝ առանց բաց սոցիալական բախումների, դեռևս պարզ չէ:

Դրա հետ մեկտեղ, ակնհայտ է, որ ներքին նույնականության փոփոխությունները լրջորեն ազդելու են ԱՄՆ-ի արտաքին քաղաքական կուրսի վրա: Ներգործության սկզբունքային վերաբաշխումը ամերիկյան վերնախավի վերին էշելոններում՝ հոգուտ նոր սոցիալական շերտերի և խմբերի, ընթանում էր 1990-ական թվականների բոլոր տարիներին: Բուշի վարչակարգի օրոք այդ գործընթացը շարունակվում է: Զգալի չափով 1950-1980 թթ. համեմատությամբ ամերիկյան վերնախավի հենց վերին շերտերի անկայունությունն է, որ հասցնում է ամերիկյան արտաքին քաղաքականության անհետևողականությանը:

Եվ այստեղ, հավանաբար, չկա իր՝ նախագահ Ջ. Բուշի լուրջ մեղքը : Նա պարզապես փորձում է լողալ բազում ուղղություններ ունեցող հոսանքի բուռն ջրապտույտում: Չկան լուրջ երաշխիքներ, թե նրա հաջորդը, նույնիսկ այն դեպքում, եթե ինքը՝ Բուշը, դիմանա երկու նստաշրջան, կհայտնվի ավելի բարենպաստ վիճակում:

Ժամանակակից Ամերիկայի երրորդ բացառիկ գիծն այն է, որ չնայած ողջ ներքին խոր անորոշությանը և անկայունությանը, ԱՄՆ-ը ստանձնում է ոչ թե պարզապես համաշխարհային

ժանդարմի, այլև՝ խաղարարար հովվի ու քարոզչի դերը, և աշխարհին սովորեցնում է, թե ինչպես պիտի ապրել: Եվ աշակերտների դերում, Վաշինգտոնի կարծիքով, պետք է հանդես գան ոչ միայն և ոչ այնքան արհամարհված երկրները (նրանց համար առանձին մեթոդներ կան), որքան Եվրոպան, Ռուսաստանը և համաշխարհային հանրության մյուս ոչ ամենահետամնաց մասերը: ԱՄՆ-ը ավելի ու ավելի է նմանակում լճացման շրջանի Խորհրդային Միությանը, որը, ունենալով ավելի քան լուրջ և, ինչպես պարզվեց, ծայրահեղ դաժան խնդիրներ իր ներսում, շարունակում էր իր շրջապատին սովորեցնել, թե ինչպես պիտի նրանք ապրեն: Այն տարիներին նախագահ Ռեյգանը ԽՍՀՄ-ին կոչ արեց դառնալ «օրինավոր երկիր»: Այժմ այդ կոչը կարելի է ուղղել ԱՄՆ-ին. դարձեք «օրինավոր երկիր»:

Ենթադրվու՞մ է, արդյոք, վերը շարադրվածից, թե մենք պետք է դառնանք ամերիկատյաց կամ ելնենք ընդդեմ ռուս-ամերիկյան հարաբերությունների զարգացման: Բնավ ոչ: Ավելին, Վաշինգտոնը, ինչպիսին էլ որ ԱՄՆ-ը լինի, տեսանելի հեռանկարում մնում է պայմանադիր կողմ Ռուսաստանի համար բոլոր համաշխարհային նախաձեռնություններում՝ ստրատեգիական սպառազինությունների, զանգվածային ոչնչացման զենքերի տարածումը կանխելու, գլոբալ անվտանգության, միջազգային ֆինանսների, բնապահպանության և այլ բնագավառներում:

Մենք պարզապես պետք է ձերբազատվենք պարզունակ մոտեցումից. երբ բարեկամանում ենք ԱՄՆ-ի հետ, չենք նկատում նրա մութ կողմերը, իսկ երբ մեր հարաբերություններում խնդիրներ են ծագում, միայն այդ մութ կողմերն ենք տեսնում: Ոչ միայն ինքը՝ ԱՄՆ-ը, պիտի դառնա օրինավոր երկիր, այլև մեր վերաբերմունքն էլ Ամերիկայի հանդեպ պետք է դառնա հանգիստ, նպատակասլաց, հավասարակշիռ:

Սրբագրել, փոխել ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը մենք կարող ենք միայն Վաշինգտոնի հետ մշտական փոխգործողության պայմաններում, «դաստիարակելով» նրան, որքան էլ դա հաճախ տհաճ լինի: Որպեսզի մեր երկկողմ հարաբերու-

թյունները դառնան ավելի կայուն, անհրաժեշտ է դուրս գալ ռազմաստրատեգիական թեմատիկայի գերությունից, որն առաջվա պես իշխում է Մոսկվայի և Վաշինգտոնի օրակարգում:

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Վերջակետը, իսկ ավելի ստույգ՝ բազմակետը այս գրքում ես չեմ դրել: Մոսկովյան հոկտեմբերի ողբերգական օրերին, երբ ահաբեկչության մշուշը խտացել էր մեզ վրա, մենք բոլորս շատ բան վերապրեցինք, և կշռադատեցինք ու վերաիմաստավորեցինք:

Մեկ տարի է անցել ԱՄՆ-ի այդ իրադարձությունից՝ սեպտեմբերի 11-ից, որը հաճախ անվանում են նոր դարի և նոր հազարամյակի հաշվարկման կետ՝ նրանց իրական, ոչ թե օրացուցային իմաստով: Այս մեկ տարվա մեջ աշխարհը չդարձավ ո՛չ ավելի կռահելի, ո՛չ էլ ավելի անվտանգ: Իրանում մարդկությունը կանգնած է նոր պատերազմի շեմին, որը կարող է վերածվել քաղաքակրթությունների տխրահռչակ բախման, դառնալ երրորդ համաշխարհային պատերազմի արշալույսը: Վերջին ողբերգական ահաբեկչական գործողությունները Մոսկվայում, Ինդոնեզիայում, Իսրայելում միայն սրեցին Պատմության մեջ սահմանագծի զգացողությունը, միայն ընդգծեցին, թե որքան է աշխարհը մոտեցել անդունդի եզրին, չարիքի, քաոսի ու ավերածությունների ինչպիսի մութ ուժերի հետ ենք այսօր բախվում:

Այս գրքում ես տեսա իմ խնդիրը՝ կանգ առնել ու գնահատել, թե որտեղ է այսօր հայտնվել աշխարհը, թե ուր ենք գնում, ինչպիսի վտանգներ են մեզ սպառնում և ինչ հնարավորություններ ունի մարդկությունը: Ինձ համար սկզբունքորեն կարևոր է, որ այս դատողությունները կրում են բաց բնույթ, դրանք պետք է և անհրաժեշտ է զարգացնել, քննադատել, լրացնել և, ի վերջո, հուսամ՝ հանգել ինչ-որ ընդհանուր հայտարարի, մեր խնդիրների ընդհանուր գիտակցման:

Մոսկովյան հոկտեմբերի սև օրերից հետո, ես շատ բան լրացրի և շատ բան արտագրեցի: Որոշ գաղափարներ ու մտքեր, որոնք շարադրել եմ իմ գրքում, արդյունք են հենց այդ տառապալից ժամերի և օրերի մտորումների: Իսկ գլխավորը, ինչին ես հասա այդ անքուն գիշերներից հետո, այն է, որ մեր՝ բոլորիս համար եկել է նոր ժամանակը: Գործելու ժամանակը, ոչ թե միայն խորհելու: Կուզենայի, որ այս գիրքը դառնար, իհարկե, ո՛չ ամենամեծ և ո՛չ ամենագլխավոր, բայց այն քայլը, որը մեզ կմոտեցնի Պատմության գլխավոր ժամանակակից Հարցի պատասխանին:

Այդ հարցը, ուղղված մեզ՝ բոլորիս, այն է, թե որքան երկար պետք է հաշվարկվի սկսվող հազարամյակի ժամանակը, և, արդյոք, մարդկությանը կբավականացնեն կամքն ու բանականությունը, որ ապրեն թեկուզ էլի մեկ դար՝ հնարավորություն տալով մեր թոռներին՝ տեսնելու Արևի ծագումը:

Մենք թևակոխել ենք քաղաքակրթության զարգացման այնպիսի փուլ, երբ գալիքն ստիպված ես նվաճել: Բայց մենք, իսկապես որ, կարող ենք ընտրություն կատարել, և դրանում է ամփոփված, երևի, մարդկության գլխավոր հույսը:

Մարդկությանն անհրաժեշտ է դուրս գալ իր զարգացման սկզբունքորեն նոր մակարդակ, գտնել Կեցության և Աշխարհի նոր մշակույթի, Կյանքի մշակույթի իմաստը:

Մենք չափազանց շատ ենք և չափազանց տարբեր ենք: Մեր աշխարհը երբեմն անարդար է ու դաժան: Բայց անասելի փխրուն է մեր տունը՝ Երկիր մոլորակը: Անասելի փոքր ենք մենք՝ ի դեմս

Արարչի ու հավերժության, որպեսզի թույլ տանք ավերումն այն ամենի, ինչ մենք չենք ստեղծել, որ խլենք հիշողությունը մեր նախնիներից և գալիքը՝ մեր սերունդներից:

Որպես իմ գրքի բնաբան ես ընտրել եմ աշխարհի մեծագույն իմաստասեր Իմանուիլ Կանտի խոսքերը. «Աշխարհի արարումը ոչ թե ակնթարթի, այլ հավերժի գործ է»: Մենք ժամանակ ունենք, որպեսզի ինչ-որ բան փոխենք, որպեսզի գտնենք լուծումներ, թեև չեմ կարծում, թե դրանք շատ են: Բայց, ցանկացած դեպքում, աշխարհի արարումն այսօր ամենագլխավոր ու ամենաարժանավոր խնդիրն է և նպատակը մեզնից յուրաքանչյուրի համար, քաղաքագետների, բոլոր մարդկանց, համայն մարդկության համար:

Բովանդակություն

Հայ ընթերցողին – 5

Արդիականությունը
որպես պատմության նոր Առանցքային ժամանակ – 8

I ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԱՅՐԱՄՈՒՏԸ – 15

1. Արդի աշխարհի զարգացման փակուղիները – 19

1.1. Առաջընթացի գաղափարի ճգնաժամը – 19
1.2. Կայուն զարգացման խնդիրը – 27
1.3. Տնտեսական աճի վարդապետությունը
և «կապիտալիզմի ոգին» – 34
1.4 Հետարդյունաբերական աշխարհը – 40

2. Ընդհատված համաշխարհայնացումը – 48

2.1. Համաշխարհայնացում և արևմտականացում.
միասնական աշխա՞րհ, թե «ապագայի սեփականաշնորհում» – 50
2.2. Նոր աշխարհի աշխարհաքաղաքականությունն
ու «աշխարհատնտեսությունը» – 57
2.3. «Պետությունից հետո». պետության դասական նմուշի
ճգնաժամը և սահմանափակ ինքնիշխանության համակարգը – 61
2.4. Բեկված քաղաքակրթության ֆենոմենը
և «նոր Նոր աշխարհը» – 65

3. Պատմության նոր ֆենոմենները – 67

3.1. Ժողովրդավարության ապագան և համաշխարհային
քաղաքացիական պատերազմի սպառնալիքը – 68
3.2.Ահաբեկչության հիմնախնդիրը և զանգվածային
ահաբեկչության էթիկական հնարավորությունը – 80
3.3. Արժեքների ռևանշը և պատասխան ապագային
իմաստների լեզվով – 85

II ԴԵՊԻ ՆՈՐ ԱՇԽԱՐՀ. ԻՆՉՊԵ՞Ս Է ԱՅՆ ՀՆԱՐԱՎՈՐ – 89

4. Նախաճգնաժամային քաղաքակրթություն.
ի՞նչ է մեզ ուսուցանում պատմությունը – 93

4.1. Նախաճգնաժամային զարգացման ախտանիշը – 93
4.2. Բռնության պաշտամունքը որպես հասարակական ու
քաղաքական կազմակերպության հիմնախնդիր – 101

4.3. Գոյատևման օրենքները. ինչպես է
մարդկությունը հաղթահարում իրեն – 108

5. Նոր աշխարհի մարդը – 116

5.1. Մեր գալի՞քն է, արդյոք, Homo post –sapiens-ը – 117

5.2. Բարոյական խնդիրների առաջընթացը – 126

III ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ՈՒՂԻ – 137

6. Ռուսաստանը եւ հետարդիականությունը. կրկին արդիականացման խնդրի մասին – 143

6.1. «Ի՞նչ է Ռուսաստանը» -
գլխավոր հարցը մեր ապագային – 143

6.2. Հետապնդող զարգացման փակուղին և զարգացման
կախվածության խնդիրը – 147

6.3. Ռազմավարության ընտրությունը. «բյուրգերական
պետությու՞ն», թե արդիականացված ճեղքում – 154

7. Ռուսաստանի պետական շինարարության նոր մարտահրավերները եւ խնդիրները – 161

7.1. Չյուրացված Ռուսաստանը՝ ազգային
անվտանգության գլխավոր սպառնալիք – 161

7.2. Ունի՞, արդյոք, պետությունը ապագա – 167

7.3. Ինքնիշխանությունը Նոր աշխարհում – 174

7.4. Զարգացման սուբյեկտի փնտրտուքներում – 178

8. Ռուսաստանի ռազմավարությունը Նոր աշխարհի համար – 186

8.1. Ռուսաստանի ռեսուրսները փոփոխվող
գլոբալ աշխարհում – 188

8.2. Արտաքին քաղաքական գաղափարախոսությունը
և Ռուսաստանի արտաքին քաղաքականության
հնարավոր կողմնորոշիչները – 204

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ – 233

Յու. Մ. Լուժկով

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԵՐՏՈՒՄԸ

Մարդկությունը XXI դարում և Ռուսաստանի ապագան

Лужков Юрий Михайлович

ВОЗОБНОВЛЕНИЕ ИСТОРИИ

Человечество в XXI веке и будущее России

Թարգմանիչ՝ Լ.Զ. Անանյան
Սրբագրիչ՝ Անուշ Կնյազյան
Համակարգչայի շարվածքը՝ Ալինա Մելքումյանի

Պատվեր՝ 230: Տպաքանակ՝ 2000:
Չափսը՝ 60x90/16: 15 տպ. մամուլ:

Տպագրված է **«Տիգրան Մեծ»** հրատարակչության տպարանում

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԵՐՏՈՒՄԸ

ՄԱՐԴԿՈՒԹՅՈՒՆԸ XXI ԴԱՐՈՒՄ
ԵՎ
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՊԱԳԱՆ